Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1458 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐՄԱՎԻՐ 2014Թ.

	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		
	ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ		4
	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ		5
1.	**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**		6
2.	**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**		13
3.	**ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ**		18
4.	**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**		29
4.1.		**Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն**	29
4.2.		**Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը**	37
4.3.		**ՓՄՁ և մասնավոր հատվածի իրավիճակի վերլուծություն**	37
4.4.		**ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները**	42
4.5.		**ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները**	44
4.6.		**ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման տրամաբանական հենքը**	48
5.	**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ**		49
5.1.		**Կրթություն**	49
	5.1.1.	Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն և զարգացման հիմնախնդիրների բացահայտում	49
	5.1.2.	Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	62
	5.1.3.	Կրթության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը	68
5.2.		**Մշակույթ**	70
	5.2.1.	Մշակույթի ոլորտի իրավիճակի վերլուծություն	70
	5.2.2.	Մշակույթի ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	81
	5.2.3.	Մշակույթի ոլորտի զարգացման տրամաբանական հենքը	83
5.3.		**Սպորտ և երիտասարդության հարցեր**	84
	5.3.1.	Սպորտ և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն	84
	5.3.2.	Սպորտ և երիտասարդության հարցերի ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	90
	5.3.3.	Սպորտ և երիտասարդության հարցերի ոլորտի զարգացման տրամաբանական հենքը	91
5.4.		**Առողջապահություն**	92
	5.4.1.	Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն	92
	5.4.2.	Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	98
	5.4.3.	Առողջապահության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը	100
5.5.		**Սոցիալական պաշտպանություն**	102
	5.5.1.	Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն	102
	5.5.2.	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	121
	5.5.3.	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը	123
6.	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**		126
6.1.		**Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն**	126
6.2.		**Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը**	137

6.3.		**Գյուղատնտեսության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը**	141
7.	**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**		142
7.1.		**Բնապահպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն**	142
7.2.		**Բնապահպանության ոլորտի հիմնախնդիրները և ռազմավարությունը**	148
7.3.		**Բնապահպանության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը**	153
8.	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ**		155
8.1.		**Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը**	155
8.2.		**Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը**	161
9.	**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**		162
9.1.		**Քաղաքաշինական ոլորտի իրավիճակի վերլուծություն**	162
9.2.		**Քաղաքաշինության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը**	165
9.3.		**Քաղաքաշինության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը**	166
10.	**ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**		167
10.1.		**Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն**	167
10.2.		**Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ**	167
10.3.		**Ջրամատակարարում և ջրահեռացում**	171
10.4.		**Գազամատակարարում**	177
10.5.		**Էներգետիկա**	181
11.	**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**			184
11.1.		**Տարածքային կառավարում**	184
	11.1.1.	Վարչատարածքային բաժանում	184
	11.1.2.	Գերակայություններ և հիմնախնդիրներ	186
	11.1.3.	Մարզպետարանի կառավարում	188
	11.1.4.	Քաղաքացիական ծառայություն	191
	11.1.5.	Էլեկտրոնային կառավարում	192
11.2.		**Տեղական ինքնակառավարում**	194
	11.2.1.	Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ	194
	11.2.2.	Համայնքային ծառայություն	197
	11.2.3.	Տեխնիկական ապահովվածություն	199
	11.2.4.	Համայնքի քառամյա զարգացման ծրագրեր	200
11.3.		**Քաղաքացիական հասարակություն**	203
12.	**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**			206
12.1.		**Բնական աղետներ**	206
12.2.		**Տեխնածին աղետներ**	207
12.3.		**Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ**	208
12.4.		**Քաղաքացիական պաշտպանություն**	214
13.	**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**		215
14.	**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**		220
15.	**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**		222

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի ժամանակաշրջանի իրողությունները, զարգացման ուղղություններն ու գերակայությունները և դրանց մեջ յուրաքանչյուր մարզի համար զարգացման սեփական ուղենիշներ մշակելու, խնդիրները վերլուծելու և զարգացման գերակայություններն ու առաջնահերթությունները որոշելու անհրաժեշտության հրամայականով է արդեն երկրորդ անգամ կազմվում մարզի զարգացման ծրագիրը:

Մարզի զարգացման ծրագիրն իր կառուցվածքով համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, աղքատության հաղթահարման ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին:

Ծրագրի հիմքում դրվել են մինչ այժմ գործող մարզի ոլորտային զարգացման ծրագրերը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» կենսագործման փորձը, զարգացման կանխորոշված գերակայությունները և տեղեկատվական շտեմարանները:

Հույսով եմ, որ այն կնպաստի մեր հանրապետությունում աղքատության հաղթահարման ռազմավարական գերակա նպատակ հռչակված տարածքային համաչափ զարգացման խնդրի, ինչպես նաև Արմավիրի մարզի համայնքների զարգացման ծրագրերում ներառված առաջնահերթ հիմնախնդիրների և մարտահրավերների արդյունավետ լուծմանը:

Ծրագրի մշակմանը, ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկվելու միջոցով, մասնակցել են տարբեր ոլորտների լավագույն մասնագետներ՝ որպես փորձագետներ: Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության դերը: Ոլորտային խնդիրների վերհանմանը և մարզի զարգացման ծրագրում դրանց ընդգրկմանը նպաստել է համագործակցությունը նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների հետ: Ծրագրի մշակման գործընթացում հանրության մասնակցությունն ապահովելու նպատակով հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Մարզի զարգացման ծրագիրը Արմավիրի մարզում ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Արմավիրի մարզպետարանն ակնկալում է, որ ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկությունները հետաքրքրություն կներկայացնեն նշված շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների համար և պատրաստ է բոլոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության՝ հանուն Արմավիրի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի մշակման ողջ գործընթացին մասնակցած Արմավիրի մարզի խորհրդի անդամներին, մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Արմավիրի մարզպետարանի անունից հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ **Ա. Ղահրամանյան**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	-Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱՀՌԾ	- Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը
ԿԶԾ	-Կայուն զարգացման ծրագիր
ՀԶԾ	-Հեռանկարային զարգացման ծրագիր
ՀԶՆ	-Հազարամյակի զարգացման նպատակներ
ՄԱԶԾ	-ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
USAID	-ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ՄԺԾԾ	-միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱԿ	-Միացյալ ազգերի կազմակերպություն
ՀՆԱ	-համախառն ներքին արդյունք
ԱՄՆ	-Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՌԴ	-Ռուսաստանի Դաշնություն
ԼՂՀ	-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԱՎԾ	-Ազգային վիճակագրական ծառայություն
ՏԻՄ	-տեղական ինքնակառավարման մարմին
ՊՓԲԸ	-պետական փակ բաժնետիրական ընկերություն
ՓԲԸ	-փակ բաժնետիրական ընկերություն
ՍՊԸ	-սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԲԲԸ	-բաց բաժնետիրական ընկերություն
ՀԿ	-հասարակական կազմակերպություն
ՄԶՄԿ	-Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՋՕԸ	-ջրօգտագործողների ընկերություն
ԳԱՄԿ	-գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն
ՍԾՏԳ	-սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՀՍԾՏԿ	-համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ
ՊՈԱԿ	-պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՓՄՁ	-փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	-փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ	-փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մարզային խորհուրդ
ՀԱԷԿ	-Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԷԿ	-հիդրոէլեկտրակայան
ՓՀԷԿ	-փոքր հիդրոէլեկտրակայան
ՕԿՋ	- օրվա կանոնավորիչ ջրավազան
ԳԳՄ	-գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղ
ՄԶՀ	-մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶԾ	-մարզի զարգացման ծրագիր
ՈԱԽ	-ոլորտային աշխատանքային խումբ
ՏԱՊ	-տարեկան աշխատանքային պլան
ՄԳ	-մոնիտորինգ և գնահատում
ՄՄԳ	-մասնակցային մոնիտորինգ և գնահատում
ՄԻԱՎ/ՁԻԱՎ	-մարդու իմունային անբավարարության վիրուս /ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդություն
ՔՀՑ	-քաղաքացիական համագործակցության ցանց
ՀԴԻՑ	-Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանց
ՄԿՈՒ	-մասնագիտական կրթություն և ուսուցում
ՏՀՏ	-տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ԱՌՆ	-աղետների ռիսկի նվազեցում
ՀԳԾ	-Հյոգոյի գործողությունների ծրագիր

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2003 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 994-Ն որոշմամբ հաստատվել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (այսուհետ՝ ԱՀՌԾ), որով և հիմք է դրվել Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական համապետական զարգացման ծրագրային տրամաբանությամբ գործունեությանը: ԱՀՌԾ-ի հիմնական առանձնահատկություններից է այն, որ որպես հիմնական գերակայություններից ու առաջնահերթություններից մեկն է հռչակված հանրապետությունում աղքատության հաղթահարման ռազմավարական խնդրին հասնելու տարածքային համաչափ զարգացման սկզբունքը:

2. Հանրապետությաւն տնտեսության ու սոցիալական բոլոր բնագավառներում շարունակական զարգացման նկատելի տեմպերը, ինչպես նաև կառավարության կողմից ինստիտուցիոնալ բարեփոխումների հետևողական իրականացումը ենթադրեց նաև կառավարության կողմից «Միջին ժամկետ ծախսային ծրագրի» (ՄԺԾԾ) համակարգի ներդրումը, ԱՀՌԾ-ի վերանայում (ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն Զարգացման Ծրագիրը (ԿԶԾ), որն ըստ էության ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակն է):

3. Հանրապետական զարգացման համակարգված ծրագրերի կազմումն ու իրականացումը տրամաբանորեն թելադրեց նաև նույն հենքի վրա դրված տարածքային՝ մարզային զարգացման ծրագրերի կազմումն ու իրականացումը: ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել և ընդունվել «Մարզերի զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման հայեցակարգ»-ը:

4. ՀՀ կառավարությունը վերանայել է 2008 թվականին ընդունված «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ)՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 մարտի 27-ի մարտի 27-ի N442-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը» (ՀԶԾ):

5. Ծրագիրը նպատակ ունի հետճգնաժամային ռազմավարական համակարգված շրջանակ ապահովել կառավարության քաղաքականությունների ձևավորման համար: Ծրագրում նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը: Ծրագիրը առանձին ոլորտներին առնչվող մանրամասներ չի ներառում, սակայն բավարար ուղենիշեր է ապահովում ոլորտային ծրագրերի մշակման ժամանակ ընդհանուր տրամաբանությամբ առաջնորդվելու համար:

6. Ծրագրի հիմնական առաքելություններից է առաջիկա տարիներին ռազմավարական ուղենիշեր ապահովելը միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) մշակման համար:

7. Ծրագրային ժամանակահատվածում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առումով նշանակալի դեր է վերագրվում միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին: Այս առումով, առաջնային կարևորություն է տրվելու Մաքսային միությանը ՀՀ անդամակցությանն ու միության անդամ երկրների հետ տնտեսական կապերի հետագա զարգացմանն ու խորացմանը: Միաժամանակ, հիմք ընդունելով ընդհանուր արժեքները, շարունակվելու է ներդաշնակ համագործակցությունը Եվրոպական միության հետ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուղղություններով:

8. Ինչպես Կայուն զարգացման ծրագրի պարագայում, ՀԶԾ-ն մշակվել է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Որդեգրած մոտեցումը ենթադրում է նաև ծրագրի իրականացման ժամանակ սոցիալական գործընկերության և մասնակցային մոնիտորինգի հնարավորության ապահովում և խորացում: Համաձայն ՀՀ Կառավարության և Քաղաքացիական համագործակցության ցանցի (ՔՀՑ) միջև 2013թ. փետրվարին ստորագրված հուշագրի, ՔՀՑ-ը ներկայացնելու է հանրության առավել լայն շերտերի շահերը ծրագրի իրականացման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերանայման գործընթացներում:

9. Տարածքային զարգացման համալիր քաղաքականության կիրառումը հնարավորություն կտա էապես բարելավել իրադրությունը: Քաղաքականության կիրառման արդյունքում, զարգացման միջին սցենարի պայմաններում նպատակադրվում է, որ հետ ընկնող մարզերի զարգացման տեմպերը կարագանան այնպես, որ դրանց զարգացման մակարդակը միջնաժամկետ հեռանկարում մոտենա միջին հանրապետական զարգացման մակարդակին, այն դեպքում, երբ առավել զարգացած մարզերի ներկայիս միջին տարեկան աճի տեմպերը այդ ընթացքում կպահպանվեն համարյա նույն համամասնությամբ:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1756-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը», որով համապետական ռազմավարական ծրագրերի դրույթները հաջողությամբ իրականացվում են Արմավիրի մարզում:

11. Սույն ծրագրի կազմման ու իրականացման հիմնական նպատակն է համապետական ռազմավարական ծրագրերին համահունչ և համաձայնեցված ձևով ձգտել իրականացնել Արմավիրի մարզում Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախանշված աղքատության հաղթահարման ու սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշները:

12. Ինչպես նշված է հայեցակարգում, հանրապետության յուրաքանչյուր մարզ ունի իր յուրահատկություններն ու առանձնահատկությունները, որոնք պարտադիր կերպով պետք է հաշվի առնվեն զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման ողջ ընթացքում:

13. Սույն ծրագիրը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի N 38 արձանագրային որոշման: Ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է մարզպետարանի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական

զարգացման ծրագրի կազմման ժամանակ Արմավիրի մարզպետարանի կուտակած փորձն ու առկա տեղեկատվական շտեմարանները:

14. Մարզի զարգացման ծրագրի (ՄԶԾ) առանցքը մարզի բոլոր համայնքների հիմնախնդիրներն են, որոնց լուծմանն է նպատակաուղղված եղել Արմավիրի մարզպետի և մարզպետարանի նախորդ տարիների աշխատանքային գործունեությունը: Մարզպետի դերը զգալի է եղել նաև մարզի զարգացման խնդիրների լուծման մեջ մասնակցության գործընթացի ապահովման ուղղությամբ: Արմավիրի մարզպետը մարզի քաղաքային և գյուղական բոլոր համայնքներում անձամբ հանդիպումներ է ունեցել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ, լսել նրանց առաջարկությունները, դիտողությունները, դրանք հանձնարարականների տեսքով ներկայացրել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և պահանջել մշակել հիմնախնդիրների լուծման ծրագրեր: Բացի այդ, մարզում պարբերաբար կազմակերպվել են մարզպետարանի աշխատանքային խմբերի հանդիպումներ համայնքների բնակչության հետ, որոնց հիմնական նպատակն էր մարզի բնակչության իրական սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտումը, բնակիչներին մտահոգող և նրանց կողմից առաջ քաշված կարևորագույն հարցերի քննարկումը, հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև մարզի զարգացման խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը: Արդյունքում, մարզի բոլոր համայնքների հիմնախնդիրները վերհանված և վերլուծված ներկայացվել են ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարությանը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Նախագահին, ում նախաձեռնությամբ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում ինչպես 2008, այնպես էլ 2013 թվականների նախընտրական հանդիպումների ժամանակ արծարծված հիմնախնդիրները ներառվել են համապատասխան կարգադրություններով հաստատված միջոցառումների ժամանակացույցերում:

15. Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Ոլորտային խնդիրները քննարկվել են ճյուղային նախարարություններում, հանրապետական գործադիր և պետական կառավարման մարմիններում:

16. Մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգը ձևավորվել և աշխատանքներն ընթացել են հետևյալ հերթականությամբ. ՀՀ Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 3-ի N 108 որոշմամբ ստեղծվել են Արմավիրի մարզային զարգացման հանձնաժողովը, ոլորտային աշխատանքային խմբերը, մարզի զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը և հաստատվել դրանց անհատական կազմերը:

17. Ինչպես մարզային զարգացման հանձնաժողովի կազմում, այնպես էլ ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկվել են մարզպետարանի ներկայացուցիչներ, քաղաքային, գյուղական համայնքների ղեկավարներ, համայնքային ծառայողներ, պետական, ոչ պետական կառույցների ղեկավարներ, ոլորտի մասնագետներ, փորձագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ:

18. Մարզպետարանում կուտակված ամբողջ տեղեկատվությունը ենթարկվել է վերլուծության, իրականացված վերլուծությունների արդյունքները ներկայացվել են

ոլորտային 11 աշխատանքային խմբերին, որոնք ձեռնամուխ են եղել իրենց հանձնարարված ոլորտների մասով ծրագրի կազմման աշխատանքներին և գործել են հետևյալ ուղղություններով.

1) Արդյունաբերություն, փոքր ու միջին ձեռնարկատիրություն, մասնավոր հատված, զբոսաշրջություն
2) Կրթություն
3) Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր
4) Առողջապահություն
5) Սոցիալական պաշտպանություն (ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն)
6) Գյուղատնտեսություն
7) Բնապահպանություն
8) Քաղաքաշինություն
9) Մարզային և համայնքային ենթակառուցվածքներ
10) Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, արտակարգ իրավիճակներ
11) Քաղաքացիական հասարակություն:

19. Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկվել են Մարզային զարգացման հանձնաժողովի կողմից, և արժանանալով վերջինիս հավանությանը, ընդգրկվել են ծրագրում: ՄԶԾ նախնական տարբերակը Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի միջոցով ներկայացվել է ճյուղային նախարարություններին ու պետական կառավարման այլ մարմիններին: Նախարարություններից ստացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա ծրագրի նախագիծը մարզպետարանում լրամշակվել է: ՄԶԾ-ի վերջնական տարբերակը հաստատվել է ՄԶՀ նախագահի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի կողմից և ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

20. ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են: Յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանները կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցները և համայնքային բյուջեները, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառումների ցանկերը՝ ըստ ոլորտների և ֆինանսավորման աղբյուրների:

21. Արմավիրի մարզի զարգացման ծրագրի կառուցվածքը. Ծրագրի սկզբում ներկայացվում է մարզի ընդհանուր համառոտ բնութագիրը, 3-րդ գլխում տրվում է աղքատության գնահատականը, վերլուծվում են դրա հիմնական պատճառները, վերջին տարիների միտումները և նախանշվում են այն ոլորտները, որտեղ ինստիտուցիոնալ բարեփոխումները որոշ ներդրումային ծրագրերի հետ համատեղ հնարավորություն կտան առավել նպատակային և արդյունավետ ձևով կրճատել աղքատության մակարդակը: Այդ ոլորտներն են՝ գործարար և ներդրումային միջավայրի զարգացումը, փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցումը, արդյունաբերությունը, էներգետիկան,

գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, սոցիալական ոլորտները (կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), համայնքների զարգացումը (կառավարման ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում, մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ) և բնապահպանությունը:

22. Մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղությունը գործարար ակտիվության բարձրացումն է, մասնավորապես՝ արդյունաբերության, փոքր և միջին ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի աջակցության միջոցով (Գլուխ 4): Այս գլխում վերլուծվում է մարզի տնտեսության իրավիճակը, զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները: Մանրամասն ներկայացվում են արդյունաբերության ոլորտի վերլուծությունը, ՓՄՁ-ների զարգացման խոչընդոտները, դոնորների կողմից աջակցմանն ուղղված միջոցառումները, ոլորտների զարգացման հեռանկարներն ու ռազմավարությունը:

23. Մարզի սոցիալական ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրները և զարգացման համար առաջարկվող միջոցառումները (Գլուխ 5) նպատակաուղղված են այդ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը: Այս ուղղությամբ վերջին տարիներին բավականաչափ ծրագրեր են իրականացվել, սակայն ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրագործելու համար զգացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարության ու դոնորների առավել համակարգված գործունեության անհրաժեշտությունը:

24. Մարզի գյուղատնտեսության իրավիճակը և ոլորտի ռազմավարությունը վերլուծված է Գլուխ 6-ում: Այս ոլորտում կարևոր նպատակ է ֆերմերների եկամուտների ավելացումը և որպես արդյունք՝ գյուղական աղքատության կրճատումը, կենդանիների հիվանդությունների կանխարգելումը, գյուղական ենթակառուցվածքների զարգացումը, ֆերմերներին մատուցվող ուսուցողական-խորհրդատվական ծառայությունների բարելավումը, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության աճի ապահովումը:

25. 7-րդ գլխում ներկայացված է բնապահպանությունն ու ընդերքի օգտագործումը, որտեղ առաջնային խնդիր է համարվում Արմավիրի մարզում արդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների այլընտրանքային վերլուծությունը, դրանց համադրումը, միասնական արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այստեղ ներկայացված են բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

26. 8-րդ գլխում ներկայացված է Արմավիրի մարզում դեռևս չզարգացած, սակայն զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը: Այստեղ կարևորվել է մարզի համար զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Նշված է, որ արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և ոլորտը կարող է դառնալ առաջնային:

27. 9-րդ գլխում ներկայացված է քաղաքաշինության ոլորտը, որտեղ ընդգրկված են մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման և այլ քաղաքաշինական խնդիրներ:

28. 10-րդ գլուխը նվիրված է մարզային և համայնքային ենթակառուցվածքներին: Այստեղ կարևորվել են մարզի և համայնքների ճանապարհային, տրանսպորտային ապահովման, ջրամատակարարման, գազամատակարարման և էներգամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազաֆիկացման գործընթացի շարունակումը:

29. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված խնդիրները ներկայացված են 11-րդ գլխում: Այստեղ կարևորվել է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության կատարելագործումը, համայնքների, ինչպես նաև մարզպետարանի կարողությունների հզորացումը, քաղաքացիական հասարակության հետ հարաբերություններում մասնակցային գործընթացի ապահովումը՝ մարզային և համայնքային մակարդակի որոշումների ընդունման, ծրագրերի կազմման և իրագործման գործընթացներում:

30. 12-րդ գլուխը նվիրված է մարզի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության հարցերին՝ պոտենցիալ վտանգ ներկայացնող երևույթների կանխարգելիչ միջոցառումներին:

31. 13-րդ գլուխը նվիրված է ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիտորինգին և գնահատմանը: Այստեղ հիմնավորված է այս գործառույթների անհրաժեշտությունը՝ ծրագրի արդյունավետ կառավարման, հետագայում անհրաժեշտ շտկումներ և փոփոխություններ անելու առումով: Ծրագրի արդյունավետ իրագործման երաշխիքը այս գործառույթների գծով մարզպետարանի կարողությունների բարձրացումն է, որի ուղղությամբ նախատեսված են որոշակի միջոցառումներ:

32. Ծրագրի բոլոր հիմնական բաժինները շարադրված են հետևյալ տրամաբանական կառուցվածքով.

1) Ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն
2) Ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտում
3) Ծրագրի նպատակները և ռազմավարություն
4) Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումներ:

33. Յուրաքանչյուր ոլորտի զարգացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է 14-րդ գլխում: Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 128.6 մլրդ. դրամ: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 3.25 մլրդ. դրամ:

34. Հավելվածներում բերված են բոլոր ոլորտների նախատեսված միջոցառումների ցանկն ու նրանց իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականները, ինչպես նաև Արմավիրի մարզի համայնքների և բնակավայրերի ցուցակը, քաղաքային ու գյուղական համայնքների բնակչության թիվը և մարզի

համայնքների առաջնահերթ հիմնախնդիրները՝ ըստ համայնքների զարգացման քառամյա ծրագրերի:

35. Մարզի զարգացման ծրագրի գաղափարախոսությունը, ռազմավարությունը համահունչ են Ազգային անվտանգության ռազմավարությանը (ԱԱՌ), Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին, Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին, Հազարամյակի զարգացման նպատակներին և թիրախներին:

36. Ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովման շնորհիվ մարզի կայուն զարգացումն է: Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Մարզի կայուն զարգացում
2) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
3) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
4) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
5) Արդյունաբերության զարգացում
6) Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում
7) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
8) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
9) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
10) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
11) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
12) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
13) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
14) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
15) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
16) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
17) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

37. ՀՀ Արմավիրի մարզը, որպես առանձին վարչատարածքային միավոր, ձևավորվել է 1995 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի նախկին շրջանների բազայի վրա:

ՀՀ Արմավիրի մարզի տարածքը	- 1242 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	- 4.2%
Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը	- 97067 հա
այդ թվում	
վարելահողեր	- 41691 հա
Մարզկենտրոնը	- **ք.Արմավիր**
Քաղաքային համայնքներ	- 3
Գյուղական համայնքներ	- 94
Գյուղական բնակավայրեր	- 95
Բնակչության թվաքանակը (մշտական, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ)	- 267.2 հազ.մարդ
այդ թվում	
քաղաքային	- 85.3 հազ.մարդ (31.9%)
գյուղական	- 181.9 հազ.մարդ (68.1%)

38. ՀՀ Արմավիրի մարզը տարածքի մեծությամբ ամենափոքրն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 4.2%-ը):

39. ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաք Երևանին, հարավ-արևելքից ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային:

40. Արմավիրի մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված, առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային: Սահմանի երկարությունը 130.5 կմ է Թուրքիայի հետ, որն ընդգրկում է 8 համայնք՝ Փշատավան, Բագարան, Երվանդաշատ, Մարգարա, Բերքաշատ, Արազափ, Արաքս (էջմ.) և Ջանֆիդա՝ ընդհանուր առմամբ շուրջ 13.5 հազար բնակչությամբ:

41. Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ, Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին:

42. ՀՀ Արմավիրի մարզն ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի տարածաշրջանները, Արմավիր, Մեծամոր, Վաղարշապատ քաղաքները: Մարզի մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 267.2 հազ. մարդ, Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.9%-ը:

43. Արմավիրի պատմական մարզը գտնվում է Արագած և Արարատ լեռների միջև և հանդիսանում է Արարատյան դաշտի մի մասը, որը Հայկական լեռնաշղթայի 40 դաշտավայրերից ամենաբերքատուն և ամենամեծն է: Արմավիրի դաշտավայրն ընկած է Շիրակի սարահարթի հարավային մասից դեպի Ախուրյան գետի ներքին հոսանքը, այն ամբողջությամբ կազմված է լավային ապարներից: Վերջինիս շարունակությունը հանդիսանում է Հոկտեմբերյանի տափաստանը: Արմավիրի մարզը նախալեռնային մասում տարածվում է մինչև Արագած լեռան լանջերը՝ մինչև 1600մ բարձրությամբ: Համեմատաբար ավելի ցածր տեղերում՝ գորշ և մոխրագույն հողեր են, որոնք երբեմն խառնվում են աղային և աղուտային հողերի հետ: Մարզում գերակայում են շագանակագույն հողերը, որոնք ավելի բարձր գոտիներում փոխվում են սև հողերի: Այդ հողերը ծածկված են բազմատեսակ տափաստանային բուսականությամբ: Անցումային գոտիներում սփռված են լեռնահարթավայրային հողերը՝ ալպյան բուսականությամբ: Բարձրադիր գոտիներում երևում են քարքարոտ ժայռերի շերտեր՝ նոր ձևավորվող աղքատիկ հողային ծածկույթով և նոսր բուսականությամբ:

44. Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է: Մարզի տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 850-1200մ բարձրության վրա: Ըստ բարձրությունների՝ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -12-ից - 25^{0}C, հուլիսին՝ +13-ից +39^{0}C, տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 12^{0}C: Մթնոլորտային տեղումներն աննշան են, միջին տեղումները կազմում են 250-300մմ, տարեկան միջին խոնավությունը՝ 61%: Քամու միջին արագությունը չի

գերազանցում 3մ/վրկ-ը: Քամու հիմնական ուղղություններն են՝ հյուսիս-արևելյան -44% , արևելյան -22%:

45. Միակ գետը Մեծամորն (Սևջուրը) է, սկսվում է մարզի սահմաններում, սնվում Այղր լճից ու նրա մերձակա աղբյուրներից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Գարնանը սահմանային Արաքսի, ինչպես նաև Քասախի հորդացած ջրերը դուրս են գալիս ափերից ու ավերածությունների պատճառ դառնում:

46. Արմավիրի մարզը հարուստ է պատմական բացառիկ հուշարձաններով: Եզակի հուշարձան է Մեծամորի բլրի լանջին պեղված հինգհազարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը: Պատմական մեծ արժեք են ներկայացնում ուրարտական քաղաք Արգիշտիխինիլիի ավերակները: Դրանց հարևանությամբ Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է հայոց առաջին մայրաքաղաքը՝ Արմավիրը, որը դարեր շարունակ եղել է տնտեսական և մշակութային խոշոր կենտրոն ու մնացել է այդպիսին մինչև նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմնադրումը: Դրանից քիչ արևմուտք՝ Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում, նշմարվում են այլ նշանավոր քաղաքի՝ Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքի՝ Երվանդաշատի փլատակները: Պատմաճարտարապետական մեծագույն արժեք է ներկայացնում նաև Սարդարապատի հուշահամալիրը:

47. Հայաստանի ողջ պատմության ընթացքում նրա 12 մայրաքաղաքներից 4-ը գտնվել են Արմավիրի մարզում: Դրանք են՝ Արմավիրը, Երվանդաշատը, Բագարանը և Վաղարշապատը:

48. Մարզը բնակչությամբ միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են ասորիներ, եզդիներ, քրդեր և ռուսներ:

49. Բնակչության տեղաբաշխվածությունն ըստ տարածաշրջանների (արտահայտված տոկոսներով) ունի հետևյալ տեսքը՝

Արմավիրի տարածաշրջան - 42.2% (2 քաղաքային և 37 գյուղական համայնքներ),
Էջմիածնի տարածաշրջան - 50.2% (1 քաղաքային և 42 գյուղական համայնքներ),
Բաղրամյանի տարածաշրջան - 7.6% (15 գյուղական համայնքներ),

50. Քաղաքային բնակչությունը՝ 85.3 հազար մարդ կամ մարզի բնակչության 31.9%, գյուղական բնակչությունը՝ 181.9 հազար մարդ կամ մարզի բնակչության 68.1%: Բնակչության խտությունը՝ 215 մարդ 1 քառ.կմ-ի վրա:

51. Արմավիր քաղաք - Արմավիրի մազկենտրոնն է, նախկինում՝ Հոկտեմբերյան: Այն Հայաստանի երիտասարդ ու արագ զարգացող քաղաքներից է: Քաղաքը գտնվում է Երևանից 44կմ դեպի հյուսիս-արևմուտք, մարզի ամբողջ տարածքի նկատմամբ ունի կենտրոնական դիրք: Մշտական բնակչության թիվը՝ 29.3 հազար մարդ (2014թ. հունվարի 1-ի դրությամբ):

Արմավիր քաղաքը հիմնադրվել է 1931 թվականին: Արմավիրը եղել է Հայաստանի առաջին մայրաքաղաքը: Այն Երասխի ձախ ափին է, Արարատյան դաշտում: Մովսես Խորենացին

Արմավիրի հիմնադրումը վերագրում է Հայկ Նահապետի թոռ Արամայիսին: Ուրարտական պետության անկումից հետո Արմավիրը շարունակել է գոյատևել, իսկ Քրիստոսից առաջ 4-րդ դարի վերջին դարձել է Արարատյան Հայկական թագավորության մայրաքաղաքը, որտեղ հաստատվել էին Երվանդունիները: Քրիստոսից առաջ 189-ին, երբ Արտաշես Ա-ն հիմնադրեց Մեծ Հայքի թագավորությունը, Արմավիրը դարձավ նրա մայրաքաղաքը: Քրիստոսից առաջ III-II դդ. Արմավիրը տնտեսական, մշակութային և պաշտամունքային խոշոր կենտրոն էր: Ըստ Մովսես Խորենացու, Վաղարշակ թագավորը Արմավարի մեհյանում կանգնեցրել է արեգակի, լուսնի և իր նախնիների անդրիները: Քաղաքի մերձակայքում էր գտնվում Արամանյակի Սոսյաց անտառը, որտեղ գուշակություններ էին անում ծառերի սաղարթների սոսաջյունով: Արտաշատի հիմնադրմամբ Արմավիրը դադարել է մայրաքաղաք լինելուց: Նախկինում ունեցել է Սարդարապատ, Հոկտեմբերյան անվանումները, իսկ 1995 թվականին վերանվանվել է Արմավիր: Արմավիր քաղաքի առաջին գլխավոր հատակագիծը կազմել է Ալեքսանդր Թամանյանը: Այստեղ գաղթել ու բնակվում են Արևմտյան Հայաստանից, ներգաղթածների Ջավախքից, Շիրակից, Զանգեզուրից և այլ վայրերից տեղափոխված հայերը: Քաղաքում բնակվում են նաև ռուսներ, քրդեր, եզդիներ, ասորիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Արմավիրում գործում են հանրապետական ենթակայության մարզային կառույցները, որոնք զբաղվում են էներգամատակարարման, գազամատակարարման, անվտանգության և օրինականության պահպանման, հարկային քաղաքականության, փոստային և հեռախոսային կապի, բուժսպասարկման, սանիտարական հսկողության, ջրամատակարարման և այլ հարցերով: Գործում է 7 հիմնական դպրոց, 2 ավագ դպրոց, 1 հատուկ դպրոց, 12 մսուր-մանկապարտեզ, 2 քոլեջ, 3 մարզադպրոց, «Հոբելյանական» մարզադաշտ, արվեստի դպրոց, երաժշտական դպրոց, գեղարվեստի դպրոց, շախմատի դպրոց, 5 գրադարան, մշակույթի տուն, ռազմամարզական վարժարան, բժշկական կենտրոն, 2 հեռուստաընկերություն, քաղաքային զբոսայգի, բուսակենդանաբանական այգի, որը հանրապետությունում երկրորդն է և զբաղեցնում է 8 հա տարածք, ուր պահպանվում են վայրի կենդանիների 80 և բույսերի 40 տեսակներ, որոնց 50%-ը գրանցված է Կարմիր գրքում: Քաղաքում գործում են կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, շինանյութերի արտադրության, կահույքի արտադրության գործարանները, փոքր և միջին բիզնեսով զբաղվող բազմաթիվ արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ: Քաղաքը բարեկամության և համագործակցության պայմանագրեր ունի Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի համանուն քաղաքի և Ֆրանսիայի Հանրապետության Ալո քաղաքների հետ:

52. Էջմիածին-Վաղարշապատ քաղաք -գտնվում է Երևանից 20կմ հեռավորության վրա, հանրապետության գեղեցիկ և ինքնատիպ ճարտարապետական կերպար ունեցող քաղաքներից մեկն է: Այն՝ շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, դարձել է հանրապետության այցելուների և տուրիզմի ամենահետաքրքիր վայրերից մեկը: Մշտական բնակչության թիվը՝ 46.8 հազար մարդ (2014թ. հունվարի 1-ի դրությամբ): Էջմիածնի տարածքում մարդիկ բնակվել են հնագույն ժամանակներից ի վեր: Այդ են վկայում Էջմիածնի և մոտակայքի հուշարձանները (Շրեշ բլուր, Մոխրաբլուր, Ակնաշեն, Թեղուտ և այլն)՝ քարի, բրոնզի և երկաթի դարերի հնագիտական անընդմեջ շերտերով, որոնց պեղումների և շինարարական աշխատանքների ժամանակ հնագիտական բազմաթիվ նյութեր են հայտնաբերվել: Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն՝ իր տարածքում ունենալով ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով հագեցված այնպիսի հզոր գործարաններ, ինչպիսիք են՝ «Ռաստր», «Ռեզիստր», «Էլեկտրոն» և «Սարքաշինական» գործարաններ, որոնք գործել են միութենական ռազմաարդյունաբերության համալիրի կազմում և թողարկել գերճշգրիտ սարքեր: Ներկայում այդ գործարաններն աշխատում են ոչ լրիվ հզորությամբ, սակայն պահպանել են իրենց ներուժը և ունեն վերագործարկման լուրջ հեռանկարներ: Քաղաքն ունի գյուղմթերքների արտադրության զարգացման մեծ հնարավորություն, շուրջ 2000 հա հողատարածք օգտագործվում է այդ նպատակով: Քաղաքում գործում են գինու և կոնյակի գործարաններ: Հզոր հնարավորություններ ունեն նաև պահածոների գործարանները, որոնք իրականացնում են գյուղմթերքի վերամշակում: Քաղաքում առկա է 9 հիմնական և 3 ավագ դպրոցներ, 8 մանկապարտեզ, 1 մարզադպրոց, 2 երաժշտական դպրոց, գեղանկարչական դպրոց, 5 թանգարան, 2 մշակույթի տուն, 7 գրադարան, պետական քոլեջ և «Գրիգոր Լուսավորիչ» համալսարան, հիվանդանոց, պոլիկլինիկա, ծննդատուն, ատամնաբուժարաններ: Էջմիածնի Մայր աթոռին կից գործում է Գևորգյան ճեմարանը: Քաղաքը բարեկամական կապեր ունի Իսի Լե Մուլինո (Ֆրանսիա), Պետրոզավոդսկ (ՌԴ), Ֆրեզնո (ԱՄՆ), Սերգիև-Պոսադ (ՌԴ), Մարտակերտ (ԼՂՀ) և Հադրութ (ԼՂՀ) քաղաքների հետ: Էջմիածին-Վաղարշապատը նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ կազմակերպության անդամ է 2007 թվականից:

53. Մեծամոր քաղաք – հանրապետության երիտասարդ և փոքր քաղաքներից է: Գտնվում է մարզկենտրոնից 8կմ հյուսիս-արևելք, Երևանից մոտ 38կմ հարավ-արևելք, Երևան-Արմավիր ավտոճանապարհի վրա: Մշտական բնակչության թիվը՝ 9.2 հազար մարդ (2014թ. հունվարի 1-ի դրությամբ):

Մեծամոր քաղաքի տարածքը բնակեցված է եղել մ.թ.ա V հազարամյակից մինչև մ.թ. VIII դարը: 1965 թվականին սկսվել են Մեծամոր ամրոցի դամբանադաշտի պեղումները: Արքունի քաղաքը նշանավոր էր իր աստղադիտարանով, 7 սրբարաններից կազմված տաճարական համալիրով: Ներկայիս Մեծամորը նշանավոր է ատոմակայանով, որը զբաղեցնում է 300հա տարածք, իր մեծությամբ և հզորությամբ միակը Հարավային Կովկասում: Քաղաքը հիմնադրվել է 1969 թվականին, որպես հայկական ատոմային էլեկտրակայանի բնակելի ավան (1972 թվականին): Քաղաքն ունի 2 դպրոց, բժշկական կենտրոն, մշակութային ու սպորտային հաստատություններ, եկեղեցի՝ շրջապատված հրաշալի զբոսայգով:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ

54. Այսօր Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նմանատիպ զարգացող պետություններում, առաջնահերթ և կարևորագույն խնդիր է համարվում աղքատության դեմ պայքարը: Հենց այդ գիտակցությամբ էլ ՀՀ կառավարությունը դեռ 2003 թվականին նախաձեռնեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» կազմմանն ու իրականացմանը: Բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը մնում է ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրը, որն ամրագրված է ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ ընդունված «Կայուն զարգացման ծրագրում», ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված միջին ժամկետ ծախսային ծրագրերում: ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը», որը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ռազմավարական փաստաթուղթն է ամշակվելիք միջնաժամկետ, ոլորտային և այլ ծրագրային փաստաթղթերի հիմքը: Հանդիսանալով ՀՀ կառավարության

գործունեության առաջնային ուղեցույցը՝ ՀԶԾ-ն հիմնված է հետևյալ չորս գերակայությունների վրա՝

Գերակայություն 1. Զբաղվածության ընդլայնումը

Գերակայություն 2. Մարդկային կապիտալի զարգացումը

Գերակայություն 3. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը

Գերակայություն 4. Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը:

55. Բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը երկրի մարդկային կապիտալի զարգացման գրավականներից ու ՀԶԾ նպատակներից են:

56. Աղքատության վերացման հիմնական ուղղությունները տեղ են գտել նաև «Հազարամյակի զարգացման նպատակներ» ծրագրում, որի գլխավոր նպատակն է մինչև 2015 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունն ու սովը:

57. Ելնելով ԱՀՌԾ-ում բերված աղքատության սահմանումից՝ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային տարրական պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է՝

1) եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ, անձնական գույքի անբավարարություն
2) կրթական ցածր ցենզ և առողջական խնդիրներ
3) տարբեր ռիսկերի (աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ) նկատմամբ անվտանգության ցածր մակարդակ
4) ազդեցության (ձայնազրկություն) ցածր մակարդակ:

58. Աղքատության հակված են՝

1) կանայք և կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները
2) բազմանդամ, շատ երեխաներից՝ հատկապես անչափահաս, բաղկացած տնային տնտեսությունները
3) միայն կենսաթոշակառուներից և հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած տնային տնտեսությունները
4) կրթություն, առողջություն չունեցողները
5) գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները:

59. Աղքատությանը հակված են մայրաքաղաքից և քաղաքներից հեռու գտնվող, սահմանամերձ, ծովի մակերևույթից բարձր, մինչև 500 բնակիչ ունեցող, անբարենպաստ ժողովրդագրական (երեխաներ, ծերեր) կազմով, թերզարգացած ենթակառուցվածքներով համայնքները:

60. Աղքատության հիմնական բաղադրիչներն են.

1) կենսաբանական
2) սոցիալական
3) հոգևոր-մշակութային:

61. Այս բաղադրիչներից առաջնայինն ու կարևորագույնը դա կենսաբանական աղքատությունն է: Մարզում կենսաբանական աղքատության գնահատումը պետք է կատարվի մի քանի կտրվածքներով՝ հաշվի առնելով մարզում սոցիալ-տնտեսական, տեղային հոգեբանական առանձնահատկությունները:

62. Մարզում աղքատության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրներ են հանդիսանում.

1)ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները,

2) ԱՎԾ հրապարակումները,

3)ՀՀ Արմավիրի մարզպետի գործունեության տարեկան հաշվետվությունները:

63. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի իրականացված հետազոտությունների արդյունքները, աղքատության հիմնական ցուցանիշները 2012 թվականին և աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2012 թվականներին ըստ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված են աղյուսակ 3.1-ում: 2012թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի և ք.Երևանի՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ տատանվում է: Արմավիրի մարզի ցուցանիշը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից: 2008-2012 թվականներին աղքատության մակարդակի ցուցանիշներն աճել են բոլոր մարզերում և ք.Երևանում, բացի Վայոց Ձոր մարզից, այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ գրանցվել է Արմավիրի մարզում՝ 1.4 անգամ: Միևնույն ժամանակաշրջանում աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը, սակայն այն առավել նկատելի է Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում և ք.Երևանում:

Աղյուսակ 3.1.Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2012թթ.

(տոկոսներով)

Մարզեր	2008թ.		2012թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	% -ն աղքատների մեջ	% -ն առկա բնակչության մեջ
ք. Երևան	1.1	20.1	2.2	25.6	26.8	33.9
Արագածոտն	0.5	20.3	0.9	21.2	2.2	3.4
Արարատ	1.6	31.3	2.1	34.6	8.8	8.2
Արմավիր	**0.7**	**24.5**	**3.4**	**34.3**	**9.4**	**8.9**
Գեղարքունիք	0.4	32.0	1.4	35.5	7.8	7.1
Լոռի	2.8	34.2	3.4	38.7	11.6	9.7
Կոտայք	2.1	39.5	5.7	42.5	13.1	1.0
Շիրակ	4.6	42.4	5.5	46.0	12.2	8.5
Սյունիք	1.3	20.3	0.7	25.6	3.2	4.1
Վայոց Ձոր	1.9	21.1	0.5	20.7	1.2	1.8
Տավուշ	1.9	23.2	1.9	27.5	3.7	4.4
Հանրապետա-կան միջինը	**1.6**	**27.6**	2.8	32.4	100	100

Աղբյուրը՝ 2008թ. և 2012թ. ՏՏԿԱՀ

64. Աղքատության մակարդակի տարբերությունները հանրապետության տարբեր տարածաշրջաններում պայմանավորված են մի շարք գործոններով.

1) տարածքների տնտեսական ներուժի տարբերությամբ
2) ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման տարբեր մակարդակներով
3) բնակչության խիստ տարբեր ժողովրդագրական վիճակով
4) տարբեր բնակլիմայական պայմաններով:

65. Աղքատության մակարդակը տարբեր է անգամ մարզի տարբեր տարածաշրջաններում: Այսպես, Էջմիածնում և Բաղրամյանում չի կարող լինել աղքատության միևնույն մակարդակը:

66. Աղյուսակ 3.2-ի տվյալները վկայում են, որ չնայած աղքատության մակարդակը Արմավիրի մարզում 2007 թվականին 11 տոկոսային կետով նվազել է 1998/99թթ. համեմատությամբ, այնուամենայնիվ շարունակում է 5.7 տոկոսային կետով բարձր մնալ աղքատության հանրապետական միջին ցուցանիշից և 10.7 տոկոսային կետով բարձր է Երևանի ցուցանիշից:

67. Աղքատության երևույթի գլոբալ վերլուծությունները վկայում են, որ աշխարհի աղքատ բնակչությունը գլխավորապես գյուղաբնակ է: ՀՀ Արմավիրի մարզի բնակչության 68.1-%-ը (183.9հազ.մարդ) կենտրոնացած է գյուղերում:

Աղյուսակ 3.2. ՀՀ Արմավիրի մարզի մշտական բնակչությունը (հունվարի 1-ի դրությամբ)

N	Տարածաշրջան	2012թ.	այդ թվում՝		2013թ.	այդ թվում՝		2014թ.	այդ թվում՝ այդ թվում՝	
			քաղա-քային	գյուղա-կան		քաղա-քային	գյուղա-կան		քաղա-քային	գյուղա-կան
1	Արմավիր	123.3	44.6	78.7	112.7	38.6	74.1	112.9	38.5	74.4
2	Էջմիածին	144.3	57.9	86.4	134.2	46.7	87.3	134.1	46.8	87.3
3	Բաղրամյան	20.7	-	20.7	20.5	-	20.7	20.2	-	20.2
	Ընդամենը մարզում	**288.3**	**102.5**	**185.8**	**267.1**	**85.3**	**181.8**	**267.2**	**85.3**	**181.9**
	Տեսակարար կշիռը %-ով	100	35.5	64.4	100	31.9	68.1	100	31.9	68.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը» 2011,2012,2013,2014

68. Հանրապետության աղքատության առանձնահատկություններից ելնելով, մարզում գյուղական բնակչությունն առավել դանդաղ տեմպերով է հաղթահարում աղքատությունը, քան քաղաքայինը: Անհավասարության աստիճանը գյուղական բնակավայրերում նկատելիորեն բարձր է քաղաքային բնակավայրերի համեմատ, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես լուրջ աղքատածին գործոն: Մարզի գյուղերը խիստ տարբերակված են աշխարհագրական դիրքով, կլիմայական պայմաններով, տարբեր կադաստրային գնահատականներ ունեցող հողերով, մի քանիսում ոռոգման ջրի բացակայությամբ, որոնք էլ հանգեցնում են նյութական կամ եկամտային աղքատության հակվածության տարբեր մակարդակների և հանրային ծառայությունների ոչ հավասար մատչելիության: Գյուղերն իրարից տարբերվում են իրենց սահմանային, մայրաքաղաքին, հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհներին մոտ գտնվելու աշխարհագրական դիրքով:

69. Հայաստանում աղքատությունը առավել տարածված է աղետի, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային գոտիներում: ՀՀ Արմավիրի մարզի 97 համայնքներից 8-ը սահմանամերձ են: Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս չափը: Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունը ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները:

Արմավիրի մարզի 6 համայնքներ ունեն մինչև 500 բնակիչ, 7 համայնքներ՝ 501-1000 բնակիչ, 84 համայնքներ՝ 1000 և ավելի բնակիչ: Այս տվյալները վկայում են մարզի համայնքների գրեթե 13.4%-ի համար համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտների մասին:

70. Խոցելիության վրա ազդող գործոններից է նաև բնակչության անբարենպաստ կազմը: Տարեցների տեսակարար կշիռը մարզում 2013թ. կազմել է 10.4% (քաղաքային բնակչության մեջ այն կազմել է 9.3%, գյուղական բնակչության մեջ՝ 12.9%):

Աղյուսակ 3.3. Մշտական բնակչության բաշխումն ըստ սեռա-տարիքային խմբերի (քաղաքային/գյուղական կտրվածքով 2013թ.)

	Տարածաշրջան		**2013թ.**							
			տարիքային խմբերը							
			մինչև 19տ.	որից՝ կին	20-64տ.	որից՝ կին	65-ից բարձր	որից՝ կին	Ընդա-մենը	որից՝ կին
1	**ՀՀ Արմավիրի մարզ**	քաղաքային	23388 (27.5%)		53614 (63.0%)		8048 (9.5%)		85050	
		գյուղական	52345 (29.0%)		113132 (62.6 %)		15243 (8.4%)		180720	
		ընդամենը	**75733** (28.5%)	**35446**	**166746** (62.7%)	**86015**	**23291** (8.8%)	**14231**	**265770**	**135692**

Աղբյուրը՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» 2013թ. էջ 55-57

Աղյուսակ 3.4. Կենսաթոշակառուների, նպաստառու ընտանիքների թիվը ՀՀ Արմավիրի մարզում (տարեվերջ)

N/N	Տարածաշրջան	2010թ.	2011թ.	2012թ.
	Կենսաթոշակառուներ (մարդ)			
1	Հայաստանի Հանրապետություն	465 084	454 488	452 505
2	**Արմավիրի մարզ**	**33 784**	**33 083**	**32 593**
	Նպաստառու ընտանիքներ			
1	Հայաստանի Հանրապետություն	108 940	96 358	111 412
2	**Արմավիրի մարզ**	**5 545**	**5 220**	**5 973**

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը թվերով», 2013թ. Սոցիալական ոլորտ՝ էջ 50

71. Աղյուսակ 3.4-ից երևում է, որ մարզում 2012 թվականին կենսաթոշակառուների թիվը նվազել է 2010 թվականի համեմատ, իսկ նպատառու ընտանիքների թիվը ավելացել է: Ընդ որում, ժողովրդագրության տեսակետից մարզում ամենացավոտ հարցերից է բնակչության «ծերացումը»: Մարզի բնակչության շուրջ 12.2%-ը կենսաթոշակառուներ են:

72. ՀՀ Արմավիրի մարզն ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու համար: Հանրապետության համախառն արտադրանքի ծավալում մեծ է մարզի հատկապես գյուղատնտեսական ծավալների ցուցանիշները: 2008թ.-ին Արմավիրի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն 4.5%, գյուղատնտեսություն 15.1%, շինարարություն 1.0%, մանրածախ առևտուր 2.6%, ծառայություններ 0.8%:

73. 2012 թվականին ՀՀ Արմավիրի մարզին բաժին է ընկել հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալի 4%-ը և գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալի 17.6%-ը (աղյուսակ 3.5):

Աղյուսակ 3.5. Մարզի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի բաժինը հանրապետության համախառն արտադրանքի ծավալներում (ընթացիկ գներով), 2010-2012թթ.

Մարզի տեսակարար կշիռը	2010թ.		2011թ		2012թ.	
	Գումարը (մլրդ դրամ)	%	Գումարը (մլրդ դրամ)	%	Գումարը (մլրդ դրամ)	%
ՀՀ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը	824.4	100	998.9	100	1 121. 7	100
Արմավիրի մարզ	37.4	**4.5**	41.8	**4.2**	44.4	**4.0**
ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	636.7	100	795.0	100	841.5	100
Արմավիրի մարզ	104.5	**16.5**	135.0	**17.0**	148.4	**17.6**

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը թվերով» 2013թ.
Արդյունաբերություն՝ էջ 22, Գյուղատնտեսություն՝ էջ 25

74. Մարզի եկամուտների հիմնական մասը առաջանում է գյուղատնտեսական գործունեությունից: Չնայած մարզի գյուղացիական տնտեսությունները հիմնականում ունեն սեփական հող, այնուամենայնիվ զիջում են քաղաքային տնտեսություններին և եկամտային, և մարդկային աղքատության առումով, և հիմնական կապիտալի առկայությունը չի նպաստում աղքատության կրճատմանը:

75. Մարզում 97066.9 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից 61592.3 հեկտարը ոռոգելի են: Շուրջ 19000 հա գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր չեն մշակվում հիմնականում ոռոգման ջրի պակասի, ներտնտեսային ցանցերի բացակայության, կրկնակի աղակալված լինելու, ինչպես նաև առանձին գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության և արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով:

76. Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվել է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով: 2013թ. մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 163.2 մլրդ. դրամ:

77. Ուսումնասիրության արդյունքում մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

1) բնական աղետները (երաշտ, կարկուտ) և համապատասխան ծառայությունների բացակայությունը
2) ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը
3) սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գնելու անկարողությունը
4) գյուղատնտեսական մեխանիզացիայի պակասը
5) գյուղատնտեսական վարկերի անմատչելիությունը
6) ճանապարհների անբարեկարգ վիճակը
7) իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները
8) վերամշակման արտադրության սահմանափակությունը
9) անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը
10) տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը:

78. Մարզի ոչ գյուղատնտեսական հատվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը բաժին է ընկնում առևտրին և սպասարկման ոլորտին:

79. Մարզում առկա գործազրկության մակարդակը շատ ավելի բարձր է, քան պաշտոնական գրանցված մակարդակն է: Խնդիրը ավելի սուր է մարզի քաղաքային համայնքներում, որը հիմնավորվում է քաղաքում չզբաղված աշխատուժի համեմատ աշխատատեղերի խիստ անբավարար քանակով, իսկ գործազուրկների բանակում մեծանում է տղամարդկանց քանակը, որը մտահոգիչ ցուցանիշ է:

80. Աղքատության հաղթահարումը մարզում պահանջում է տարածքային առանձնահատուկ մոտեցում.

1) մարզի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխում
2) ոչ գյուղատնտեսական ոլորտում փոքր ու միջին բիզնեսին աջակցում
3) գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացում
4) գյուղատնտեսության տեխնիկական վերազինում և ինտենսիվ զարգացում:

81. Համայնքներում կատարված հետազոտությունների արդյունքներով համայնքներում առանձնացված են հետևյալ խոչընդոտները, որոնք այսօր խանգարում են գյուղի զարգացմանը՝

1) ոռոգման համակարգի աշխատանքի կազմակերպման պակաս արդյունավետությունը
2) գյուղի դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
3) գյուղտեխնիկայով պակաս ապահովվածությունը
4) գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպությունների ստեղծման դանդաղումը
5) խմելու ջրի համակարգերի կառուցման և վերականգնման առանձին դժվարությունները համայնքներում:

82. Չնայած նրան, որ սոցիալական ենթակառուցվածքներ կան համայնքներում, սակայն հիմնականում նրանց վիճակն անմխիթար է՝

1) կրթությունը մատչելի է բոլորի համար (գոնե հանրակրթության մասով), սակայն վատ է մի շարք կրթական հաստատությունների վիճակը
2) առողջապահությունը մատչելի է բոլոր համայնքների համար, սակայն մտահոգիչ են դեռևս առողջապահական ծառայությունների բարձր գները
3) արժանավայել կենսամակարդակի ապահովման մատչելիությունը հասանելի չէ բոլորին:

83. ՀՀ Արմավիրի մարզում աղքատության մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

1) երկրի աղքատության ընդհանուր առանձնահատկություններից բխող գործոններ
2) մարզի տնտեսական զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ
3) մարզի համայնքների զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ:

84. Թվարկված գործոններից գրեթե բոլորն առկա են մարզում, որի հետևանքով մարզի աղքատության խնդիրներն ավելի սրված են, որտեղից հետևում է մարզի աղքատության հաղթահարման նպատակային ծրագրի մշակման և իրականացման անհրաժեշտությունը: Փորձենք տալ աղքատության մակարդակի տարբերությունների բացատրությունը՝ ըստ տարածաշրջանների: Նախ, աղքատության մակարդակի ցուցանիշում բարձր տեղ է զբաղեցնում Բաղրամյանի տարածաշրջանը, որը, որպես վարչական շրջան, խորհրդային տարիներին չհասցրեց իրականացնել այն գործողություններն ու ծրագրերը, որը տարածքում կապահովեր ավելի բարենպաստ պայմաններ, չկազմավորվեցին սոցիալական ենթակառուցվածքները, հողերի մի զգալի մասը մնաց չմելիորացված, ամբողջությամբ չլուծվեց հողը ոռոգելի դարձնելու խնդիրը: Աղքատության համեմատաբար բարձր մակարդակ ունեն բոլոր այն համայնքները, որոնք նախկինում այս կամ այն կազմակերպության բանվորական ավաններ են եղել՝ Շահումյանի թ/ֆ, Ջրառատի թ/ֆ (Ջրարբի), Լեռնագոգ, Քարակերտ, Մյասնիկյան, Դալարիկ, Խանջյան, Մայիսյան, Նորավան, որոնց բնակչությունն առանձնապես չի զբաղվել գյուղատնտեսությամբ, հիմնականում բնակվել են պետական բնակարաններում, չունեն սեփականաշնորհված հողատարածքներ և այժմ պարզապես մատնվել են անգործության: Դրանք այն համայնքներն են, որոնցում բնակվողները ապրելով գյուղում, փորձում էին վարել քաղաքային կենցաղ, որի հնարավորությունը հիմա իսպառ բացակայում է, որովհետև չկան այն հսկա գործարանները, որոնց բազայի վրա գոյատևում էին այդ համայնքները: Լուրջ խնդիրներ ունեն հատկապես այն համայնքները, որոնք ունեն ոռոգման խնդիրներ տարբեր պատճառներով՝ հեռու են ընկած ջրատարներից, մշակվող հողերը կարիք ունեն գերնորմատիվային ջրի (20 համայնքներում շուրջ 1382.8հա), չունեն ոռոգման նորմալ ներտնտեսային ցանցեր:

85. Ինչ վերաբերվում է միգրացային, ապա առկա տվյալները վկայում են (տես՝ աղյուսակ 3.6), որ 2012թ.-ին մարզից մեկնել է բնակչության 1.2%-ը: Միգրացիայի մնացորդը 2010-2011թթ. համար կազմել է համապատասխանաբար 373, -133 մարդ:

Աղյուսակ 3.6. Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները 2010-2012թթ.

Տարածաշրջանը	Տարեթիվը	Ծնունդ	Մահ	Բնական աճ	Միգրացիա (մարդ)

						Եկողների թիվը	Մեկնողների թիվը	Միգրացիայի մնացորդը
Հայաստանի Հանրապետություն	**2010**	3249.5	44825	27921	16904	7920	10069	-2149
	2011	3018.9	43340	27963	15377	26639	30380	-3741
	2012	3021.4	42480	27599	14881	*	*	*
Արմավիրի մարզ	**2010**	**284.1**	**4051**	**2293**	**1758**	**1014**	**641**	**373**
	2011	**265.8**	**3954**	**2282**	**1672**	**3080**	**3213**	**-133**
	2012	**266.2**	**3730**	**2316**	**1414**	*****	*****	*****

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը թվերով» 2012թ, բնակչություն՝ էջ 20-21, *թվերը ԱՎԾ-ի կողմից հրապարակված չեն

86. Արմավիրի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումները գտնվում են ազգային մակարդակում և, հետևաբար, պահանջում են համընդհանուր պետական մոտեցում, առնչվում են.

1) գյուղի զարգացմանը
2) փոքր ու միջին համայնքների զարգացմանը
3) սահմանամերձ գոտիների սոցիալ-տնտեսական աջակցությանը
4) խոցելի խմբերի սոցիալական օժանդակության պետական ծրագրերի մշակմանը, դրանց կատարելագործմանը և իրագործմանը:

87. Տնտեսական ներուժի առանձնահատկություններով պայմանավորված աղքատության խնդիրները հիմնականում առնչվում են մարզի տնտեսական ավանդույթների, արտադրական կառուցվածքի, համայնքների տիպաբանության, աշխատանքի շուկայի, ներդրումների միջավայրի և այլ տնտեսական զարգացումը կանխորոշող գործոններին:

88. ՀՀ Արմավիրի մարզի տնտեսական ներուժին չափազանց մեծ վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի և իրացման շուկաների բացակայության և բարոյաֆիզիկական մաշվածության պատճառներով: Ներկայումս մարզի նախկին արդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը՝ հատկապես վերամշակող կազմակերպությունները, չեն աշխատում կամ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ: Դա բացասական ազդեցություն է թողնում հատկապես նախկինում խոշոր արդյունաբերական կենտրոն հանդիսացող Արմավիր, Էջմիածին քաղաքային համայնքների և Բաղրամյանի տարածաշրջանում Դալարիկ և Լեռնագոգ գյուղական համայնքների կենսագործունեության, նրանց բնակչության ապրելակերպի վրա:

89. 2009թ. մարզի զբաղվածության տարածքային երեք կենտրոններում գրանցված գործազուրկների թիվը կազմում է 2440, որը մարզի ամբողջ բնակչության թվի 0.9%-ն է

կազմում: Ըստ տվյալների, պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը մարզում, որպես խոցելիություն ծնող պատճառ, չնայած շատ ցածր է, սակայն իրականում թե քաղաքային, թե գյուղական համայնքներում առկա է գործազրկության ավելի բարձր մակարդակ:

90. Խորհրդային ժամանակներից Հայաստանը ժառանգել է այնպիսի ենթակառուցվածքներ, որն իր ծավալներով մեծ է և պահանջում է պահպանման մեծ ծախսեր: Համայնքների փոքր բյուջեները և դրանց թերակատարումը թույլ չեն տալիս հոգալ այդ ենթակառուցվածքների վերանորոգման և պահպանման ծախսերը: Հետևաբար, ավելի քան 15 տարի է, ինչ ենթակառուցվածքների վերանորոգման և պահպանման աշխատանքները կանոնավոր կերպով չեն իրականացվում:

91. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում վերջին տարիներին որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում վերանորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

92. Մարզի 97 համայնքներում նշվել են հետևյալ հիմնախնդիրները, որոնք ներառված են համայնքների զարգացման քառամյա ծրագրերում և հրատապ լուծում են պահանջում: Հիմնախնդիրները ներկայացվում են ըստ առաջնահերթությունների.

1) ճանապարհների վերանորոգում
2) ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում
3) խմելու ջրի համակարգի կառուցում և վերանորոգում
4) գործազրկության վերացում, աշխատատեղերի ստեղծում
5) գյուղատնտեսական տեխնիկայով ապահովում
6) գյուղատնտեսական արտադրանքի վերամշակող կազմակերպությունների ստեղծում
7) համայնքների գազաֆիկացում:

93. Համայնքի բնակչության բարեկեցության բարձրացման համար համայնքապետերը առաջարկել են կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ: Նախ և առաջ նրանք նշել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում: Ստորև բերված ցանկում նշված են Արմավիրի մարզի քաղաքային համայնքների բարեկեցության ապահովման հետևյալ առաջնահերթությունները՝

1) նոր աշխատատեղերի ստեղծում
2) սոցիալ-մշակութային օբյեկտների հիմնանորոգում
3) ճանապարհների վերանորոգում
4) բնակարանաշինության զարգացում
5) Էջմիածին քաղաքի համար՝ նաև խմելու ջրի հիմնախնդրի լուծում
6) Մեծամոր քաղաքի համար՝ մաքրման կայանի կառուցում:

94. Շատ համայնքներ (հատկապես փոքր) սեփական բյուջեի շրջանակներում չեն կարողանում լուծել համայնքի հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր է

միջհամայնքային միավորումների դերը, որոնք կարող են աջակցել համայնքներին համատեղ լուծելու այն խնդիրները, որոնք համայնքներն առանձին-առանձին դժվարանում են լուծել:

95. Արմավիրի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումներն անմիջականորեն կապված են համայնքների զարգացման հետ, առնչվում են՝

1) մարզային, համայնքային, միջհամայնքային ճանապարհների բարեկարգմանը,
2) փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների ներգրավմամբ միջհամայնքային միավորումների ձևավորմանը,
3) սահմանամերձ և ոռոգման խնդիրներ ունեցող համայնքների համար նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
4) մարզի քաղաքների առաջանցիկ զարգացման քաղաքականությունների և համալիր ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի գյուղական և քաղաքային համայնքների փոխլրացնող և ներդաշնակ զարգացումը:

96. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվը բաղկացած է կրթության, առողջապահության, անվտանգ խմելու ջրի անհասանելիության ու մշտական կացարանի բացակայության ցուցանիշների համակցությունից: Թվարկված բաղադրիչների հիման վրա կառուցված մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկների (աղյուսակ 3.7)՝ մարդկային աղքատության տեսակետից ՀՀ Արմավիրի մարզը չորրորդն է Երևանից հետո: Կրթական և առողջապահական ծառայությունների անմատչելիության ցուցանիշը մարզում կազմում է համապատասխանաբար 0.125 և 0.212:

Աղյուսակ 3.7. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերը ՀՀ մարզերում ու դրանց դասակարգումն ըստ մարդկային աղքատության

Մարզերի դասակարգումն ամենափոքր մարդկային աղքատության համաթվից ամենամեծը		ՄԱՄՀ	Կրթական ծառայությունների անմատչելիություն	Առողջապահական ծառայությունների անմատչելիություն	Խմելու ջրի անվտանգ աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելություն
1	Երևան	0.325	0.096	0.225	0.005
2	Սյունիք	0.361	0.106	0.220	0.036
3	Կոտայք	0.414	0.084	0.263	0.067
4	Վայոց Ձոր	0.438	0.136	0.256	0.047
5	**Արմավիր**	**0.517**	**0.125**	**0.212**	**0.181**
6	Շիրակ	0.520	0.092	0.256	0.172
7	Լոռի	0.575	0.176	0.248	0.151
8	Տավուշ	0.624	0.169	0.263	0.195
9	Արարատ	0.626	0.178	0.285	0.163
10	Գեղարքունիք	0.634	0.211	0.242	0.182
11	Արագածոտն	0.753	0.215	0.283	0.256

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական միտումները» թիվ 5

97. ՀՀ Արմավիրի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են.

1) նախադպրոցական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բարելավմանը
2) մոր և մանկան առողջության պահպանմանը
3) խմելու ջրի հասանելիության ապահովմանը
4) քաղաքային տնտեսության բարեկարգմանը, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար կրթական և առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, արժանավայել կենսապայմանների ապահովումը:

98. Հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման սահմանափակությունն աղքատության երևույթի թերևս ամենաքիչ ուսումնասիրված բաղադրիչն է: Սակայն որոշակի քանակական տվյալների վերլուծության միջոցով կարելի է պատկերացում կազմել Արմավիրի մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման հնարավորությունների մասին: Մշակույթի և սպորտի բնագավառներում դեռևս չլուծված են մնում գյուղական համայնքների մշակույթի տների, ակումբ-գրադարանների, մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

99. ՀՀ Արմավիրի մարզի բնակչության աղքատության հաղթահարման տեսանկյունից հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման խնդրի լուծումը պահանջում է՝

1) մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջմունքների որակական հետազոտությունների իրականացում
2) հոգևոր-մշակութային պահանջմունքների դասակարգում՝ ըստ բնակչության տարբեր խավերի համար գերակայությունների
3) որոշ համայնքների համար մեկուսացվածության վերացում՝ թերթերի հասանելիության ապահովման, հեռահաղորդակցության բարելավման միջոցով:

100. ՀՀ Արմավիրի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը.

1) Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում
2) Գյուղատնտեսության զարգացում
3) Սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում
4) Մարզային ենթակառուցվածքների բարելավում
5) Մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդում և հետագա զարգացում
6) Բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում:

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1. Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն

101. Արդյունաբերությունը հանդիսանում է Արմավիրի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Ներկայումս Արմավիրի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

102. Մարզում 2013թ. ընթացքում թողարկվել է 50225.6 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 4.0%-ը (2011թ. համեմատ մարզում արտադրվել է 8,511.52մլն դրամի, 2012թ. համեմատ՝ 6,182.2 մլն դրամի ավել արտադրանք): Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը 2013թ. կազմել է 104.8%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 6.0%-ով: Ընդհանուր առմամբ, վերջին երեք տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 4.2-5.0%-ը (մարզում 2011-2013թթ. արտադրված արդյունաբերական արտադրանքի ցուցանիշները հանրապետական միջինի նկատմամբ բերված են աղյուսակ 4.1-ում).

Աղյուսակ 4.1. Արդյունաբերական արտադրանքի ծավալները

	Հայաստանի Հանրապետություն			ՀՀ Արմավիրի մարզ		
	2011թ.	**2012թ.**	**2013թ.**	**2011թ.**	**2012թ.**	**2013թ.**
Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ	992,078.0	1,120,475.8	1,240,578.7	41,714.1	44,043.4	50,225.6
Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն.դրամ	971,839.8	1,116,886.5	1,214,412.7	43,151.9	45,443.8	50,891.2
Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %	114.1	108.8	106.8	107.2	98.8	104.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, %	100	100		4.2	3.9	4.0

103. 2013 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին, ընթացիկ գներով, մարզում թողարկվել է 50,225.6 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ 44,043.4 մլն. դրամ, աճը կազմել է 6,182.2 մլն.դրամ: 2013 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին պատրաստի արտադրանքի իրացումը (ընթացիկ գներով) կազմել 50,891.2 մլն. դրամ, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ 45,443.8 մլն. դրամ, աճը կազմել է 5,447.4 մլն.դրամ: Աճ է գրանցվել մշակող արդյունաբերության (շուրջ 2374.5 մլն. դրամ), հանքագործական արդյունաբերության (շուրջ 223.0 մլն. դրամ), էլեկտրականության արտադրության (շուրջ 3565.8 մլն. դրամ) ոլորտներում: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 104.8%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 6%-ով (աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. Արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2012-2013թ. հունվար-դեկտեմբեր)

Մարզեր	**Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով** (մլն. դրամ)			**Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով** (մլն. դրամ)			**Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %**		
	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբե-րություն	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբե-րություն	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբե-րություն
Ընդամենը ՀՀ	1,120,475.8	1,240,578.7	120,103	1,116,886.5	1214412.7	97,526.2	108.8	106.8	-2.0
այդ թվում՝									
ք. Երևան	450,039.5	506,816.1	56,776.6	451,290.2	493589.5	42,299.3	105.6	106.1	0.5
Արագածոտն	19,555.5	25,112.7	5,557.2	19,120.5	21217.6	2,097.1	83.8	117.1	33.3
Արարատ	104,463.5	123,593.8	19,130.3	118,457.8	137513.0	19,055.2	116.8	114.3	-2.5
Արմավիր	**44,043.4**	**50,225.6**	**6,182.2**	**45,443.8**	**50,891.2**	**5,447.4**	**98.8**	**104.8**	**6.0**
Գեղարքունիք	21,657.7	23,665.5	2,007.8	13,167.8	14737.8	1,570.0	118.1	105.6	-12.5
Լոռի	80,043.7	75,260.1	-4,783.6	77,551.7	74580.5	-2,971.2	113.7	102.9	-10.8
Կոտայք	144,864.5	166,063.7	21,199.2	144,882.7	164966.6	20,083.9	124.9	104.7	-20.2
Շիրակ	40,671.6	42,628.5	1,956.9	37,140.7	41633.8	4,493.1	88.2	96.6	8.4
Սյունիք	198,577.8	204,911.3	6,333.5	193,037.9	192825.4	-212.5	110.5	108.1	-2.4
Վայոց Ձոր	9,151.1	12,002.8	2,851.7	9,319.1	12400.9	3,081.8	113.5	122.7	9.2
Տավուշ	7,407.5	10,298.0	2,890.5	7,474.3	10056.4	2,582.1	106.6	122.1	15.5
Մարզի տեսակարար կշիռը հանրա-պետությունում արտադրված արտադրանքի նկատմամբ, %	**3.9**	**4.0**		**4.1**	**4.2**		**90.8**	**98.1**	

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012, 2013թթ. հունվար-դեկտեմբերին

104. Արմավիրի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ հանրապետության մարզերի և ք.Երևանի (2013թ. հունվար-դեկտեմբեր) հետևյալն է.



105. Մարզի արդյունաբերության մեջ կարևոր նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը, որի ծավալը տարեցտարի ավելացել է: Մշակող արդյունաբերությունը ավելացել է ի հաշիվ սննդամթերքի՝ ներառյալ խմիչքների արտադրության և ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակման: Մշակող արդյունաբերությունը 2012-2013 թվականներին ներկայացվում է աղյուսակ 4.3-ում.

Աղյուսակ 4.3. ՀՀ Արմավիրի մարզի մշակող արդյունաբերությունը, 2012-2013թթ.հունվար-դեկտեմբեր

Տնտեսական գործունեության տեսակները	Արտադրանքի ծավալը, համադրելի գներով, հազ.դրամ		Աճի տեմպը, %-ով
	2013թ.	**2012թ.**	
Ընդհանուր մշակող արդյունաբերություն	**17902086**	**16739709**	**106.9**
այդ թվում՝			
Սննդամթերքի արտադրություն	10913560	10773722	101.3
Խմիչքների արտադրություն	1753181	1652040	106.1
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	1657181	1447565	114.5
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	1437009	920171	156.2
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	35405	-	-
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	1244613	1045524	119.0
Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում	-	49525	-
Հիմնային մետաղների արտադրություն	82304	100167	82.2
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	778833	750995	103.7

Աղբյուրը՝ Արդյունաբեական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք.Երևանի, 2013թ. հունվար-դեկտեմբեր

106. Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք որպես

արդյունք խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումն ինչպես տարածքներում, այնպես էլ ամբողջ երկրում: Հայաստանի տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններ: Շուկայական տնտեսությանն անցման փուլում, սկսած 2000-ականներից, այդ անհամաչափություններն էլ ավելի են խորացել և շարունակում են անընդմեջ խորանալ՝ հասնելով մտահոգիչ մակարդակի: Տնտեսական զարգացումը կենտրոնացել է Երևանում և որոշակի, խիստ սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), որպես արդյունք՝ առաջացնելով երկրի տարածքներում բնակչության կենսամակարդակի/աղքատության ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ:

Աղյուսակ 4.4. ՀՀ մարզերում և Երևանում արդյունաբերական արտադրանքի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով, 2004-2012 թթ., հազար դրամ

	2004	2011	2012
Երևան	217.0	399.4	424.2
Արագածոտն	45.4	152.0	147.0
Արարատ	153.3	288.4	401.8
Արմավիր	**96.6**	**146.4**	**167.1**
Գեղարքունիք	81.3	74.1	92.0
Լոռի	113.2	260.5	339.7
Կոտայք	213.5	370.4	569.3
Շիրակ	46.1	151.7	161.5
Սյունիք	582.6	1,166.6	1,401.4
Վայոց ձոր	84.2	138.7	173.7
Տավուշ	32.8	47.0	60.8
Միջինը՝ մարզերի և Երևան քաղաքի համար	151.5	288.5	358.1
Ինդեքս, 2004թ. =100	100.0	190.5	194.7
Տարածքային անհամաչափության բնութագրիչներ			
Անհամաչափության միջակայք	549.9	1,119.5	1,340.6
Ինդեքս, 2004թ. =100	100.0	203.6	243.8
Միջին բացարձակ գումարային շեղում	101.9	192.7	248.1
Ինդեքս, 2004թ. =100	100.0	189.1	243.4

Աղբյուրը՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», ՀՀ ԱՎԾ, 2010, 2012, 2013,
«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», ՀՀ ԱՎԾ, 2012

107. Մարզերի և Երևան քաղաքի տնտեսական զարգացման անհամաչափություններն աճում են ըստ տնտեսական բոլոր հիմնական ցուցանիշների: Այսպես. բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի մարզային (ներառյալ՝ Երևանը) միջին ցուցանիշը 2004-2012 թթ. աճել է 1.9 անգամ: Սակայն նույն ցուցանիշի անհամաչափության միջակայքն ու միջին բացարձակ շեղումն այդ ընթացքում աճել են շուրջ 2.4 անգամ: Արդյունաբերական արտադրանքի շնչային ծավալի ցուցանիշն ամենաբարձրն է Երևանում, Սյունիքի և Կոտայքի մարզերում:

108. Նմանատիպ պատկեր է դիտվում նաև գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի ցուցանիշի պարագայում: Մեկ շնչի հաշվով այս ցուցանիշի մարզային միջինը 2004-2012թթ. աճել է 1.6 անգամ: Սակայն տարածքային անհամաչափության ցուցանիշներն ավելի արագ են աճել: Մարզային անհամաչափության միջակայքն աճել է 1.7, իսկ միջին բացարձակ շեղումը՝ 2.1 անգամ: Արդյունաբերական արտադրանքի շնչային ծավալների համեմատ, գյուղատնտեսական արտադրանքի շնչային ծավալների մարզային անհամաչափություններն ավելի փոքր են և դանդաղ են աճում:

109. Տնտեսական մյուս հիմնական ցուցանիշների տարածքային անհամաչափության բնութագրիչների վերլուծությունը վկայում է, որ դրանք բոլորն էլ աճել են, սակայն ամենամեծ աճն ունեցել են բնակչությանը մատուցվող ծառայությունները: Այս ցուցանիշի անհամաչափության միջակայքն ու միջին բացարձակ գումարային շեղումը մարզային կտրվածքով 2004-2012 թթ. աճել են շուրջ 5.6 անգամ, իսկ մարզային միջին ցուցանիշն աճել է 3.4 անգամ: Այս ցուցանիշների կտրվածքով նույնպես ամենաբարենպաստ դիրքում Երևանն է:

110. Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության գնահատականների, բոլոր աղբյուրներով մեկ շնչի հաշվով իրականացված կապիտալ ներդրումները Երևանում 2011-2012 թթ. 2.2 անգամ գերազանցել են նույն ցուցանիշը՝ ՀՀ բոլոր մարզերի համար: Սակայն 2007-2008թթ. համեմատ այս տարբերությունը շուրջ վեց անգամ կրճատվել է, ինչը նշանակում է, որ բարելավվել են այս ցուցանիշի գծով տարածքային անհամաչափության բնութագրիչները:

Աղյուսակ 4.5. ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 2008-2012թթ. բոլոր աղբյուրներով 1 շնչի հաշվով իրականացված կապիտալ ներդրումները (հազ. դրամ) և դրանց տարածքային անհամաչափության բնութագրիչները

	2008	2009	2010	2011	2012
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ	234.6	142.5	153.6	123.2	126.2
Ընդամենը մարզեր	44.9	79.4	98.9	87.2	89.5
Երևան	595.6	262.5	257.6	191.7	196.0
Արագածոտն	46.6	51.7	217.0	89.1	156.1
Արարատ	36.6	62.8	75.1	72.4	31.9
Արմավիր	**23.1**	**35.3**	**48.5**	**60.7**	**50.2**
Գեղարքունիք	21.6	77.8	54.9	70.8	50.5
Լոռի	22.5	50.5	72.3	79.8	47.5
Կոտայք	57.7	104.6	122.5	99.3	144.4
Շիրակ	38.6	154.2	92.3	89.4	85.4
Սյունիք	130.8	106.1	200.9	93.3	104.2
Վայոց ձոր	173.8	80.5	86.1	119.4	95.4
Տավուշ	31.4	60.4	119.4	167.2	255.6
Մարզային միջին՝ ներառյալ Երևանը	107.1	95.1	122.4	103.0	110.7
Մարզային միջին՝ առանց Երևանի	58.3	78.4	108.9	94.1	102.1
Անհամաչափության բնութագրիչներ					
Անհամաչափության միջակայք	574.0	227.2	209.1	131.0	223.7
Ինդեքս, 2004թ. =100	127.6	50.5	46.5	29.1	49.7
Միջին բացարձակ շեղում	105.2	44.9	56.1	30.8	56.3

Ինդեքս, 2004թ. =100	135.4	57.7	72.1	39.6	72.4

Աղբյուր՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, ՀՔԾ

111. Հայաստանում մարզային մակարդակով ՀՆԱ-ի ցուցանիշներ պաշտոնապես չեն հրապարակվում: Այնուամենայնիվ, մարզային ՀՆԱ-ների փորձագիտական գնահատականների վերլուծությունը վկայում է, որ տնտեսական զարգացումը կենտրոնացած է հիմնականում Երևանում ու Սյունիքի մարզում: Արմավիրի մարզում այն ցածր է եղել միջին հանրապետական մակարդակից՝ կազմելով դրա 67%-ը:

Աղյուսակ 4.6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հարաբերակցությունը միջին հանրապետականի նկատմամբ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, 2009-2012թթ.,%

	2009	2010	2011	2012	2012թ. շնչային ՀՆԱ-ի ինդեքս (2009թ. = 100)
Ընդամենը, ՀՀ	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**133.5**
Երևան	172.3	162.3	148.7	151.7	117.6
Արագածոտն	65.0	85.4	78.6	82.6	169.8
Արարատ	68.2	74.2	73.8	71.1	139.2
Արմավիր	**67.4**	**62.1**	**70.6**	**67.0**	**132.9**
Գեղարքունիք	63.9	68.2	74.6	69.7	145.7
Լոռի	42.4	47.5	59.3	52.7	166.1
Կոտայք	66.9	65.3	70.5	78.4	156.5
Շիրակ	57.6	54.4	65.0	59.7	138.4
Սյունիք	97.1	133.9	140.2	133.5	183.6
Վայոց ձոր	52.1	55.1	59.5	57.7	147.8
Տավուշ	39.5	46.4	54.8	62.6	212.0

Աղբյուր՝ Հաշվարկված և գնահատված է՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա

112. ՀՀ Արմավիրի մարզում գործող խոշոր կազմակերպություններից են՝

1) «ՄԱՊ» ՓԲԸ - գործում է մարզի Լենուղի համայնքում և համարվում է հանրապետության գյուղատնտեսական մթերքների վերամշակման խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Ժամանակակից գինեգործական մեքենաներով, եվրոպական արտադրության բարձրակարգ տարողություններով հագեցած, բարձրակարգ մասնագետների կողմից կառավարվող ձեռնարկությունն իր արտադրանքն արտահանում է բազմաթիվ երկրներ: Ձեռնարկության արտադրական հզորությունները թույլ են տալիս մթերել մինչև 20 հազար տոննա խաղող՝ գինու և կոնյակի համար և 40 հազար տոննա պտուղ-բանջարեղեն՝ պահածոների արտադրության համար: Գործարանը պայմանագրեր ունի մարզի շուրջ 3000 ֆերմերային տնտեսությունների հետ: 2011 թվականին ՄԱՊ-ը մթերել է 4.5 հազար տոննա խաղող և շուրջ 10 հազար տոննա լոլիկ:

2) «Տիեռաս դե Արմենիա» (Հայաստանի հողեր) ՓԲԸ - ընկերությունը մարզի Բաղրամյան և Արևադաշտ համայնքների հարևանությամբ գտնվող շուրջ 2300հա անմշակ հողատարածքի 80%-ն աստիճանաբար վերածել է մշակովի տնկարկների, մեծածավալ ներդրումների արդյունքում խաղողի 25 տեսակ է մշակվում 400հա տարածության վրա: Ընկերությունն ունի նաև գինու արտադրության հոսքագիծ, գինու սեփական արտադրատեսակ և ավելացնում է նոր տնկիներ՝ կոնյակի վերամշակման

նպատակով:

3) **Վանանդի «Նոյան պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարան** – կառուցվել է 2012թ. ՀՀ առաջատար «Եվրոթերմ» ընկերության կողմից՝ մարզի Բաղրամյանի տարածաշրջանի Վանանդ համայնքում: Վերամշակման եվրոպական չափանիշներին համապատասխանող բարձր տեխնոլոգիաներով ու ավտոմատ կառավարման համակարգերով զինված գործարանն արտադրում է բնական հյութեր, մանկական սննդի արտադրության համար անհրաժեշտ խյուսեր և խտանյութեր, տոմատի և կարմիր պղպեղի մածուկ:

4)«Լևոն» ՍՊԸ – ընկերությունը «Դալարիկ» ապրանքանիշով արտադրում է շուրջ 20 անուն պահածոներ՝ արտահանելով արտադրանքի շուրջ 90%-ը: Միայն 2011 թվականին գործարանում մթերվել է շուրջ 1500 տոննա միրգ և բանջարեղեն, արտադրվել է 350 հազար պահածո:

5)«Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերություն – Արևաշատ համայնքում գործող մսատու թռչնի մայրական հոտի աճեցման և պահպանման համալիրն ու կիսաֆաբրիկատների նոր արտադրամասը, թռչնանոցն ու ինկուբատորները՝ զինված եվրոպական ժամանակակից ավտոմատացված կառավարման համակարգերով, ապահովում են Հայաստանում թռչնամիսի պահանջարկի շուրջ 65%-ը և հավկիթի պահանջարկի 60-65%-ը:

6)«Բիգա» հայ-հոլանդական ընկերություն – Էջմիածնում 2009 թվականից գործող ընկերության ջերմոցներում հոլանդական գերժամանակակից տեխնոլոգիաներով, Հոլանդիայից ներկրվող բարձրորակ հումքից, ամբողջովին ավտոմատացված կառավարման համակարգերի խնամքով ու հսկողությամբ աճեցվում և փաթեթավորվում է եվրոպական չափանիշներին բավարարող, Հայաստանի էկոլոգիապես ամենամաքուր սունկը: Ընկերության արտադրանքի շուրջ 40%-ն արտահանվում է արտերկրի շուկաներ: Ընկերության շնորհիվ Արմավիրի մարզը Հայաստանի թիվ մեկ սունկ արտադրողն է: 2012թ. տարեսկզբին «Բիգան» գործարկեց լոլիկի, վարունգի և պղպեղի ավտոմատացված կառավարմամբ գերժամանակակից մեծ հզորության ջերմոցներ, որտեղ լոլիկի բերքատվությունը Հայաստանի համար աննախադեպ է՝ 40-50կգ՝ մեկ քառակուսի մետրից:

7)«Ամստեր Ֆլաուերս» հայ-հոլանդական ընկերություն - ավտոմատ կառավարման ամենաժամանակակից տեխնոլոգիաների և եվրոպական սարքավորումների կիրառմամբ ընկերությունն աճեցնում է առողջ վարդերի 100-ից ավելի տեսականի, մշտադալար բույսերի, պտղատու ծառերի, միամյա և բազմամյա բույսերի, ինչպես նաև սենյակային էկզոտիկ բույսերի 200-ից ավելի տեսակներ ու ծաղիկների սերմեր:

8)«Պոլիմեր տրուբ» հայ-սիրիական համատեղ ձեռնարկություն –գործում է 2009 թվականից մարզի Մերձավան համայնքում, որը խոշոր տրամաչափի խողովակներ արտադրող եզակի ձեռնակություն է ողջ Հարավային Կովկասում: Գործարանն արտադրում է 800-ից 1400մմ տրամաչափերի խողովակներ՝ լիարժեքորեն բարելավելով հիդրոէնեգետիկայում և ոռոգման համակարգում կիրառվող խոշոր տրամաչափի

խողովակների պահանջարկը հանրապետությունում, ինչպես նաև իր արտադրանքն արտահանում է արտերկրի շուկաներ: 15 մթնոլոտ ճնշմանը դիմացող խողովակների շահագործման երաշխիքային նվազագույն ժամկետը 50 տարի է, որից հետո գործարանը լիովին վերամշակելու է օգտագործված խողովակները՝ ապահովելով անթափոն արտադրության 100%-անոց շրջանառություն, ինչը բնապահպանական առումով աննախադեպ է մեր երկրում և տարածաշրջանում:

9)«Արմավիրի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ –արտադրում է մինչև 9կգ ձուլածո դետալներ, որի համար ունի ՀՀ-ում եզակի համարվող՝ գերճշգրիտ ճնշման վառարան, արտադրում է նաև երկաթյա գնդեր ACP, Ախթալայի ԼՀԿ, Դրմբոնի ոսկու ֆաբրիկա և այլ ընկերությունների համար: Ընկերությունն իր արտադրատեսակներն արտահանում է նաև արտերկիր, իսկ 2011 թվականին արտերկրից ներկրված սարքավորումներով թողարկել է փորձնական նմուշի բարձրակարգ մինի տրակտոր՝ նախատեսված դաշտային աշխատանքների, փոքր տնտեսությունների և ջերմոցների համար:

10)«Ռաստր գործարան» - Էջմիածնում գտնվող ընկերությունն արտադրում է միացուցիչներ, որոնք օգտագործվում են զանազան սարքերում և հիմնականում արտահանվում են Ռուսաստանի Դաշնություն՝ ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններ:

11)«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ – հիմնադրվել է 2001 թվականին, զբաղվում է փայտամշակման, փայտե բարձրորակ արտաքին և ներքին դռների, փայտյա եվրոպատուհանների արտադրությամբ: Ընկերությունն ունի պաշտոնական ներկայացուցիչներ Իտալիայում, Կանադայում, Լեհաստանում, ինչպես նաև հանդիսանում է յոթ եվրոպական առաջատար ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում; Հագեցած լինելով բարձրորակ և ժամանակակից եվրոպական տեխնոլոգիաներով և փայտամշակման հաստոցներով՝ արտահանում է բարձրորակ մուտքի և միջսենյակային փայտե դռներ Կանադա, Լեհաստան և Ռուսաստանի Դաշնություն:

12)«Մուսալեռ տպագրատուն» - 2007-2009թթ. մասնավոր ներդրումների շնորհիվ մարզի Մուսալեռ համայնքում գործում է Հայաստանում և տարածաշրջանում բարձրորակ ռուլոնային տպագրության շուկայում փաթեթավորման արտադրության թիվ մեկ ձեռնարկությունը: Գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած այս ձեռնարկությունը ոչ միայն բավարարում է Հայաստանում պիտակների շուկայի պահանջարկի 90%-ը, այլև արտադրանք և ծառայություններ է արտահանում արտերկրի շուկաներ:

113. Արմավիրի մարզի տարածքում կան օգտակար հանածոների 66 հանքավայրեր, որոնցից 31-ը շահագործվում են 27 տնտեսվարողների կողմից, և 11 երևակումներ, որոնցից ուսումնասիրվում են 2-ը: Նշված հանքավայրերը և երևակումները հաշվառված են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում:

4.2. Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

114. Ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն
2) մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտահանման ներուժի բացահայտում և խթանում
3) արդյունաբերական ձեռնարկություններին որակյալ աշխատուժի (բանվորական) ապահովման նպատակով մարզում միջին մասնագիտական և արհեստագործական հաստատությունների ստեղծման ուղղությամբ հետազոտությունների իրականացում
4) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինում
5) միջազգային շուկայում տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում
6) օժանդակել Արմավիրի մարզի մի շարք (որքան հնարավոր է մեծ թվով) համայնքներում պտղի և բանջարեղենի վերամշակման փոքր արտադրությունների հիմնման և զարգացման գործընթացին
7) օժանդակել պահածոների դիվերսիֆիկացիայի և նոր արտադրատեսակների (մսի, ձկնամթերքի, սնկի և այլ պահածոների, մրգի) ներկայացման գործընթացին
8) նախատեսել խաղողի մթերման ծավալների ավելացում (օժանդակել մարզում խաղողագործության ոլորտի զարգացմանն ու ծավալային աճին՝ շեշտը դնելով հատուկ տեխնիկական տեսակների ավելացման վրա), այս առաջարկությունը բխում է մարզում բազմաթիվ մթերողների առկայությունից և մթերման պատրաստակամությունից
9) ուսումնասիրել Հայաստանում (Արմավիրի մարզում) ձկան կերերի արտադրության հիմնման հնարավորությունը, ինչը թույլ կտա նվազեցնել ձկան ինքնարժեքը
10) օժանդակել Արմավիրի մարզում ձկան վերամշակման (պահածոների արտադրություն, ձկան սառեցում, չորացում, ծխեխաշում և այլն) արտադրության ստեղծմանը՝ նախապես իրականացնելով իրագործելիության հետազոտությունը:

4.3. ՓՄՁ և մասնավոր հատվածի իրավիճակի վերլուծություն

115. Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2015-2018թթ. ՄՁԾ-ով նույնպես առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

116. Ըստ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ փոքր և միջին ձեռնարկությունները Հայաստանի տնտեսության բոլոր ոլորտներում զբաղեցնում են կարևոր դիրքեր, իսկ դրանցից մի քանիսում կազմում են համապատասխան ոլորտների հիմքը: 2008-2011 թթ. ՓՄՁ-ները, համաձայն տարբեր գնահատականների միջինացված ցուցանիշի, աշխատանքով ապահովում են մոտ 100 հազար մարդու:

117. ՓՄՁ զարգացման քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է ՀՀ կառավարության կողմից 2000թ. օգոստոսի 3-ին ընդունված «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները», «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2000թ. դեկտեմբերի 5-ին), Հայաստանի ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները Եվրամիության կողմից սահմանված ՓՄՁ չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով մշակվել և 2010թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը: 2001թ. ի վեր Հայաստանում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության (ռազմավարության), ինչպես նաև ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության տարեկան ծրագրերի մշակման իրավասությունը վերապահված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, իսկ դրանք իրականացնող հիմնական կառույց է հանդիսանում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ), որը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի N282 որոշմամբ՝ ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում որպես ծրագրային միջոցառում:

Աղյուսակ 4.7. Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

Տնտեսվարող սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ (մարդ)	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ (մլն.դրամ)	Նախորդ տարվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը (մլն.դրամ)
Միջին	**< 250**	չգերազանցող շեմ՝ 1500	չգերազանցող շեմ՝ 1000
Փոքր	**< 50**	չգերազանցող շեմ՝ 500	չգերազանցող շեմ՝ 500
Գերփոքր	**< 10**	չգերազանցող շեմ՝ 100	չգերազանցող շեմ՝ 100

Աղբյուրը՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.» հաշվետվություն

118. ՓՄՁ սուբյեկտների քանակը. Ըստ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից հրատարակված «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.» հաշվետվության, 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 73925 սուբյեկտ, ինչը կազմում է ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսվարողների ընդհանուր թվաքանակի 98%-ը: 2010-2012թթ. ընթացքում ՓՄՁ սուբյեկտների քանակը շարունակաբար աճել է: 2012թ. ՓՄՁ սուբյեկտների քանակն ավելացել է 2010թ. համեմատ մոտ 25%-ով:

Գծապատկեր 1. ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ մարզերի (2012թ.)



119. Ըստ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից հրատարակված 2007-2009թթ. «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում» տեղեկագրի, 2009 թվականին գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է աղյուսակ 4.8-ում:

Աղյուսակ 4.8. ՓՄՁ սյուբեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց

	ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ					
	ԱՁ		ԻԱ		Ընդամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Ընդամենը ՀՀ	**73,693**	**100.0**	**59,230**	**100.0**	**132,923**	**100.0**
ք. Երևան	30,209	41.0	31,647	53.4	61,857	46.5
Ընդամենը մարզեր	**43,484**	**59.0**	**27,583**	**46.6**	**71,066**	**53.5**
Արագածոտն	2,949	4.0	1,647	2.8	4,596	3.5
Արարատ	5,394	7.3	2,763	4.7	8,157	6.1
Արմավիր	**6,187**	**8.4**	**2,597**	**4.4**	**8,784**	**6.6**
Գեղարքունիք	3,369	4.6	3,334	5.6	6,703	5.0
Լոռի	5,904	8.0	4,248	7.2	10,152	7.6
Կոտայք	6,223	8.4	4,522	7.6	10,745	8.1
Շիրակ	4,046	5.5	2,899	4.9	6,945	5.2
Սյունիք	3,872	5.3	2,872	4.8	6,744	5.1
Վայոց Ձոր	1,841	2.5	795	1.3	2,636	2.0
Տավուշ	3,698	5.0	1,906	3.2	5,604	4.2

120. Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումներն իրականացվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ Արմավիրի մասնաճյուղի (ք.Արմավիր) գործունեության շրջանակներում:

121. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հրապարակած հաշվետվության համաձայն՝ 2013 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2013 թվականի ծրագրի շրջանակում աջակցություն է տրամադրվել հանրապետության 17243 գործող և սկսնակ ՓՄՁ-ի (2011 թվականին այս ցուցանիշը եղել է 3780, 2012 թվականին՝ 8507): Աջակցության ուղղություններն են՝ տեղեկատվական և խորհրդատվական 15647**,** ուսուցողական 521, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն 462, վարկային երաշխավորություններ 243, բիզնեսի միջազգայնացում՝ Ձեռնարկությունների եվրոպական ցանց 243, ոլորտային աջակցության ծրագրեր 127, տեղական տնտեսական զարգացման ծրագրեր 19, համայնքային նշանակության ենթակառուցվածքային ծրագրեր 4, իրացված գյուղտեխնիկայի քանակ 230:

122. 2013 թվականին աջակցություն ստացած ՓՄՁ-ների 5.2**%**-ը գործում է Երևան քաղաքում, 94.8**%-**ը՝ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը ներկայացված է աղյուսակ 4.9-ում:

Աղյուսակ 4.9. Աջակցություն ստացած ՓՄՁ-ների թիվը՝ ըստ մարզերի և ք.Երևանի

	2013թ.
Երևան	795
Արագածոտն	1361
Արարատ	1529
Արմավիր	**1489**
Գեղարքունիք	1210
Կոտայք	2476
Լոռի	1645
Շիրակ	1489
Սյունիք	1376
Վայոց Ձոր	2348
Տավուշ	1525

Աղբյուրը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից 2013թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

123. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից Արմավիրի մարզում 2013 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներն ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի հետևյալն են.

1)ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի կառավարում, ամրապնդում և ընդլայնում. ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի աշխատակիցները մասնակցել են հանրապետությունում և արտերկրներում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

2)Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն. մեկնարկել և ընթացքի մեջ է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 25 ծրագիր, որից 2-ը՝ Արմավիր քաղաքում, ծրագիրն իրականացվել է ՄԱԿ-ի «Աջակցություն ՓՄՁ

զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի աջակցությամբ: Մասնավորապես՝ «ՓՄՁ-ների գործարար գիտելիքների և հմտությունների բարելավում» բաղադրիչի շրջականներում իրականացվել են «Սկսնակ գործարարների աջակցության» ծրագրեր, «Օրինակելի բիզնես մոդելների մշակում» բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Արմավիր մարզի չրագործության զարգացման ծրագրի իրականացմանը: Ընթացքի մեջ են մարզում չրերի հավաքման, փաթեթավորման և վաճառքի կենտրոնի հիմնադրման աշխատանքները:

3)Տեղական և տարածքային տնտեսական զարգացում. 2013թ. ընթացքում իրականացրել են տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր: Հանրապետության բոլոր մարզերում քարտեզագրվել են 100 համայնքներ (յուրաքանչյուր մարզում՝ 10 համայնք): Քարտեզագրման արդյունքներն ամփոփվում են և կներկայացվեն ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական կայքում՝ http://www.smednc.am/ecomap:

124. 2013թ. ընթացքում հանրապետությունում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 224 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 789.4 մլն. դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 798.1 մլն. դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով: Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 3.6 մլն.դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 3.6 մլն. դրամ:

Աղյուսակ 4.10. Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների (մլն. դրամ)

	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Երաշխավորություն	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4	798.1
Վարկ	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6	789.4
Քանակ	35	41	65	30	17	120	224

Աղյուսակ 4.11. Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի, 2013թ.

	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	81	321.299.665	324.833.961
Գեղարքունիք	26	77.090.000	77.937.990
Արագածոտն	10	77.937.990	30.148.446
Արմավիր	**25**	**95.038.600**	**96.084.025**
Լոռի	4	12.459.500	12.604.455
Սյունիք	8	20.340.500	20.564.245
Կոտայք	9	28.500.500	28.838.542
Շիրակ	16	42.137.000	42.607.787
ՎայոցՁոր	13	49.367.980	49.896.070
Տավուշ	22	79.735.500	80.612.590
Արարատ	10	33.603.000	33.998.244
Ընդամենը	**224**	**789.363.245**	**798.126.355**

Աղբյուրը՝

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն

Աղյուսակ 4.12. Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահով-վածության %	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկե-տայնություն (ամիս)
Գեղարքունիք	3	27.850.000	14.880.000	54%	15%	60
Արագածոտն	1	16.000.000	9.000.000	56%	15%	60
Արմավիր	**3**	**50.000.000**	**27.400.000**	**53%**	**14%**	**52**
Լոռի	0	0	0	0	0	0
Սյունիք	1	4.500.000	1.091.253	24.25%	15%	36
Կոտայք	0	0	0	0	0	0
Շիրակ	1	23.400.000	14.475.000	61.85%	15%	60
Վայոց Ձոր	2	105.000.000	23.000.000	35.1%	13%	60
Տավուշ	1	5.000.000	699.813	13.9%	12%	36
Արարատ	2	21.000.000	11.509.098	56%	13.5%	54
Երևան	4	54.000.000	18.300.000	39%	15%	60
Ընդամենը	**18**	**306.750.000**	**120.355.164**	**45%**	**14.2%**	**55**

Աղբյուրը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրոյթան զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն, էջ 26-27

4.4. ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

125. ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե սկսնակ, թե գործող ՓՄՁ սուբյեկտների գործունեության վրա:

126. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությանը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարվանից ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես՝ արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար:

127. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը:

128. ՓՄՁ սուբյեկտների համար լուրջ հիմնախնդիր է իրենց բիզնեսի կազմակերպումն ու կառավարումը: Այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը դեռևս բավարար չէ:

129. Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ մարզի տնտեսական զարգացման ներկայիս փուլում ՓՄՁ սուբյեկտների զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

1) ՓՄՁ սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես՝ արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար:

2) Սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը:

3) Գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները:

4) ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կընդունվեն արտահանող երկրներում:

5) Միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը:

6) Տեղեկատվական հոսքերի անմատչելիությունը և դրանց ընկալման, մշակման ու փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը:

7) Շուկայական և մասնավորապես արտարժութային ռիսկերից ապահովագրման և դրանք կառավարելու հետ կապված բարդությունները, ինչը հատկապես խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար:

8) ՓՄՁ սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ընձեռվող հնարավորությունների թերի և ոչ բավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերը, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար պատկերացումներով:

130. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում
2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում
3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում
4) Անհրաժեշտ է օժանդակություն ցույց տալ Արմավիրի մարզի ՓՄՁ-ին՝ շուկայավարման ռազմավարության մշակման և իրականացման հարցում (դա կարող է իրականացվել համապատասխան ծառայության կամ կենտրոնի ստեղծման միջոցով)
5) Օժանդակել Արմավիրի մարզի ՓՄՁ-ին՝ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների հայտնաբերման և արտաքին ֆինանսավորման ներգրավման հարցերում
6) Գյուղմթերքներ մթերող կազմակերպությունների համար ստեղծել տարբերակված (երկարաժամկետ և կարճաժամկետ) ֆինանսական (հիմնականում վարկային) ռեսուրսներից մատչելի պայմաններով (ցածր տոկոսադրույք, մարման համապատասխան գրաֆիկ և այլն) օգտվելու հնարավորություններ
7) Օժանդակել արտադրողներին այլընտրանքային ֆինանսավորման կամ լիզինգային ծրագրի իրականացման հարցում
8) Օժանդակել Արմավիրի մարզի տարածքում տեղեկատվական կենտրոնի հիմնադրման գործին
9) ՓՄՁ-ին տեղեկություններ ապահովել ոլորտների ժամանակակից տեխնիկական զարգացումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև շուկայական վերջին զարգացումների վերաբերյալ
10) Հնարավորինս օժանդակել տնտեսություններին արդյունաբերական արտադրություն կազմակերպելու հարցում, միավորելով նրանց միությունների մեջ, ինչը թույլ կտա շուկա (արտաքին) մտնել արտադրանքի ավելի մեծ խմբաքանակով, համապատասխան դիզայնով, փաթեթավորմամբ և գովազդի ռազմավարությամբ:

4.5. ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները

131. Ըստ հեռանկարային զարգացման ծրագրի՝ ՓՄՁ-ների ստեղծման և հաջող գործունեության խրախուսումը ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններից է: Այդ քաղաքականության գործիքակազմը բաղկացած կլինի ինչպես ուղղակի աջակցության միջոցառումներից, այնպես էլ համապատասխան շրջանակային քաղաքականություններից: ՓՄՁ-ների ուղղակի աջակցությունը շեշտադրվում է այն պատճառով, որ մանր և միջին ձեռնարկատերերի թվի ավելացումը երկրում միջին խավի ձևավորման կարևոր գործոն է: Այս առումով, ՀՀ կառավարությունը հետևողականորեն

իրականացնելու է հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են միջին խավի ձևավորմանը: ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական քաղաքականությունները ներառելու են՝

1) Պետական վարկային երաշխավորությունների փորձի շարունակությունը և ընդլայնումը այն գործող և սկսնակ ՓՄՁ-ների համար, որոնք ունեն արտահանման, ներմուծման փոխարինման կամ գիտելիքների արտադրության ներուժ՝ գերակայություն տալով մարզերում գործող ձեռնարկություններին:

2) Սկսնակ գործարարության կայացմանն աջակցություն՝ ներառյալ կարողությունների և հմտությունների զարգացման, գործարար պլանավորման և սկսնակ գործարարներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումները: Առանձին ծրագրեր ուղղված կլինեն կանանց և երիտասարդների շրջանում գործարարության զարգացմանը:

3) Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում՝ գրավի կամ դրա իրացվելիության անբավարարության, բարձր ռիսկերի և այլ խոչընդոտների վերացման և կառավարման գործիքների միջոցով:

4) Կրթական և խորհրդատվական աջակցություն՝ հատկապես, եթե շուկայական գործող մեխանիզմները չեն ապահովում դրանք կամ կապված են մեծ տրանսակցիոն ծախսերի հետ: Առանձին ուղղությամբ պետական ծրագրերը միտված կլինեն գործարար ծառայություններ մատուցող ընկերությունների կարողությունների զարգացմանը:

5) Ուղղակի աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ-ներին՝ շուկաների հասանելիության ապահովման, ինչպես նաև տեղեկատվական օգնության նպատակով: Ձեռնարկությունները կստանան աջակցություն ինտերնետային կայքերի, գովազդային վահանակների, ապրանքների փաթեթավորման և բրենդավորման համար:

6) Պետական գնումների համակարգի հասանելիության ապահովում ՓՄՁ-ների համար: Վերանայման պետք է ենթարկվեն պետական գնումների այն ընթացակարգերը, որոնք առանց արդարացի հիմնավորման նպատակի խոչընդոտներ են ստեղծում համապատասխան ոլորտում գործող ՓՄՁ-ների համար:

132. Վերը նշված ուղղակի քաղաքականությունների, ինչպես նաև ընդհանուր շրջանակային միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է տնտեսությունում ՓՄՁ-ների դերի բարձրացում:

133. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

1) **ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում**: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) **Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում:** Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունն ու հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Նախատեսվող միջոցառումներն են՝

ա.մարզի տարածքում գործող ագրովերամշակող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացի կազմակերպման աջակցություն.

բ.ագրովերամշակող կազմակերպությունների և գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացի աջակցություն.

գ.մարզի տարածքում գյուղատնտեսական հումքի մեծածախ շուկայի ստեղծման աջակցություն.

դ.գյուղատնտեսական կոոպերացիաների ձևավորման գործում աջակցության ցուցաբերում:

3) **Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:** Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես՝ մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

134. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

135. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է ստորև ներկայացված գծապատկերում:

Գծապատկեր 2



136. ՀՀ Արմավիրի մարզի արդյունաբերության, ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 18,540,000.0հազ.դրամ (տես՝ հավելված 4):

4.6. ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
1	*2*	*3*	*4*
Նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանի ծրագրեր՝ ներգրավելով ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին	ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով		ՏԻՄ մասնակցություն
Ծրագիր 1. ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում (խորհրդատվական աջակցություն, տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում)	Խորհրդատվական մրցույթները կազմակերպում և անցկացնում են ՏԻՄ-երը, ներգրավվում են ծրագրերի կազմման գործընթացին, ընդունվում են տարածաշրջանային և համայնքային ծրագրեր, հստակեցված են տեղական ռեսուրսները		
Նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես՝ արդյունաբերության, զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը	Գերակա ոլորտների ձեռնարկությունների եկամուտների աճ, արդյունաբերական, գյուղարտադրանքի արտահանման ծավալների աճ, հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում, զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ		Շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմաններ
Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածների զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում	Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաների և պահանջարկի ծավալների մեծացում		
Նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման	Համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ		Գործարարության տեղական ռեսուրսների անբավարար վիճակ

ներդրումային ծրագրերում			
Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում. 1)ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում, 2)ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում	Տեղացի և այլ ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումների իրականացում Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի հրապարակում		Ներդրումային առաջարկները և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են ներդրողների ակնկալիքներին

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. Կրթություն

5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն և զարգացման հիմնախնդիրների բացահայտում

137. Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ և շարունակական զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Կրթությունը կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոններից մեկը:

138. Հայաստանի կրթության զարգացման հեռանկարը դիտարկվում է հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում.

1)անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,

2)աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,

3)կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,

4)հայապահպանություն,

5)միջազգային և տարածաշրջանային համագործակցություն:

139. Հայաստանի կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

140. Հայաստանի կրթության համակարգը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև հետբուհական:

141. **Նախադպրոցական կրթությունը** տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող, նախադպրոցական կրթական ծրագրով իրականացվող կրթություն է: Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է՝ նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխայի մեջ վարվելակերպի տարրական նորմերի ձևավորմանը:

142. Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են.

ա) երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

143. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ մսուրներ (2-3 տարեկան երեխաների համար), մանկապարտեզներ (3-6 տարեկանների համար), մսուր-մանկապարտեզներ (միացյալ):

144. Ինչպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում՝ նախադպրոցական կրթության զարգացումն ուղղվելու է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Կարևորելով նախադպրոցական կրթության դերը, երեխաների համակողմանի զարգացման համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որը ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակադրում է մինչև 2015թ. ավագ նախադպրոցական տարիքային խմբի ընդգրկվածությունը հասցնել շուրջ 90%-ի:

145. Հանրակրթության շեմին բոլոր խավերի նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ 5-6 տարեկան երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից առաջնահերթ է նաև նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և հասանելիության բարելավումը:

146. Նախադպրոցական համակարգի առկա վիճակը. 1996 թվականին ՀՀ վարչատարածքային կառավարման նոր համակարգի ձևավորման արդյունքում, «ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն, նախադպրոցական հաստատություններն անցել են համայնքային ենթակայության և հանձնվել են տեղական ինքնակառավարման մարմիններին: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1996-2000 թվականների ընթացքում նախադպրոցական հաստատությունների նվազման տեմպերը արագացել են. փակվել են դրանց մոտ 28%-ը, իսկ երեխաների ընդգրկումը կրճատվել է շուրջ 32.4%-ով: Սկսած 2001 թվականից երեխաների ընդգրկումը սկսել է կայունանալ: Նախադպրոցական հաստատությունների թվի անկումը նույնպես կանգ է առել և կարելի է պնդել, որ ներկա փուլում հրատապ է նախադպրոցական համակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը: Ներկայումս նախադպրոցական հիմնարկների ֆինանսավորումն իրականացվում է համայնքային բյուջեներից:

147. Ըստ համայնքների ներկայացրած տվյալների՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների նախադպրոցական հաստատությունների թիվը կազմում է.

1) 2012թ.- 57 (170 խումբ, 4421 երեխա)
2) 2013թ.- 61 (188 խումբ, 4980 երեխա)
3) 2014թ.- 62 (188 խումբ, 5030 երեխա):

148. Համայնքային սեփականություն հանդիսացող նախադպրոցական հաստատությունների 62 շենքեր օգտագործվում են ծառայողական նշանակությամբ, մարզում 2013-2014 ուսումնական տարում 47 համայնքների նախադպրոցական հաստատությունների շենքերը չեն օգտագործվում, 16 համայնքներում նախադպրոցական հաստատությունների շենքեր չկան, Վարդանաշեն համայնքում նախադպրոցական հաստատության շենքն օգտագործվում է որպես դպրոց: Խանջյան համայնքում նախադպրոցական հաստատության շենքը դպրոցն ազատել է, սակայն շենքը ենթակա է ամրացման և հիմնանորոգման: 2003 թվականից հետո պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ուսումնական հաստատությունների շենքերը վարձակալությամբ չեն տրվել, չեն օտարվել:

149. Ավարտվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների հաստատման գործընթացը՝ «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության հիման վրա, ընթացքի մեջ է մարզի նախադպրոցական հիմնարկների լիցենզավորման ներկայացման գործընթացը:

150. Նախադպրոցական հաստատություններում աշխատող կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնահարցերը կարիք ունեն արմատական բարեփոխման:

Ներկայումս կադրերի վերապատրաստումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտի» կողմից մշակված և հաստատված ծրագրերով: Վերապատրաստումների ծավալները խիստ սահմանափակ են, դրանք հիմնականում իրականացվում են Երևան քաղաքի և մոտակա մարզերի նախադպրոցական հաստատությունների կադրերի համար:

151. Չնայած այն փաստին, որ նախադպրոցական հաստատությունները գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ և, հետևաբար, ֆինանսավորվում են համայնքային բյուջեից, այնուամենայնիվ, պետական բյուջեում նախատեսված են ծախսեր նախադպրոցական կրթության զարգացման համար (նախակրթարաններ):

152. ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով ներդրվել են նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ: Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2011 թվականից պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: 2012 թվականին այդ նպատակով պետական բյուջեից գումարներ են հատկացվել նաև Արմավիրի մարզին: Այսպիսով, 2014 թվականից ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ կհատկացվեն ՀՀ բոլոր մարզերին, բացառությամբ Երևան քաղաքի: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում:

153. 2011-2013թթ. «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում մարզի դպրոցներում ձևավորվել են 34 նախակրթարաններ, ևս 2-ը գործում է մանկապարտեզներում (աղյուսակ 5.1.1):

Աղյուսակ 5.1.1. ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում գործող նախակրթարանների 2014-2015 ուստարվա խմբերի և երեխաների նախնական թվերը

հ/հ	Դպրոցի անվանումը	2014-2015 ուստարի	
		խմբերի թիվը	երեխաների թիվը
1	Վաղարշապատի թիվ 8 հիմն. դպրոց	2	33
2	Արևաշատի միջն. դպրոց	1	30
3	Աղավնատան միջն. դպրոց	1	35
4	Բաղրամյանի (Բաղր.) միջն. դպրոց	1	6
5	Գայի միջն. դպրոց	2	30
6	Գետաշենի միջն. դպրոց	1	32
7	Երասխահունի միջն. դպրոց	1	25
8	Լենուղիի միջն. դպրոց	1	22
9	Լուսագյուղի միջն. դպրոց	1	12
10	Հացիկի միջն. դպրոց	1	19

11	Հայթաղի միջն. դպրոց	2	39
12	Հովտամեջի միջն. դպրոց	1	17
13	Մայիսյանի միջն. դպրոց	1	14
14	Մարգարայի միջն. դպրոց	1	19
15	Նոր Արտագերսի միջն. դպրոց	1	10
16	Շենավանի միջն. դպրոց	1	17
17	Շահումյանի միջն. դպրոց	1	19
18	Սարդարապատի միջն. դպրոց	2	60
19	Վարդանաշենի միջն. դպրոց	1	14
20	Վանանդի միջն. դպրոց	1	19
21	Ջրաշենի միջն. դպրոց	1	8
22	Փշատավանի միջն. դպրոց	2	33
23	Արմավիրի թիվ 8 հիմն. դպրոց	2	55
24	Ամբերդի միջն. դպրոց	1	24
25	Առատաշենի միջն. դպրոց	2	38
26	Արգավանդի միջն. դպրոց	2	50
27	Արշալույսի միջն. դպրոց	2	42
28	Արտամետի միջն. դպրոց	1	20
29	Արաքսի /Էջմ./ միջն. դպրոց	1	20
30	Բամբակաշատի միջն. դպրոց	2	43
31	Ծիածանի միջն. դպրոց	2	50
32	Նալբանդյանի միջն. դպրոց	2	45
33	Վաղարշապատի թիվ 2 հատուկ դպրոց	2	35
34	Վաղարշապատի թիվ 7 հիմն. դպրոց	1	32
Ընդամենը		**47**	**967**

154. 2011 թվականին «Փրկենք երեխաներին» կազմակերպության կողմից մարզի Մուսալեռ, Մայիսյան, Շահումյան և Ջրաշեն համայնքներում իրականացվել է «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիրը՝ 15% համայնքի համաֆինանսավորմամբ, որի շրջանակներում իրականացվել են նախադպրոցական դասարանների ստեղծման, վերանորոգման, կահավորման, դպրոցների երկու սանհանգույցների վերանորոգման, ուսուցիչների վերապատրաստման և 2 ամսվա աշխատավարձերի վճարման աշխատանքներ:

155. 2011 թվականին «Երևանի ռոտարի ակումբ» ՀԿ-ի կողմից իրականացվել են Էջմիածնի թիվ 16 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները:

156. 2013թ. «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից Բաղրամյանի տարածաշրջանի թվով 5 համայնքներում գործում են 6 մանկապարտեզներ: Հիմնադրամի կողմից Ամերիկյան դեսպանատան տրամադրած միջոցներով Բաղրամյանի տարածքի 6 դպրոցներում իրականացվում են նախադպրոցական հաստատությունների

մանկավարժների հետ մեթոդական պատրաստվածության բարձրացման պարապմունքներ:

157. Մարզում առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման ուղղությունները: Մի շարք համայնքներում նորոգվում և կահավորվում են մանկապարտեզների շենքերը՝ հաջորդ ուսումնական տարում երեխաներ ընդունելու նպատակով:

158. ՀՀ կրթության համակարգում նախադպրոցական կրթության և դաստիարակության դերը հստակեցնելու համար իրականացվելու են հետևյալ բարեփոխումները.

1) նախադպրոցական կրթության օրենսդրական դաշտի կատարելագործումը
2) նախադպրոցական կրթության և ծառայությունների մատչելիության ապահովումը և ընդգրկման աճը, 5 տարեկան երեխաների նախապատրաստումը հիմնական կրթության՝ հիմք ընդունելով տարրական դպրոցի առջև դրված ծրագրային խնդիրները
3) նախադպրոցական հաստատությունների աճող ֆինանսավորումը պետական և համայնքային բյուջեներից
4) նախադպրոցական կրթության և երեխաների խնամքի չափորոշիչի կիրառման ապահովումը, ծրագրային սպասարկումը և որակի ապահովումը
5) վաղ մանկության զարգացման պայմաններին ներկայացվող պահանջների կատարման ապահովումը նախադպրոցական հաստատություններում
6) նախադպրոցական հաստատությունների կառավարման համակարգի բարելավումը
7) ոչ պետական հաստատությունների և այլընտրանքային համայնքահեն ծառայությունների ընդլայնումը
8) հատուկ կարիքներով երեխաների ընդգրկումը
9) նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի բարելավումը
10) նախադպրոցական կրթության ուսումնասիրությունների և հետազոտությունների պարբերական իրականացումը՝ համակարգի գնահատման նպատակով
11) նախադպրոցական կրթության ու խնամքի որակի, դրա կազմակերպման պայմանների նկատմամբ հաշվետվային համակարգի վերահսկողության ներմուծումը
12) միջազգային, հասարակական կազմակերպությունների և մասնավոր գործարարների ներգրավումը:

159. Հանրակրթություն. Կրթության ոլորտում հանրակրթությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն: Հանրակրթության ոլորտում հեռանկարային զարգացման ծրագիրը նպատակադրում է.

1) Ընդհանուր միջնակարգ կրթության որակի բարձրացում, դրա համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին՝ ապահովելով սահուն անցումը դեպի ԲՈՒՀ-ական կրթություն:

2) Կրթության որակի վերահսկողության և գիտելիքների գնահատման գործուն, ժամանակակից (ներառյալ՝ էլեկտրոնային) ձևերի ու մեթոդների, ինչպես նաև դրա միասնական համակարգի փուլային ներդրում:
3) Բնակչության բոլոր խավերի համար որակյալ անվճար ընդհանուր միջնակարգ 12-ամյա կրթության հավասար մատչելիության, հասանելիության ապահովում, երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում համընդհանուր անվճար տասներկուամյա (ներառյալ՝ մասնագիտական) կրթությանը:
4) Ավագ և հիմնական դպրոցների ցանցերի տարանջատում, միջնակարգ դպրոցների ցանցի աստիճանական վերածում հիմնական ու ավագ դպրոցների՝ բացառությամբ ՀՀ մարզերի այն գյուղական համայնքներում, որտեղ աշխարհագրությունից ելնելով անհրաժեշտ է պահպանել միջնակարգ դպրոցները:
5) Ավագ դպրոցում ընդգրկվածության մակարդակի աճ՝ հատկապես բնակչության աղքատ խավերի համար:
6) Համակարգի արդյունավետության շարունակական բարձրացում ու կառավարման, ներառյալ՝ գույքի և ակտիվների կառավարման գործուն համակարգի ներդրում ու կայացում:

160. Հանրակրթության ներկա փուլի հիմնական խնդիրը շարունակում է մնալ կրթության որակի և մատչելիության ապահովումը: Վերջին տարիների իրականացված բարեփոխումները հնարավորություն են ընձեռել լուծել համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնել իրավիճակը, նախադրյալներ ստեղծել զարգացման համար: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն էր 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել էր 2006թ. և հաջողությամբ ավարտվել 2012 թվականին: Ծրագիրն ուղղված էր հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը և արդիականացմանը: Ծրագրի ներդրումը հնարավորություն տվեց սովորողներին կատարել ճիշտ մասնագիտական ընտրություն (կողմնորոշում) և ապահովել հետագա ուսումնառության հաջողությունը: Ինչպես նշված է «Հանրակրթության պետական կրթակարգում»՝ ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի և աշխատանքի շուկա մտնելուն: Համաձայն «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրի»՝ 2009-2012թթ. մարզում ստեղծվել են 6 ավագ դպրոցներ:

Աղյուսակ 5.1.2. ՀՀ Արմավիրի մարզպետարանին կրթության ոլորտում ՀՀ պետական բյուջեից 2011-2014թթ. կատարված և 2015-2017թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված հատկացումները

(հազ.դրամ)

Հոդվածների անվանումը	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Դպրոցների թիվը	**115**	**114**	**114**	**114**	**114**	**114**	**114**
Կրթություն, այդ թվում՝	**8018523,6**	**7548799,8**	**7241532,1**	**7000009,4**	**6520056,4**	**7230953,6**	**8226544,1**
Հանրակրթական ուսուցում	5588097,1	5595682,7	5643501,9	6017235,2	6107018,4	6782940,3	7733592,2
Հատուկ կրթություն	160562,2	161314,9	166381,6	203015,7	236327,8	253789,0	279791,0

Ներառական կրթություն	12678,1	20367,5	34783,0	58562,7	77113,8	87592,0	96786,5
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	44535,6	-	-	-	-	-	-
Նախադպրոցական կրթություն	-	14126,7	45537,2	70000,0	99596,4	106632,3	116374,4
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	22256,0	21197,2	20072,5	31695,8	-	-	-
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	99500,0	164210,2	115382,5	499500,0	-	-	-
Կրթական օբյեկտների շինարարություն	2090894,6	1571900,6	1215873,4	120000,0	-	-	-

161. ՀՀ Արմավիրի մարզում մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը 2011թ.-ին կազմել է շուրջ 252.6 հազ.դրամ, 2014թ.-ին՝ 230.8 հազ. դրամ:

162. 2013-2014 ուստարում գործում են մարզային ենթակայության 112 դպրոցներ 1501 դասարաններով, 31394 աշակերտներով, այդ թվում՝

1) 91 միջնակարգ դպրոցներ՝ 1119 դասարաններով և 21413 աշակերտներով

2) 21 հիմնական դպրոցներ՝ 382 դասարաններով և 9981 աշակերտներով,

3)2 հատուկ դպրոցների 16 դասարաններում սովորում են 175 աշակերտներ:

163. Արմավիրի մարզում հատուկ կրթություն իրականացնում են «Արմավիրի N1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Վաղարշապատի N2 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

164. Արմավիրի մարզում գործում են թվով 6 ավագ դպրոցներ՝ «Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N 1 ավագ դպրոց», «Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց», «Մեծամորի N 2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Գ.Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Գորկու անվան N 5 դպրոց», «Վաղարշապատի Մ.Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

165. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության ապահովման նպատակով իրականացվում է ներառական կրթություն: Ներկայումս ներառական կրթություն իրականացվում է հանրապետության մարզերի (բացառությամբ Տավուշի մարզի) ընդհանուր թվով 117 հանրակրթական դպրոցներում: Ներառական դպրոցների ցանցի զարգացման համար բավարար հիմքեր ստեղծելու նպատակով Տավուշի մարզում 2011 թվականից փորձարկվում է հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը: Տարեցտարի ընդլայնվում է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը:

166. Արմավիրի մարզում ներառական կրթություն է իրականացվում «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց», «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց», «Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N 9 հիմնական դպրոց» և «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կողմից տարբեր դասարանների 102 աշակերտների համար:

167. Մարզպետարանի ենթակայությունից դուրս գործում են «Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» ՊՈԱԿ-ը և Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ» համալսարանի միջնակարգ դպրոցը:

168. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, մարզում 2014թ. հունվարի 1-ի դրությամբ զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում կազմել է 99%: 12-ամյա միջնակարգ կրթության ծրագրով ուսուցանվող 10-րդ դասարաններում աշակերտների ընդհանուր ընդգրկվածությունը դպրոցներում 2013-2014 ուստարում կազմել է 1757 աշակերտ՝ նախորդ ուսումնական տարում հիմնական դպրոցն ավարտածների 80%-ը:

169. 2013-2014 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են թվով 3287 ուսուցիչներ, աշակերտ-ուսուցիչ թվերի հարաբերակցությունը 10.9 է, աշակերտների միջին խտությունը դասարաններում՝ 20.9:

170. Մարզի 97 համայնքներից 94-ում գործում են հանրակրթական դպրոցներ, բացառությամբ՝ Կողբավան, Ծաղկունք, Շահումյանի թ/ֆ համայնքների:

171. Մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունները ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզավորման հանձնաժողովին են հանձնել լիցենզավորման փաստաթղթերը և ստացել համապատասխան լիցենզիաներ՝ բացառությամբ այն հաստատությունների, որոնք գործում են հարմարեցված շենքերում (Ջրարբի, Վարդանաշեն):

172. Հանրակրթության համակարգը համալրվում է տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներով, ընդլայնվել է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը (ՀԴԻՑ): Ներկայումս ՀԴԻՑ-ում ընդգրկված է 1393 դպրոց: Միաժամանակ ընդլայնվել է կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, որում ընդգրկված են հանրապետության թվով 1383 դպրոցներ և 188 մասնագիտական ուսումնական հաստատություններ: Ընդհանուր առմամբ մարզի 108 դպրոցներում առկա են համակարգչային դասասենյակներ, 114 հանրակրթական դպրոցներն ապահովված են ինտերնետ կապով, դպրոցներում առկա է 1400 համակարգիչ:

173. ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու նպատակով փոխհատուցում է տրվում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցներ գործուղվող մանկավարժներին՝ ճանապարհածախսի, բնակարանի վարձի և կեցության ծախսերի համար: Արմավիրի մարզում գործուղված ուսուցիչների թիվը 2-ն է:

174. Մարզի դպրոցական շենքերը և շինությունները գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Դպրոցների մարզադահլիճները և խաղահրապարակները նույնպես կարիք

ունեն վերանորոգման: 2011-2013թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա:

175. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ն օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

176. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև ուսուցչական անձնակազմի գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին ակտիվ ընթացքի մեջ է: 2011-2013թթ. ընթացքում համագործակցելով Կրթության ազգային ինստիտուտի, «Կրթություն առանց սահմանի» ՀԿ-ի հետ, վերապատրաստվել են 1909 ուսուցիչներ, այդ թվում՝ 2011թ. 670 ուսուցիչ, 2012թ. 595 ուսուցիչ, 2013թ. 644 ուսուցիչ: 2014 թվականի առաջին կիսամյակում 572 ուսուցիչ (մարզի ուսուցիչների 20%-ը) վերապատրաստվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Արմավիրի մասնաճյուղում:

177. 2011թ. «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ հետ կազմակերպվել և իրականացվել է «Համակարգչային գրագիտության ուսուցման և թեստավորման «Ուսում-2» համակարգի տեղադրումը մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում:

178. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում: Չնայած 2006 թվականին դպրոցների խորհուրդների մոտ 630 անդամներ անցան վերապատրաստումներ Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակում, սակայն դրանց կազմի փոփոխության պատճառով խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Այսպես, դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին՝ համարելով, որ դա պետության խնդիրն է:

179. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի N 609-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի» համաձայն՝ ստացվել և 2014թ. բաշխվել է 2640 հատ սովորական նմուշի և 57 հատ հատուկ՝ գերազանցության նմուշի հիմնական ընդհանուր նմուշի վկայականներ, վերականգնվել են քաղաքացիների կորած և խոտանված դպրոցական ավարտական փաստաթղթերը:

180. Արմավիրի մարզի Սարդարապատի միջնակարգ դպրոցը Հայաստանի Հանրապետության 4 դպրոցներից մեկն է, որն ընդգրկվել է Գերմանիայի կառավարության կողմից իրականացվող՝ «Դպրոցներ-ապագայի գործընկերներ» ծրագրում, որի շրջանակներում 2012թ. դպրոցի 3 ուսուցիչներ և 6 աշակերտներ վերապատրաստվել են Մյունխեն քաղաքի բուհերում, իսկ 2013 թվականին՝ թվով 6 ուսուցիչներ և 9 աշակերտներ Հալե քաղաքի կրթական հաստատություններում: Բացի այդ դպրոցում իրականացվում է «Գերմաներեն լեզվի խորացված ուսուցում» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս «Լեզվի դիպլոմ» («Շպրախ դիպլոմ») ստացած շրջանավարտին ուսումը շարունակել Գերմանիայի ցանկացած բուհում՝ այդ երկրի կառավարության հովանավորությամբ: Դպրոցը մասնակցել է «Առողջ դպրոց» ծրագրին և հանրապետության ծրագրում ընդգրկված 4 դպրոցներից ճանաչվել է լավագույնը:

181. Կրթության ոլորտի զարգացման միտումների նկարագրությունը. 2006 թվականից սկսած կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները դարձել են շարունակական և մինչև 2014 թվականը ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ և այլ ծրագրերով հիմնանորոգվող կրթական օբյեկտներից ամբողջական հիմնանորոգվել են 43 կրթական օբյեկտներ, ընդհանրապես չեն հիմնանորոգվել 8 կրթական օբյեկտներ, որից 2-ը ենթակա են քանդման և նորի կառուցման, իսկ 57 կրթական օբյեկտներ մասնակի հիմնանորոգվել են, հիմնանորոգման աշխատանքները շարունակվում են:

182. 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտով ներկայացված են ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ շարունակական հիմնանորոգվող կրթական օբյեկտները, որոնց հիմնանորոգման աշխատանքները սկսված են եղել 2008 թվականից: Ընդհանուր առմամբ ներկայացված է 57 կրթական օբյեկտների հիմնանորոգում, 3 նոր դպրոցների և 3 դպրոցի նոր մասնաշենքերի կառուցում:

183. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն. Արմավիրի մարզում ներկայումս գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ՝

1) Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ
2) Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ
3) Արմավիրի արվեստի պետական քոլեջ
4) Էջմիածնի պետական քոլեջ
5) Արմավիրի բժշկական քոլեջ
6) Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան:

184. Արմավիրի մարզի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներկայումս ուսուցանվում են մարզի առանձնահատկություններից և աշխատաշուկայի պահանջներից բխող թվով 43 մասնագիտություններ (աղյուսակ 5.1.3):

Աղյուսակ 5.1.3. ՀՀ Արմավիրի մարզի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկ

N	Հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Ն/Մ	Մ/Մ	Մասնագիտություն
1.	Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ	Արմավիր		✓	Իրավագիտություն
				✓	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի)
				✓	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)
				✓	Ֆինանսներ (ըստ ճյուղերի)
				✓	Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)
				✓	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)
				✓	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն
				✓	Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն
				✓	Գյուղատնտեսագիտություն
2.	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	Արմավիր		✓	Իրավագիտություն
				✓	Նախադպրոցական կրթություն
				✓	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի)
				✓	Ապահովագրական գործ
			✓		Բանկային գործ
			✓		Զարդակիրառական արվեստ
			✓		Հասարակական սնունդ
			✓		Համակարգիչների շահագործում
			✓		Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում
3.	Արմավիրի արվեստի պետական քոլեջ	Արմավիր		✓	Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)
				✓	Երգեցողություն
				✓	Երգչախմբավարություն
				✓	Երաժշտության տեսություն
				✓	Գեղանկարչություն
				✓	Դիզայն (ըստ ճյուղերի)
4.	Էջմիածնի պետական քոլեջ	Էջմիածին		✓	Հայոց լեզվի դասավանդում
				✓	Ռուսաց լեզվի դասավանդում
				✓	Օտար լեզվի դասավանդում
				✓	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ
				✓	Դասավանդում տարրական դասարան-ներում
				✓	Գրադարանային գործ
				✓	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի)
				✓	Բանկային գործ

				✓	Հաշվողական տեխնիկայի և ավտոմա-տացված համակարգերի ծրագրային ապահովում
				✓	Սպասարկման կազմակերպում
				✓	Գյուղատնտեսագիտություն
				✓	Առևտուր (ըստ ճյուղերի)
5.	Արմավիրի բժշկական քոլեջ	Արմավիր		✓	Քույրական գործ
				✓	Մանկաբարձական գործ
				✓	Դեղագործություն
				✓	Ատամնատեխնիկական գործ
6.	Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան	Էջմիածին	✓		Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա
			✓		Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում
			✓		Ապահովագրական գործ

185. Եվրոպական Միության կողմից Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում բարեփոխումների իրականացման համար տրամադրվող բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում մրցութային կարգով ընտրված 12 մասնագիտական ուսումնական հաստատություններից է Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջը (նախկինում՝ Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջ): Ծրագրի շրջանակներում քոլեջը վերանորոգվել է, հարստացվել է նյութատեխնիկական բազան:

186. Եվրամիության «Բյուջետային աջակցություն» ծրագրի շրջանակում առաջնահերթ անհրաժեշտության գույք (կաբինետներ, արհեստանոցներ, համակարգիչներ, ուսանողական սեղան, աթոռ, գրատախտակ, ուսուցչական սեղան և այլն) են տրամադրվել նաև Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական, Արմավիրի արվեստի և Էջմիածնի պետական քոլեջներին:

187. Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջում իրականացվում է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր, այդ նպատակով «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի կողմից քոլեջում կատարվել են բարեգործական ներդրումներ:

188. Բարձրագույն մասնագիտական կրթություն. Արմավիրի մարզում գործում է 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ» համալսարան: Համալսարանում գործում է՝ ԲՈՒՀ, միջին մասնագիտական կրթություն, ընդհանուր հանրակրթական դպրոց: Համալսարանի բարձրագույն և միջին մասնագիտական կրթությունների բոլոր շրջանավարտները ստանում են պետական նմուշի դիպլոմ:

5.1.2. Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

189. Հայաստանի կրթության զարգացման հեռանկարը դիտարկվում է հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում.

1) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,
2) աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,
3) կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,
4) հայապահպանություն,
5) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն:

190. Հայաստանի կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

191. Նպատակները. Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն և հանրապետության տնտեսությունը ապահովվի մրցունակ մասնագետներով: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից: ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի (ՀՕ-246-Ն օրենք) համաձայն՝ մինչև 2015 թվականը կրթության որոլտի զարգացումն ապահովելու նպատակով սահմանվել են հետևյալ նպատակները՝

1) բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուր ոք ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան,
2) բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին,
3) ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ:

192. Գերակայությունները. Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման են միջոցների օգտագործման

նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը: Կրթության ոլորտի գերակայություն է համարվում հանրակրթությունը, որին էլ առաջիկա տարիներին կուղղվի կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը:

193. Հանրակրթության ոլորտի գերակայություններն են.

1) կրթության բովանդակային բարեփոխումը՝ ըստ առարկայական չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների, արտաքին գնահատման և վարկանիշավորման արդյունքների,
2) կրթության որակի նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների մշակումը,
3) առանձին գործող ավագ դպրոցների կայացումն ու հաստատությունների շենքային պայմանների բարելավումը, ուսումնանյութական բազայի հարստացումն ու մանկավարժական կադրերի մասնագիտական կատարելագործումը,
4) 12-ամյա պարտադիր կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի ներդնումը,
5) տարրական դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացումը և հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը՝ նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության մեծացման միջոցով,
6) կրթության մատչելիության ապահովումը, հատկապես խոցելի խմբերի երեխաների համար, այդ թվում՝ նախադպրոցական կրթության,
7) ազգային փոքրամասնությունների սովորողների համար իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորության ընդլայնումը,
8) աշխատավարձերի բարձրացումը, մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործարկման միջոցով նրանց մասնագիտական առաջընթացի հնարավորությունների ստեղծումը,
9) ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը, այդ թվում նաև առաջին դասարանցիներին ուսումնական համակարգիչներով ապահովումն ու ինտերնետի հասանելիության ապահովումը,
10) կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը,
11) հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգային բարեփոխման ծրագրի իրականացումը,
12) հանրակրթության համակարգում կրեդիտային (չափանիշային) համակարգի ներդրումը,

13) հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրումը:

194. Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում գերակայություններն են՝

1) մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին,
2) մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈ) որակավորումների համակարգի համապատասխանեցումը որակավորումների եվրոպական շրջանակին,
3) կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդնումը,
4) Կոպենհագենյան հռչակագրին միանալը,
5) մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծումը,
6) սոցիալական գործընկերության և երկխոսության խթանումը,
7) ՄԿՈ հաստատությունների արդյունավետ ցանցի ձևավորումը,
8) նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով ՀՀ տնտեսության գերակայություններից, և մասնագետների պահանջարկի ձևավորման արդյունավետ համակարգի նեդրումը,
9) ՄԿՈ հաստատությունների ուսումնանյութական բազայի բարելավել,
10) հաստատությունների հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովումը:

195. Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր. 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը կնպաստեն տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

196. 2015-2018թթ. շարունակվելու են հանրապետության ողջ տարածքում համընդհանուր բնույթ կրող կրթական ծրագրերը, մասնավորապես՝ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև արտադպրոցական դաստիարակության ծրագրերը:

197. Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2014 թվականից ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ կհատկացվեն ՀՀ բոլոր մարզերին:

198. «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ կմեկնարկի նոր՝ «Կրթության բարելավում» ծրագիրը (տևողությունը՝ 2015-2019 թվականներ):

Նոր վարկային ծրագրի՝ «Հանրակրթության որակի բարելավում» ենթածրագրի բաղադրիչներն են՝

1) դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,
2) աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը,
3) հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը,
4) աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:

199. Այս ծրագրի շրջանակներում կշարունակվեն ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը՝ դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ (2015-2017 թվականներին դրամաշնորհներ կտրամադրվեն մրցութային հիմունքներով ընտրված մոտ 120 հաստատությունների): Նախատեսվում է ծրագրի իրականացման առաջին երեք տարիների ընթացքում նախադպրոցական միկրոծրագրերում ընդգրկել շուրջ 3000 երեխաների:

200. Ներկայումս մարզում ներառական կրթություն իրականացվում է 3 հանրակրթական դպրոցներում, իսկ 2018 թվականին դրանց թիվը նախատեսվում է հասցնել 5-ի:

201. ՀՀ մարզերից ստացված հայտերի հիման վրա, կշարունակվի գործուղվող մանկավարժներին ճանապարհածախսի, բնակարանի վարձի և կեցության ծախսերի համար փոխհատուցումների տրամադրման ծրագիրը:

202. Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի, 2014 թվականից ներդրվել է կայուն դպրոցական սննդի համակարգը: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից կտրվեն համապատասխան հատկացումներ՝ ըստ տարիների: 2014 թվականից դպրոցական սննդի ծրագրում կներառվեն Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի, իսկ 2015 թվականից նաև Արարատի մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված բոլոր սովորողները: Ընդ որում, ծրագրում ընդգրկվող երեխաների թիվը ենթակա է ճշտման յուրաքանչյուր տարի՝ նոր ուսումնական տարվա փաստացի կոմպլեկտավորման արդյունքում: Եռամյա ծրագրի արդյունքների հիման վրա 2016 թվականից հետո այն աստիճանաբար կտարածվի մյուս մարզերում նույնպես: Միաժամանակ 2014-2016թթ. կշարունակվի ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ) դպրոցական սննդի ծրագիրը հանրապետության 9 մարզերում, ընդգրկելով տարրական դասարանների շուրջ 67000 սովորողների:

203. 2015-2017 թվականներին շարունակվելու են համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից տրվող հատկացումները:

204. Ժամանակակից կրթական համակարգերում ՏՀՏ-ն անչափ գործունակ միջոց է, որն օգնում է աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան և շատ դեպքերում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան տեղեկատվություն, կիրառել ժամանակակից ինքնագնահատման և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ: Եվ որպես նոր նախաձեռնություն և ՏՀՏ-ի կիրառությունն ուսումնական գործընթացում ընդլայնելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Յուրաքանչյուր առաջին դասարանի աշակերտին համակարգչի անվճար տրամադրում» ծրագիրը:

205. Հանրակրթական դպրոցի դասավանդվող առարկաների ցանկում նախատեսվում է ավելացնել «Ազգային երգ ու պար» առարկան: Նախաձեռնության նպատակն է նպաստել հանրակրթության համակարգում սովորողների կողմից ազգային մշակույթի հիմունքների ընկալմանն ու յուրացմանը, ազգային պարերի, ազգագրական ինքնագիտակցության ձևավորմանը, անհատի մտավոր, հոգևոր, ստեղծագործական անհատականության զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

206. Միաժամանակ նախատեսվում է ՀՀ բոլոր դպրոցներում ստեղծել ռոբոտոտեխնիկայի խմբակներ: Այս նախաձեռնության նպատակն է նպաստել աշակերտների մոտ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես ռոբոտոտեխնիկայի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, վաղ տարիքից ճարտարագիտական մտածելակերպի զարգացմանը, դեպի բարձրագույն կրթություն նպատակադրված է որակյալ ուսանողների մուտք գործելուն: Խմբակներում աշակերտները կսովորեն նախագծել, հավաքել ծրագրավորել ռոբոտներ: Խմբակային աշխատանքը թույլ կտա աշակերտներին ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրավորման և ռոբոտոտեխնիկայի հիմունքները: Աշակերտների մոտ կզարգանա ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատաոճն ու համագործակցության ձգտումը:

207. Շարունակվելու են նաև ուսումնական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքները: Մասնավորապես Արմավիրի մարզում 2015-2017թթ. նախատեսվում է «Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգում» ծրագրում ընդգրկել Վաղարշապատի Գր.Նարեկացու անվան թիվ 2, Վաղարշապատի թիվ 5, Մեծամորի թիվ 2 և Արմավիրի թիվ 4 ավագ դպրոցները, ինչպես նաև հիմնանորոգման աշխատանքներ իրականացնել էջմիածնի Վ.Համազասպյանի անվան պետական քոլեջում:

208. Կշարունակվեն մինչ այժմ իրականացվող ծրագրերն ու միջոցառումները նաև արտադպրոցական դաստիարակության ոլորտում: Մասնավորապես, կանցկացվեն ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական մարզական խաղերը, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությունը, «Դիպուկ հրաձիգ»

դպրոցականների հանրապետական մրցումները, Հաղթանակի և խաղաղության տոնին (մայիսի 9) նվիրված փողային նվագախմբերի հանրապետական փառատոնը, ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադան, ուսանողական մարզական միջոցառումները, «Մեկ դար և ավելի» համահայկական մանկապատանեկան նկարչական հոբելյանական մրցույթ-փառատոնը, կկազմակերպվի դպրոցականների ամառային հանգիստը՝ ՀՀ տարբեր մարզերի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար, ինչպես նաև նոր գույքով կհամալրվեն հանրակրթական դպրոցների ռազմագիտության կաբինետները:

209. 2015-2018 թվականների ընթացքում նախատեսվում է վերանայել ՀՀ Արմավիրի մարզի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները և անհրաժեշտության դեպքում ներդնել նոր մասնագիտություններ, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, միաժամանակ դադարեցնելով ուսուցումն այն մասնագիտություններով, որոնք աշխատաշուկայում պահանջարկ չունեն:

210. Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է նաև կրթության ոլորտում միջազգային, բարեգործական և հասարակական կազմակերպությունների աջակցությունը՝ ուղղված մարզի քաղաքային և գյուղական համայնքների կրթական հաստատությունների զարգացմանը:

211. Արմավիրի մարզում 2015-2017 թվականների ՄԺԾԾ կողմնորոշիչ չափաքանակների նախատեսվել է իրականացնել «Կրթական օբյեկտների հիմնանորոգում», «Կրթական օբյեկտների շինարարություն», «Ավագ դպրոցների հիմնանորոգում» և «Միջին մասնագիտական կրթության օբյեկտների հիմնանորոգում» ծրագրերով շինարարական աշխատանքներ:

212. ՀՀ Արմավիրի մարզի կրթության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 26,249,254.2 հազ.դրամ (տես՝ հավելված 5.1):

5.1.3. Կրթության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
Ոլորտային նպատակ. Բարձրացնել Արմավիրի մարզի կրթության որակը	1. Մարզի տարածքում գործող ուսումնական հաստատությունների ատեստավորված ուսուցիչների տեսակարար կշիռը, %, 2. Բուհեր, միջին մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններ ընդունված սովորողների տեսակարար կշիռը, %, 3. Մանկավարժական կադրերի ատեստավորումը, տարակարգ ունեցողների թիվը, մարդ	20% 20-25% 6	Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է
1. Կրթության ոլորտի կառույցների շենքային պայմանների բարելավում			
1.1. Հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Շենքային պայմանները բարելավված հաստատությունների թիվը	10	Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է
1.2. Հաստատությունների ջեռուցման պայմանների բարելավում	Գազով (լոկալ ջեռուցում) ջեռուցվող հաստատությունների թիվը	5	Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է
2. Կրթության ոլորտի կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացում			
2.1. Կրթություն իրականացնող հաստատությունների համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում	Հաստատություններում նոր համակարգիչների թարմացման ցուցանիշը Կայուն համացանցային կապ ունեցող ուսումնական հաստատությունների թիվը, %	5% 100%	Մարզում գործող ուսումնական հաստատությոընները շահագրգռված են փոխանակել իրենց տեղեկատվությունը
2.2. Դպրոցների ուսումնական լաբորատորիաների և կաբինետների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով և գույքով	Հաստատություններում նոր լաբորատոր սարքավորումների տեսակարար կշիռը, %	5%	

3. Կրթության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում և ատեստավորում			
3.1. Մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստում և ատեստավորում	Դասընթացներին մասնակցածների և ատեստավորվածների տեսակարար կշիռը, %	20%	Մանկավարժական աշխատանք կատարողները ցանկություն ունեն զարգացնելու սեփական հմտությունները
4. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում			
4.1.Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցների տնօրենների տեսակարար կշիռը, %	100%	
5. Ներառական կրթության համակարգի զարգացում			
5.1.Հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում	Կրթական հաստատություններում սովորող հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը	130-150	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում			
6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը Նոր բացվող դպրոցահեն նախակրթարանների թիվը	2 -	
6.2. Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների տեսակարար կշիռը, %	10%	

5.2. ՄՇԱԿՈՒՅԹ

5.2.1. Մշակույթի ոլորտի իրավիճակի վերլուծություն

213. Կրթության ոլորտի հետ սերտորեն կապված է նաև մշակույթի ոլորտը: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Արմավիրի մարզում մշակույթի ոլորտում հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ:

214. Նախորդ տարիների ընթացքում մշակույթի ոլորտում պետության կողմից իրականացվել են մշակութային նյութական և ոչ նյութական արժեքների պահպանմանը, ոլորտի կադրերի որակի և նրանց սոցիալական վիճակի բարելավմանը, մշակութային ժառանգության մատչելիության ապահովմանը նպատակաուղղված բազմաթիվ միջոցառումներ:

215. Արմավիրի մարզում մշակութային կազմակերպությունները, գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակություն ապահովող հաստատությունները գործում են լիազորված պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ: Մարզպետարանի ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններ, գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն ապահովող հաստատություններ չկան:

216. Մարզում մշակութային կյանքի կազմակերպման գործում մարզպետի և համայնքների ղեկավարների իրավասությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով, որի 23-րդ և 24-րդ հոդվածներում մասնավորապես ամրագրված է, որ մարզպետը և համայնքի ղեկավարն ապահովում են մարզի ու համայնքի տարածքներում պետական մշակութային քաղաքականությունը:

217. Մարզպետը կազմակերպում է մարզի տարածքում մշակութային օբյեկտների կառուցումը, պահպանումն ու շահագործումը, հանգստի գոտիների ստեղծումը, նպաստում ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը, ունի մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում օրենսդրությամբ սահմանված լիազորություններ: Նշված լիազորությունների իրականացման համար ֆինանսական միջոցները հիմնականում հատկացվում են ՀՀ պետական բյուջեից:

218. Համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, կազմակերպում է համայնքի կողմից ստեղծված մշակութային կազմակերպությունների (համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ) գործունեությունը, մշակութային օբյեկտների նորոգման և շահագործման աշխատանքները, որպես կամավոր լիազորություն՝ սատարում է ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը: Նախատեսվում է, որ ֆինանսական միջոցները պետք է տրամադրվեն համայնքների բյուջեներից, սակայն համայնքները դեռևս հնարավորություն չունեն լրիվ ծավալով և արդյունավետորեն իրականացնելու նշված լիազորությունները:

Վերոնշյալ օրենքներով սահմանված են նաև այլ իրավասություններ՝ պատմամշակութային հուշարձանների պահպանության ոլորտ, պետական և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպում և այլն:

219. Մշակութային միջոցառումներ. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվում են մարզային նշանակության մշակութային միջոցառումներ: Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից մշակութային միջոցառումների իրականացման համար Արմավիրի մարզպետարանին հատկացվում է 2,563.0 հազ. դրամ, սակայն տրամադրված ֆինանսական միջոցները բավարար չեն մշակութային միջոցառումների ծրագրով նախատեսված բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման համար: Տարեցտարի փոխվում է միջոցառումների բնույթն ու որակը: Եթե նախկինում հիմնականում կազմակերպում էին միօրինակ և միաբնույթ միջոցառումներ, ապա վերջին տարիներին ոչ միայն փոխվել է միջոցառումների բնույթը, այլև փորձեր են արվում որակական ցուցանիշների բարձրացման ուղղությամբ:

220. ՄԺԾԾ 2015-2017թթ. հայտով ներկայացվել է մշակութային ծրագրերի գծով ծախսերի հետևյալ կանխատեսումը.

Աղյուսակ 5.2.1.

Ծրագրի անվանումը	ՀՀ 2014թ. պետական բյուջեով հատկացված	Կանխատեսում		
		2015թ.	**2016թ.**	**2017թ.**
Արմավիրի մարզի մշակութային միջոցառումների իրականացման սուբսիդավորում	2563.6	11470.0	12835.0	13055.0

221. Մարզպետարանի 2015-2017թթ. մշակութային միջոցառումների ծրագրով նախատեսված է կազմակերպել 10-12 խոշոր միջոցառում, ինչպես նաև մասնակցել և աջակցություն ցուցաբերել ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվող մի շարք հանրապետական միջոցառումների:

222. Մշակույթի տներ. Պետական մշակութային քաղաքականության իրականացման հիմնական օղակը մշակույթի տներն են, որոնք կոչված են պահպանելու և սերունդներին փոխանցելու հայ մշակույթը, նրա արժեքներն ու ավանդույթները: Սա հենց պետական մշակութային ու հիմնական սկզբունք: Մարզում կան մասնագետ կադրերի, մշակույթի օջախների վերանորոգման և տեխնիկական վերազինման խնդիրներ:

223. Մարզում առկա է համայնքային ենթակայության 85 մշակույթի տուն, որից Արմավիրի տարածաշրջանում՝ 38, Էջմիածնի տարածաշրջանում՝ 40, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7: Մշակույթի տներից լիարժեք գործում են 16-ը: Մարզի մշակույթի տները հիմնականում անցյալ դարի 60-70-ական թվականների կառույցներ են, այդ իսկ պատճառով կարիք ունեն վերանորոգման, որը համայնքը միայն իր սեփական միջոցներով չի կարող իրականացնել:

224. Մարզի մշակութային օբյեկտներից 8-ը հիմնանորոգվել են, իսկ մնացածը ամրացման, հիմնանորոգման և վերանորոգման կարիք ունեն: 13 համայնքներ մշակույթի

տներ չունեն և անհրաժեշտ է կառուցել նորը: Գրեթե բոլոր մշակույթի տները ձմեռանը՝ շուրջ 4-5 ամիս չեն գործում, քանի որ ունեն ջեռուցման խնդիր:

225. Մշակույթի տների վերականգնումը դիտվում է առաջնային, քանի որ գյուղական համայնքներում դրանք ունեն բազմաբնույթ գործառույթներ: Մշակույթի տներում են տեղակայված գրադարանը, ժամանցի կենտրոնը, գործում են ազգագրական խմբերը, ժողովրդական վարպետները և, ընդհանրապես, դրանք մշակութային ու հասարակական միջոցառումների կազմակերպման հիմնական վայրերն են: Համայնքները միայն իրենց սեփական միջոցներով չեն կարող իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

226. Քանի որ մարզի համայնքների մեծ մասն ունեն մշակութային օբյեկտներ, 2015-2018թթ. համար մշակութային նոր օբյեկտների կառուցման խնդիր չի դրվում:

227. Մարզպետարանը դիմել է տարբեր հիմնադրամների (Հայաստան համահայկական հիմնադրամ, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ, Հայաստանի մանուկներ հիմնադրամ), ինչպես նաև նախարարություն՝ մի շարք համայնքների՝ հատկապես Ա.Թամանյանի կողմից նախագծված մշակույթի տները, որպես պատմամշակութային արժեք և մշակութային միջոցառումների կազմակերպման հիմնական կենտրոններ, վերանորոգման ծրագրերի մեջ ընդգրկելու նպատակով:

228. Մարզի համայնքներում մշակութային կյանքը աշխուժացնելու, տեղերում մշակութային միջոցառումների կազմակերպման հնարավորություն ստեղծելու նպատակով ՄԺԾԾ 2015-2017թթ. հայտով ներկայացվել են մի շարք մշակույթի տների առաջնահերթ հիմնանորոգման աշխատանքները, մասնավորապես.

1) Ջանֆիդա համայնքի մշակույթի տուն
2) Ալաշկերտ համայնքի մշակույթի տուն
3) Շենավան համայնքի մշակույթի տուն
4) Խորոնքի մշակույթի տուն
5) Գետաշենի մշակույթի տուն
6) Գրիբոյեդովի մշակույթի տուն
7) Մրգաստանի մշակույթի տուն
8) Ծաղկալանջի մշակույթի տուն
9) Գեղակերտի մշակույթի տուն
10) Բաղրամյանի (Էջմ.) մշակույթի տուն
11) Նոր Արտագերսի մշակույթի տուն
12) Նոր Արմավիրի մշակույթի տուն
13) Նալբանդյանի մշակույթի տուն
14) Բամբակաշատի մշակույթի տուն

229. Մշակութային գործունեություն կազմակերպելու համար առաջնային է տեխնիկապես վերազինման խնդիրը: Գրեթե բոլոր մշակույթի տներում եղած, ինչ-որ չափով պահպանված տեխնիկական միջոցներն արդեն վաղուց անօգտագործելի են: Շատ համայնքներում դրանք դուրս չեն գրված և որպես գույք հաշվառված են:

230. Գրադարաններ. Արմավիրի մարզում գործում են 102 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը՝ քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1161830 կտոր գիրք՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, «Գիրք» հիմնադրամի, «Արևիկ» հրատարակչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կատարված նվիրաբերությունների շնորհիվ: Մարզի գրադարանները ստացել են նաև հեղինակային նվիրատվություններ՝ «Գրական Արմավիր» ստեղծագործական ակումբի, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատան ինֆորմացիոն ռեսուրս-կենտրոնի, «Սիվիլիտաս» հիմնադրամի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների (ՄԻԺԻ, USAID) կողմից: Արմավիրի մարզային գրադարանի գրքային հավաքածուն 2013 թվականին համալրվել է 1350 օրինակ գրականությամբ, համալրվել են նաև մարզի համայնքային ենթակայության քաղաքային և գյուղական գրադարանների գրքային հավաքածուները թե համայնքային բյուջեներից հատկացված միջոցների, և թե անհատների և հեղինակների կողմից կատարված նվիրատվությունների հաշվին:

231. Միայն 2013թ. Արմավիրի մարզային գրադարանը սպասարկել է 163793 ընթերցողների: Գրքի և մամուլի սպասարկման միջոցով տացքը եղել է 162734: Էլեկտրոնային սպասարկման ընդհանուր միավորի թիվը (ինտերնետ, «Արև», «Իրտեկ» համակարգերի միջոցով) կազմել է 1059: Գրադարանային հավաքածուի թիվը կազմել է 113285 միավոր:

232. Մարզի բոլոր գրադարաններն իրականացնում են իրենց աշխատանքային ծրագրերով նախատեսված միջոցառումներ (կլոր սեղաններ, քննարկումներ, մանկական գրքի ընթերցումներ, շնորհանդեսներ, մեծարման երեկոներ, հանդիպումներ գրողների և այլ անվանի անձանց հետ): Մասնակցում են նաև Գրադարանավարի օրվան, Թարգմանչաց տոնին, Մայրենի լեզվի միջազգային օրվան, Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթվան, Գիրք նվիրաբերելու օրվան, Գիտելիքի և դպրության օրվան, Հաղթանակի և խաղաղության տոնին, Դպրոցական գրադարանների միջազգային օրվան նվիրված միջոցառումներին:

233. Գրադարանների անբավարար համալրումը, առանձնացվածությունը (մեկուսացումը) մարզում խոչընդոտում է տեղեկատվական պահանջարկի բավարարմանը, միասնական տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և տարածաշրջանի բնակչության՝ տեղեկույթի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացմանը:

234. Գրադարանների ոլորտի հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները հետևյալն են՝

1) Մարզի գրադարանների մեծ մասը տեղակայված են ոչ բարվոք պայմաններ ունեցող շենքերում, գրապահոցներում բացակայում են հավաքածուների պահպանությունն ապահովող տեխնիկական սարքավորումները, ինչը խիստ վտանգում է գրքային ֆոնդի պահպանությունը և լիակատար օգտագործումը:

2) Մարզում մեծ խնդիր է գրադարանների համալրումը նոր գրականությամբ, ինչը խոչընդոտում է տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և

բնակչության՝ տեղեկատվական մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացմանը:

3) Հիմնախնդիրների լուծման առաջնահերթ քայլեր են համարվում գրադարանների շենքերի և շինությունների վերանորոգումը, նոր գույքով և գրականությամբ համալրումը՝ առանձնապես գյուղական համայնքներում:

4) Անհրաժեշտ է կենտրոնացված կարգով գրադարանների համար պետական բյուջեից հատկացնել ֆինանսական միջոցներ համակարգիչների և համակարգչային սարքերի ձեռքբերման համար, քանի որ մարզում գրադարանային ծառայությունների բարելավումը դիտարկվում է նաև գրադարաններում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրմամբ, համացանցի կիրառմամբ: Գրադարանային ծառայությունների բարելավման ուղղություններից է նաև ընդհանուր գրադարանային ցանցի ստեղծումը: Ընդհանուր գրադարանային ցանցում կընդգրկվեն քաղաքային, այնուհետև գյուղական գրադարանները, որոնք նույնպես կիրականացնեն էլեկտրոնային սպասարկում:

235. Գրադարանների վիճակի բարելավումը կնպաստի բնակչությանը մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գրադարանը հաճախելու ֆիզիկական սահմանափակում ունեցող անձանց գրադարանային ծառայությունների մեջ ներգրավմանը, ինչպես նաև գրադարանային հավաքածուների պահպանությանը:

236. Մարզի գրադարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով առաջնահերթություն է տրվում խոշոր գյուղական համայնքների գրադարանների շենքային պայմանների բարելավման խնդրին: Շենքերի հիմնանորոգման, լոկալ ջեռուցման համակարգի տեղակայման, ջրամատակարարման ցանցի, սանհանգույցների վերանորոգման, ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար համապատասխան ֆինանսական հատկացումներ են ակնկալվում ՀՀ պետական բյուջեից:

237. Առաջարկվել է ՄԺԾԾ-ով 2015-2017 թվականներին մարզում վերանորոգել մարզի թվով 7՝ Մրգաշատի, Նալբանդյանի, Արմավիրի, Արշալույսի, Արագածի, Աղավնատան, Մյասնիկյանի համայնքային գրադարանների շենքերը:

238. Թանգարաններ. ՀՀ Արմավիրի մարզում գործում է 9 թանգարան. Սարդարապատի հուշահամալիր-Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական թանգարան, Մուսալեռի հուշահամալիր-թանգարան, Զվարթնոց պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, Էջմիածնի գավառագիտական թանգարան, Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի անվան թանգարան, Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան, Մեծամորի պատմահնագիտական թանգարան, Միհեր Աբեղյանի անվան թանգարան, Բաղրամյանի «Արաբոյի և ֆիդայիների հայրենասիրական թանգարան», որոնց հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ:

239. 2014թ. մայիսի 17-ին մարզի թանգարանները մասնակցել են Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ, Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձր հովանու ներքո իրականացվող՝ «Թանգարանների գիշեր» համաեվրոպական ակցիային:

Այդ օրը ժամը 18:00-22:00-ն անճար բաց են եղել բոլոր թանգարանները, հյուրընկալել են հանրությանը՝ կազմակերպելով հատուկ տոնական միջոցառումներ և հաղորդակցություն ապահովող նախաձեռնություններ, ցուցահանդեսներ, հանդիպումներ և այլն:

240. Թանգարաններում գործել են զեղչեր (համայնքային թանգարաններում նույնիսկ անվճար), դպրոցականների, ուսանողների, թոշակառուների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, կազմակերպվել են թանգարանների որոշ ցուցանմուշների արտագնա ցուցադրություններ՝ մարզի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական մշակույթի օջախներում, դպրոցներում և այլ հաստատություններում:

241. Թանգարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևոր է նախ և առաջ թանգարանների հավաքածուների անվտանգության ապահովումը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում օդափոխիչ համակարգերի և կայուն ջերմախոնավային պայմանների ստեղծումը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցվածությունը:

242. Պետական թանգարաններում ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների կազմակերպմանը, հավաքածուների համալրմանը նպատակաուղղված ֆինանսական միջոցները մեծապես կնպաստեն մարզի մշակութային կյանքի աշխուժացմանը:

243. Մարզի թանգարանների գործունեության բարելավումն ու մշակութային արժեքների անվնաս պահպանությունն ապահովելու համար կարևոր են թանգարանային ոլորտում առկա հիմնախնդիրներից առաջնային համարվող հետևյալ խնդիրների լուծումը առաջիկա չորս տարիների ընթացքում.

1) «Մեծամորի արգելոց-թանգարան («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ մասնաճյուղ)» տանող ճանապարհի բարեկարգում, համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրում, տարածքում առկա ճահիճների չորացման աշխատանքներ:
2) «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ մասնաճյուղ) շրջակա հատվածի կանաչ զանգվածի պահպանման համար ոռոգման ցանցի հիմնարար նորոգում:
3) Մարզի թանգարանների գործունեության բարելավման նպատակով թանգարաններ տանող ճանապարհների բարեկարգում, համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրում:

244. Պատմամշակութային և բնության հուշարձաններ. Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 417 հուշարձան, և որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները:

245. Արմավիրի մարզի պատմամշակութային արժեքներն են՝ սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց

տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այղր լիճը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները: Էջմիածին քաղաքի եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում:

246. 2013 թվականի ընթացքում կազմվել և ՀՀ մշակույթի նախարարի կողմից հաստատվել են մարզի Նոր Արմավիր համայնքի վարչական տարածքում գտնվող «Քաղաքատեղի «Արգիշտիխինիլի» (Ք.ա.8-6դդ.) պատմամշակութային հուշարձանի և Այգեշատ (Էջմ.) համայնքի Թարգմանչաց վանքի (7-րդ դար) պահպանական գոտու պահպանական գոտիների նախագծերը: Մարզի համայնքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի կազմման աշխատանքները շարունակվում են:

247. Ըստ ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ ծրագրվում է հանրապետությունում իրականացնել 1000-1500 հուշարձանների և հնագիտական վայրերի մոնիտորինգ, ինչի արդյունքում պետք է սահմանվեն հուշարձանների վերականգնման առաջնահերթություններ և օգտագործման ձևի ու կարգի հստակ նկարագրեր: Մոնիտորինգի արդյունքում պետք է ներդրվի նաև պատմամշակութային հուշարձանների կադաստրի վարման կարգ: Համաձայն նախնական գնահատականի՝ ակնկալվում է տարեկան իրականացնել 10-15 հուշարձանների վերականգնման աշխատանքներ (ամրակայում, բարե-կարգում), ինչպես նաև տարեկան 15-20 հուշարձաններ և հնագիտական վայրեր ընդգրկել զբոսաշրջության երթուղիներում:

248. Ոչ նյութական մշակութային ժառանգություն. Այս ոլորտում ՀԶԾ-ով իրականացվող ծրագրերը նպատակաուղղված են ոչ նյութական մշակութային ժառանգության՝ հանրության, առանձին խմբերի կողմից որպես իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչված, կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող սովորույթների, ավանդույթների, ծեսերի, պատկերացումների, գիտելիքների ու հմտությունների կենսունակության, պաշտպանության ու կիրառման ապահովմանը: Այս խնդիրների լուծման նպատակով ծրագրավորվող հիմնարար գործողություններից են՝

1) Ժողովրդական արվեստի և արհեստի նմուշների ստեղծմանն աջակցությունը:
2) Հանրապետության մարզերում ժողովրդական արհեստների և տնայնագործական փոքր արհեստանոցների հիմնումը, ինչպես նաև ժողովրդական արհեստագործության հմտություններին վերաբերող ուսումնական, խորհրդատվական ձեռնարկների կազմումը և հրատարակումը:
3) Ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացների կազմակերպումը և ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ ծեսերի և տոնակատարությունների կազմակերպումն ու ֆիլմերի ստեղծումը:
4) Նախատեսվում է նաև ոչ նյութական մշակութային ժառանգության առարկաները հավաքող, ուսումնասիրող, հրատարակող և հանրահռչակող կազմակերպություններին պետական աջակցություն ցուցաբերելու ծրագրի մշակում
5) Մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում:

249. Վերոնշյալ խնդիրների իրականացման ուղղությամբ հիմնական քայլեր են համարվում վերանորոգված և համապատասխան նյութատեխնիկական միջոցներով համալրված մշակույթի տներում արհեստագործական կենտրոնների հիմնումը, գործող ազգագրական երգի ու պարի համույթներին անհրաժեշտ տարազով, երաժշտական գործիքներով և տեխնիկայով պետական աջակցության ցուցաբերումը, նոր ազգագրական համույթների ստեղծումը:

250. Մարզում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանումն ու ժողովրդական ստեղծագործության տարբեր ոլորտների ուսուցման կազմակերպման նպատակով մարզի Արմավիր և Էջմիածին, Մեծամոր քաղաքների, Փարաքար, Արշալույս, Մրգաշատ, Արմավիր, Մերձավան, Արտիմետ, Գետաշեն համայնքների մշակույթի տներում, հանրակրթական դպրոցներում, տարբեր հասարակական կազմակերպություններում և այլ հաստատություններում («Արմավիրի արվեստի դպրոց» ՍՊԸ, «Մեծամորի Սբ. Ղազար» կրթամշակութային կենտրոն, «Լևոն Գալչյան արվեստանոց» արվեստների և արհեստների ուսուցման կենտրոն, Քարակերտի «Նարեկացի» մշակութային կենտրոն, «Հայ միասնության խաչ» ՀԿ, Էջմիածնի հայորդաց տուն և այլն) կազմակերպվում են միջոցառումներ, ֆիլմերի դիտումներ: Ուսուցումն իրականացվում է նաև գործող տարբեր խմբակների, անհատ վարպետների և ստեղծագործողների միջոցով:

251. Ոչ նյութական մշակութային ժառանգության, ժողովրդական ստեղծագործության տարբեր ոլորտների ուսուցումն ու մասսայականացումն իրականացվում է նաև ուսումնական և գեղարվեստական կրթության հաստատություններում՝ ազգային, հոգևոր տոների, արարողությունների, խաղերի ու ծեսերի բեմադրություններով, որոնց ընթացքում ներկայացվում է նաև ազգային խոհանոցն իր առանձնահատկություններով:

252. Մարզում ավանդական արհեստագործության զարգացման ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ ցուցահանդեսներ, տեղական և հանրապետական հեռուստատեսություններով առանձին հաղորդումներ՝ նվիրված մարզում հայտնի արհեստագործ վարպետներին և նրանց գործունեությանը:

253. Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ. 2014թ. ՀՀ Արմավիրի մարզում գործում է 22 գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն՝ 14 երաժշտական, 7 արվեստի, 1 գեղարվեստի դպրոց և 1 արվեստի պետական քոլեջ, որին կից գործում են նաև երաժշտական և արվեստի պրակտիկայի բաժիններ: Մարզում գործում է 3 հենակետային՝ Արմավիր քաղաքի արվեստի, Էջմիածին քաղաքի Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական և Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցներ: Վերոնշյալ դպրոցների շենքային պայմանները և նյութատեխնիկական վիճակը բավարար են: Մարզի հենակետային դպրոցներում մանկավարժական կոլեկտիվի ներուժը համապատասխանում է հենակետային դպրոցների պահանջներին:

254. Մարզի 15 երաժշտական և արվեստի դպրոցների որոշ բաժիններ գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ նրանցում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման պետական ծրագիրը հնարավորություն է տալիս պահպանել ազգային նվագարանների գործածությունը: Պետական բյուջեից վերոնշյալ բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսած գումարը 2013թ. համար կազմել է 21197.2 հազ. դրամ,

որը նախատեսված է մարզի թվով 15 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող 160 աշակերտների համար: (Աղյուսակ 5.2.2):

Աղյուսակ 5.2.2. Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ

Ցուցանիշներ	**2008թ.**	**2009թ.**	**2010թ.**	**2011թ.**	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.** պետական բյուջեով նախատեսված
Տարեկան ֆինանսավորման չափը (հազ. դրամ)	11696,7	18740,7	20885,6	22257,0	21197,2	21197,2	31659,8
Ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը	15	15	15	15	15	15	15
Ծրագրում ընդգրկված սովորողների քանակը	155	155	172	168	160	160	163
Ծրագրի ուղղվածությունը ըստ մասնագիտական բաժինների	ազգային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ	ազգային, լարային, փողային նվագարաններ

255. Արմավիրի մարզի հենակետային դպրոցներում ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի» կողմից իրականացվում են՝

1) «Ուսումնամեթոդական օգնություն» ծրագիր, որտեղ 2011թ. ընդգրկված է եղել 772 աշակերտ և 211 մանկավարժ, 2012թ.՝ 775 աշակերտ և 212 մանկավարժ, 2013թ.՝ 610 աշակերտ և 150 մանկավարժ, 2014թ. 1-ին կիսամյակում՝ 385 աշակերտ և 115 մանկավարժ:
2) «Վարպետության դասեր» ծրագիր, որտեղ 2011 թ. ընդգրկված է եղել 45 աշակերտ և 40 մանկավարժ, 2012 թ.՝ 121 աշակերտ և 57 մանկավարժ:
3) «Վերապատրաստման դասալսումներ» ծրագիր, որտեղ 2011թ. ընդգրկված է եղել 47, 2012թ.՝ 55, 2013 թ.՝ 21, 2014թ. 1-ին կիսամյակում՝ 58 մանկավարժ:
4) ՀՀ մշակույթի նախարարության «ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում» ընդգրկված երեխաների մասնակցությամբ 2011-2014 թվականներին հանրապետության բոլոր մարզերում կազմակերպվել են համատեղ համերգ-ստուգատեսներ: Համերգներին ՀՀ Արմավիրի մարզից յուրաքանչյուր տարի մասնակցում է մոտ 30 շնորհալի աշակերտ:
5) «Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում» ծրագրով մարզում գործող բոլոր ուսումնական հաստատություններին 2011-2013 թվականներին համապատասխանաբար անվճար բաշխվել է 210, 303, 321, իսկ 2014թ. առաջին կիսամյակում՝ 102 գիրք և 10 ձայնասկավառակ:

6) ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ» ծրագրի շրջանակներում 2013թ. մարզի Փարաքար գյուղի Հ. Էդգարյանի անվան արվեստի, Ալաշկերտ գյուղի երաժշտական, Մեծամոր քաղաքի Շարլ Ազնավուրի անվան արվեստի, Էջմիածնի Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական և Ս.Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցների շնորհալի երեխաներին տրամադրվել է բամբիռ, քամանչա, թառ, ուդ, քանոն ազգային նվագարանները:

256. Գեղարվեստական կրթության համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման և վերանորոգման, դահլիճների, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ: Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1) Շենքային պայմաններ
2) ցածր աշխատավարձ
3) մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման կայուն համակարգի ստեղծում
4) գյուղական համայնքներում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սակավություն:

257. Գեղարվեստական կրթության մատչելիության, ուսուցման բնականոն ընթացքի և որակի ապահովման նպատակով նախատեսվում է 2015-2017թթ. պետական բյուջեի միջոցներով իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1) Մրգաշատի երաժշտական դպրոց - տանիքի և շենքի վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում, սանհանգույցի և ջրահեռացման համակարգի վերականգնում, նոր գույքի ձեռքբերում և երաժշտական գործիքների համալրում:
2) Ալաշկերտի (Սովետականի) երաժշտական դպրոց - տարածքի բարեկարգում, ջեռուցման համակարգի տեղադրում, սանհանգույցի և ջրահեռացման համակարգի վերականգնում:

258. Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ). Այս ենթաոլորտի ռազմավարական նպատակն է թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործության և արհեստների պահպանությունը, ուսումնասիրությունը, տարածումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային (Հայաստանի Հանրապետության մարզեր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններ) մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

259. Արմավիրի մարզում գործում է 4 տիկնիկային թատրոն՝ «Ընծա», «Փալանչո» «Խաղք» և «Նուրի», 5 թատերախումբ, 4 նվագախումբ, 22 երգչախումբ, ըստ տարածաշրջանների բաշխումը ներկայացված է աղյուսակ 5.2.3-ում:

Աղյուսակ 5.2.3.

	Ընդամենը	որից՝ ըստ տարածաշրջանների		
		Արմավիր	Էջմիածին	Բաղրամյան
Նվագախմբեր	**4**	2	2	-
Երգչախմբեր	**22**	10	12	-
Թատերախումբ	**5**	2	3	-
Տիկնիկային թատրոն	**4**	2	2	-

260. Մարզում մշակութային քաղաքականություն իրականացնելիս մեծ ուշադրություն է դարձվում ծրագրերում և միջոցառումներում նոր մտահղացումների, նոր անունների, երիտասարդ տաղանդավոր արվեստագետների բացահայտմանը և ներգրավմանը՝ ոլորտում նոր արժեքներ և գաղափարներ ներդնելու նպատակով՝ ապահովելով բոլորի համար իրենց ստեղծագործական ներուժը դրսևորելու և հասարակությանը ներկայացնելու հավասար պայմաններ:

261. Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են բազմաթիվ մշակութային միջոցառումներ՝ թատերական ներկայացումներ, բեմադրություններ, համերգներ, նկարչական աշխատանքների, գորգերի ցուցահանդեսներ, կավճանկարի մրցույթներ, երգ-պարի, երգչախմբային մրցույթ-փառատոներ և այլն:

262. Գերկայություններ, հիմնախնդիրներ. Մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են՝

1) Մարզի մշակութային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ
2) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերարտակավորում
3) Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում
4) Մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների հիմնանորոգում
5) Պատմական հուշարձանների պահպանություն, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում
6) Սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում, երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

263. Ներկայումս մշակույթի ոլորտի խնդիրները մարզում համակարգված լուծում չեն ստանում, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: 1996 թվականից մշակութային կազմակերպությունները գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո, սակայն ոչ բարվոք տնտեսական վիճակը, համապատասխան մասնագետների արտահոսքը, ընդհանուր ռազմավարական ծրագրերի բացակայությունը հնարավորություն չտվեցին մշակութային կյանքը մարզում արդյունավետ և լիարժեք կազմակերպելու համար: Ապակենտրոնացման գործընթացում հաշվի չէին առնվել նաև համայնքների կարողությունները: Համայնքապետարանների մշակույթի բաժինների, համայնքների մշակութային կազմակերպությունների կողմից մարզպետարան չեն ներկայացվում մշակույթի զարգացման հեռանկարային (համայնքին հատուկ) համագործակցության ծրագրային առաջարկներ:

264. Տեղական ինքնակառավարման մարմինները, դժվարություններ ունենալով նվազագույն աշխատավարձի ապահովման գործում, կատարում են աշխատողների չհիմնավորված կրճատումներ, իսկ մասնագիտական ընտրության չափորոշիչների բացակայության պայմաններում կատարում են չհիմնավորված նշանակումներ: Եղած մասնագետների մեծ մասը վերաորակավորման կարիք ունեն:

265. ՀՀ Արմավիրի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների զարգացման նպատակով ֆինանսական հատկացումների և ներդրումների սակավության հետ:

266. Ծրագրով նախատեսվող խնդիրների կենսագործումն ու լուծումները նախատեսվում են մշակույթի ոլորտի լիազորված պետական մարմնի, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների միջնաժամկետ ծախսային, տարեկան, եռամյա և հեռանկարային, ինչպես նաև նպատակային ծրագրերով, որոնց ապահովման ֆինանսական աղբյուրներն են՝ ՀՀ պետական բյուջեն, համայնքների բյուջեները և օրենսդրորեն չարգելված այլ աղբյուրները:

5.2.2. Մշակույթի ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

267. Մշակույթի ոլորտի քաղաքական ուղղությունները և միջոցառումները. ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակութային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հոգևոր, բարոյական, ազգային հարուստ ավանդույթների, արժեհամակարգային ընդհանրության վրա խարսխված միասնական մշակութային միջավայրի ձևավորմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը և ժամանակակից մշակութային զարգացումներին հանրության լիիրավ մասնակցությանը, անհատի ստեղծագործական կարողությունների խթանմանը և ձևավորմանը, ազգային ինքնության և քաղաքացիական բարձր գիտակցությամբ ու հայրենասիրությամբ օժտված հասարակության զարգացման գործընթացների ապահովմանը.

1) Մշակութային ժառանգության պահպանության և ազգային ավանդույթների վերարտադրում.

ա. ուսումնասիրված հնավայրերի ամրակայման և հանրության համար մատչելիության ապահովմանն աջակցում.

բ. թանգարանային ցուցադրությունների արդիականացման աշխատանքներին աջակցում.

գ. ստեղծագործական արդյունաբերության խթանում (հուշանվերների պատրաստում, ազգային խոհանոցի տարածում, ազգային տարազի կիրառում, կիրառական արվեստի ճյուղերի զարգացում).

2) Ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի զարգացում, մշակութային արտադրանքի տարածում, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտում և ստեղծագործական գործընթացների խթանում.

ա. պետական պատվերով ստեղծված երաժշտության, թատերական ներկայացումների, հեռուստահաղորդումների, գրքերի և ժամանակակից արվեստի տարբեր ոլորտներում պետական աջակցությամբ իրականացվող փառատոների, մրցույթների ստուգատեսների միջոցով ազգային և համամարդկային արժեքների տարածում.

բ. մշակութային արտադրանքի ստեղծում և ծառայությունների մատուցման մրցակցային պայմանների ապահովման աշխատանքներին աջակցում.

գ. ժամանակակից արվեստի զարգացմանը նպաստող ծրագրերին և նոր ցուցադրություններին աջակցության ցուցաբերում.

դ. դեբյուտային ստեղծագործական ծրագրերի, արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում.

ե.երգչախմբային արվեստի զարգացմանը հատուկ ուշադրության ցուցաբերում.

3) Գեղարվեստական կրթության համակարգի զարգացում, մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության ապահովում ու խթանում

ա.մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության շարունակականության ապահովում՝ դասական և ժամանակակից արվեստին հաղորդակցման ապահովմամբ, ստեղծագործական ունակությունների բացահայտմամբ և զարգացմամբ.

բ.«մշակութային կազմակերպություն-դպրոց» ուղիղ կապի համակարգի ձևավորման, մշակութային և կրթական ծրագրերի ներդաշնակեցման իրագործման աշխատանքներին անմիջական մասնակցություն.

գ.շնորհալի երեխաների ստեղծագործական ունակությունների խթանմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման ապահովում.

դ. մշակութային նպատակային ծրագրերի միջոցով սահմանափակ կարողություններով երեխաների սոցիալական ինտեգրմանը աջակցության ցուցաբերում.

4) Մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափության ապահովում

ա. մարզերում իրականացվող հյուրախաղային ծրագրի և հանրապետական փառատոների մասնակցությունների աջակցության շարունակականության ապահովում.

5) Մշակութային ենթակառուցվածքների արդիականացում, մշակութային ծառայությունների որակի բարելավում ու մատչելիության ապահովում.

ա. սոցիալական բոլոր խավերի համար մշակութային ծառայությունների բազմազանության հասանելիության ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացում.

բ.մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացում.

6) Հայկական մշակույթի տեղորոշում և հանրահռչակում.

ա. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված համակարգված ծրագրերի իրականացում՝ արվեստի միջոցով ցեղասպանության հիմնախնդիրների հանրայնացում, հայ մշակույթի ներկայացմամբ մշակութային նախագծերի իրականացմամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի շարունակականության ապահովում.

7) Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու և Հայաստանի Հանրապետության կառավարության փոխգործակցության ապահովում, հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացում, ազգային ինքնության պահպանում.

ա. պատմական, հոգևոր, մշակութային արժեքների՝ պատմամշակութային հուշարձանների պահպանությանն ու հանրայնացմանն ուղղված աշխատանքների իրականացում.

բ. հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանմանը, մատաղ սերնդին անցանկալի ազդեցություններից զերծ պահելուն և հայեցի դաստիարակությանն ուղղված ծրագրերի իրականացում.

8) Ազգային փոքրամասնությունների էթնիկ ինքնության պահպանում և մշակույթի լիարժեք դրսևորում.

ա.ազգային փոքրամասնությունների էթնիկ մշակույթի ներկայացման համար լրացուցիչ պայմանների ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացում:

268. ՀՀ Արմավիրի մարզի մշակույթի ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 3,934,150.8 հազ.դրամ (տես՝ հավելված 5.2):

5.2.3. Մշակույթի ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
Մշակութային հաստատությունների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում			
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, վերանորոգում	Հիմնանորոգված, վերանորոգված մշակութային օբյեկտների թիվը	3-5	
Պատմամշակութային արժեքների պահպանում և վերականգնում	Վերականգնված, կառուցված պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների թիվը	3	

Մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային մշակութային միջոցառումների թիվը	տարեկան 50-60	
	Համայնքային մշակութային միջոցառումների թիվը	տարեկան շուրջ 250-300	
	Միջազգային, հանրապետական և մարզային մրցույթներում, փառատոներում հաղթող մասնակիցների թիվը	տարեկան 200-300 մարդ	
	Թանգարաններ, ցուցահանդեսների այցելուների քանակ տարեկան կտրվածքով	տարեկան 20000-25000 մարդ	
	Գրադարաններ այցելուների քանակ տարեկան կտրվածքով	տարեկան 180000-200000 մարդ	
	Պետական, ազգային տոներին, մարզային տոնախմբություններին մասնակիցների թիվը	տարեկան շուրջ 150000 մարդ	
	Թատերական, տիկնիկային ներկայացումների քանակը	տարեկան 30-50	
	Թատերական միջոցառումների մասնակիցների քանակը	տարեկան 15000-20000	

5.3. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

5.3.1. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն

269. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ. Մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման երաշխիքը պետական քաղաքականության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը:

270. Արմավիրի մարզը Հայաստանի Հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է: Մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղված է մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականության խթանմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

271. Մարզում գործում է 9 մարզադպրոց, ինչպես նաև նշված մարզադպրոցների մասնաճյուղեր մարզի տարբեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 92 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադասարանական մարզական խմբերի պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 189 խմբեր՝ 20 մարզաձևերից: Արմավիրի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներ չկան:

272. Մարզի համայնքների ֆիզիկական կուլտուրան և սպորտը զարգացնելու և առողջ ապրելակերպը խթանելու համար անհրաժեշտ է վերականգնել մարզում նախկինում գործող մարզադաշտերը, մարզադահլիճները և լողավազաններն իրենց ենթակառուցվածքներով: 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ով ներկայացվել է Գեղակերտի (Սամաղարի) ծանրամարտի մարզադպրոցի և Էջմիածին քաղաքի մարզահամալիրի հիմնանորոգման աշխատանքները, որոնց խիստ անհրաժեշտությունը կա տվյալ տարածաշրջանում:

273. ՀՀ Արմավիրի մարզի քառամյա զարգացման ծրագրով, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի 18.03.2013թ. N 189 որոշմամբ սահմանվել են մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական աշխատանքների առաջնահերթություններն ու ուղղությունները, որով Արմավիրի մարզում հիմնական գերակա մարզաձևեր են նախանշվել ծանրամարտը, բռնցքամարտը, ըմբշամարտը, շախմատը:

274. Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցել են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի, միջազգային այլ առաջնություններին մարզում հենակետային համարվող 3 մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ: Մարզի մարզիկներից ըմբշամարտ, բռնցքամարտ, ծանրամարտ մարզաձևերում միջազգային և հանրապետական այլ առաջնություններում տարբեր մրցանակների են արժանացել շուրջ 32-ը, որոնք յուրաքանչյուր տարի համալրում են Հայաստանի տարբեր մարզաձևերի հավաքական թիմերը:

275. Լավագույն արդյունքներ ցույց տված մարզիկները արժանացել են դրամական պարգևների և պատվոգրերի ինչպես ՀՀ Արմավիրի մարզպետի, այնպես էլ Արմավիրի, Էջմիածնի և Մեծամորի քաղաքապետերի և համապատասխան համայնքների ղեկավարների կողմից: Մարզպետի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել նաև նշված և այլ մարզաձևերի տարբեր առաջնություններին մարզի մարզիկների և թիմերի մասնակցության ապահովմանը:

276. 2010թ. ստեղծված Արմավիրի մարզի վոլեյբոլի «Արմավիր» թիմը Արմավիրի մարզպետի հովանավորությամբ մասնակցել է ՀՀ բարձրագույն խմբի առաջնությանը և գրավել 4-րդ տեղը:

277. ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ 1-12 դասարաններում նախատեսվել և իրականացվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի շաբաթական 3-ական դասաժամ, իսկ 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 4 ժամ, որից 2-ը՝ շախմատ առարկա: Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ֆիզկուլտուրա» առարկային տրված է շաբաթական առնվազն 4 ժամ: Ֆիզկուլտուրայի պարապմունքներում աշակերտների ամենօրյա ընդգրկվածությունն

ապահովվում է նաև արտադասարանական և արտադպրոցական խմբակներում նրանց ակտիվ մասնակցությամբ:

278. Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում շարունակվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից ներդրված «Առողջ ապրելակերպ» ծրագրի իրականացումը:

279. Մարզի բոլոր գործող նախադպրոցական հաստատությունները ամենօրյա նախավարժանքները, տարբեր սպորտլանդիաները և խաղերը կազմակերպում են ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից մշակված՝ «Ֆիզիկական դաստիարակությունը մանկապարտեզում» ծրագիր-ուղեցույցի համաձայն:

280. Մարզում գործող թվով 2 հատուկ գիշերօթիկ դպրոցների հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է հատուկ մանկավարժ-մասնագետների կողմից՝ համաձայն դպրոցի ուսումնական պլանի: Թվով 4 դպրոցներում իրականացվող ներառական կրթության ծրագրում ընդգրկված են զարգացնող հատուկ մանկավարժական պարապմունքներ, որոնք հաշմանդամություն ունեցող (մտավոր կամ ֆիզիկական խնդիրներ ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաների հետ անցկացվում են խմբային կամ անհատական պարապմունքների ձևով: Նշված դպրոցներում կազմակերպվել են ներդպրոցական սպորտլանդիաներ և մարզական միջոցառումներ, որոնց մասնակցել են նաև ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաները: Հնարավորության դեպքում հաշմանդամություն ունեցող երեխաներն ընդգրկվել են մանկապատանեկան տարիքի մարզական միջոցառումներում (ֆիզկուլտուրայի միասնական օր, շախմատ, սպորտլանդիա):

281. Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածության բարձրացման հարցին և այդ ուղղությամբ բացի ուսումնական ծրագրով նախատեսված պարապմունքներից, կազմակերպվել են համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝

1) «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր»
2) Հրաձգության անհատական բաց առաջնություն՝ նվիրված ՀՀ Անկախության տոնին (1995-1997թթ. ծնված պատանիների միջև)
3) Մարզի սահմանամերձ 10 գյուղերի դպրոցականների ռազմամարզական խաղեր, շարային պատրաստության, հրաձգության պարապմունքներ և այլ միջոցառումներ՝ սահմանապահ զորամասերում,
4) «Կորյուն» ռազմամարզական խաղերի Արմավիրի մարզային փուլ,
5) Ֆիզկուլտուրայի միասնական օր հանրակրթական դպրոցներում մայիս և հոկտեմբեր ամիսներին:

282. Յուրաքանչյուր տարի մարզում կազմակերպվում և անցկացվում են ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» մրցույթի մարզային փուլերը, մասնավորապես.

1) 2013 թվականին հունիսի 11-15-ը մարզում կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի տարածքային փուլը Արմավիր, Մեծամոր և Հայթաղ համայնքներում: Մարզի 3 տարածքներում և 4 տարիքային խմբերում մրցույթին մասնակցել է 96 ընտանիք:
2) 2013թ. հունիսի 24-26-ն անցկացվել է մրցույթի մարզային փուլը, որին մասնակցել են 36 ընտանիքներ: Հաղթող ճանաչված 12 լավագույն մարզական ընտանիքներ օգոստոսի 19-25-ը Ծաղկաձորում մասնակցել են «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական ստուգատեսի եզրափակիչ մրցումներին:
3) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն գյուղական մարզական համայնք» մրցույթի հանրապետական փուլում ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղական համայնքն արժանացել է երրորդ մրցանակի՝ ստանալով 400 հազ. դրամ պարգև և ՀՀ Նախագահի վկայագիր:

283. Ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառի պետական ծրագրերի իրականացումը մարզում ապահովելու և աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով մշտական համագործակցություն է ապահովվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ, ապահովվել է մարզի համապատասխան ներկայացուցիչների մասնակցությունը նշված մարմինների կողմից կազմակերպված սեմինարներին, խորհրդակցություններին, քննարկումներին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ քննարկվող հարցերի և մարզում առկա խնդիրների վերաբերյալ:

284. ՀՀ Արմավիրի մարզը պատշաճ կերպով մասնակցել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից կազմակերպված՝ մարզերում անցկացվող մրցաշարերին, առաջնություններին և միջոցառումներին, կազմակերպելով տարածքային, մարզային փուլերը և ապահովելով մարզի թիմերի կամ մարզիկների մասնակցությունը հանրապետական եզրափակիչներին:

285. Մշտական համագործակցություն է ապահովվել Հայաստանի շախմատի, ֆուտբոլի, արևելյան մարտարվեստների ֆեդերացիաների, «Արմավիրի մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամի, «Սևան» գյուղական մարզական ընկերության, «Երիտասարդ սերունդ», «Արմավիրի զարգացման կենտրոն», «Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ների, «Արմավիր-Դար 21» հիմնադրամի, Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ՝ սպորտին և երիտասարդությանը նվիրված միջոցառումների կազմակերպման բնագավառներում:

286. Ոլորտում պետական բյուջեի, դրամաշնորհների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց օգնությամբ կատարվում են ներդրումներ, միայն 2013թ. իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1) Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներին շախմատի սեղանների, աթոռների, խաղադաշտի լրակազմերի, ժամացույցների, ուսուցչի ձեռնարկների, շախմատի դասագրքերի բաշխում՝ 2-4-րդ դասարաններում շախմատի դասաժամերը կազմակերպելու նպատակով:

2) «Փյունիկ» հիմնադրամի աջակցությամբ մարզի 9 գյուղական համայնքների համար խաղահրապարակների ձեռքբերում և 12 համայնքների դպրոցներին մարզասարքերի տրամադրում:
3) «Հեյֆեր ինթերնեյշնլ», «Պատանեկան նվաճումներ» կրթական ծրագրերի, «Փրկեք երեխաներին» կազմակերպության աջակցությամբ և դպրոցի միջոցներով Մայիսյանի դպրոցում կառուցվել է խաղահրապարակ:

4) Հայաստանի սոցիալական ներդրումներ հիմնադրամի միջոցներով, համայնքի համաֆինանսավորմամբ հիմնանորոգվել է Վանանդի դպրոցի մարզադահլիճը:
5) Մարզում գործող «Արմավիրի մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամի կողմից աջակցություն է ցուցաբերվել մարզի հանրակրթական դպրոցներին՝ մարզագույք ձեռք բերելու, մարզի թիմերին և մարզիկներին՝ հանրապետական մրցումներին մասնակցելու (տրանսպորտ, հանդերձանք, անհրաժեշտության դեպքում նաև կեցության ծախսեր) նպատակով:
6) Համայնքային բյուջեի միջոցներով համայնքային ենթակայության մարզադպրոցները համալրվել են որոշակի քանակությամբ գույքով և մարզահագուստով՝ ըստ մարզադպրոցների կողմից ներկայացված հայտերի:

287. Արմավիրի մարզպետարանի կայք-էջում մշտապես տեղադրվում է տեղեկատվություն մարզում իրականացված բոլոր մարզական միջոցառումների և ծրագրերի մասին, ինչպես նաև համապատասխան տեղեկույթը տրամադրվել է մարզի «Լույս», «ԱԼՏ», «Նոյ-Հայաստան» հեռուստաընկերություններին, «Հայրենականչ», «Շրջադարձ» թերթերին, էլեկտրոնային և այլ լրատվամիջոցներին, որոնք մշտապես ներկա են գտնվել կազմակերպված միջոցառումներին, տեղեկացվել հովանավորչական միջոցներով իրականացվող և իրականացված ծրագրերին, լուսաբանելով այդ միջոցառումները՝ միաժամանակ տարածելով և մասսայականացելով սպորտն ու առողջ ապրելակերպը: Մարզի սպորտային միջոցառումների և հաջողությունների ու խնդիրների մասին հոդվածներ են տպագրվել նաև «Հայ արի» և «Մարզաշխարհ» թերթերում: ՀՀ Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ հրատարակության է նախապատրաստվում մարզի նշանավոր մարզիկների և մարզիչների մասին պատմող գիրքը:

288. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնախնդիրները հետևյալն են՝

1) Մարզի ազգաբնակչության ֆիզիկական ակտիվության զարգացման, առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման նպատակով համայնքներում մարզահրապարակների և խաղահրապարակների խիստ սակավությունը:

2) Ֆիզիկական ակտիվության զարգացման ապահովման համար նախակրթարանների և ուսումնական հաստատությունների գերակշիռ մասում անհրաժեշտ պայմանների և մարզագույքի պակասը:

3) Համայնքների հատակագծով նախատեսված շրջակա միջավայրի կանաչապատման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, հետիոտնի համար նախատեսված ճանապարհների ոչ բարվոք վիճակը:

4) Մարզի բնակչության թվի համեմատ ոտքով և հեծանվով երթևեկողների ցածր տոկոսը:

5) Ոտքով և հեծանվով երթևեկելու համար նախատեսված ճանապարհների, խաղահրապարակների, սահադաշտերի, լողավազանների, ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու այլ հնարավորությունների ստեղծման համար ՀՀ պետական բյուջեից, համայնքների բյուջեներից հատկացվող միջոցների, հովանավորչական ծրագրերի սակավությունը:

6) Ուսումնական հավաքներ կազմակերպելու, մրցումներին մասնակցելու, մարզագույք, անհրաժեշտ բուժսարքավորումներ և դեղորայք ձեռք բերելու համար մարզական կազմակերպություններում ֆինանսական միջոցների անբավարարությունը:

7) Հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ մարզադահլիճների, մարզագույքի և այլ անհրաժեշտ պայմանների բացակայությամբ պայմանավորված պետական ուսումնական ծրագրի պահանջների ոչ լիարժեք իրականացումը:

8) Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների սակավությունը:

289. Երիտասարդությանն առնչվող հարցեր. Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների կողմից: Իրականացվող պետական երիտասարդական քաղաքականությունը նպատակ ունի ֆիզիկապես և հոգեպես առողջ երիտասարդների ներուժն ուղղել քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործընթացին:

290. ՀՀ Արմավիրի մարզպետի 2014 թվականի մարտի 28-ի N 68-Ա որոշմամբ ստեղծվել է Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ, հաստատվել խորհրդի անհատական կազմը և կանոնադրությունը:

291. Երիտասարդության խնդիրները մշտապես գտնվում են մարզպետարանի ուշադրության ներքո: «Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն», «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունների, «Արմավիրի մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամի, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Արմավիրի մարզային կենտրոնի, ուսանողական խորհուրդների, երիտասարդական ու սպորտային տարբեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, երիտասարդների անմիջական մասնակցությամբ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր՝ քննարկումներ, դասընթացներ, մեծարման երեկոներ, քայլերթեր, ցուցահանդեսներ, հայրենասիրական ֆիլմերի դիտումներ, արշավ-ուխտագնացություններ, ծառատունկ և այլ միջոցառումներ:

292. Ոլորտում առկա խնդիրները տարաբնույթ են և բխում են հիմնականում սոցիալական անապահով պայմաններից՝ ներառելով հասարակության սոցիալական տարբեր խավերին բնորոշ հիմնական խնդիրները, դրանք են.

1) երիտասարդության բնակարաններով ապահովվածությունը
2) առաջնային առողջության պահպանումը

3) երիտասարդության սոցիալական երաշխիքները
4) երիտասարդության զբաղվածությունը
5) հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանն առնչվող հարցեր
6) երիտասարդական միջոցառումների իրականացմանն ուղղված պետական միջոցների սղություն:

5.3.2. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի զարգացման ծրագրի նպատակներն ու ռազմավարությունը

293. Ոլորտի զարգացման ծրագրի նպատակն է՝ մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության արդյունավետ իրագործումը, ազգաբնակչության առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության անընդհատության, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը, համայնքային ենթակայության մարզական կազմակերպությունների մարզիչ-մանկավարժների սոցիալական վիճակի բարելավումը:

294. ՀՀ սպորտի և երիտասարդության հացերի նախարարությունը յուրաքանչյուր տարի հայտարարում է «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը, որին մասնակցել կարող են Հայաստանի Հանրապետության մարզերի բոլոր քաղաքները: Եթե 2015-2018 թվականների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի որևէ քաղաք հռչակվի տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք, ապա նախարարության կողմից ծրագրված երիտասարդական բոլոր միջոցառումներն ու ծրագրերը այդ տարի կիրականացվեն տվյալ քաղաքում:

295. Արմավիրի մարզում 2015-2018թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնց ֆինանսավորումն իրականացնում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 700-Ն որոշման N 4 հավելվածի՝ ՀՀ 2015-2017թթ. ժամանակահատվածում պետական մարմնի կողմից իրականացվող ամփոփ ծախսերը (քաղաքականության միջոցառումները) ծրագրային դասակարգման.

1) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ
2) Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր
3) ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոն
4) Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում և տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորման աշխատանքների իրականացում (սպորտլանդիաներ)
5) ՀՀ մարզերի մարզական խաղեր

6) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» հանրապետական ստուգատեսներ:

296. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, նրանց առողջության ամրապնդմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզական կառույցներից օգտվելու, ձեռք բերել անհրաժեշտ մարզական գույք, որոնք կնպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերին հասարակական կյանքին առավելագույնս և համակողմանի ինտեգրման գործընթացին:

297. Բնակչության ֆիզիկական ակտիվությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է կառուցել պարզ տիպի խաղահրապարակներ, հրաձգարաններ և լողավազաններ:

298. Մարզի երիտասարդության տարաբնույթ խնդիրներին լուծումներ տալու առումով անհրաժեշտ է մարզի քաղաքային համայնքներում ստեղծել համայնքային երիտասարդական կենտրոններ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն առավել լիարժեք օգտագործելու նպատակով:

299. ՀՀ Արմավիրի մարզի սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 2,589,430.0 հազ. դրամ (տես՝ հավելված 5.3):

5.3.3. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
Մարզական հաստատությունների վերանորոգում	Վերանորոգված մարզական հաստատությունների թիվը	2	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն
Մարզադպրոցների համալրում մարզագույքով	Մարզադպրոցների թիվը	9	
Դպրոցների սպորտդահլիճների կահավորում մարզական սարքավորումներով և գույքով համալրում	Դպրոցների մարզադահլիճների թիվը	15-20	

Մարզական, երիտասարդական միջոցառումների կազմակերպում	Անցկացված մարզական միջոցառումների թիվը Անցկացված երիտասարդական միջոցառումների թիվը Մարզային մրցույթներում հաղթող մարզիկների թիվը, մարդ	*տարեկան 30-40* *տարեկան 30-40* *տարեկան 150-180*	Միջոցառումների կազմակերպում

5.4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

5.4.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

300. ՀՀ Արմավիրի մարզի առողջապահության ոլորտի 2015-2018թթ. մարզային զարգացման ծրագրի կազմման հիմքում դրվել են ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 994 որոշմամբ ամրագրված առողջապահության վերաբերյալ դրույթները և ՀՀ կառավարության առաջիկա տարիների ռազմավարության գերակայությունները: Մարզի բնակչության բուժսպասարկումը լիարժեք մատչելի և որակյալ կազմակերպելու համար իրականացվել են մի շարք միջոցառումներ:

301. ԱՀՌԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, դրանց ներոլորտային վերաբաշխմանը՝ ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը:

302. Արմավիրի մարզում գործում են 61 առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը մարզպետարանի ենթակայությամբ, 52-ը՝ համայնքային ենթակայության գյուղական բժշկական ամբուլատորիաներ, ինչպես նաև թվով 2 մասնավորեցված ստոմատոլոգիական պոլիկլինիկաներ, որոնցում տեղադրված է պետական պատվեր:

Աղյուսակ. 5.4.1. ՀՀ Արմավիրի մարզի բուժհաստատությունները

բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալների թիվը
Բժշկական կենտրոններ այդ թվում՝ «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	**2** 1 1	212 136 76

Հիվանդանոցներ և ծննդատներ այդ թվում՝ «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ «Վաղարշապատի ծննդատուն» ՊՓԲԸ	**2** 1 1	177 117 60
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ այդ թվում՝ «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ «Հիսուսի մանուկներ առողջության կենտրոն» ՓԲԸ	**2** 1 1	-
Ամբուլատոր-պոլիկլինիկաներ գյուղական համայնքներում այդ թվում՝ բուժակ մանկաբարձական կետեր	**52** 43	-
«Արմավիրի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	1	-

303. Պետական առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով 2011-2014թթ. տարեկան գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացված միջոցները ներկայացված են աղյուսակ 5.4.2-ում:

Աղյուսակ 5.4.2. (դրամ)

Արմավիրի մարզ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ. I կիսամյակ
հատկացված	2.363.348.700	2.404.725.000	2.611.300.600	2.743.133.400
ֆինանսավորված	2.312.125.131	2.363.337.200	2.611.300.600	918.364.600 (01.06.2014թ.դրությամբ)

304. Արմավիրի մարզի բնակչության առողջության մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել այնպիսի դեմոգրաֆիկ ցուցանիշներից, ինչպիսիք են՝ ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը:

Աղյուսակ 5.4.3. Առողջության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան Արմավիրի մարզում 2011-2013թթ.

	Ծնվածների թվաքանակը			Մահացածների թվաքանակը			Բնական աճը			Մինչև 1տ. երեխաների մահվան դեպքերի քանակ		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Արմավիրի մարզ	3954	3730	3400	2845	2593	2493	612	558	114	45	40	31

Աղյուսակ 5.4.4. ՀՀ Արմավիրի մարզում մանկական մահացության և մեռելածնության ցուցանիշները 2011-2013թթ.

	2011թ.	2012թ.	2013թ.
0-1 տարեկան երեխաների մահացությունը 1000 կենդանի ծնվածի հաշվով (պրոմիլե)	11.3	10.7	9.1
Մայրական մահացությունը (բացարձակ թվերով)	0	0	0

305. 2011-2013թթ. մարզի հիվանդանոցներում բժշկական օգնություն են ստացել 33902 հիվանդներ, որից պետական պատվերի շրջանակներում՝ 26505 հիվանդներ, համավճարով բուժվածներ՝ 2900, վճարված գումարը կազմել է 118374.0 հազ.դրամ, վճարովի հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 4504 հիվանդներ, վճարած գումարի չափը 354949.0 հազ.դրամ:

Աղյուսակ 5.4.5. 2011-2013թթ.Արմավիրի մարզի հիվանդանոցներում բուժօգնություն ստացածներ

2011թ.		**2012թ.**		**2013թ.**	
հիվանդների թիվը	գումարը (հազ.դրամ)	հիվանդների թիվը	գումարը (հազ.դրամ)	հիվանդների թիվը	գումարը (հազ.դրամ)
8844 (պետ.պատվեր)	-	8231 (պետ.պատվեր)	-	9450 (պետ. պատվեր)	-
1381 (վճարովի ծառայություն)	69667.0	1614 (վճարովի ծառայություն)	187938.0	1509 (վճարովի ծառայություն)	97344.0
760 (համավճար)	39977.0	1441 (համավճար)	43896.0	699 (համավճար)	34501.0

306. Արմավիրի մարզում երեք տարիների ընթացքում զգալիորեն բարձրացել է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը՝ կազմելով բնակչության շուրջ 34-38%-ը: Հիվանդացության և մահացության ցուցանիշները տատանվում են միջին հանրապետական ցուցանիշների սահմաններում:

307. Վերջին երեք տարիների ընթացքում տարբեր հիվանդություններով հիվանդացությունը ենթարկվել է էական փոփոխությունների: Ինչպես հանրապետությունում, այնպես էլ Արմավիրի մարզում ազգաբնակչության համար լրջագույն խնդիր է դարձել այնպիսի սոցիալական հիվանդությունների աճը, ինչպիսիք են տուբերկուլյոզը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, իսկ ալկոհոլամոլությունը և թմրամոլությունը սկսել են դասվել հասարակության համար խնդիր դարձած ախտերի շարքում:

308. Սիրտ-անոթային համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և խրոնիկական շնչառական հիվանդությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում: Եվ այս առումով առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը, ինչպես նաև բնակչության ոչ լիարժեք տեղեկացվածությունը նշված հիվանդությունների և ռիսկերի վերաբերյալ: Առաջնահերթ խնդիր է դառնում այդ հիվանդությունների վաղ հայտնաբերման, կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումները:

309. Դեռևս բարձր է մահացությունը արյան շրջանառության և սիրտ-անոթային համակարգի հիվանդություններից, որը կազմում է ընդհանուր մահացության 45-48%, չարորակ նորագոյացությունները, որը կազմում է ընդհանուր մահացության 20-22%-ը: Ուռուցքային և տուբերկուլոզային հիվանդությունների թվի աճը բացատրվում է վաղ հայտնաբերմամբ և ախտորոշման համակարգի կատարելագործմամբ:

310. Տարածված վարակիչ հիվանդությունների շարքում առանձնանում է տուբերկուլյոզը: Անցած տարիների համեմատությամբ նկատվել է հիվանդության աճ, սակայն դա արդյունքն է այն բանի, որ գործում է «Տուբերկուլյոզի ազգային ծրագիրը», որի միջոցներով մարզի

հակատուբերկուլյոզային կաբինետներին տրամադրվել են լաբորատոր ախտորոշիչ սարքեր՝ խորխի քննությունն իրականացնելու համար, որը նպաստում է հիվանդության վաղ հայտնաբերմանը: Յուրաքանչյուր տարի մարզի տուբերկուլյոզային կաբինետներում հաշվառման են վերցվում միջին թվով 120-ից 135 առաջնակի տուբերկուլյոզով հիվանդներ:

311. 2011-2014թթ. մարզի համաճարակային իրավիճակը եղել է հանգիստ: Չեն արձանագրվել տարափոխիկ հիվանդությունների և սննդային թունավորումների զանգվածային դեպքեր: Մարզում արձանագրված ինֆեկցիոն հիվանդությունների աճ նախորդ տարիների համեմատությամբ չի նկատվել՝ հիվանդությունների ցուցանիշները տատանվել են միջին հանրապետական ցուցանիշների սահմաններում:

312. Աղիքային խմբի վարակիչ հիվանդությունների դեռևս բարձր ցուցանիշների արձանագրումը պայմանավորված է ջրամատակարարման գլխամասային կառույցների և ցանցի անբավարար վիճակով, որոնք կարիք ունեն վերանորոգման և վերակառուցման: Ջրամատակարարման ներքին ցանցը մարզի գրեթե բոլոր գյուղական բնակավայրերում ունի 50-ից 60 տարվա վաղեմություն և ջրատար խողովակները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական մաշվածության, որի պատճառով հաճախ արձանագրվում են կոյուղագծերի և ջրագծերի վթարներ:

313. Մարզում խնդիր է նաև խմելու ջրերի վարակազերծումը: Գյուղական բնակավայրերի գլխամասային կառույցներում բացակայում են քլորակայանները, վարակազերծման սարքավորումները և խմելու ջրերը մեծամասամբ չի վարակազերծվում: Բնակավայրերի մեծ մասը ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարմամբ, այդ թվում՝ նաև մարզի գյուղական համայնքների առողջապահական հիմնարկները:

314. Մարզում դեռևս մեծ խնդիր է կոյուղաջրերի վարակազերծման հարցը: Չի գործում 80-ական թվականներին կառուցված Մեծամորի կոյուղաջրերի մաքրման սարքավորումների կայանը, որտեղ նախագծով նախատեսված էր մաքրել և վարակազերծել Մեծամոր և Արմավիր քաղաքների կոյուղաջրերը: Կայանը չշահագործվելու պատճառով Արմավիրի կոյուղաջրերը Մեծամորի մաքրման կայանի տարածքում առանց մաքրման և վարակազերծման դուրս են գալիս կոյուղու կոլեկտորից և լցվում հարակից տարածքները և բաց ջրամբարները՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսակետից: Մարզի առողջապահական կազմակերպությունները նույնպես չունեն կոյուղաջրերի մաքրման և վարակազերծման սարքավորումներ: «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված է կեղտաջրերի մաքրման սարքավորումների նոր կայանի կառուցման նախագիծ, որի շինարարական աշխատանքները կսկսվեն 2015 թվականից: Կայանի շահագործումից հետո արմատապես կլուծվի Մեծամոր և Արմավիր քաղաքների կոյուղաջրերի մաքրման և վարակազերծման խնդիրը:

315. Մարզի քաղաքային համայնքներում գործող առողջապահական կազմակերպություններից 3-ում («Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ, «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ) ջեռուցումն իրականացվում է լոկալ կաթսայատների միջոցով, մնացածները ջեռուցվում են էլեկտրական մարտկոցների միջոցով, իսկ ջրամատակարարումն ու ջրահեռացումը՝ քաղաքային ցանցին միացված կենտոնացված համակարգով: Գյուղական համայնքներում գործող առողջապահական հիմնարկները ջեռուցվում են տեղային վառարանների և էլեկտրասալիկների միջոցով:

316. Արմավիրի մարզում համաճարակային տեսակետից անհանգստացնող եղել և մնում է բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները: Մարզի քաղաքների կենտրոնական հատվածներում աղբահանությունը և սանիտարական մաքրումը հիմնականում կատարվում է, սակայն լուծված չեն պահանջվող քանակությամբ աղբարկղերի, նրանց տեղակայման, շրջապատի բարեկարգման և ախտահանման խնդիրները:

317. Անմխիթար է աղբաթափման վայրերի սանիտարական վիճակը: Լրացել են նրանց շահագործման ժամկետները: Աղբավայրերը վեր են ածվել անկանոն աղբակույտերի տարածքների, չեն վարակազերծվում և աղբը աղբավայրերում պարբերաբար չի կոմպոստացվում: Աղբավայրերը չունեն կեղտաջրերի ֆիլտրացվող համակարգեր, որի հետևանքով կեղտաջրերը ֆիլտրվում են դեպի ընդերք՝ պատճառ դառնալով ստորերկրյա և մակերևութային ջրերի աղտոտման:

318. Առողջապահության համակարգի կառուցվածքային փոփոխությունները և ներկայիս խնդիրները. Համաձայն ՀՀ կառավարության 02.11.2006թ. N 1911-Ն որոշման՝ մարզում տվյալ ժամանակահատվածում հիմնականում ավարտվել են առողջապահության համակարգի օպտիմալացման աշխատանքները: Օպտիմալացումն ավարտելու նպատակով, ՀՀ կառավարության 15.08.2013թ. N 1028-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ է կատարվել վերոնշյալ որոշման մեջ, համաձայն որի՝ «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքի գործառույթները փոխանցվել են Զարիշատ Արամ Մկրտչյանի անվան «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, իսկ «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքի տարածքում ծավալվել է մարզային էնդոկրինոլոգիական ծառայություն: Վաղարշապատի կանանց կոնսուլտացիան միացել է «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին:

319. Ընթացքի մեջ է Արմավիրի մարզի թվով 52 համայնքային ենթակայության գուղական բժշկական ամբուլատորիաների բաժնետիրական ընկերություններից համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորման գործընթացը:

320. Օպտիմալացման աշխատանքներն Արմավիրի մարզում ավարտվել են, արդյունքում մարզում գործում են 61 առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը՝ մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝

1) բժշկական կենտրոններ - 2 (Արմավիր, Մեծամոր)
2) հիվանդանոցներ - 1 (Վաղարշապատ)
3) ծննդատուն - 1 (Վաղարշապատ)
4) պոլիկլինիկա - 2 (Վաղարշապատ, Բաղրամյան)
5) արյան փոխներարկման կայան - 1 (Արմավիր):

321. Համայնքային ենթակայության թվով 52 «Գյուղական բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ներ ընդգրկում են 43 բուժակմանկաբարձական կետեր:

322. Մարզի երկու մասնավոր ստոմատոլոգիական կաբինետներում ազգաբնակչության սպասարկման նպատակով տեղադրված են պետական պատվերներ:

323. Արաբկիր բժշկական կենտրոնի բազայի վրա Արմավիր քաղաքում գործում է «Երեխաների զարգացման վերականգնողական կենտրոնը», որտեղ յուրաքանչյուր տարի միջին թվով 50-55 ֆիզիկական արատ ունեցող երեխաներ ստանում են վերականգնողական բուժում:

324. Մարզի առողջապահական բնագավառում աշխատում են 394 բժիշկներ, 932 բուժքույրեր: Բուժհաստատությունները հիմնականում ապահովված են մասնագետներով, սակայն ունեն որոշ նեղ մասնագետների պակաս (ուրոլոգ, պատանատոմ, նարկոլոգ, օնկոլոգ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, էնդոկրինոլոգ, վնասվածքաբան և շտապ օգնության ծառայության բժիշկ): Նշված բժիշկ-մասնագետներով ապահովման վերաբերյալ հայտ է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարություն:

325. Ընտանեկան բժիշկներ. Ընտանեկան բժշկության համակարգի ներդրման արդյունքում մեծացել է գյուղական համայնքների բուժսպասարկման մակարդակը: Ծառայությունների մատուցման ծավալը թանկ հիվանդանոցային բուժօգնությունից տեղաշարժվել է դեպի ավելի մատչելի և համեմատաբար էժան առաջնային բուժօգնության օղակ: Գյուղական ամբուլատորիաներում աշխատում են թվով 72 բժիշկներ և 215 միջին բուժաշխատողներ: Բոլորն էլ առողջապահության համակարգի արդիականացում թիվ 3920-ԱՄ վարկային համակարգի ընտանեկան բժշկության միօրինականացված 12 ամյա կրթական ծրագրով ենթարկվել են վերապատրաստման: Գյուղական ամբուլատորիաներում ընտանեկան բժշկության ինստիտուտի վերափոխման գործընթացն ավարտվել է, սակայն քաղաքային պոլիկլինիկաներում կներդրվի ընտանեկան բժշկության ինստիտուտը:

326. ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշմամբ մարզում լիովին գործում է ՀՀ առողջապահության նախարարության և առողջության առաջնային բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգը: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

327. Նյութատեխնիկական բազա. Սկսած 2001 թվականից մինչ օրս Համաշխարհային բանկի «Առողջապահության համակարգի արդիականացում» թիվ 3920 վարկային ծրագրի շրջանակներում վերանորոգվել են մարզի 47 ամբուլատորիաներ և 43 բուժակմանկաբարձական կետեր, իսկ մնացած 4՝ Տանձուտ, Խանջյան, Գայ և Տարոնիկ համայնքներում 2015-2018 թվականների ընթացքում կկառուցվեն բժշկական ամբուլատորիաներ:

328. Լիարժեք վերագործարկվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում հիմնանորոգված «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն: Վերազինված առողջության կենտրոնը սպասարկում է ոչ միայն տարածաշրջանի, այլև մարզի ազգաբնակչությանը: Բոլոր բաժանմունքներն ապահովված են ժամանակակից կոշտ և փափուկ գույքով, անհրաժեշտ բժշկական և լաբորատոր սարքավորումներով: Մարզում գործում է նորաբաց հեմոդիալիզի բաժանմունքը:

329. Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում հատկացվել է 40.0մլն.դրամ՝ «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասի վերանորոգման նպատակով, որի աշխատանքները սկսվել են 2014 թվականի փետրվար ամսից և կավարտվեն մինչև տարեվերջ:

330. Բարեփոխումներ են իրականացվում նաև մարզի հիվանդանոցային համակարգում: Օպտիմալացման հետևանքով որոշ չափով կրճատվել է հիվանդանոցային բուժանձնակազմի թիվը, ինչը բերել է աշխատավարձերի ավելացմանը և ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանը: Վերջին 3 տարիների ընթացքում գրեթե երեք անգամ ավելացել է բուժանձնակազմի աշխատավարձը, իսկ մեկ հիվանդին ընկնող պետության կողմից տրամադրված գումարի չափը՝ հինգ անգամ:

331. Արմավիրի մարզում առողջապահության բնագավառում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

1) Մարզի բուժհաստատությունների լիարժեք հագեցվածություն ժամանակակից գույքով, բժշկական սարքավորումներով և պարագաներով
2) Շենքային պայմանների բարելավում («Վաղարշապատի հիվանդանոց», «Վաղարշապատի ծննդատուն» ՊՓԲԸ-ներ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մաս), վերանորոգում և տեխնիկական հագեցվածություն
3) Բուժհիմնարկների միջև տեղեկատվական, համակարգչային ցանցի լիարժեք կիրառում
4) Քաղաքային պոլիկլինիկաներում ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրում
5) Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
6) Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
7) Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում
8) Վաղ հասակի երեխաների հիվանդացության իջեցում
9) Տեղային և մարզային մակարդակներում կառավարման մոնիտորինգի և վերահսկողության բարելավում:

5.4.2. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

332. Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, մարդկային կապիտալի զարգացման գործողություններն ուղղված են լինելու առողջապահության առաջնային ծառայությունների ծավալների ավելացման, բժշկական սպասարկման որակի բարձրացման և մատչելիության աճին:

333. 2014-2019թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում, մասնավորապես՝ նախատեսվում է, ՀՀ մարզերի բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը:

Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է կանանց և տղամարդկանց 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը: Վերոնշյալ սքրինինգների իրականացման կատարողականը պետք է լինի առնվազն 50-60%:

334. 2014թ. օգոստոսի 19-29-ն ընկած ժամանակահատվածի համար կկազմակերպվեն Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» N 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում «Ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վարման» և «Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման և վարման» թեմաներով դասընթացներ:

335. Արմավիրի մարզից նախատեսվում է հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկել շուրջ 60 հազար մարդ, իսկ արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով շուրջ 28 հազար կին: Սքրինինգային հետազոտությունները նախատեսվում է սկսել 2014թ. սեպտեմբեր ամսից և շարունակել մինչև 2017 թվականը:

336. Առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Արմավիրի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, այլ վարակիչ և մակաբուծային, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների կանխարգելման, հիվանդացության ու մահացության իջեցմանն ուղղված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և, հետևաբար, ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

337. ՀՀ Արմավիրի մարզում մալարիա հիվանդության արմատական վերացման նպատակով մարզում համապատասխան իրավասություն ունեցող կազմակերպությունների կողմից շարունակվում են մալարիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրի: ՀՀ-ում շարունակվում են իրականացվել միջոցառումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:



338. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը՝ մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման զարգացման գերակա նպատակն է՝

1) Հզորացնել համակարգի ֆինանսավորման աղբյուրները (պետական բյուջե, ապահովագրական հիմնադրամ, ուղղակի վճարումներ), չնայած վերջին տարիներին նկատվում է ֆինանսական հատկացումների աճ
2) Առողջապահության համակարգում կրճատել ստվերային շրջանառությունը
3) Ներդնել պարտադիր բժշկական ապահովագրության համակարգ
4) Բարելավել վերարտադրողական առողջությունը:

339. ՀՀ Արմավիրի մարզի առողջապահության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 470,000.0 հազ.դրամ (տես՝ հավելված 5.4):

5.4.3. Առողջապահության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացության և մահացության նվազեցմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը			
1.1. Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ ներառելով ընտանեկան բժիշկներին	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի ընդգրկվածության արդյունքային ցուցանիշը	90-95%	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստումից ստացած գիտելիքները

1.2. Վերարտադրողական առողջության բարելավում, մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	-Մինչև 1 տարեկան երեխաների մահացության թվի իջեցում՝ 1000 կենդանածինների հաշվով, -Մայրական մահացության թվի իջեցում՝ ընդհուպ մինչև մահվան դեպքերի չարձանագրում	7-8 պրոմիլե 0	Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից
1.3.Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Հղիների վաղաժամ ընդգրկում, մայրական դպրոցի կատարելագործում	90-95%	Բուժանձնակազմը և հղիները համագործակցում են միմյանց հետ
1.4. Ակտիվ տուբերկուլյոզով բնակչության հիվանդացության իջեցում	Հիվանդացության դեպքերի թվի իջեցում	8-9%	
1.5. Կանխարգելիչ պատվաստումներում երեխաների ընդգրկվածություն	Կանխարգելիչ պատվաստումներում երեխաների ընդգրկվածության բարձրացում	97-99%	
2. Բուժսպասարկման հաստատությունների շենքերի, շինությունների նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը			
2.1 Բժշկական հաստատու-թյունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Չվերանորոգված բուժհիմնարկների ընդգրկվածության բարձրացում	95-98%	
2.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Բուժ.հիմնարկներում (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) ախտորոշիչ սարքավորումների թվի ավելացում	80-85%	
2.3 Հիվանդանոցների ապահովում ժամանակակից սարքավորումներով	Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռի բարձրացում	70-80%	
3. Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում			
3.1. Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում կառավարման ժամանակակից մեթոդներով	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշռի բարձրացում	85-90%	Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ
3.2. Առողջապահական հաստատությունների բարեփոխումների՝ հատկապես շտապ բժշկական օգնության ծառայության գծով, ծրագրերի շարունակական իրականացում	Որակյալ մասնագիտական անհետաձգելի օգնություն	90-95%	
4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ պայքարի միջոցառումների ուժեղացում, ինչը կնպաստի հիվանդությունների թվի իջեցմանը			
4.1 ԶԼՄ-ների միջոցով տարփոխիկ հիվանդությունների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշռի բարձրացում	90-95%	

5.5. Սոցիալական պաշտպանություն

5.5.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

340. Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից երկրի բնակչության որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ որոշակի կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնումն է: Այն իրականացնում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության ու ապահովագրության խիստ որոշակի նպատակային քաղաքականություն՝ ուղղված երկրում աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու նրանց որոշակի սոցիալական երաշխիքների ապահովմանը, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:

341. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀԶԾ) գերակայություններից մեկը: Համակարգի բարելավման գործողությունները միտված են լինելու գործող համակարգերի արդյունավետության բարձրացմանը (ներառյալ՝ հասցեականության և նպատակայնության ավելացումը) և երկարաժամկետ հատվածում ֆինանսական կայունության հիմքերի ստեղծմանը՝ ապահովելով սոցիալական երաշխիքների համապարփակ տրամադրում, սոցիալական ռիսկերի էական նվազում և աղքատության կրճատում: Միևնույն ժամանակ, գործողություններ են իրականացվելու սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը տրամադրվող սոցիալական աջակցության գերազանցապես դրամական ձևերից միջնաժամկետ հեռանկարում համալիր փաթեթների տրամադրմանն աստիճանական անցում կատարելու ուղղությամբ: Ծրագրի իրականացումը երաշխավորելու է հասարակության յուրաքանչյուր անդամի՝ հարազատ պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու կայուն զգացման ամրապնդումը:

342. Սոցիալական պաշտպանության ոլորտում ներկայումս ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման հիմքում դիմողի (քաղաքացի կամ ընտանիք) գնահատված սոցիալական կարիքներն են, որոնց համարժեք սոցիալական ծառայությունները տրամադրելու են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածի կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ)՝ համագործակցության համաձայնագրի շրջանակներում, այդ թվում՝ պետական և տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում: Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾՏԿ) աջակցությամբ համայնքների ղեկավարների կողմից համայնքի սոցիալական կարիքների գնահատման արդյունքներով:

343. ՀՍԾՏԿ-ները գործում են մեկ պատուհանի սկզբունքով: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում արդեն իսկ գործարկվել են մարզում 3 (ՀՀ-ում՝ 18) համալիր ՀՍԾՏԿ, որոնք տեղակայվել են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով և համակարգչային տեխնիկայով

զինված շենքերում: ՀՍԾՏԿ-ներում տեղակայվել են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը, սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային ստորաբաժանումը, զբաղվածության տարածքային կենտրոնը և բժշկասոցիալական փորձաքննության բաժինը: ՀՍԾՏԿ-ն դիմումներն ընդունում է միասնական ընդունարանում, ունի փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ:

344. Աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված նպատակային սոցիալական պաշտպանության քաղաքականությունը ՀԶԾ գերակայություններից մեկն է:

345. Ոլորտում հիմնական առաջնահերթություններն են՝

1) Սոցիալապես անապահով և խոցելի, նաև նպատակային/թիրախային խավերին սոցիալական աջակցության՝ ինչպես դրամական օժանդակության, այնպես էլ սոցիալական ծառայությունների համալիր փաթեթների թիրախային ու հասցեական տրամադրումը (միջնաժամկետ հեռանկարում աստիճանական անցում կատարելով առավելապես սոցիալական ծառայությունների համալիր փաթեթների տրամադրմանը),
2) Արժանապատիվ ծերության ապահովումը՝ ներառյալ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի գործարկումը,
3) ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստող սոցիալական աջակցությունը:

346. Նկատի ունենալով, որ սոցիալական պաշտպանությունը պետական քաղաքակա-նության գերակա ուղղություններից է, ՀԶԾ-ն նախատեսում է անվանական արտահայտությամբ սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերի անընդմեջ աճ: Դա իր հերթին նշանակում է, որ ամենատարբեր սոցիալական նպաստներն ու կենսաթոշակներն ավելանալու են:

347. Հիմնվելով այն տրամաբանության վրա, որ երկրում աղքատության հաղթահարումը հնարավոր է մարդկանց կենսաբանական (սնունդ, բնակարանի առկայություն, ջրի, էլեկտրաէներգիայի սպառում և այլն), սոցիալական (առողջություն, կրթություն, աշխատանք, նվազագույն տեղեկացվածություն և այլն) և հոգևոր (կարդալու, մշակութային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորություն) պահանջմունքների համակցված բավարարման ճանապարհով, նշենք, որ Արմավիրի մարզի բնակչության աղքատության հաղթահարման և բարեկեցության բարելավման կարևոր պայմաններից է մարզի սոցիալական բնագավառների՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունն ու զարգացումը:

348. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշման համաձայն հանրապետությունում ստեղծվել են «Մեկ պատուհանի սկզբունքով գործող համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող 10 տարածքային կենտրոններ»: Այդ ծրագիրն իրականացնելու համար նախանշվել են հետևյալ քայլերը.

ա) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական ակտերի մշակում,

բ) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների տեխնիկական վերազինում,
գ) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների աշխատողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
դ) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների գործառույթների ընդլայնում՝ ներառելով կրթական, զբաղվածության և այլ ծրագրերի գծով խորհրդատվություն, աջակցություն ցուցաբերելուն:

349. Ներկա իրավիճակը. ՀՀ Արմավիրի մարզում գործում են.

1) Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ-3

2) Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային բաժիններ - 3

3) «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության» գործակալության Արմավիրի մարզային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով (ԲՍՓՀ) - 1
4) «Զբաղվածության պետական գործակալության տարածքային (մարզային) կենտրոններ-3

350. Պետական նպաստներ. Պետական նպաստների տրամադրման բնագավառը կանոնակարգվում է «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև օրենքների կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից) սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.

1) ընտանեկան նպաստ
2) սոցիալական նպաստ
3) հրատապ օգնություն
4) երեխայի ծննդյան միանվագ նպաստ
5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ
6) ժամանակավոր անաշխատունակության նպաստ
7) ծերության նպաստ
8) հաշմանդամության նպաստ
9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստ
10) թաղման նպաստ:

351. Ընտանեկան նպաստների համակարգը հանդիսանալով Հայաստանում աղքատության մեղմացման պետական քաղաքականության գլխավոր լծակ, աջակցում է սոցիալապես առավել անապահով ընտանիքներին և խոցելի բնակչությանը՝ գնահատելով իր շահառուների սոցիալական վիճակը՝ ըստ որոշակի օբյեկտիվ ցուցանիշների և բալային համակարգի: Իրականացվող ծրագիրն այս տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխությունների ինչպես ընտանիքների անապահովության գնահատման, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման առումով:

352. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են ցուցանիշներ ու չափորոշիչներ, որոնց կշիռը որոշվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ամենամյա հետազոտությունների տվյալների հիման վրա: Յուրաքանչյուր տարի այդ հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ ամբողջ հանրապետության համար վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, ինչպես նաև սահմանվում են նպաստի բազային չափը, երեխաների համար տրվող հավելման և միանվագ դրամական օգնության չափերը:

353. Շարունակվել է ընտանեկան նպաստի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղորդումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես՝ բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը (սահմանամերձ բնակավայրեր և այլն):

354. Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, բնակարանային պայմաններից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

355. Յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարությունը սահմանում է ընտանեկան նպաստի բազային մասի, երեխաներին տրվող հավելումների, ինչպես նաև միանվագ դրամական օգնության չափերը, անապահովության սահմանային միավորի մեծությունը: Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝

1) 30.01-35.00,
2) 35.01-39.00,
3) 39.01 և ավելի:

356. Անապահովության միավորների տիրույթների հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով: Այսինքն, որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը: Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է. սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

357. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանեկան նպաստի համակարգում սահմանվել են միանվագ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, աշխատող, ինչպես նաև առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

358. Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ օգնության չափը սահմանվել է 50000 դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու

համար միանվագ օգնության չափը՝ 25000 դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ օգնության չափը՝ 50000 դրամ:

359. Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՍԾՏԳ-ին կից գործող սոցիալական աջակցության խորհրդի (ՍԱԽ) առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել եռամսյակային հրատապ օգնություն, որի ամսական չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում՝ հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին:

360. Անդրադառնալով սոցիալական աջակցության բնագավառում իրականացվող բարեփոխումներին պետք է փաստել, որ դեռևս օրակարգային է սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների հասցեականության բարձրացման հարցը և այս տեսանկյունից առանձնանում է հատկապես ընտանեկան նպաստը:

Աղյուսակ 5.5.1. Նպաստ ստացողների բաշխումն ըստ Արմավիրի մարզի տարածաշրջանների և նպաստի տեսակների

N	Նպաստի տեսակը (տարածաշրջանը)	2011թ.	2012թ.	2013թ.
1	**Ընտանեկան նպաստ ստացողների թիվը,** այդ թվում՝	**4821**	**5039**	**5396**
1.1	Արմավիր	2013	2062	2147
1.2	Էջմիածին	2236	2375	2617
1.3	Բաղրամյան	572	602	632
2	**Հրատապ դրամական օգնություն ստացողների թիվը,** այդ թվում՝	**1512**	**1468**	**1209**
2.1	Արմավիր	654	627	491
2.2	Էջմիածին	671	659	569
2.3	Բաղրամյան	187	182	149
3	**Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվը,** այդ թվում՝	**769**	**702**	**674**
3.1	Արմավիր	438	392	367
3.2	Էջմիածին	286	278	279
3.3	Բաղրամյան	45	32	29
4	**Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թիվը,** այդ թվում՝	**2798**	**3327**	**3108**
4.1	Արմավիր	1178	1402	1337
4.2	Էջմիածին	1436	1680	1523
4.3	Բաղրամյան	184	245	248

Աղբյուր՝ ՀՀ Արմավիրի մարզի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ

361. 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ընտանիքների թիվը կազմել է 6888, նպաստառու ընտանիքների թիվը՝ 4544, հրատապ դրամական օգնություն ստացող ընտանիքների թիվը՝ 809, երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թիվը՝ 536, երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 100, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 784 և ավանդի փոխհատուցման գումար ստացածների թիվը՝ 97:

362. Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի իրականացված հետազոտությունների արդյունքների՝ աղքատության մակարդակը միջին հանրապետականից բարձր է Արմավիրի, Շիրակի, Կոտայքի, Լոռու, Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

Աղյուսակ 5.5.2. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2011թ.

Մարզեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատների մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
ք.Երևան	2.7	27.5	26.7	34.0
Արագածոտն	1.1	20.7	2.2	3.8
Արարատ	2.5	39.3	9.3	8.3
Արմավիր	**5.6**	**37**	**9.3**	**8.8**
Գեղարքունիք	1.5	37	6.5	6.1
Լոռի	4.7	45.4	12.3	9.4
Կոտայք	7.1	45.5	13.3	10.2
Շիրակ	7.0	47.7	12.2	8.9
Սյունիք	1.1	26.8	3.2	4.2
Վայոց Ձոր	1.5	29.9	1.6	1.8
Տավուշ	2.0	26.7	3.4	4.5
Ընդամենը՝ ՀՀ	**3.7**	**35.0**	**100**	**100**

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը-2012», էջ 44:

363. Աղքատության վերլուծության տվյալները փաստում են նաև, որ աղքատ են բնակչության հետևյալ սոցիալական խմբերը.

1) Բազմանդամ, հատկապես բազմազավակ ընտանիքների անդամները
2) Գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները (ներառյալ մշակույթի և արվեստի աշխատողները)
3) Փախստականները և հատկապես հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողները
4) Միայնակ կենսաթոշակառուների և հաշմանդամություն ունեցող անձանց այն մասը, որոնք բացի կենսաթոշակից, եկամտի այլ աղբյուրներ չունեն
5) Չաշխատող երիտասարդ ընտանիքները (այդ թվում՝ ամուսնալուծված, միայնակ մայրերի և ծնողազուրկ):

Աղյուսակ 5.5.3. Ընտանեկան նպաստի ներգործությունն աղքատության մակարդակի վրա ըստ մարզերի (%-ներով), 2011թ.

Մարզեր	Հետտրանսֆերտային մակարդակ (վճարվել են կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը)		Նախքան ընտանեկան նպաստի (ԸՆ) վճարումը (նախա-ԸՆ, հետկենսաթոշակային և այլ սոց. աջակցություն)		Ընտանեկան նպաստի չվճարման փոփոխությունը, տոկոսային կետ	
	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ
ք.Երևան	2.7	27.5	4.2	28.1	1.5	0.6
Արագածոտն	1.1	20.7	1.8	21.5	0.7	0.8
Արարատ	2.5	39.3	5.7	40.4	3.2	1.1
Արմավիր	**5.6**	**37.0**	**7.1**	**39.2**	**1.5**	**2.2**
Գեղարքունիք	1.5	37.0	4.8	39.4	3.3	2.4
Լոռի	4.7	45.4	10.0	48.0	5.3	2.6
Կոտայք	7.1	45.5	12.2	49.3	5.1	3.8
Շիրակ	7.0	47.7	11.2	50.7	4.2	3.0
Սյունիք	1.1	26.8	4.3	30.1	3.2	3.3
Վայոց Ձոր	1.5	29.9	2.8	32.3	1.3	2.4
Տավուշ	2.0	26.7	4.1	28.5	2.1	1.8
Ընդամենը՝ ՀՀ	3.7	35.0	6.5	36.8	2.8	1.8

364. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ. Վերջին տարիներին ուշադրության կենտրոնում են հայտնվել երեխաները, որոնցից շատերի ընտանիքները չեն ընդգրկված ընտանեկան նպաստի համակարգում և, փաստորեն, դեռևս լիարժեք չի ապահովվում հատկապես դեռահասների սոցիալական պաշտպանվածությունը: Տարեցտարի ավելացվեցին ընտանեկան նպաստների չափերը և ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումները: Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող 35.000 դրամ նպաստը և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի 3000 դրամ նպաստը 2009 թվականից դարձան համապատասխանաբար՝ 50.000 դրամ և 18.000 դրամ:

365. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ. 2009 թվականին սահմանվել է 50.000 դրամի չափով միանվագ դրամական օգնություն ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի համար: Ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել: Մասնավորապես, 2007 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքներում (որոնց անապահովության միավորը բարձր է 0-ից), այդ թվում՝ նպաստառու, երրորդ և ավելի երեխա ծնվելու դեպքում վճարվել է 200.000 դրամ միանվագ դրամական օգնություն, որը 2008թ. հունվարի 1-ից դարձել է 300.000 դրամ, 2009թ. հունվարի 1-ից՝ 430.000 դրամ, իսկ 2014թ. հունվարի 1-ից 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում պահպանվել է միանվագ նպաստի չափը 50.000 դրամ, իսկ 3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում կիրառվում է տարբերակված նոր մոտեցում՝

ներդնելով ընտանեկան դրամագլխի համակարգը՝ կանխիկ վճարելով 500.000 դրամ, ինչը 70.000 դրամով ավելին է 2013թ. համեմատ, ընդ որում 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափը սահմանվել է 1 մլն. դրամ (որից 500.0-ը հազ.դրամը կանխիկ, 500.0 հազ. դրամը որպես ընտանեկան դրամագլուխ), իսկ 5 և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ (որից 500.0 հազ.դրամը կանխիկ, 1000.0հազ. դրամը՝ որպես ընտանեկան դրամագլուխ): ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու կարգը սահմանված է N 275-Ն որոշմամբ:

366. Կենսաթոշակային համակարգ. Կենսաթոշակային ապահովության բնագավառը կանոնակարգելու նպատակով մշակվել և 2011 թվականին ուժի մեջ են մտել մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ «Պետական կենսաթոշակների մասին» և ՀՀ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքները, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն, «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» N 670-Ն և մի շարք այլ որոշումներ: Համապատասխան փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքներում:

367. ՀՀ Արմավիրի մարզում գործում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի տարածքային բաժինները: Այս բաժիններում ևս կատարվել են կենսաթոշակային համակարգի տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացնելու աշխատանքներ, մասնավորապես՝

1) մեկ միասնական համակարգչային ցանցում ընդգրկվել են կենսաթոշակ նշանակող և ՔԿԱԳ-ի տարածքային մարմինները
2) ներդրվել է բնակչության պետական ռեգիստրից անձնագրային և բնակության վայրի մասին տվյալներն ինքնաշխատ եղանակով ստանալն ու կիրառելն ապահովող համակարգչային ծրագիր
3) մշակվել և ներդրվել է ՔԿԱԳ մարմիններից քաղաքացիների մահվան վերաբերյալ տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող համակարգչային ծրագիր
4) ձևավորվել և գործում է կենսաթոշակային համակարգի կենտրոնացված տեղեկատվական շտեմարանը:

368. «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի շահագործումը էապես նվազեցրել է կոռուպցիոն ռիսկերը, միտումնավոր և պատահական սխալների հնարավորությունը և լուծումներ են տրվել տարվա ընթացքում արձանագրված խնդիրներին:

Աղյուսակ 5.5.4. Արմավիրի մարզի կենսաթոշակառուների թիվը 2008-2013թթ. ընկած ժամանակահատվածում՝ ըստ կենսաթոշակի տեսակների (մարդ)

Կենսաթոշակի տեսակը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Աշխատանքային	34364	34039	33784	33083	32593	32786
Սոցիալական	4432	4503	4606	4696	4867	5525
Զինծառայության հետ կապված	620	534	462	411	361	318
Ընդամենը	**39416**	**39076**	**38852**	**38190**	**37821**	**38629**

Աղբյուր՝ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին» զեկույց

369. Աղյուսակի 5.5.4-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաթոշակառուների թիվը 2008-2012թթ. ընկած ժամանակահատվածումում նվազել է ավելի քան 4.5%-ով:

370. ՀՀ Արմավիրի մարզի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժիններում 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված են.

1) Կենսաթոշակառուներ - 38547
2) Հաշմանդամություն ունեցող անձինք - 12960
   1-ին խումբ - 697
   2-րդ խումբ - 5785
   3-րդ խումբ -5587
3) Հաշմանդամություն ունեցող երեխաներ - 691:

371. Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել և իրականացնում է արմատական կենսաթոշակային բարեփոխումներ, որոնց նպատակն է պատշաճ կենսաթոշակ ապահովել կենսաթոշակառուների համար, կենսաթոշակային համակարգը դարձնել ֆինանսապես կայուն, կուտակային կենսաթոշակային բաղադրիչի ներդրմամբ ապահովել ուղղակի կապ կատարված սոցիալական վճարների և կենսաթոշակի չափի միջև:

372. Հաշմանդամություն ունեցող անձինք. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ պետության քաղաքականությունն իրականացվում է հասարակության մյուս անդամների հետ հավասար պայմանների ապահովման սկզբունքի հիման վրա: Հաշմանդամությունը դիտարկելով որպես առավել խոցելի, միշտ ուղեկցվում է մի շարք հիմնախնդիրներով՝ կապված ինչպես անձնական, այնպես էլ հասարակական հարաբերությունների հետ: Այստեղ կարևորվում են հաշմանդամություն ունենցող անձի փոխհարաբերությունները հասարակության կողմից նրա համար ստեղծված սոցիալական ինստիտուտների և ծառայությունների հետ: Նրանց բուժօգնությունն իրականացվում է անվճար՝ պետական պատվերի շրջանակներում, ըստ գործող կարգի՝ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են առողջարանային բուժման անվճար ուղեգիր ստանալու իրավունքից:

373. Համաձայն «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հաշմանդամների պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը կատարվում է անվճար: Հաշմանդամություն ունեցող անձինք սահմանված կարգով անվճար ապահովվում են սայլակներով, լսողական սարքերով, օրթոպեդիկ կոշիկներով, հենակներով, ձեռնափայտերով և վերականգնողական այլ պարագաներով:

374. Առաջնորդվելով ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին» N 98-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով՝ ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արմավիրի մարզային հանձնաժողով, որի կողմից կազմակերպվում և համակարգվում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության, նրանց իրավունքների ապահովման և հասարակությանն ինտեգրվելուն ուղղված ծրագրերը: Այս ուղղությամբ կարևորվում են մարզի տարածքում գործող հասարակական ու միջազգային կազմակերպությունների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը:

375. «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությունը մարզում բավականին ակտիվ գործունեություն է ծավալում հաշմանդամ երեխաներին հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները ներգրավելու ուղղությամբ, կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ: Կազմակերպության ջանքերով մարզ է ներկրվում և հատուկ հաշմանդամ երեխաներին է հատկացվում զանազան օգնություններ: Կազմակերպությունը բավականին լուրջ դերակատարություն ունի հաշմանդամություն ունեցող երեխաներին սայլակներ տրամադրելու հարցում: Կազմակերպվել է նաև երեխաների ամառային հանգիստը Հայաստանում գործող ճամբարներում: Ներկայումս կազմակերպությունում հաշվառված և տարատեսակ ծրագրերից օգտվում են Արմավիրի մարզի շուրջ 453 երեխաներ:

376. Արաբկիր բժշկական համալիրի, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության և «Առաքելություն արևելք» դանիական կազմակերպության համագործակցության արդյունքում Արմավիր քաղաքում կառուցված Արմավիրի երեխայի զարգացման վերականգնողական կենտրոնում 2012թ. մինչև 2014 թ. հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում վերականգնողական բուժում են ստացել 113 հաշմանդամություն ունեցող երեխաներ:

377. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական ռազմավարական նպատակը նրանց առավելագույնս և համակողմանի ինտեգրումն է հասարակության լիարժեք կյանքին, նրանց մասնակցության ապահովումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Ի տարբերություն մայրաքաղաքի հնարավորությունների, մարզում դեռևս լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն կա: Հիմնախնդիր է մնում այնպիսի տարրական հարցերի կարգավորումը, ինչպիսին տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար շրջակա միջավայրի մատչելիության ապահովումն է դեպի պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն:

378. Աշխատանքի և զբաղվածության ոլորտ. Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնի հիմնական խնդիրը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումն է, որն ուղղված է բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծմանն ու համալրմանը, աշխատաշուկայի կարիքներին արագ արձագանքմանը և ըստ նախապես սահմանված առաջնահերթությունների՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովմանը:

379. Հանրապետության բոլոր մարզերում (այդ թվում՝ Արմավիրի մարզում) զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով իրականացվում են հետևյալ ծրագրերը.

1) Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում.
2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում.
3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում.
4) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում.
5) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում, որը բաղկացած է հետևյալ երկու ենթածրագրերից՝
ա.Աշխատաշուկայում անմրցունակ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին,
բ.Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին.
6) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում.
7) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում.
8) Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում:

380. 2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում աշխատանք փնտրողների թիվը կազմում է 4481 մարդ, գործազուրկների թիվը՝ 2440 մարդ, որից՝ Արմավիրի տարածաշրջանում՝ 899 մարդ, Վաղարշապատի տարածաշրջանում՝ 820 մարդ և Բաղրամյանի տարածաշրջանում՝ 721 մարդ:

Գծապատկեր 3.



381. Գործազրկության մակարդակը մարզում, որպես խոցելիություն ծնող պատճառ, ըստ պաշտոնական տվյալների չնայած շատ ցածր է, սակայն իրականում թե քաղաքային, թե գյուղական համայնքներում առկա է գործազրկության ավելի բարձր մակարդակ:

Աղյուսակ 5.5.5. Գործազրկության մակարդակը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում

	2011թ.	2012թ	2013թ.
ք.Երևան	30.2	25.8	24.6
Արագածոտն	5.7	4.1	3.3
Արարատ	8.1	5.0	8.1
Արմավիր	**5.8**	**6.7**	**5.5**
Գեղարքունիք	9.5	11.6	2.8
Լոռի	18.4	19.8	19.2
Կոտայք	19.3	20.4	20.4
Շիրակ	19.3	22.4	21.6
Սյունիք	13.6	14.9	12.0
Վայոց ձոր	10.6	8.7	11.0
Տավուշ	11.9	11.0	11.3
Ընդամենը ՀՀ	18.4	17.3	16.2

Աղբյուրը՝ «Պարենային ապահովություն և աղքատություն, 2014թ. հունվար-մարտ»

382. Ըստ Զբաղվածության պետական գործակալության Արմավիրի զբաղվածության տարածքային կենտրոնի տվյալների, ստորև ներկայացվում են վերջին երեք տարիներին մարզում գրանցված «Աշխատանք փնտրողների», «Գործազուրկների» և «Աշխատանքի տեղավորվածների» վերաբերյալ թվային տվյալները.

Աղյուսակ 5.5.6.

N	Ցուցանիշներ	Տարեթիվ	Արմավիրի ՀՏԿ	Վաղարշապատի ՀՏԿ	Բաղրամյանի ՀՏԿ	Ընդամենը մարզում
1	**Աշխատանք փնտրողներ**	2011թ.	1097	992	1082	3171
		2012թ.	1074	951	1160	3185
		2013թ.	2098	1151	1232	4481
	որոնցից՝ **գործազուրկներ**	2011թ.	1009	902	693	2604
		2012թ.	911	844	746	2501
		2013թ.	899	820	721	2440
2	**Աշխատանքի տեղավորվածներ**	2011թ.	177	256	60	493
		2012թ.	134	257	83	474
		2013թ.	130	245	53	428

Աղբյուրը՝ Արմավիրի զբաղվածության մարզային կենտրոնի տեղեկատվական շտեմարան

383. Գյուղատնտեսական համարվող Արմավիրի մարզում այսօր առկա է մի երևույթ, որը կոչվում է հողազրկություն: Չնայած նրան, որ այս երևույթի առաջացման պատճառները տարբեր են, արդյունքում այսօր գյուղաբնակը չունի հող, որը համարվում է նրա գոյատևման աղբյուրը.

1) Հողազուրկ բնակչության հիմնական մասը մարզի տարածքում նախկին բանավանների հիմքի վրա կառուցված ավանների բնակիչներն են: Դեռևս 2002 թվականին մարզում անցկացված առավել աղքատ համայնքների հետազոտության արդյունքում 10 առավել աղքատ համայնքների շարքում 5-ը հողազուրկ համայնքներն էին նշվել (Ջրառատի թ/ֆ, Մերձավան, Լեռնամերձ, Լեռնագոգ և Ջրաշեն):
2) 1991 թվականին արագ սեփականաշնորհման պայմաններում շատ տնային տնտեսություններ, որոնք մինչ այդ զբաղված լինելով տնտեսության այլ ոլորտներում և հողը չդիտելով որպես եկամտի աղբյուր, չմասնակցեցին սեփականաշնորհմանը և այսօր չունենալով եկամտի այլ աղբյուր՝ չունեն նաև հող մշակելու հնարավորություն:
3) Տնային տնտեսություններ, որոնք ֆինանսական կամ գույքային պարտավորություններից ելնելով ստիպված ցածր գներով վաճառում են հողը և զրկվում եկամտի հիմնական աղբյուրից:

384. Զբաղվածության ոլորտի գերակայություններ են.

1) աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացում
2) աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմում
3) երիտասարդների (այդ թվում՝ գյուղական երիտասարդության) զբաղվածության ապահովման աջակցություն
4) աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի ծավալների մեծացում:

385. Փախստականներ. Որպես առանձնահատկություն ունեցող սոցիալապես անապահով առանձին խումբ, փախստականները սոցիալական օժանդակության խնդիր ունեն: Արմավիրի մարզը մեծաթիվ փախստականներ է ընդունել, որոնցից մեծ մասը կրկնակի արտագաղթի են ենթարկվել:

386. Ըստ պաշտոնական տվյալների՝ 1988-1992թթ. մարզում հաշվառվել է Ադրբեջանից բռնագաղթած 27812 փախստական: Միջազգային տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից Արմավիրի մարզում 1995 թվականից սկսած ավելի քան 700 փախստական ընտանիքների համար կառուցվել են քոթեջատիպ բնակարաններ: Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. N 747-Ն որոշմամբ հաստատված առաջնահերթ ծրագրով սահմանված չափանիշների՝ մարզի 130 փախստական ընտանիքներ ցանկություն են հայտնել ձեռք բերելու բնակարաններ՝ վկայագրի միջոցով: Նշված ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին: Ծրագրի շրջանակներում մարզի 70 փախստական ընտանիք ձեռք է բերել բնակարան:

387. Չնայած վերը նշված ծրագրերի իրականացման փաստին, մարզում դեռևս մեծ թիվ են կազմում փախստական ընտանիքները, որոնք բնակվում են ժամանակավոր կացարաններում, վարձով կամ հարազատների տանը և կարիք ունեն բնակարանային ապահովության: Այդ ընտանիքների թիվը մարզում կազմում է 254: Փախստականներով համեմատաբար խիտ են բնակեցված մարզի երեք քաղաքները, Ոսկեհատ, Լուկաշին, Լեռնագոգ և Բաղրամյան գյուղական համայնքները:

388. Ժողովրդագրական առումով փախստականները բնութագրվում են որպես՝

1) Բնական վերարտադրության խաթարումներով ու ինտենսիվ «ծերացող համակցություն»: Փախստականների 60-69 տարեկանների տեսակարար կշիռը մոտ 1.5-3.5 անգամ ավելի մեծ է, քան 0-4 տարեկան երեխաներինն ու 25-29 տարեկան երիտասարդներինը: Փախստականների մոտ տեղաբնակների համեմատ 3-4 անգամ շատ են միայնակ ընտանիքները, հատկապես միայնակ ծերերը: 1.5 անգամ պակաս են երիտասարդ տղամարդիկ, 2-3 անգամ պակաս են 5-14 տարեկան երեխաները:
2) Միգրացիոն մեծ ակտիվությամբ, փախստականների միգրացիան 2-3 անգամ բարձր է տեղաբնակներից, որով և բացատրվում է նրանց թվաքանակի նվազումը:
3) Փախստականների ամենաբնութագրական հատկանիշներից մեկը ժամանակավոր կացարաններում ապրող ընտանիքների մեծ տոկոսը
4) Տնային գույքի աղքատիկությունը կամ բացակայությունը
5) Զբաղվածության ցածր մակարդակը
6) Աղքատության ավելի մեծ խորությունը
7) Բարեկամական-ազգակցական թույլ կապերը
8) Լեզվական տարբերությունները
9) Աշխարհընկալման և ծիսասովորութային տարբերությունները:

389. Փախստականների համար ամենահրատապ լուծում պահանջող հարցը բնակարանային հիմնահարցն է, քանի որ այսօր մարզում 73 փախստական ընտանիքներ բնակվում են անբարեկարգ ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում:

390. Զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովության հիմնահարցեր. 2009 թվականից մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը ներառյալ աջակցություն են ստացել զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի

անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց 64 ընտանիքներ:

391. Արմավիրում մի քանի ընտանիքների բնակարանային հիմնահարցը լուծվել է ՀՀ պաշտպանության նախարարության բնակֆոնդը համայնքին տրամադրման հաշվին՝ համայնքային միջոցներով բնակարանները վերանորոգելով և դրանք շահառուներին հատկացնելով:

392. 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Արմավիրի մարզում հաշվառված են բնակարանի կարիքավոր 182 ընտանիքներ (անօթևան, բնակարանի բարելավում).

1) զոհված զինծառայողի 50 ընտանիքներ (որից՝ 14 անօթևան)
2) հաշմանդամ զինծառայողի 132 ընտանիքներ (որից՝ 71 անօթևան):

393. Համաձայն ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի N 947-Ն որոշման պահանջների՝ մարզի համայնքներից պարբերաբար (ամեն տարի) հավաքագրվել են մարզի զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային հիմնախնդիր ունեցող ընտանիքների փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարության հատուկ հանձնախմբի հետ համատեղ ուսումնասիրվել է հիշյալ բնակարանի կարիքավոր ընտանիքների փաստաթղթերը, կատարվել են տունայցեր:

Աղյուսակ 5.5.7. ՀՀ Արմավիրի մարզում պետության կողմից խոցելի ճանաչված խմբերը 2011-2013թթ.

N	Խոցելի խմբեր	2011թ.	2012թ.	2013թ.
1	Ընտանեկան նպաստ ստացող տ/տ-եր	4452	5039	5559
2	1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամներ	10867	11522	12960
3	Հաշմանդամ երեխաներ, այդ թվում մանկուց	699	717	691
4	Պատերազմի հաշմանդամներ	113	98	87
5	Կենսաթոշակառուներ	39219	39445	34895
6	Ծնողազուրկ երեխաներ	119	58	96
7	Գրանցված գործազուրկներ	2604	2501	2440

394. Բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներն են՝

1) սոցիալական պաշտպանության ոլորտի դեռևս ցածր արդյունավետությունը
2) սոցիալական ծառայությունների ցածր մատչելիությունը
3) սոցիալական ծառայությունների ցածր որակը
4) ֆինանսական միջոցների սահմանափակ լինելը
5) սոցիալական ծառայությունների ոչ արդյունավետ կառավարումը:

395. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Երեխաների իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» N 269-Ն, 2003 թվականի օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N 1000-Ն, 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշումների և այլ իրավական ակտերի համաձայն:

396. Այսօր սոցիալական քաղաքականության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի լուծման հիմնական ուղղվածություններն են՝

1) ընտանիքի, կանանց և երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի զարգացում
2) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցում և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում
3) ներառական կրթության կազմակերպում
4) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հիմնախնդիրներ
5) պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ
6) մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող երեխաների հիմնախնդիրներ
7) ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:

397. «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում» կարևորվում է նաև երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավման սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով: Ներկայումս մարզում գործընթացի իրականացման համար խոչընդոտ են հանդիսանում շենքային պայմանների և ֆինանսական միջոցների բացակայությունը:

398. Նշված միջոցառումների իրականացումը մարզում չափազանց կարևոր է, քանի որ 2011-2014թթ. մարզում հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 15 երեխա, որից՝ 11-ը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք: Ըստ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների

իրավունքների պաշտպանության բաժնի դիտարկումների՝ մարզում քիչ չեն նաև սոցիալական տարբեր հիմնախնդիրներ ունեցող երեխաները:

399. Մարզում հաշվառված կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների թիվը ըստ կարգավիճակի ներկայացված է աղյուսակ 5.5.8-ում:

Աղյուսակ 5.5.8. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների թիվը՝ ըստ կարգավիճակի, 2011-2014թ. հուլիս

	Գրանցված թիվը	Գնահատված կարիքներ	Մշակված անհատական ծրագրեր	Իրականացված անհատական ծրագրեր	Ընթացքի մեջ գտնվող անհատական ծրագրեր
Մուրացիկ, թափառաշրջիկ երեխաներ	0	-	-	-	-
Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ	11	11	8	4	-
Ապօրինի աշխատող երեխաներ	-	-	-	-	-
Օրինազանց երեխաներ	63	63	48	15	33
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	302	-	-	-	-
Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, որից՝	4	4	4	3	2
-երկկողմանի ծնողազուրկ (որբ) երեխաներ	4	4	4	3	2
-ընկեցիկ երեխաներ	-	-	-	-	-
Հաշմանդամ երեխաներ	66	66	66	45	16

400. Վերոհիշյալ բոլոր խոցելի խմբերի նկատմամբ այսօր պետության կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ:

401. Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում (մարզի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամություն ունեցող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նկատմամբ) նախատեսվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները.

1) երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացնող բոլոր պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցության ապահովում
2) մանկապարտեզների շենքերի վերանորոգում
3) համայնքային ցերեկային կենտրոնների կառուցում կամ վերականգնում
4) երեխաների ազատ ժամանցի կազմակերպման նպատակով խաղահրապարակների ստեղծում
5) ներառական կրթության կազմակերպում
6) թեքահարթակների առկայության ապահովում:

402. Սոցիալական պաշտպանության համակարգը թե հանրապետության, թե Արմավիրի մարզի կտրվածքով այսօր ներառում է.

1) պետական սոցիալական օժանդակության ծրագրեր, ինչպիսիք են՝ պետական նպաստները (ընտանեկան, երեխայի ծննդյան միանվագ (առաջին և երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հիսուն հազար դրամ, երրորդ և չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ, հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ

միլիոն հինգ հարյուր հազար դրամ), մինչև 2 տարեկան երեխաների խնամքի, ինչպես նաև հուղարկավորության նպաստներ), ԽՍՀՄ խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցման և այլ աջակցությունների ուղղված ծրագրերը, ապահովագրական և սոցիալական կենսաթոշակները.

2) սոցիալական ապահովության ծրագրեր երեխաների համար, մասնավորապես՝ բժշկասոցիալական վերականգնման ծրագրեր, մանկատների և հատուկ օժանդակ դպրոցների բեռնաթափման ծրագրեր:

403. Մարզում իրականացվում են նաև կանանց հիմնախնդիրներին վերաբերվող նպատակային ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը ծրագիրը հաստատելու մասին» N19 արձանագրային որոշումը, իսկ 2011թ. հունիսի 17-ի նիստում՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշումը, որոնց շրջանակներում յուրաքանչյուր տարի հաստատվող տարեկան ծրագրերում ներառվում են նաև մարզի ծրագրերը: Վերջիններս նպաստում են մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը, օժանդակում կանանց սոցիալ-տնտեսական հարցերի կարգավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը:

404. Կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում Արմավիրի մարզում 2011-2014թթ. մշակվել և իրականացվում են հետևյալ ծրագրերը.

1) Սեռի հատկանիշով խտրականության հաղթահարում և կանանց ու տղամարդկանց փաստացի հավասարության ձեռքբերում, իրազեկման բարձրացում
2) Հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար, հասարակության իրավական և քաղաքական մշակույթի զարգացում
3) Կանանց զբաղվածության ապահովում (վճարովի հասարակական աշխատանքներում կանանց ներգրավում)
4) Համայնքի ավագանու կին անդամների և համայնքի կին ղեկավարների համար դասընթացների կազմակերպում:

405. Ստորև ներկայացված են մարզում գործող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունները.

1)«Մայրության օրրան» հասարակական կազմակերպությունն իր աշխատանքային գործունեության առանցքն է դարձրել բազմազավակ ընտանիքների օրախնդիր հարցերի լուծումը, կանանց իրավունքների պաշտպանությունը, առողջապահական, կրթական, իրավական, մշակութային հարցեր: Մեծ ուշադրություն է դարձվում բազմանդամ ընտանիքների երեխաներին, որոնց անմիջական մասնակցությամբ կազմակերպվում են ամենատարբեր ցերեկույթներ, կազմակերպվում է այդ

երեխաների ամառային հանգիստը բակային ճամբարներում: Երեխաներն իրենց օրը լցնում են հատուկ խմբակներում՝ նկարչական, կար ու ձևի, մակրամեի, երգի և այլն:

2)**«Արմավիրի զարգացման կենտրոն»** սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2005 թվականին: Կազմակերպության նպատակն է ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը Արմավիրի մարզի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման գործում: Իրականացվում են խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, աղքատության կրճատմանը նպաստելու, փոքր և միջին բիզնեսի զարգացումը խթանելու, մարզի համայնքներում առկա առողջապահական, կրթական, սոցիալական, այդ թվում՝ զբաղվածության, գենդերային հիմնահարցերը վերհանելու, պատճառները վերլուծելու և հիմնավորված լուծումներ առաջարկելու ծրագրեր:

3)«Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպությունը գործում է Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում, իրավաբանական կարգավիճակ է ստացել 2009 թվականին, սակայն աշխատանքային գործունեությունը սկսել է դեռևս 2007 թվականից: ՀԿ-ի գործունեության հիմնական նպատակն է պաշտպանել հաշմանդամների և նրանց ընտանիքների իրավունքները, նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ: 2011 թվականին կազմակերպությունն ունեցել է 35 շահառու ընտանիք, 2012թ.-ին՝ 50, 2013թ.-ին՝ 95 և 2014 թ.-ին շուրջ 150 ընտանիք: Համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ, նրանց աջակցությամբ և երիտասարդ կամավորների մասնակցությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման և հոգևոր մշակութային կյանքում:

4)«Ընտանիք և համայնք» ՀԿ Մեծամորի համայնքային զարգացման և վերականգնողական կենտրոնը գործում է 2002թ. Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում: Գործունեության հիմնական նպատակն է օգնել կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաներին, խոցելի ընտանիքներին և բոլոր նրանց, ովքեր օտարված են հասարակությունից, ակտիվացնել և համախմբել համայնքը, դարձնելով այն իր անդամների օգնության և աջակցության աղբյուր: Կենտրոնը տարեկան սպասարկում է ավելի քան 110 ընտանիք, 130 երեխա և 50 համայնքի անդամ: Մեծամորի համայնքային զարգացման և վերականգնողական կենտրոնը սոցիալական աշխատանքն իրականացնում է երկու ուղղությամբ՝ համայնքահեն, որը նպատակաուղղված է համայնքի ռիսկային ընտանիքների, խոցելի խմբերի և անդամների աջակցմանը և համայնքային, որը նպատակաուղղված է համայնքի ակտիվացմանը, համախմբմանը և զարգացմանը: ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը համահունչ են ՀՀ կառավարության կողմից հաստատված երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրին: Կազմակերպությունն իր աշխատանքային մոդելով հարստացնում է սոցիալական ծառայությունների դաշտը Հայաստանում և ունի իր ուրույն, կարևոր տեղը հայրենական ծառայությունների շրջանում:

5)Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) հիմնադրվել է 2000 թվականին Գարո Արմենի կողմից: Հիմնադրամն իրականացնում է երեխաների կյանքի բարելավմանը նպատակաուղղված ծրագրեր Հայաստանի այն գյուղական համայնքներում, որոնք հայտնվել են ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում: Հայաստանի մանուկներ հիմնադրամը գյուղական համայնքների զարգացման ծրագրեր (կրթական, առողջապահաման, երեխայի և ընտանիքի աջակցության, տնտեսական զարգացման ծրագրեր) է իրականացնում մարզի 18 համայնքներում (15-ը՝ Բաղրամյանի տարածաշրջանում, 3-ը՝ Արմավիրի տարածաշրջանում): Երեխայի և ընտանիքի աջակցության ծրագիրը մեկնարկել է 2006թ. հունիսին, որի նպատակն է սոցիալ-իրավական, հոգեբանական, հատուկ մանկավարժական, լոգոպեդական աջակցություն ցուցաբերել շահառու համայնքների կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին: Ծրագրի շրջանակներում տրամադրվող խորհրդատվությունն ու ծառայությունները, իրականացվող դասընթացներն ու միջոցառումները նպաստում են երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական պաշտպանվածությանը և որպես հասարակության լիարժեք անդամ ինքնադրսևորվելուն: Կրթական ծրագրի հիմնական ուղղություններից է արտադասարանական խմբակների և ամառային ճամբարների կազմակերպումը:

5.5.2. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

406. Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակ է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել.

1) սոցիալական խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման,
2) սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման,
3) սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության,
4) սոցիալական ծառայությունների գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման,
5) սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման միջոցով:

407. Արմավիրի մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1) գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի միջոցով
2) փախստականներին հասարակությանն ինտեգրելու ծրագրերի իրագործումը
3) խնամատար ինստիտուտի ներդրումը
4) հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը
5) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

408. Սոցիալական աջակցության սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

409. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումներն ու ծրագրերը համապետական բնույթ ունեն և իրականացվում են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում: Ընդ որում, ՄԺԾԾ 2015-2017թթ. հայտով ըստ մարզերի բաշխում չի նախատեսվում:

410. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերն են.

1) «Կենսաթոշակային ապահովության ծրագիր»
2) «Ժամանակավոր անաշխատունակության (մայրության) դեպքում աջակցության ծրագիր»
3) «Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճարների տրամադրման ծրագիր»
4) «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիր»
5) «Աշխատողների աշխատանքային պարտավորությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման ծրագիր»
6) «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագիր»
7) «Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիր»
8) «Պատերազմների մասնակիցներին և նրանց ընտանիքներին աջակցության ծրագիր»
9) «Ընտանիքին, կանանց և երեխաներին աջակցության ծրագիր»
10) «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ»
11) «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագիր»:

411. Հարկ է նշել, որ մարզերի տնտեսական զարգացման անհամաչափությունների զսպման և հետ մնացող տարածքների առաջանցիկ զարգացման նպատակներից ելնելով, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող զբաղվածության կարգավորման 2014թ. ամենամյա ծրագրում նախատեսվել են կոնկրետ ծրագրեր, ներառյալ Հայաստանում առաջին անգամ փորձարկվող ծրագրեր: 2014 թվականին ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատվել է «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի տեղաբաշխման կարգն ու չափանիշները՝ ըստ մարզերի, Երևան քաղաքի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի: Այս որոշմամբ, ինչպես նաև չափանիշների կշիռները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից հաստատվելուց հետո, կկատարվի 2015թ. զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի բաշխումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի աշխատաշուկայի իրավիճակը:

412. Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» N 442-Ն որոշումը, ստորև ներկայացվում է տեղեկատվություն Արմավիրի մարզում 2015-2018թթ. ժամկետահատվածում «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» շրջանակում իրականացվելիք միջոցառումների շահառուների թվաքանակի և նախատեսվող ֆինանսական միջոցների վերաբերյալ:

Աղյուսակ 5.5.9.

	2015թ.		2016թ.		2017թ.		2018թ.	
	ընտանիք	գումար	ընտանիք	գումար	ընտանիք	գումար	ընտանիք	գումար
Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ՝ միջին ամսական թիվը	5676	2,125,986,0	5676	2,125,986,0	5676	2,125,986,0	5676	2,125,986,0
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ՝ միջին ամսական թիվը	730		730		730		730	

413. ՀՀ Արմավիրի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորում ՄԶԾ-ով նախատեսված չէ:

5.5.3. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ

Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արմավիրի մարզում	1.Նպաստառու ընտանիքների տեսակարար կշիռը մարզի ընտանիքների թվում, %, 2. Հրատապ դրամական օգնություն ստացած ընտանիքների տեսակարար կշիռը մարզի ընտանիքների թվում, %, 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում, %, 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի թիվը	6.5% 2.5% 10% 300	Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված
1. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար աշխատանքի նպատակայնության բարձրացմանը			
Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը	20	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել տեղեկատվություն իրենց սոցիալական ծրագրերի մասին
2. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում			
Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական և ոչ պետական) կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը (մարզպետարան և ՍԾՏԳ-ներ, ՏԻՄ-եր)	22	
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը			
3.1. ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	40	Ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից
3.2. Պետական մարմինների և ՍԾՏԳ-ների համագործակցության արդյունքում սպասարկման համակարգի բարելավում	Պետական մարմինների կողմից տեղեկատվական բազաների համադրման արդյունքում ՍԾՏԳ-ներին տրամադրված ճշգրտման ենթակա ցուցակների թիվը	20	

4. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով			
Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	1.Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչներով ապահովվածության մակարդակը, 2. Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը	20% 3	
5. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների բազմազանությանը			
5.1.Ծերերի խնամքի ծառայությունների (տան պայմաններում խնամք, ցերեկային կենտրոն) կազմակերպում և զարգացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	180	
5.2.Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում	Վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներ ստացած հաշմանադամներ	80	
5.3. Գործազուրկների համար մասնագիտական ուսուցման կազմակերպում	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածները	17.4	
6. Բնակարանային հիմնահարցերի լուծում			
6.1. Զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովության հիմնահարցեր	Ֆինանսավորում անօթևան և կարիքավոր ընտանիքներին	51	Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է ՀՀ կառավարությունից և դոնոր կազմակերպություններից
6.2 Փախստական ընտանիքների բնակարանային ապահովության հիմնահարցեր	Ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում բնակվող ընտանիքների բնակարանային ապահովության ծրագրեր	70	
7.Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին, կանանց և երեխաներին սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայությունների իրականացում			
1.1 Դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տվյալների տեղեկատվական բազայի շարունակական մուտքագրում և վերահսկում	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը	82	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում
1.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային և վերականգնողական կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվը	65	

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

6.1. Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն

414. Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:

415. Արմավիրի մարզը նորանկախ Հայաստանի պարենի շտեմարանն է՝ դառնալով երկրի անվտանության երաշխավորներից մեկը:

416. ՀՀ Արմավիրի մարզի բնակչության զբաղվածության մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի բնակչությունը եղել է 267.2 հազ. մարդ, որից 181.9 հազ. մարդը կամ մարզի բնակչության 68.1%-ը հանդիսանում է գյուղական բնակչությունը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2012 թվականի հրապարակած տվյալներով մարզում գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը կազմել է 91.1 հազ. մարդ:

417. Բուսաբուծություն. Արմավիրի մարզում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի վարչական տարածքի 78.1%-ը:

Աղյուսակ 6.1. ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2011-2013թթ.

(հեկտար)

Տարեթիվը	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը	որից՝ 2013թ. գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործված	այդ թվում՝		
			վարելահողեր	խաղողի այգիներ	պտղատու այգիներ
2011թ.	96992	41963.5	26955	6863.4	8145.2
2012թ.	97072.5	42646.8	27885.5	7033	7728.3
2013թ.	97066.9	43303	27827	7136	8340

418. 2013 թվականի գյուղատնտեսական տարում 2012 թվականի համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 656.2 հեկտար հողատարածություն: 2013թ. մարզում հիմնվել են 575.87 հեկտար բազմամյա տնկարկներ, որից 334.13 հեկտարը՝ պտղատու և 241.74 հեկտարը՝ խաղողի այգիներ:

419. Ներկայումս մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 8000 հեկտարը, որը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղի և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ:

420. 2013թ. աշնանը կատարվել է աշնանացան 5400 հեկտարի չափով, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ ավել է 625 հեկտարով:

421. Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի, ներկայացված է աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2. ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2011-2013թթ.

Մշակաբույսի անվանումը	Տարեթիվը	Ցանքատարածությունը (հա)	Բերքատվությունը (գ/հա)	Համախառն բերքը (հազ.տոննա)	այդ թվում՝ կրկնակի միջշարային տարածություններից հավաքված
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	2011	5947	33.6	20.0	
	2012	6569	28.9	18.9	
	2013	6041	36.3	21.96	
Կարտոֆիլ	2011	1320	323.8	42.9	
	2012	1567	325.8	52.3	
	2013	1216	268	35.15	2.55
Բանջարանոցային մշակաբույսեր	2011	8781	331.9	307.0	
	2012	8790	361.8	331.8	
	2013	9007	358.4	342.4	18.97
Բոստանային մշակաբույսեր	2011	4016	284.5	114.3	
	2012	3438	382.1	131.4	
	2013	3499	378.7	132.5	
Պտուղի հատապտղի տնկարկներ	2011	8216	107.5	60.3	
	2012	7729	142.5	81.5	
	2013	8340/6560	114.3	75.0	
Խաղողի տնկարկներ	2011	6863	183.5	99.6	
	2012	7033	176.2	103.4	
	2013	7136/6126	156.6	95.92	

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012», ԱՎԾ, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հաշվետություն, 2013թ.

422. 2013 թվականին մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 163.2 մլրդ. դրամ, որը կազմել է հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի համախառն ծավալի 17.8%-ը, իսկ 2012 թվականի համապատասխան ցուցանիշից աճել է 14.8 մլրդ. դրամով:

Աղյուսակ 6.3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2011-2013թթ.

	Համախառն արտադրանքը, մլրդ.դրամ			Տեսակարար կշիռը, %		
	2011թ.	2012թ.	2013թ.	2011թ.	2012թ.	2013թ.
ք.Երևան	6.5	8.2	8.5	0.8	1.0	0.9
Արագածոտն	76.8	86.0	89.1	9.7	10.2	9.7
Արարատ	116.8	125.3	136.4	14.7	14.9	14.8
Արմավիր	**135.0**	**148.4**	**163.2**	**17.0**	**17.6**	**17.8**
Գեղարքունիք	152.8	152.7	165.3	19.2	18.1	18.0
Լոռի	57.1	57.4	67.3	7.2	6.8	7.2

	Համախառն արտադրանքը, մլրդ.դրամ			Տեսակարար կշիռը, %		
Կոտայք	50.8	53.0	56.7	6.4	6.3	6.2
Շիրակ	93.0	94.0	106.1	11.7	11.2	11.6
Սյունիք	50.4	57.7	62.3	6.3	6.9	6.8
Վայոց ձոր	16.9	18.4	20.0	2.1	2.2	2.2
Տավուշ	38.9	40.4	43.7	4.9	4.8	4.8
Ընդամենը ՀՀ	**795.0**	**841.5**	**918.6**	**100.0**	**100.0**	**100.0**

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012», «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին» ԱՎԾ հաշվետվություն

423. Գյուղատնտեսության ոլորտում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեկ շնչի հաշվով ցուցանիշի մարզային միջինը 2004-2012թթ. աճել է 1.6 անգամ: Սակայն տարածքային անհամաչափության ցուցանիշներն ավելի արագ են աճել: Մարզային անհամաչափության միջակայքն աճել է 1.7, իսկ միջին բացարձակ շեղումը՝ 2.1 անգամ: Արդյունաբերական արտադրանքի շնչային ծավալների համեմատ, գյուղատնտեսական արտադրանքի շնչային ծավալների մարզային անհամաչափություններն ավելի փոքր են և դանդաղ են աճում:

Աղյուսակ 6.4. ՀՀ մարզերում գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով, 2004-2012 թթ., հազար դրամ

	2004թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Երևան	5.9	6.1	7.7	8.0
Արագածոտն	275.9	384.4	539.3	669.9
Արարատ	242.4	320.6	416.5	521.8
Արմավիր	**261.8**	**385.0**	**472.4**	**611.0**
Գեղարքունիք	300.2	390.2	630.4	701.6
Լոռի	194.7	130.6	202.4	286.7
Կոտայք	162.6	142.0	180.1	222.1
Շիրակ	171.5	198.4	329.8	422.2
Սյունիք	322.7	218.4	329.6	439.7
Վայոց ձոր	424.7	202.5	301.8	383.1
Տավուշ	206.3	181.2	289.0	340.6
մարզային միջինը՝ առանց Երևան քաղաքի	256.3	255.3	369.1	459.9

Աղբյուրը՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», ՀՀ ԱՎԾ, 2010, 2012, 2013 և «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», ՀՀ ԱՎԾ, 2012:

424. 2011թ. գարնանը մարզին հատկացվել է 76 տոննա գարնանացան գարու և 8.4 տոննա եգիպտացորենի սերմացու, որը բաշխվել է համապատասխանաբար՝ 11 և 16 համայնքների 403 շահառուների, որոնք 681 հեկտարի վրա իրականացրել են ցանքսի աշխատանքներ: Նույն ծրագրի շրջանակներում հաշվետու տարվա աշնանը մարզին տրամադրվել է 268 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը բաշխվել է մարզի 29 համայնքների 695 շահառուների, որոնք 893 հեկտարի վրա իրականացրել են ցանքսի աշխատանքներ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2011թ. գարնանը և աշնանը տրամադրվել է համապատասխանաբար 3125կգ և 250կգ

ցինկի ֆոսֆիդ տեսակի թունանյութ, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել համապատասխանաբար 25000 և 2500հա տարածությունների վրա:

425. 2012թ. մարզխորհրդի նիստերում ներկայացվել է Ազոտովիտ-1 և Ազոցեովիտ-1 տեսակի կենսապարարտանյութերի դրական հատկանիշները և առավելությունները, ֆերմերներին բաժանվել են տեղեկատվական թերթիկներ, այդ նպատակով 890 լիտր Ազոցեովիտ-1 տեսակի կենսապարարտանյութ փորձարկվել է 46 համայնքների 78 գյուղացիական տնտեսությունների 85հա հողատարածությունների վրա: Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2012թ. գարնանը և աշնանը հատկացվել է 4997 տոննա ազոտական պարարտանյութ և 2800 տոննա դիզելային վառելանյութ: Ազոտական պարարտանյութը իրացվել է ամբողջությամբ, իսկ 1921074 լիտր դիզելային վառելանյութը հատկացվել է 3752 հողօգտագործողների:

426. 2013թ. գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է 7000կգ գարնանացան գարու (1կգ-ը 200դրամով) և 4630կգ առվույտի (1 կգ-ը 1500 դրամով), սերմացու, որը եռակողմ կնքված պայմանագրերով հատկացվել է 20 համայնքների 136 շահառուներին, որոնք 220.2 հեկտարի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ, ինչպես նաև 156 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու (1կգ-ը 160 դրամով) բերքահավաքի ժամանակ վճարելու պայմանով, որը եռակողմ կնքված պայմանագրերով հատկացվել է 13 համայնքների 346 շահառուների, որոնք 520 հեկտարի վրա իրականացրել են ցանքսի աշխատանքներ: Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2013թ. գարնանը և աշնանը հատկացվել է 8170 տոննա ազոտական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 7761.65 տոննան, որը բաշխվել է թվով 17072 շահառուների, և 2742000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 1711941 լիտր, որը բաշխվել է թվով 4774 շահառուների:

427. Գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն տրամադրվել է՝

1) 18.18 տոննա գարնանացան գարու, 6.85 տոննա առվույտի և 0.25 տոննա եգիպտացորենի սերմացու, որոնք համապատասխանաբար բաշխվել են թվով 19, 27 և 2 համայնքների 206 շահառուների, որոնք 374.59 հեկտարի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ,
2) 7000 տոննա ազոտական պարարտանյութ, որից ներկրվել է 6618.15 տոննան,
3) 300 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որից ներկրվել է 138.6 տոննան,
4) 200 տոննա կալիումական պարարտանյութ, որից ներկրվել է 124.8 տոննան,
5) 2 մլն. լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 1040000 լիտրը:

428. ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 265-Ն որոշման պահանջներին համապատասխան քանդվել են մարզի Աղավնատուն և Գայ համայնքներում «Ֆիլոքսերա» վնասատուով վարակված 0.77 հեկտար խաղողի այգիներ և վնասատուով

վարակված տարածքների թվով 3 սեփականատերերին որպես սոցիալական աջակցություն տրամադրվել է 2.45 մլն. դրամ:

429. Մարզի համայնքներում մկնանման կրծողների դեմ պայքարի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հատկացվել է ցինկի ֆոսֆիդ թունաքիմիկատ, մասնավորապես.

1) 2011 թվական - 3375կգ, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել շուրջ 27000 հա հողատարածության վրա:
2) 2012 թվական - 127.68կգ, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել 7 համայնքներին պատկանող 1064 հեկտար հողատարածության վրա:

430. Ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից, այսպես՝

1) 2013թ. ապրիլի 23-24-ը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվել են մարզի 29 համայնքների 1829 հեկտար տարածության վրա աճեցված մշակաբույսերը՝ 20-90%-ով: Մարզի գյուղատնտեսությանը լուրջ վնաս է հասցվել նաև 2013թ. մայիսի 12-ին, 17-ին տեղի ունեցած աննախադեպ կարկտահարությունը. վնասվել են 46 համայնքների 12787 հողօգտագործողների շուրջ 11137 հեկտար հողատարածքները՝ վնասի չափը կազմել է շուրջ 25.3 մլրդ.դրամ:
2) 2014թ. մարտի 31-ից ապրիլի 2-ի մարզի տարածքում տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվել են մարզի 83 համայնքների 6679 գյուղացիական տնտեսություններին պատկանող 3962.078 հեկտար այգիները՝ 50-100%-ի չափով, վնասի չափը կազմել է շուրջ 5.8 մլրդ.դրամ:

431. 2014թ. ցրտահարության վնասները մեղմելու նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել են՝ 102կգ լոլիկի, 174կգ վարունգի, 578կգ ձմերուկի, 100կգ սեխի բարձրորակ և բարձր վերարտադրության սերմացուներ
2) ՀՀ կառավարության կողմից փոխհատուցվել են ցրտահարությունից տուժած հողօգտագործողների կողմից օգտագործած ոռոգման ջրի վարձերը 50%-ի չափով, իսկ հողի հարկերը՝ 100%-ի չափով:
3) ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N534-Ն որոշմամբ սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության ծրագրերի իրականացման նպատակով, Արմավիրի մարզին նախնական հատկացվել է 50 մլն. դրամ:
4) Տուժած հողօգտագործողների արտարժույթով ունեցած վարկերը վերաձևակերպվել են դրամային վարկերով և սուբսիդավորվել ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև անհատական մոտեցմամբ իրականացվել են վարկերի վճարման ժամկետների երկարաձգում:
5) Հետագայում կարկտահարության դեպքերը նվազեցնելու նպատակով Արմավիրի մարզում կառուցվել են 50 հակակարկտային կայաններ և համայնքներում գործող համայնքնային սեփականություն հանդիսացող կայանները հանձնվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կառավարմանը,

որի վերաբերյալ համայնքների ավագանիները կայացրել են համապատասխան որոշումներ:

432. Անասնաբուծություն և անասնաբուժություն. Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Մարզում կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 8.3%-ը, ոչխարների և այծերի՝ գրեթե 13.7 %-ը և խոզերի՝ 14.3 %-ը:

433. ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան կարգադրությունների հիման վրա կազմակերպվել և համակարգվել են 2014թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: Մարզում հաշվառվել է 55796 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 19999 գլուխ խոզ, 91114 գլուխ ոչխար և այծ, 136 գլուխ ձի, թռչուններ՝ 1417588 (աղյուսակ 6.5):

Աղյուսակ 6.5. ՀՀ Արմավիրի մարզի անասունների գլխաքանակը՝ 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ

(գլուխ)

Խոշոր եղջերավոր անասուն		որից՝ կով		Խոզ		Ընդամենը ոչխար և այծ		այդ թվում				Ձի		Թռչուններ	
								ոչխար		այծ					
01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Կշռամանը, %-ով
55 796	**101.5**	**20143**	**100.9**	**19 999**	**96.7**	**91114**	**98.5**	**90550**	**98.5**	**564**	**96.0**	**136**	**101.5**	**1417588**	**93.8**

Աղբյուրը՝ «Անասնագլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարները 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ» ԱՎԾ տեղեկագիր, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության վարչության հաշվետվություն

434. ՀՀ Արմավիրի մարզում 2011-2013 թվականների ընթացքում արտադրվել է.

	2011թ.	2012թ.	2013թ.
տավարի միս	- 5148 տոննա	-5836 տոննա	- 6712 տոննա
ոչխարի միս	- 1286 տոննա	-1487 տոննա	- 1901 տոննա
խոզի միս	- 585 տոննա	-466 տոննա	- 777 տոննա
թռչնի միս	- 718 տոննա	-978 տոննա	- 1330 տոննա
ձուկ	- 2500 տոննա	-1500 տոննա	- 600 տոննա
կաթ	- 41125 տոննա	-44400 տոննա	- 48700 տոննա
բուրդ	- 121 տոննա	-140 տոննա	- 178 տոննա
ձու	- 50 միլիոն հատ	- 61.6 միլիոն հատ	- 83.7 միլիոն հատ

435. 2013թ. Արմավիրի մարզում իրացվել է շուրջ 15.4 հազ. տոննա անասուն և թռչուն սպանդի համար, արտադրվել է 40.5 հազ.տոննա կաթ և 127.7 մլն. հատ ձու (համապատասխանաբար հանրապետության անասնաբուծական արտադրանքի շուրջ 10.5%, 6.2% և 20.8%-ը): 2012-2013թթ. մարզում արտադրված անասնաբուծական մթերքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց համեմատականը Երևան քաղաքի և այլ մարզերի հետ ներկայացված է աղյուսակ 6.6-ում:

Աղյուսակ 6.6. Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2011-2013թթ. հունվար-դեկտեմբեր

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)², հազ. տոննա				Արտադրվել է կաթ, հազ. տոննա						Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2011թ.	2012թ.	2013թ.	2013թ. 2012թ-ի նկատմամբ, %	2011թ.	2012թ.	2013թ.	2013թ. 2012թ-ի նկատմամբ, %	2011թ.	2012թ.	2013թ.	2013թ. 2012թ-ի նկատմամբ, %
ք.Երևան	0.6	0.8	1.8	2.2 անգամ	2.0	2.2	2.5	113.6	27.9	35.6	28.7	80.6
Արագածոտն	14.7	14.7	15.6	106.1	74.8	76.5	79.9	104.4	59.7	61.7	59.4	96.3
Արարատ	8.3	8.7	9.8	113.1	36.5	38.2	40.1	105.0	55.0	55.0	54.7	99.5
Արմավիր	**10.3**	**11.0**	**15.4**	**140.3**	**36.1**	**37.4**	**40.5**	**108.3**	**135.5**	**140.1**	**127.7**	**91.1**
Գեղարքունիք	21.8	21.8	23.5	107.8	114.5	116.3	120.7	103.8	56.6	57.1	58.2	101.9
Լոռի	15.0	15.1	16.3	108.0	76.2	77.7	81.3	104.6	47.3	47.3	43.7	92.4
Կոտայք	12.6	12.9	14.7	114.0	51.8	53.5	57.9	108.2	125.7	132.1	117.3	88.8
Շիրակ	20.0	20.0	21.4	106.9	98.8	101.5	107.6	106.0	39.7	40.9	40.1	98.0
Սյունիք	11.8	12.0	13.9	115.8	55.9	57.2	62.2	108.7	26.9	27.2	26.3	96.8
Վայոց ձոր	4.8	5.0	5.6	111.8	20.0	21.1	24.8	117.5	17.5	18.2	17.4	95.5
Տավուշ	8.0	8.3	8.8	106.5	34.9	36.6	39.5	107.9	41.8	42.9	41.7	97.3
Ընդամենը ՀՀ	**127.9**	**130.3**	**146.8**	**112.7**	**601.5**	**618.2**	**657.0**	**106.3**	27.9	**658.1**	**615.2**	**93.5**

Աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011, 2012, 2013թ. հունվար-դեկտեմբերին» ,ԱՎԾ

436. Մարզպետարանի ուշադրության կենտրոնում է մարզի առանձին տնտեսավարող սուբյեկտներին հատկացված տոհմային երինջներից ձևավորված նախիրներում տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման և վերարտադրության արդյունքում ստացված տոհմային մատղաշը մարզի ֆերմերային տնտեսություններին հատկացնելու հարցը:

437. Ելնելով հանրապետության առանձին տարածաշրջաններում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակից և ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով, հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով, իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ:

438. Համակարգվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը: 2012 թվականի ընթացքում սուր վարակիչ հիվանդություններից արձանագրվել է «Սիբիրախտի» մեկ դեպք Արմավիր համայնքում: 2013թ. ընթացքում սուր վարակիչ հիվանդություններից արձանագրվել է «Խոզերի աֆրիկյան ժանտախտի» մեկ դեպք՝ Մրգաշատ համայնքում:

439. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն Արմավիրի մարզում կատարվում է Արմավիրի մարզային

կենտրոնի կողմից, որտեղ ընդգրկված են 50 անասնաբույժներ և 3 համաճարակաբան: Ծրագրի շրջանակներում կատարվող միջոցառումների թիվը 2013թ. եղել է 14, որից 2 ախտորոշիչ և 12 կանխարգելիչ: Ծրագրով նախատեսված միջոցառումները կատարվել են որակով, որը փաստում է մարզում անասնահամաճարակային իրավիճակի կայուն լինելը: Ըստ մասնագետների՝ ցանկալի է միջոցառումների ցանկում ընդգրկել նաև «արյունապարազիտային» հիվանդությունների դեմ կանխարգելիչ միջոցառումները, քանի որ այն Արմավիրի մարզում տարվա հինգ ամիսներին առկա է:

440. Մարզում անասնաբուժության զարգացման համար նպատակահարմար է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) անասնաբուժական միջոցառումների ցանկի ընդլայնում
2) մարզային կենտրոնի բազայի հզորացում
3) անասնագլխաքանակի 100% ներառումը միջոցառումներում
4) անասնաբույժների աշխատանքի արդյունավետության բարձրացում
5) անասնաբույժների մասնագիտական որակի բարձրացում՝ տեղերում սեմինարների կազմակերպում, հանրապետության լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակում
6) համայնքներում անասնաբուժական տեղամասերի ստեղծում
7) համայնքների ղեկավարների աջակցությամբ համայնքներում անասնահավաքատեղիների ստեղծում, որով կբարձրանա պատվաստման գործընթացի արդյունավետությունը
8) անասնաբուժական նյութատեխնիկական բազայի ստեղծում (տրանսպորտ, արտահագուստ, պարագաներ և այլն):

441. Աղյուսակ 6.7-ում ներկայացված է տեղեկատվություն մարզում 2013թ. կատարված հակահամաճարակային և պրոֆիլակտիկ միջոցառումների մասին:

Աղյուսակ 6.7. Արմավիրի մարզում իրականացված հակահամաճարակային և պրոֆիլակտիկ միջոցառումները, 2013 թվական

N	Միջոցառումների անվանումը	Արմավիրի տարածաշրջան	Էջմիածնի տարածաշրջան	Բաղրամյանի տարածաշրջան	Ընդամենը
1	Բրուցելոզ Խ.Ե.Կ	19317	12941	11946	44204
2	Տուբերկլոզ Խ.Ե.Կ	8896	8833	6735	24464
3	Սիբիրախտ Խ.Ե.Կ	35959	20286	19853	76098
4	Էմկար Խ.Ե.Կ	33062	21629	22084	76779
5	Դաբաղ Խ.Ե.Կ	59115	35817	31572	126504
6	Լիպտոսպիրոզ Խ.Ե.Կ	848	-	-	848
7	Բրուցելոզ Մ.Ե.Կ	19211	7649	50746	77606
8	Սիբիրախտ Մ.Ե.Կ	21611	11104	49171	81886
9	Դաբաղ Մ.Ե.Կ	19830	11104	36773	61707

10	Բրադզոտ, էնտերոտոքսեմիա Մ.Ե.Կ (հասակավոր)	19115	7558	29418	56091
11	Ժանտախտ խոզերի	10250	8258	18951	37459
12	Սիբիրախտ խոզերի	2491	2055	1857	6403
13	Բրուցելոզ խոզերի	470	388	408	1266
14	Բրուցելոզ ձիերի	50	2	-	52
15	Սիբիրախտ ձիերի	53	10	14	77
16	Կեղծ ժանտախտ (Նյու-Քասլ) թռչունների	169820	191869	12079	373768
17	Վարրոատոզ մեղուների	8400	4400	1600	14400

Աղբյուրը՝ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Արմավիրի մարզային կենտրոնի տեղեկատվություն

442. Գյուղատնտեսական տեխնիկական ապահովվածությունը. Մարզում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նորագույն տեխնիկայով ապահովվածությունը:

443. Վերջին տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ֆերմերները համալրել են նորագույն տեխնիկայով: 2011թ. ՀՀ կառավարության կողմից Արշալույս և Երվանդաշատ համայնքներին 50% զեղչված գներով տրամադրվել է մեկական միավոր տրակտոր: Համագործակցելով ՓՄՁ ԶԱԿ-ի Արմավիրի մասնաճյուղի հետ՝ 2013թ. Արմավիրի մարզի 10 համայնքների 13 գյուղացիական սուբյեկտներ կանխիկով և լիզինգով ձեռք են բերել Բելառուսիայից ներկրված տրակտորներ և տրակտորային սարքավորումներ: Լիզինգով տրակտորների ձեռքբերման ֆինանսավորումն իրականացվել է «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ընկերության կողմից:

444. 01.01.2014թ. դրությամբ մարզում առկա 1742 տրակտորներից գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ են եղել 1496-ը, 61 հացահատիկահավաք կոմբայններից՝ 46-ը, 44 կերահավաք կոմբայններից՝ 35-ը: Գյուղատնտեսական առկա տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը (աղյուսակ 6.8):

Աղյուսակ 6.8. ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակը (01.01.2014թ. դրությամբ)

Գյուղտեխնիկայի անվանումը	Առկա քանակը (հատ)		Որից սարքին վիճակում (հատ)		Առկա և սարքին գյուղ.տեխնիկայի հարաբերակցությունը,%	
	Արմավիրի մարզ	ՀՀ-ում	Արմավիրի մարզ	ՀՀ-ում	Արմավիրի մարզ	ՀՀ-ում
Տրակտորներ բոլոր մակնիշների	1742	14783	1496	11656	85.9	78.8
Բեռնատար ավտոմեքենաներ	1345	15251	1120	11576	83.3	75.9
Հացահատիկահավաք կոմբայններ	61	1355	46	1011	75.4	74.6

Տրակտորային կցասայլեր	894	6099	779	5339	87.1	87.5
Տրակտորային խոտհնձիչներ	134	2030	111	1798	82.8	88.6
Կերահավաք կոմբայններ	44	376	35	272	79.5	72.3
Հատիկազտիչ մեքենաներ	18	427	16	372	88.9	87.1
Տրակտորային շարքացաններ	190	1856	176	1619	92.6	87.2
Տրակտորային գութաններ	610	3843	505	3385	82.8	88.1
Կուլտիվատորներ	460	2244	355	1876	77.2	83.6
Հավաքիչ-մամլիչներ	160	1575	130	1356	81.3	86.1

Աղբյուրը՝ «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2014թ. հունվարի 1-ի դրությամբ» ԱՎԾ տեղեկագիր

445. Ոռոգման համակարգեր. Արմավիրի մարզում ոռոգումն իրականացվում է արհեստական եղանակով, առանց որի հնարավոր չէ երկրագործության վարումը: Մարզում 97066.9 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից 61592.3 հեկտարը ոռոգելի են: Արմավիրի մարզում գործում են «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի երկու մասնաճյուղեր և 9 ջրօգտագործողների ընկերություններ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 36987 ջրօգտագործողներին մատակարարվել է 232.6 միլիոն մ^3 ոռոգման ջուր՝ 2.55 մլրդ. դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 2.006 մլրդ. դրամ, գանձման մակարդակը կազմել է 78.4%:

446. Արմավիրի մարզի շուրջ 306.2կմ միջտնտեսային, 4846.9կմ ներտնտեսային ցանցերը, 367 խորքային հորերը և 68 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է 2014 թվականի ապրիլի 1-ից:

447. 2014 թվականին ոռոգման ջրամատակարարման բնագավառում առաջացել է մեծ լարվածություն «Ակնալիճ» և «Սև ջուր-Ախթամար» ՋՕԸ-երի սպասարկման տարածքում՝ կապված Սև ջուր գետում ջրի մակարդակի կտրուկ իջեցման հետ: 2014թ. գյուղատնտեսական տարին բնութագրվում է որպես սակավաջուր, Ախուրյանի ջրամբարը լցվել է շուրջ կիսով չափ, իսկ մարզի տարածքով հոսող գետերի ջրթողունակությունը պակասել է 5-10 անգամ, որը խիստ լարվածություն է ստեղծել ոռոգման ջրով ապահովելու տեսանկյունից:

448. Հարցի կարգավորման նպատակով Սևանա լճից ջրի բացթողումները ոռոգման նպատակով 170մլն.մ^3 դարձել է մինչև 270մլն.մ^3, Մայիսյան և Եղեգնուտ համայնքներում ոռոգման նպատակով հորատվել են 2 խորքային հորեր, մարզում գույքագրվել են համայնքների հաշվեկշռում գտնվող խորքային հորերի քանակը, որոնք անհրաժեշտ է արագ վերանորոգել և այդ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե:

449. Նախորդ տարիների ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել ոռոգման ներտնտեսային ցանցերի կառուցման և վերականգնման ուղղությամբ: Միայն 2013 թվականի ընթացքում իրականացվել են ներքոհիշյալ ծրագրերը.

1)2013թ. պետական բյուջեի միջոցներով իրականացվել է 8916 մետր երկարության կիսախողովակների տեղադրում, հորատվել է 9, վերանորոգվել 11 խորքային հոր, որով բարելավվել է շուրջ 2294 հեկտար հողատարածությունների ոռոգումը:

2)ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 193.09 մլն.դրամ գումար, որով իրականացվել է Արաքս գետի ափի ամրացում՝ Փշատավան համայնքի վարչական տարածքում, Մեծամոր գետի ափի ամրացում՝ Ակնաշեն համայնքում, հեղեղատարի հունի մաքրում և ափի ամրացում՝ Խանջյան համայնքում, Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում և ափի բարձրացում՝ Մայիսյան համայնքում:

3)ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 12 համայնքներում մաքրվել է 62.48կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Այս բնագավառում դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

4)Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և համայնքների կողմից 15% համաֆինանսավորմամբ մարզի 12 համայնքներում իրականացվել են 28.6կմ երկարությամբ ներտնտեսային ցանցերի վերանորոգման աշխատանքներ:

450. Մարզի թվով 10 համայնքներում նախատեսված է 2014թ. սեպտեմբեր ամսից իրականացնել 61.149կմ երկարությամբ բաց դրենաժային համակարգի մաքրման աշխատանքներ՝ Հայկաշեն 5.846կմ, Գրիբոյեդով 9.73կմ, Երասխահուն 2.334կմ, Զարթոնք 8.362կմ, Վարդանաշեն 3.0կմ, Մարգարա 9.216կմ, Ագրոքիմիայի ինստիտուտի տարածք 8.166կմ, Արազափ 3,812կմ, Արգավանդ 3.08կմ, Գայ 7.603կմ:

451. Դրական տեղաշարժեր են արձանագրվել մարզում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ. Տալվորիկ համայնքում շուրջ 100 հեկտար հողատարածություն ոռոգվում է անձրևացման եղանակով, իսկ Արևադաշտ համայնքի 270 հեկտար խաղողի այգիների, ինչպես նաև ավելի քան 70 հեկտար ջերմատնային տնտեսությունների ոռոգումն իրականացվում է կաթիլային եղանակով:

452. Ոռոգման բնագավառի հիմնախնդիրներն են՝

1) տեղական նշանակության փոքր ծավալով ջրամբարների բացակայություն
2) ոռոգման ջրի կորուստների մեծ քանակ
3) ոռոգման ներտնտեսային ցանցի ֆիզիկական և բարոյական մաշվածություն, նրանց անհամապատասխանությունը ներկա պահանջներին
4) ինքնահոս ոռոգման նոր ջրանցքների կառուցման անհրաժեշտություն:

453. Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով գյուղատնտեսության կայունացման և զարգացման համար կարևորվում է ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացումը, որը հնարավոր է համարվում հետևյալ ուղղություններով՝

ա) ջրամատակարարման մեխանիկական եղանակից ինքնահոսին անցում

բ) ոռոգման համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրում, մասնավորապես՝ կաթիլային և անձրացման եղանակով, դրանց արդյունքում ջրի խնայողական ռեժիմների կիրառում:

454. Գյուղատնտեսական մթերքների իրացումը. Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը: Այն եղել և մնում է գյուղատնտեսության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը:

455. Մարզում գյուղատնտեսական մթերքների իրացումն իրականացվում է 6 մեծածախ ու մանրածախ շուկաներում և վերամշակող կազմակերպությունների միջոցով: 2013թ. ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 7186.6 տոննա պտուղ, 8157.9 տոննա բանջարեղեն և 49111 տոննա խաղող: Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

456. Գյուղատնտեսության վարկավորում. Ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրության գործընթացում ունենում են շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն, բացի այդ գյուղատնտեսության մեջ հաճախ անհրաժեշտ է լինում կատարելու խոշոր ներդրումներ, որն իրականացվում է վարկավորման միջոցով: «ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի կողմից միայն 2013 թվականին մարզի 91 համայնքների 9701 վարկառուներին տրամադրվել է 10236 մլրդ.դրամ վարկ, որից 7049 մլրդ. դրամը՝ պետական սուբսիդավորմամբ:

6.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

457. Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության՝ խաղողագործություն, բանջարաբուծություն, պտղաբուծության ճյուղերի և անասնապահության հետևողական ինտենսիվացման շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, որը կբերի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճին և աղքատության կրճատմանը: Նախատեսված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

1) Հետևողական և արդյունավետ օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի հողերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:
2) Հնարավորինս ավելացնել բուսաբուծական մթերքների, հատկապես խաղողի, պտղի հիմնական տեսակների՝ ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի և այլն, բոստան-բանջարանոցային և կերային մշակաբույսերի արտադրության ծավալները և նրանց ապրանքայնության մակարդակը:
3) Էապես ընդլայնել խաղողի, պտղի և բոստան-բանջարանոցային մշակաբույսերի տարածքները և արտադրվող մթերքների արտահանման ծավալները:
4) Ընդլայնել բոստան-բանջարանոցային մշակաբույսերի բարձր բերքատու սորտերի սերմերի արտադրության և ներկրման, ինչպես նաև մշակության նոր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման ջրի, հանքային և օրգանական պարարտանյութերի արդյունավետ օգտագործման միջոցով:
5) Բարելավվել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ սկսել Մաստարայի ջրամաբարի, ինչպես նաև փոքր ջրամբարների շինարարությունը, հետևողականորեն շարունակել

ներտնտեսային ցանցերի վերանորոգման աշխատանքները, աստիճանաբար ներդնել ոռոգման կաթիլային և անձրևացման եղանակով համակարգեր:

6) Անասնաբուծական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքների որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը:
7) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները:
8) Հետևողական աշխատանքներ տանել մարզում հակակարկտային կայանների թվի ավելացման ուղղությամբ:
9) Ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունը աղքատ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսական ձեռնարկություններին:
10) Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու ռիսկը մեղմելու նպատակով մարզում ներդնել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրական համակարգը:
11) Հետևողական աշխատանք իրականացնել մարզում գյուղատնտեսական մթերքների՝ բանջարեղենի, պտղի, խաղողի, կաթի, մսի, ձկան, վերամշակվող ձեռնարկությունների թվի ավելացմանը՝ այն հնարավորինս մոտեցնելով բուն արտադրողին:
12) Արմավիրի մարզում կառուցել մսի մթերման և վերամշակման արտադրամասեր:
13) Հետևողական աշխատանքներ տանել մարզում հողերի կատեգորիաների ուսումնասիրման, ճշգրտման և վերահսկողություն իրականացման բնագավառում:
14) Մարզում շուկայական հարաբերությունների աշխուժացման նպատակով բարելավել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակը, վերացնել կապի և հաղորդակցության համակարգում եղած թերությունները:
15) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավերտությունը՝ կոոպերացայի և այլ կազմակերպչական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով:
16) Մարզում շահագրգռել հողերի խոշորացումը և գյուղացիական տնտեսությունների միավորումը:
17) Ապահովել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

458. ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության ոլորտում 2015-2018 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը:

459. Հայաստանի Հանրապետության հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի շրջանակներում «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից պետական միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական հողերի ագրոքիմիական հետազոտություններ՝ 2015 թվականին՝ 18, 2016 թվականին՝ 17, 2017 և 2018 թվականներին՝ 18-ական համայնքներում:

460. 2015-2018թթ. կշարունակվեն «Հայաստանի Հանրապետության հողօգտագործող-ներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության», «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի

ձեռքբերման նպատակով պետական աջակցության» և «Հայաստանի Հանրապետությունում գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման պետական աջակցության» ծրագրերը:

461. Անհրաժեշտության դեպքում, ելնելով բուսասանիտարական վիճակի վերլուծության արդյունքներից, «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում կիրականացվեն կրծողների, մորեխների և անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ:

462. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 336-Ա որոշման համաձայն՝ 2007-2015 թվականներին իրականացվում է տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում եվրոպական երկրներից հանրապետություն են ներկրվում շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի տոհմային բարձրարժեք երինջներ և տարաժամկետ վճարման պայմանով հատկացվում գյուղացիական տնտեսություններին:

463. 2015-2018 թվականներին մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելու է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվի գյուղատնտեսական կենդանիների թվով 9-ը առավել վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ ախտորոշիչ և կանխարգելիչ շուրջ 995 հազար միջոցառում:

464. «ՀՀ Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ի (ԳԱՄԿ) կողմից 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի համաձայն նախատեսվում է իրականացնել «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել շուրջ 100 սեմինար, 2186 խորհրդատվական միջոցառում, թողարկել 40 (15060 տպաքանակով) թեմատիկ թերթիկ և բուկլետ, 12 համար մարզային թերթ (14400 տպաքանակով), իրականացնել շուրջ 144 դաշտային ուսուցում, 5 փորձացուցադրական աշխատանք:

465. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը 2015-2018թթ. ՀՀ Արմավիրի մարզում նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1)բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով բուսասանիտարական մոնիտորինգ, նմուշառում, նմուշների լաբորատոր փորձաքննություն և բուսասանիտարական իրավիճակի պարզում,

2)բույսերի պաշտպանության միջոցների որակի մոնիտորինգ, նմուշառում և լաբորատոր փորձաքննություն,

3)գյուղատնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց բուսասանիտարական հաշվառում և տվյալների էլեկտրոնային բազայի համալրում,

4)գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ախտորոշում:

466. Վերոնշյալ աշխատանքներն իրականացվելու են յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ապարատի պահպանման ծախսերի և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծախսային ծրագրի շրջանակներում:

467. ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՍԿ/ԱԲ-2/2169-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի շրջանառության մեջ ներգրավման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի համաձայն՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների (կաթիլային ոռոգում, անձրևացում) ներդրումը խթանելու նպատակով նախատեսվում է 2016-2017 թվականներին ՀՀ Արմավիրի մարզի մեկ գյուղացիական տնտեսությունում իրականացնել պիլոտային (ցուցադրական) ծրագիր, որի ֆինանսական ապահովման աղբյուրը դեռևս հստակեցված չէ:

468. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ամեն տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հնարավորություն է ունենում իրականացնել հանրապետության գետերի ու հեղեղատարների ամենախոցելի տեղամասերի ամրացման ու մաքրման աշխատանքներ: Հակահեղեղային միջոցառումների ծրագրերը մշակելու համար տեղեկատվություն ստանալու, տեղերում ուսումնասիրություններ կատարելու գործընթաց-ներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը համագործակցում է ինչպես բնագավառում փորձ ու դերակատարություն ունեցող պետական կառավարման և այլ մարմինների, այնպես էլ մարզպետարանների հետ:

469. Առաջարկությունների առկայության պարագայում տեղում կկատարվեն ուսումնասի-րություններ, և հնարավորության դեպքում (հանրապետության ողջ տարածքում առաջնահերթ իրականացման ենթակա միջոցառումներն ընտրվում են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տրամադրվող սուղ միջոցները) կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

470. ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 51,570,032.0 հազ.դրամ (տես՝ հավելված 6):

6.3.Գյուղատնտեսության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
Ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրությունը	1)Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2) Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, %	165 մլրդ.դրամ 18-20%	Առկա նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, Բնակլիմայական գործոնի ազդեցությունը
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում	1.1.Օգտագործվող վարելահողերի մակերեսը	29000հա	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայությունը
	1.2.Չօգտագործվող վարելահողերի տարածքը	11000հա	
	1.3.Մշակաբույսերի տարածքը	43000հա	
	1.4. Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը	63%	
Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	2.1.Բանջար-բոստանային մշակաբույսերի բերքատվությունը -բանջար -բոստան	350 g/հա 360 g/հա	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
	2.2.Խաղողի բերքատվությունը,	160 g/հա	
	2.3.Պտղի բերքատվությունը,	70-90 g/հա	
	2.4. Հացահատիկի բերքատվությունը	35 g/հա	
Արդյունք 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1. Մարզում ոռոգվող հողատարածությունների ավելացում	300 հա	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն
	3.2. Համայնքներում վերանորոգվող ջրանցքների թիվը	տարեկան 4-5	
	3.3. Վերականգնվող ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը	տարեկան 5-15կմ	
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների	4.1. Կաթի արտադրության ծավալները	48-50 հազ.տոննա	Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում, գյուղ.
	4.2. Մսի արտադրության ծավալը	8-10 հազ. տոննա	
	4.3. Բրդի արտադրության	170-180 տոննա	

մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	ծավալները		կենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում
	4.4. Ձվի արտադրության ծավալները	80-90 մլն. հատ	
Արդյունք 5. Գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1. Մարզում գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թվի ավելացում	1-2	Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն
	5.2. Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը	50634	
	5.3. Ջերմոցային տնտեսությունների մակերեսը,հա	416.79	
	5.4. Սնկի արտադրամասերի մակերեսը, հա	0.14	
	5.5. Սառնարանային տնտեսությունների տարողությունը, տոննա	2375.7	
Արդյունք 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1. Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների (ձեռնարկությունների) թիվը -ընդհանուր գումարը	9600 7-10 մլրդ.դրամ	Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, ձեռնարկությունների համար

7. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. Բնապահպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

471. Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրները կապված են մարզի 1242քառ.կմ անտառազուրկ վարչական տարածքում գործող Հայկական ատոմային էլեկտրակայանի, «Ձվարթնոց» օդանավակայանի, գյուղատնտեսական նշանակության շուրջ 97000հա-ի վրա 55325 գյուղացիական մասնատված տնտեսությունների արտադրական գործունեության, 20 համայնքների 470հա հողատարածքներում 31 օգտակար հանածոների հանքավայրեր շահագործվում են 27 տնտեսվարողների, 16 համայնքներում 943հա հողատարածքի վրա՝ 725հա լճակային մակերեսով 92 հատ ինքնաբուխ խորքային հորերի միջոցով 90-95 մլն.մ^3 տարեկան ստորգետնյա քաղցրահամ ջրեր օգտագործող 46 ձկնաբուծական տնտեսությունների, 97 համայնքներում ապրող 267.2 հազ. բնակիչների տարաբնույթ սոցիալ-տնտեսական գործունեության հետ:

472. Մարզի վարչական տարածքում նախկինում հիմնված շուրջ 1900 հա դաշտապաշտպան անտառաշերտերը հատվել են անցյալ դարի 90-ական թվականներին, իսկ 2500հա հողատարածքների վրա գործող անտառտնտեսությունները գոյատևել են մինչև 2005 թվականը:

473. ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում», որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիք, կարևորվել է բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական ծրագրում, որպես ներքին սպառնալիք, գնահատվել է բնապահպանական խնդիրները և բնական պաշարների արդյունավետ կառավարումը:

474. Հանրապետության համար աղքատության հաղթահարման ռազմավարական տեսանկյունից բնապահպանական և շրջակա միջավայրի խնդիրները դասակարգվել են 4 խմբի՝

1) հողերի դեգրադացիայի կանխում, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցում,

2) ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում և օգտագործում,

3) կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վնասակար թափոնների խնդիրներ (ամբողջությամբ կամ մասնակի վերաբերում են նաև Արմավիրի մարզին)

դ) կենսաբազմազանության պահպանություն և կայուն օգտագործում:

475. Մինչ այժմ մարզի բնապահպանական ծրագրերը նպատակաուղղված են եղել շրջակա միջավայրի պահպանությանը, բնապահպանական գործընթացների բարելավմանը, ընդերքի օգտակար հանածոների արդյունավետ օգտագործմանը.

1) հողերի դեգրադացիայի կանխում, մելիորատիվ վիճակի բարելավում
2) ջրային պաշարների, առանձնապես ստորգետնյա ջրերի արդյունավետ օգտագործում, նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրմանը՝ձկնաբուծության զարգացում
3) օգտակար հանածոների արդյունահանման և հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետ կառավարում
4) բնապահպանական հիմնախնդիրներին ազգաբնակչության իրազեկում և հասարակական կազմակերպությունների գործունեության աջակցություն:

476. Մարզի բնապահպանական հիմնախնդիրների լուծման ծրագրերը և միջոցառումների գործընթացները մշակվել են շահագրգիռ կողմերի, հասարակական կազմակերպությունների առաջարկությունների և համատեղ քննարկումների արդյունքում, որոնց մասին իրազեկվել է հանրությանը:

477. Անցած ժամանակահատվածում գործուն միջոցառումներ են ձեռնարկվել մարզում ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 2-ի N 1840-Ն և 2005 թվականի հունիսի 16-ի N 880-Ն որոշումներով երեք գլոբալ «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիաներից բխող խնդիրների իրականացման ուղղությամբ:

478. ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ՝ Արմավիրի մարզի տարածքում, հաստատվել են երեք բնության հուշարձաններ.

1) Մեծամոր լիճը՝ որպես ջրագրական հուշարձան,

2) Մեծամոր գետի ավազանի ջրաճահճային բուսականությունը,

3) ք.Էջմիածնի՝ Զվարթնոց տաճարի մոտ, ավազասեր (պսամոֆիլ) բուսականությունը, որպես կենսաբանական հուշարձան:

479. Մշակվել է բնության հուշարձանների պահպանման, լուսաբանման և հանրությանն իրազեկման գործընթացների իրականացման միջոցառումների ծրագիր:

480. Առանձնակի հետևողականություն է ցուցաբերվել՝

1) մարզում առկա քաղցրահամ ջրային պաշարները աղտոտվածությունից պաշտպանելու և արդյունավետ օգտագործելու կառավարման համակարգ մշակելու գործընթացներին.

2) ստորգետնյա ջրային պաշարների հետախուզման մոնիտորինգի իրականացման, արդյունահանված ջրերի օգտագործման արդյունավետության զարգացմանը.

3) Մեծամոր լճի, Մեծամոր գետի ավազանի ջրային աղբյուրների, տարածքի ֆաունայի և ֆլորայի բազմազանության ուսումնասիրման և պահպանման ծրագրերի մշակման աշխատանքներին:

481. Ծրագրեր են մշակվել մարզի տարածքում աճող, բազմացող, անհետացման եզրին հայտնված, հազվագյուտ հանդիպող բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ուսումնասիրման ու պահպանության միջոցառումներին:

482. «Հայաստան ծառատունկ» ծրագրի հետ համատեղ ուսումնասիրվել է մարզի բնակավայրերի կանաչապատման համալիր ծրագիր և անցած տարիների ընթացքում 82 համայնքներում հիմնվել են ավելի քան 170 հազար գեղատեսիլ և պտղատու ծառատեսակներ ու թփեր, կանաչապատվել են 58 դպրոցների, 32 մանկապարտեզների, 27 մշակույթի տների, 23 պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների հարակից տարածքներ, շուրջ 47 կմ երկարությամբ փողոցներ: Մարզում վերջին տարիներին հիմնվել են ավելի քան 8000 հեկտար խաղողի և պտղատու այգիներ, բազմամյա տնկարկների տարածքը հասցվել է 15.4 հազար հեկտարի:

483. Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում կարևոր ներդրում էր ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին Արաքս գետի ափապատնեշի վերականգնման, ամրացման, Քասախ և Մեծամոր գետերի հունի մաքրման և ափերի ամրացման մեծածավալ աշխատանքների իրականացումը, որը կանխել է վարարումների հետևանքով ցանքատարածությունների և բնակավայրերի ողողումները:

484. Գետերի գարնանային ողողումներից մարզի գյուղատնտեսական արտադրությունը, բնակավայրերին ու շրջակա միջավայրին տարեկան վնասը կազմում է 60-80 մլն. դրամ. Ափապատնեշի վերանորոգման ու ամրացման համար 2004-2008թթ. ծրագրերով պետական բյուջեից ծախսվել է 1.55 մլրդ. դրամ, 2009-2013 թվականներին այդ գումարի չափը գրեթե կրկնապատկվել է: Գետերի հունի մաքրման ու ափապատնեշների ամրացման աշխատանքները շարունակական են:

485. ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 657 որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան մարզպետարանին վերապահված իրավասությունների շրջանակում համակարգվել և վերահսկվել են մարզի վարչական տարածքում ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները:

486. Հողերի էռոզիայի կանխման, ոռոգման ջրի կորուստների կրճատման, արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ մեծ ներդրումներ են իրականացվել 2008-2013թթ.: Ոռոգման ցանցերի վերակառուցման և վերանորոգման համար ծախսվել են միլիոնավոր դրամներ:

487. Մարզի զարգացման ծրագրերով հողերի մելիորատիվ վիճակի բարելավման համար ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեից հատկացված միջոցներով մաքրվում և վերանորոգվում են ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման համար խորհրդային տարիներին կառուցված շուրջ 290 կմ երկարության ջրահեռացման բաց ցանցը (դրենաժ): Դրենաժի մաքրման աշխատանքների համար պետական բյուջեից միջոցների հատկացումը սկսվել է 1998 թվականից: Համակարգի նորմալ գործունեությունն ապահովելու, հողերի ճահճացման և աղակալման պրոցեսները կանխելու համար ջրահեռացման ցանցի ընդհանուր երկարությունը բաժանվել է երեք մասի և նույն տարածքի հաջորդ վերանորոգումն ու մաքրումն իրականացվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ, որը միանգամայն բավարար է:

488. Վերջին տարիների կլիմայի փոփոխության և մարզի տարածքում ստորգետնյա ջրային պաշարների անխոհեմ ու ոչ արդյունավետ օգտագործման, տեղումների պակասի հետևանքով, լուրջ փոփոխություններ են կատարվել ջրային պաշարների տեղակայման, հոսքի բնագավառներում:

489. Վտանգավոր չափերով նվազել են ստորգետնյա ջրային պաշարները, բաշխվածության սահմաններն ու հողի մակերեսից ունեցած խորությունը: Այդ գործոնների արդյունքում վերացել է ստորերկրյա ջրերի հեռացման համար գործող ջրահեռացման ցանցերի հետագա մաքրման ու վերանորոգման աշխատանքների ծրագրավորումն ու իրականացումը:

490. Նախկինում տարեկան մաքրվում էր 90-100կմ երկարության ջրահեռացման ցանց՝ ծախսելով 100-120 մլն. դրամ: Մարզում կա 280կմ երկարության փակ ջրահեռացման ցանց, որը խորհրդային կարգերի փլուզումից հետո թալանվել է: Վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ չեն տարվել: Ջրահեռացման փակ ցանցերի հողերի վիճակի, բերրիության աստիճանի և ստորերկրյա ջրերի հեռացման վերաբերյալ հետազոտություններ չեն իրականացվել: Ջրահեռացաման փակ ցանցը սպասարկում է ավելի քան 2000-2500 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք:

491. Անհրաժեշտ է արձանագրել, որ ձեռնարկված ու մշակված միջոցառումների էական մասը և, ընդհանրապես, բնապահպանության բնագավառի բարեփոխումները դեռևս բավարար չեն մարզի հիմախնդիրներին լուծում տալու համար, որն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերը:

492. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի N 54 արձանագրությամբ հաստատված Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի որոշման հիման վրա, ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 3-ի N 830-Ն և 2008թ. նոյեմբերի 20-ի N 1371-Ն որոշումներով հաստատված «Որդան կարմիր» պետական արգելավայրի կանոնադրությամբ՝ արգելավայրը ստեղծվել է ՀՀ Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա, զբաղեցնում է 219.85 հեկտար տարածք, բաղկացած երկու առանձին տեղամասերից՝ Արազափի գյուղական համայնքի հյուսիս-արևմտյան մասում (198.33 հեկտար) և Ջրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հեկտար): Պետական արգելավայրը գտնվում է Արարատյան հարթավայրում, ծովի մակերևույթից 835-850մ բարձրության վրա: Հատուկ պահպանության

օբյեկտ հանդիսանում է Հայաստանի համար էնդեմիկ արժեքավոր միջատ՝ Որդան Կարմիր միջատը, որդանախոտը և վերջինիս գոյատևման համար անհրաժեշտ շրջակա միջավայրը:

493. ՀՀ կառավարության 2002թ. N 1046-Ն որոշմամբ «Որդան Կարմիր» պետական արգելավայրը ընդգրկվել «Արգելավայրային համալիր» ՊՈԱԿ-ի կազմի մեջ: Հիշյալ համալիրի առաջնահերթ հիմնախնդիրը, ըստ վերջինիս կանոնադրության, հանդիսանում է արգելավայրի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության ապահովումը, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, դրանց գիտական ուսումնասիրության կազմակերպումը և իրականացումը:

494. Պետական արգելավայրերի հողատարածքները, ջրերը, բուսական և կենդանական աշխարհը, ընդերքը, պետության բացառիկ սեփականությունն են, որի հիմնական խնդիրն է «Որդան կարմիր» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնական զարգացման ապահովումը և պահպանումը: Լիազորված մարմնի կողմից գործնական քայլեր չեն ձեռնարկվում արգելավայրն իր նպատակին ծառայեցնելու համար, խախտվում է արգելավայրի պահպանության ռեժիմը, տարածքը դարձել է արոտավայր:

495. Մարզում գրանցված 100-ից ավել հասարակական կազմակերպություններից և մասնաճյուղերից միայն 3-ն ունեն բնապահպանական ուղղվածություն, որոնք, մեղմ ասած, չեն կարող ապահովել ազգաբնակչության տեղեկատվության կազմակերպման և բնապահպանական հիմնախնդիրներին ու միջոցառումներին հանրության մասնակցությունը: Այդ գործին չեն ծառայեցվում նաև մարզում գործող երկու հեռուստաընկերությունների և «Հայրենականչ» թերթի ընձեռած հնարավորությունները:

496. Շարունակվում է ինքնաբուխ հորերի միջոցով ստորգետնյա քաղցրահամ ջրերի տնտեսապես չհիմնավորված արդյունահանումը ձկնաբուծական նպատակներով: Մարզում հորատված 600-ից ավելի խորքային հորերի միջոցով, նախկինում՝ մինչև 2005-2006 թվականները, տարեկան արդյունահանվում էր 450-460 մլն.մ³ ջուր, որը միանգամայն պիտանի էր խմելու և կենցաղային կարիքների օգտագործման համար, որի պակասը շատ է մեր հանրապետության և մարզի բնակավայրերում: Արդյունահանված կենարար ու անգին ջրային այդ հսկա պաշարները օգտագործվում է 1500-1600 տոննա ձկան արտադրության համար: Եթե երևույթը գնահատենք տնտեսական արդյունավետության տեսանկյունից, ներկա շուկայական գներով, արտադրված ձկան արժեքը կկազմի 1.5-2.0 մլրդ. դրամ, իսկ ջրինը՝ 55-60, այսինքն՝ 30 անգամ պակաս: Այս ամենին գումարվում է նաև այն, որ հորերի հորատումը այս նպատակով իրականացվում է առանց ջրային պաշարների ճիշտ հաշվարկման, որի արդյունքում գնալով նվազում է ինքնաբուխ հորերից ջրի ելքը: Գրիբոյեդով, Պետ. տնկարան, Երասխահուն, Եղեգնուտ բնակավայրերը անցյալ դարում իրենց խմելու ջրի հիմնական աղբյուրը են ծառայեցրել ինքնաբուխ հորերը, ներկայումս այն ձեռք են բերվում այլ ջրաղբյուրներից: Նման վտանգ է սպառնում ևս 8 համայնքների: Ներկա պահին գործող ինքնաբուխ հորատանցքերի 90%-ն արդյունահանում է նախկին հզորության 30-40%-ի չափով և գնալով այն նվազում է:

497. Մտահոգում է նաև այն հանգամանքը, որ չհիմնավորված ձևով ձկնաբուծական նպատակներով օգտագործվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, անգամ վարելահողերը, խաղողի և պտղատու այգիները: Դա այն դեպքում, երբ մարզի

ավելի քան 3.0-3.5 հազ. հա հողատարածքներ (մերձարաքսյան գոտում) ջրածածկ են կամ վերածվել են ճահիճների (նախկինում ավազ արդյունահանված հողակտորներ):

498. Հողերի դեգրադացիայի երևույթը առկա է և այն գնալով մեծ ծավալներ է ընդունում: Գյուղատնտեսական արտադրության մեջ մասնատված փոքր հողակտորների (0.1-1 հա) մշակությունը, ցանքաշրջանառությունների ու պարարտացման համակարգի բացակայությունը, ոռոգման առկա եղանակները ու մեթոդները ոռոգման ջրի մեծ ծախսը (1հա՝ 10-20հազ.մ³) հողերի բերրիության անկման, կառուցվածքի քայքայման և անապատացման նախապայմաններ են ստեղծում:

499. Շրջակա միջավայրի վայրի ֆաունայի և ֆլորայի առանձին տեսակների պահպանությանը մեծ չափով վնաս է հասցրել անօգտագործելի շուրջ 10 հազար հեկտար հողատարածքների վաճառքը մասնավոր անձանց: Չունենալով կանոնավորված հայեցակարգ՝ անօգտագործելի հողատարածքների տնօրինման, կենսաբազմազանության պահպանման տեսանկյունից սեփականացնողի կողմից այդ տարածքների զգալի մասը ներգրավվել է գյուղատնտեսական արտադրության մեջ, կատարվել են հարթեցման, վար ու ցանքի, հողի մշակության աշխատանքներ՝ առանց ուսումնասիրելու այդ տարածքներում առկա բուսական և կենդանական աշխարհը, կարելի է ասել՝ այն ոչնչացվել է: Այդ գործելակերպը շարունակվում է:

500. Դեռևս չեն կանոնակարգվել ՀԱԷԿ-ի և «Զվարթնոց» օդանավակայանի և մարզում գործող տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների ծրագրերի մասին մարզային կառույցների հետ համագործակցման, արդյունքների քննարկման, հասարակական լսումների կազմակերպման և տեղեկատվության տրամադրման համակարգը:

501. Մարզում իրականացվող բնապահպանական բնագավառի բարեփոխումները դեռևս բավարար չեն օգտակար հանածոների և բնական մյուս պաշարների պահպանության և վերատադրության կազմակերպման համար: Գործող օրենսդրությունը և կիրարկման գործուն մեխանիզմները բավարար չեն մշակված, վերահսկողության իրականացման համար հակակոռուպցիոն ռիսկերը հաղթահարված չեն:

502. Մարզային զարգացման միջոցառումներից ամբողջությամբ չեն իրականացվել նաև կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված կառավարման պլանների մշակման, արտադրական և կենցաղային աղբի տեղադրման համակարգի կատարելագործման աշխատանքները: Կենցաղային աղբի հավաքման, տեղափոխման, տեղադրման ու պահպանման խնդիրները խիստ արդիական են նաև այսօր ու անհապաղ լուծում են պահանջում:

503. Անհրաժեշտ է նշել, որ մարզի օդային ավազանի, հողերի և ջրերի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես լավ, սակայն այդ բնագավառներում խորը ու հանգամանալից հետազոտություններ չեն կատարվում, անտառի, ջրային մակերեսների բացակայությունը, հողերի մշակության նոր տեխնոլոգիաների ու ոռոգման համակարգի անմխիթար վիճակը, տանում են շրջակա միջավայրի խաթարմանն ու մարդու կենսապայմանների վատթարացմանը:

504. Արմավիրի մարզում առկա են բնական և պատմամշակութային հուշարձաններ: Մարզում ստեղծված է նպաստավոր միջավայր ու պայմաններ օրգանական գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար, սակայն գործնական քայլեր այդ ուղղությամբ չեն ձեռնարկվում:

505. Մարզի էկոհամակարգերի շահագործման նվազեցման համար անհրաժեշտ է համալիր միջոցառումների ծրագիր, քանի որ հողերի և բնական պաշարների շահագործման վրա հիմնված տնտեսվարման համակարգը հանգեցնում է հողերի դեգրադացիային և բնական պաշարների սպառմանը:

7.2. Բնապահպանության ոլորտի հիմնախնդիրները և ռազմավարությունը

506. Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրները կապված են աղակալված և դեգրադացված հողերի դեմ պայքարի միջոցառումների, հողերի էռոզիայի դեմ պայքարի, կենսաբազմազանության պահպանման, օգտակար հանածոների և ջրային պաշարների, տարբեր տեսակի թափոնների վերամշակման, կենցաղային աղբաթափության կազմակերպման ու պահպանման և բնակչությանը խմելու մաքուր ջրով ապահովելու պլանի արդյունավետ իրականացման հետ, որը կարող է երաշխավորել մարզում բնապահպանական իրավիճակի բարելավման կայուն հիմքերը:

507. Մարզի տարածքը մի միասնական ամբողջության է, բնասոցիալտնտեսական համալիր, որի բաղադրիչներն են՝ բնությունը, տնտեսությունը և բնակչությունը, որոնք պետք է փոխներգործեն: Սոցիալ-տնտեսական զարգացումը մեծապես կախված է բնապաշարային բազայից և շրջակա միջավայրի վիճակից: Բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար ֆինանսական միջոցներ են պետք, որը կարող է տալ զարգացած տնտեսությունը:

508. Վերը նշված նպատակների ու ծրագրերի իրականացման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները.

Հողերի մելիորացիա՝

1) Մարզի զարգացման ծրագրով անհրաժեշտ է շուրջ 5000հա աղուտ-ալկալի հողերի աղազերծում, որի իրագործումն ընթանալու է մի քանի փուլերով.
   ա) տարածքների գույքագրում
   բ) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
   գ) աղազերծման աշխատանքների իրականացում:
2) Մերձարաքսյան ենթագոտու 2000 հեկտար նախկին ավազահանքերի տարածքների վերականգնողական աշխատանքների իրականացում և այդ բազայի վրա ձկնաբուծության զարգացում: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է.
   ա) տարածքների գույքագրում
   բ) հողատարածքների վերականգնման և ձկնաբուծարանների ստեղծման աշխատանքային ծրագրերի մշակում
   գ) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

3)Գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից նախկինում գյուղատնտեսական արտադրության մեջ չընդգրկված տարածքների մշակության տեխնոլոգիաների հետազոտում և ներդրում, այդ նպատակով անհրաժեշտ է.

ա) տարածքների գույքագրում

բ) վայրի ֆաունայի և ֆլորայի ուսումնասիրում

գ) հողերի էռոզիոն պրոցեսները կանխարգելող միջոցառումների մշակում

դ) տարածքների ոռոգման ջրի աղբյուրների հետազոտում և մշակաբույսերի ընտրություն:

4) Հողերի մելիորատիվ վիճակի բարելավման կարևոր ծրագիր է նաև անասնաբուծության բնագավառում արտադրված գոմաղբը՝ որպես կենսավառելիքի ու օրգանական պարարտանյութի օգտագործումը:

509. Մարզում արտադրված գոմաղբի ծավալները հասնում են 350-450 հազ. տոննայի, որը ներկայումս օգտագործվում է անարդյունավետ և անգամ հակասանիտարական վիճակ ստեղծում բնակավայրերում:

510. Առկա տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գոմաղբի ճիշտ կուտակման, պահպանման և վերամշակման միջոցով ստանալ կենսավառելիք՝ գազի տեսքով, որը կարելի է օգտագործել էլեկտրաէներգիայի արտադրության և ջեռուցման նպատակով և բարձրարժեք պարարտանյութ, որի օգտագործումը էապես կբարելավի հողերի ֆիզիոմեխանիկական հատկանիշները և բերրիությունը: Նշված քանակության գոմաղբի օգտագործումը որպես պարարտանյութ, բիոգազի ստացումից հետո համարժեք է մարզի գյուղատնտեսության համար պահանջվող ազոտական պարարտանյութերի 45-50%-ի, կալիումականի՝ 40-45%-ի և ֆոսֆորականի՝ 25-30%-ի բավարարմանը, կամ այն համարժեք է 9-10 հազ. տոննա ֆիզիկական քաշով պարարտանյութի, որն ամբողջությամբ ներ է կրվում արտասահմանից՝ վճարելով 6-7 մլն. ԱՄՆ դոլար: Այս ծրագրի իրականացմամբ հիմք կդրվի մարդու առողջության և շրջակա միջավայրի բարելավման օրգանական մրցունակ գյուղատնտեսական արտադրության զարգացմանը:

511. Ոռոգման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում, ոռոգման համակարգերի կատարելագործում. Ներկայումս մարզում ոռոգման համար օգտագործվում է 200-300մլն.մ^3 ոռոգման ջուր, նշված ջրի քանակի 45-55%-ը կորչում է ջրատարներում՝ մինչև ջրօգտագործողին մատակարարելը, որը տնտեսական մեծ վնասից բացի իրենից լուրջ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի աղտոտվածության և հողերի էռոզիոն պրոցեսների ուժեղացման տեսանկյունից: Միավոր բերքի ստացման համար ներկայումս ծախսվում է նախատեսված նորմայից կրկնակի և եռակի ավել ոռոգման ջուր, որը հանգեցնում է հողերի դեգրադացիայի, ջրային էռոզիայի ուժեղացման, որը կտանի հողերի անապատացման: Առավել լուրջ է վնասը ջրային պաշարների անարդյունավետ օգտագործման, ավելի ճիշտ՝ նրա չարաշահման տեսակետից:

512. Երևույթի կանխման համար անհրաժեշտ է մարզում ներդնել ոռոգման նոր մեթոդներ՝ կաթիլային և անձրևացման եղանակների ներդրում, ստորգետնյա ոռոգման ցանցի անցկացում: Ոռոգման համակարգերի կառավարման նոր պլանների մշակումը հատկապես կարևոր է գերնորմատիվային ոռոգման ջուր օգտագործող համայնքների համար:

513. Բնական պաշարների ռացիոնալ օգտագործում. Արմավիրի մարզի զարգացման ծրագրում հրատապ է դարձել.

1) **բնական պաշարների՝ ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման արդյունավետ, անթափոն օգտագործման, ջրային պաշարների խնայողաբար տնօրինման կառավարման համակարգերի մշակումը,** որը հնարավոր է իրականացնել՝

ա. բնօգտագործման կառավարման համակարգի կատարելագործման, կառավարման տարբեր մակարդակների ֆունկցիաների հստակ սահմանազատմամբ,

բ. բնական պաշարների տնտեսական գնահատման, հաշվառման, բնօգտագործման լիմիտավորման և արտոնագրային համակարգերի զարգացմամբ և բարեփոխմամբ,

գ. բնական պաշարների մոնիտորինգի համակարգի զարգացման և բնական պաշարների օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության կատարելագործմամբ,

դ. բնական պաշարների պահպանության, վերարտադրության և ռացիոնալ օգտագործման բնագավառներում նոր մեթոդների և տեխնոլոգիաների զարգացման և թափոնների ուտիլացման աստիճանի բարձրացմամբ,

ե. հարկային համակարգի բարեփոխումների իրականացմամբ (հանածոների արժեքի ճիշտ գնահատման և վաճառքի իրական գների հաշվառման սկզբունքով),

զ. տուֆ և բազալտ քարերի արդյունահանման ժամանակ թափոնների վերամշակման ծրագրերի մշակմամբ,

է. ստորգետնյա քաղցրահամ ջրերի ձկնաբուծության մեջ օգտագործելու արգելման մեխանիզմների մշակմամբ,

ը. ձկնաբուծության նպատակով հորատված հորերի արդյունահանված ջրերի կրկնակի օգտագործման մեթոդների և մեխանիզմների մշակմամբ,

թ. ոռոգման նոր մեթոդների՝ ստորգետնյա ոռոգման ցանցի անցկացման, կաթիլային և անձրևացման եղանակների ներդրման մեխանիզմների մշակմամբ,

ժ. ոռոգման համակարգերի վերականգնման, հոսակորուստների նվազեցման մեխանիզմների մշակմամբ.

2) **ջրային ռեսուրսների պաշարների կառավարումն ու օգտագործումը՝ Արարատյան դաշտի ջրավազանային կառավարման պլանի պահանջներին համապատասխան:**

514. Կենցաղային և արտադրական թափոնների կառավարման բարելավում. Մարզի համար հրատապ հիմնախնդիր է կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղափոխման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը, որը բացասական ազդեցություն է թողնում բնակավայրի էկոլոգիական վիճակի, շրջակա միջավայրի աղտոտվածության և մարզի ռեկրեացիոն գոտու հեռանկարի վրա:

515. Համակարգը պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի բնագավառներում՝ քաղաքների և խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, աղբավայրերի ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման տեխնիկական միջոցների տրամադրում, ՏԻՄ-երին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում՝ աղբահանման գործընթացը կազմակերպելու համար:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը բնակավայրերի և մարզի ամբողջ վարչատարածքի սանիտարական վիճակի նկատմամբ:

516. Մարզի քաղաքների և գյուղական համայնքի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը հղի է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են: Անհրաժեշտ է ուսումնասիրել կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Ուսումնասիրել ու քարոզել Փարաքար համայնքում ներդրված կեղտաջրերի մաքրման համար կառուցված նոր համակարգը:

517. Կենսաբազմազանության և կենսառեսուրսների պահպանման կառավարման կատարելագործում. Բավականին հրատապ է դարձել «Որդան կարմիր» պետական արգելավայրի որպես բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման նպատակային ծրագրի մշակումը, որը ներառում է.

1) առանձնացված տարածքներում մոնիտորինգի իրականացում
2) տարածքի ցանկապատի վերականգնում
3) «Որդան կարմիր» միջատի, որդանախոտի, ինչպես նաև էկոհամակարգերի այլ կենդանական և բուսական տարրերի էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրության իրականացում
4) արգելավայրի վարման կանոններին համապատասխան զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպում
5) տարածքին հարակից բնակավայրերում արգելավայրի նշանակության և նրա պահպանության ու դերի վերաբերյալ բացատրական և լուսաբանման միջոցառումների իրականացում
6) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների փոխհամագործակցված աշխատանքների իրականացում
7) «Որդան կարմիր» արգելավայրի հարակից համայնքների ղեկավարների և բնակչության իրազեկում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների վերաբերյալ:

518. Շահագրգիռ կողմերի համագործակցության խթանում բնապահպանական ծրագրերի իրականացման համար. Արդիական պահանջ է բնապահպանական հիմնախնդիրների լուծումն իրականացնել համաֆինանսավորման սկզբունքով՝ պետական, համայնքային և մասնավոր ներդրումների ներգրավման միջոցով: Այդ սկզբունքով կարող են իրականացվել անտառապատման, ձկնաբուծության, օգտակար ֆաունայի և ֆլորայի տարածման, բազմացման, հավաքման և վերամշակմանն ուղղված զարգացման ծրագրերը: Նման ծրագրերը կնպաստեն նոր աշխատատեղերի ստեղծմանը և շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը:

519. Հաշվի առնելով տարերային աղետների հետևանքով՝ կարկտահարություն, ուժեղ քամիներ, հեղեղումներ, մարզի գյուղատնտեսական արտադրության և բնակավայրին հասցված վնասները, անհրաժեշտ է մշակել և ապահովել հուսալի կանխատեսումների և նախազգուշացումների ծառայությունների գործուն համակարգ, հակակարկտային

համակարգի ներդրում, դաշտապաշտպան անտառաշերտի հիմնում: Ջրհեղեղների հետևանքով հասցվող վնասների նվազեցման համար պետք է ուսումնասիրվեն առավել խոցելի տարածքները, մշակվեն մարզային և համայնքային միջոցառումների պլաններ:

520. Տարերային աղետների, ուշ գարնանային ու վաղ աշնանային ցրտահարությունների, ուժեղ քամիների ու կարկտահարության հետևանքով ցանքատարածություններին հասցված վնասների մեղմացման համար միջազգային առաջավոր փորձի հետազոտում՝ ցանքատարածությունների ցանցապատման, ջրային ցողի ստեղծման և ջերմոցա-ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդարձակման եղանակների ու մեթոդների կիրառման նպատակով:

521. Առաջնային լուծման հարց է դարձել խմելու ջրի մատակարարման և որակի բարելավումը: Այս ոլորտում կատարվող ներդրումային ծրագրերը շահագրգիռ կողմերի համատեղ քննարկման և կարգավորման պահանջ ունեն: Կատարված և կատարվելիք ներդրումների նպատակային նշանակության ծառայելու վերահսկողության մեխանիզմների և կառավարման համակարգը պետք է կատարելագործել՝ դարձնելով հասարակության համար թափանցիկ և մատչելի:

522. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի շրջանակներում Մեծամոր քաղաքային համայնքին ՀՀ 2011-2012թթ. պետական բյուջեներով ընդամենը հատկացվել է 7.3 մլն. դրամ, իսկ ՀՀ 2013թ, պետական բյուջեով գումար չի նախատեսվել:

523. ՀԱԷԿ-ի և «Զվարթնոց» օդանավակայանի գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող Զարթոնք, Տարոնիկ և Արևաշատ համայնքները ընդգրկված չեն ծրագրերում և էապես տուժում են հիշյալ ձեռնարկությունների գործունեությունից, ուստի, առաջարկվում է նշված համայնքների համար ևս նախատեսել գումարներ՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն «Բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի շրջանակներում:

524. ՀՀ Արմավիրի մարզի Զարթոնք համայնքում գտնվող 600-700հա նախկին ճահճային տարածքները ստորգետնյա ջրերի և ինքնաբուխ աղբյուրների ցամաքեցման հետևանքով դարձել են կիսաքայքայված օրգանական նյութեր (գրեթե՝ տորֆ), ուստի, նպատակահարմար է այդ տարածքներում իրականացնել մի շարք միջոցառումներ՝ հրդեհաշրջման, ջրցանման, հողաշինարարական, խախտված հողերի վերականգնման, տորֆանման զանգվածի հնարավորինս հանման և օգտագործման եղանակով:

525. ՀՀ Արմավրիի մարզի բնապահպանության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 137,116.8 հազ.դրամ (տես՝ հավելված7):

7.3. Բնապահպանության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ 2015-2018թթ.	Նախադրյալներ
Բարելավել բնապահպանական իրավիճակը Արմավիրի մարզում	Ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման համակարգը բարելավման ընթացքի մեջ է: Գետերի հունի մաքրման և ափապաշտպան պատնեշների ինժեներա-տեխնիկական աշխատանքներն իրականացվում են մշակված ծրագրերին համահունչ:		Ֆինանսական՝ հողերի վերականգնողական աշխատանքների համար հատկացվող գումարները բավարար չեն և չեն ծառայում իրենց նպատակին, քաղաքական՝ ապօրինի հողհատկացումների և օգտակար հանածոների արդյունահանման համար բավարար քաղաքական կամք չի դրսևորվում
Արդյունք 1 Մարզային կառույցների՝ ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների գործունեության կազմակերպման համար ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում **Միջոցառումներ** * ստորգետնյա ջրերի օգտագործման գործընթացին մարզպետարանի մասնակցության և հասարակության համար թափանցիկության ապահովում, * ապահովել համայնքների տարածքներում իրականացվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լսումներ, * մարզի բնապահպանական հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների կարողությունների զարգացում կենսաբազմազանություն, մոնիտորինգի կազմակերպման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար	«Որդան կարմիր» արգելավայրի կանոնադրությունը հաստատվել է, մարզում կան 50 ՀԿ-ներ, 2 հեռուստաընկերություններ, «Հայրենականչ» և «Հայ ֆերմեր» թերթեր, 55 համայնքներում Կազմակերպվել են քննարկումներ կենսաբազմազանության ներկա վիճակի ուղղությամբ, տպագրվել է մեկ հոդված և տրվել 3 հեռուստահաղորդում՝մարզի բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ: Մարզպետարանի մասնագետները ընդգրկված են միջգերտեսչական հանձնաժողովի կազմում և ակտիվ մասնակցություն ունենում հարցի ուսումնասիրման գործում Բոլոր համայնքներին տեղեկացվել է, ցանկացած նախագծի իրականացումից առաջ այն դնել հասարակական քննարկման Մարզում գործող բնապահապանական հասարակական կազմակերպությունների և մարզային լրատվամիջոցների ուժերը մարզպետարանը մոբիլիզացնում է կենսաբազմազանության առկա վիճակի պարզաբանմանն ու նրանց պահապանության ու տարածման կազմակերպմանը		Ռիսկեր Հակասություններ «Որդան կարմիր» պետական արգելավայր 4 համայնքների միջև, շահերի բախումներ, Արգելավայրի գործունեության կազմակերպման չհիմնավորված ձգձգում, գործունեության թափանցիկության բացակայություն, թույլ տեղեկատվություն: Մեղմում «Որդան կարմիր» պետական արգելավայրի կանոնադրությամբ սահմանվել է նաև պահպանության գոտու ռեժիմը և դրա ապահովման նկատմամբ պետական վերահսկողության իրականացում: Համայնքների շահագրգիռ կողմերի ու պետական արգելավայրի համատեղ արդյունավետ գործունեության կազմակերպմանը: Մարզի ՀԿ-ները և լրատվամիջոցները պատրաստակամ են հարցի կարևորության լուսաբանման գործընթացի կազմակերպմանը:
Արդյունք 2. Հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության արդյունավետության բարձրացում **Միջոցառումներ**	Հողերի դեգրադացիայի, հեղեղումների հետևանքով ջրածածկման և հողատարման կանխարգելման համար պետական		Ռիսկեր՝ * Ստորգետնյա ջրերի հեռացման համար փակ ցանցի վերակառուցման համար աղուտ-ալկալի հողերի մելիորացիայի

* Գետերի հունի մաքրում, ափապատնեշների կառուցում * Հողերի մելիորացիա * Փակ ջրահեռացման ցանցի վերակառուցում, վերանորոգում, բաց ցանցի մաքրման աշխատանքների շարունակում	բյուջեից հատկացված միջոցներով իրականացվում է գետերի հունի մաքրման և ափապատանեշի ամրացման աշխատանքներ * Արաքս գետի ափապատնեշի ամրացումներ են կատարվել Երվանդաշատ, Բագարան, Ջանֆիդա, Մարգարա, Արազափ, Արաքս, Ջրառատ, Գետաշեն համայնքներում * Մրգաստան, Դողս, Ամբերդ, Ծիածան, Խորոնք, Ակնաշեն, Լուսագյուղ և Արաքս համայնքների վարչատարածքներում Քասախ և Մեծամոր գետերի հունի մաքրման և ափապատնեշի ամրացման համար կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ՝ համայնքների ներդրումների հաշվին: 2012-2013 թվականների ընթացքում այդ նպատակով պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 201.2 և 191.6 մլն. դրամ: «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվում, քարտեզագրվում է հողատարածքների պարարտացման արդյունավետ համակարգ: *Մաքրվել և վերանորոգվել է համայնքների վարչական տարածքներով անցնող ստորերկրյա ջրերի հեռացման բաց ցանցը: 2012 թվականին մաքրվել է 70.9 մլն. դրամի, իսկ 2013 թվականին՝ 62.5 մլն. դրամի աշխատանքներ:		համար պահանջվող հետազոտությունների բացակայություն, այդ նպատակով համայնքային ֆինանսական միջոցների բացակայություն, * Համայնքների կողմից հողերի մելիորատիվ վիճակի բարելավ,ման ծրագրերի մշակման և արդյունավետ պարարտացման համակարգի մշակման և քարտեզագրման համար շահագրգռվածություն չի ցուցաբերվում
Արդյունք 3 Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգերի կատարելագործում **Միջոցառումներ** * Քաղաքների և խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման ծրագրերի մշակում * Միջհամայնքային աղբավայրերի նախագծում, ՏԻՄ-երի աջակցություն, աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար * Կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայանների ստեղծում	2014թ. համար նախատեսված է 61կմ երկարության ջրահեռացման բաց ցանցի մաքրման աշխատանքների իրականացնում, եթե դրա անհրաժեշտությունը զգացվի: Մարզում թափոնների կառավարման համար պայմաններ ապահովված են Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ Մարզի քաղաքներում մշակված են աղբավայրերի կառավարման պլաններ, ցանկապատված գործող աղբավայրեր՝ Էջմիածին, Մեծամոր, Արմավիր, միջհամայնքային աղբավայրերի մշակված նախագծեր : 35 համայնքներ ունեն աղբահեռացման պայմանագրեր՝		Ռիսկեր՝ Ֆինանսական միջոցների բացակայություն.ՏԻՄ-երը չեն կարևորում խնդիրը Մեղմում՝ Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարության գերկայությունների շարքում է, աղբավայրերի վերակառուցման, կառուցման խնդիրները նախատեսված է գլխավոր հատակագծերում

	մասնագիտացված կազմակերպությունների հետ, որոնք իրականացնում են աղբի հավաքման, հեռացման ու տեղակայման աշխատանքներ:		
Արդյունք 4 Բնապահպանական հիմնախնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում **Միջոցառումներ** -բնապահպանական ծրագրերի իրականացման համար հասարակական կազմակերպությունների աջակցության տրամադրում	Իրականացված ծրագրերի վերաբերյալ նյութերը տեղադրվում են մարզպետարանի կայք-էջում, հրատարակվում են հոդվածներ, հեռարձակվում հեռուստահաղորդումներ		Ռիսկեր՝ ֆինանսական միջոցների բացակայություն

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

8.1. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

526. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, ինչպես նաև մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը:

527. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը:

528. Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2013 թվականի հունվար-մարտ ամիսներին հանրապետություն է ժամանել 128237 զբոսաշրջիկ, 2012 թվականի նույն ժամանակաշրջանում՝ 104374 զբոսաշրջիկ, ցուցանիշն աճել է 22.9%-ով: Նույն ժամանակահատվածում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 137128 մարդ, 2012 թվականի նույն ժամանակաշրջանում 120050 զբոսաշրջիկ, ցուցանիշն աճել է 14.2%-ով:

529. Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են համաշխարհային շուկայում

Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը: Հայաստանում մոտ 20 հազար մարդ ուղղակիորեն աշխատում է զբոսաշրջության ոլորտում (ընդհանուր աշխատուժի 1.7%-ը): Ներկայումս զբոսաշրջությունն ապահովում է Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 4.7%-ը: Արմավիրի մարզում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի Հանրապետության զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

530. Արմավիրի զբոսաշրջային ներուժի նկարագրությունը. Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացվում է հարուստ պատմամշակութային արժեքներով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այղր լիճը, հին հեթանոսական կենտրոն Բագարանը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է: Այստեղ է գտնվում հայ ժողովրդի ու նրա հավատի հավերժության խորհրդանիշ Մայր Տաճարը, որը հիմնվել է Հիսուս Քրիստոսի Իջմամբ և կառուցվել Սբ. Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Գ թագավորի կողմից: Այն աշխարհասփյուռ հայության սրբազան ուխտատեղին է, ուր յուրաքանչյուր հավատացյալ հայորդի անպարփակ սիրով ու աղոթքով է ոտք դնում:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը մեր անցյալի, ներկայի և ապագայի համադրությունն է: Էջմիածինը, ի սկզբանե և դարեր շարունակ, եղել է նաև մշակույթի ու դպրության կենտրոն: Այստեղ է, որ Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթև Կաթողիկոսի գործակցությամբ թարգմանել է Սուրբ Գիրքը հայերեն դասական լեզվով հունարեն բնագրից: Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության 40 տարիներին (1955-1995թթ.) Սբ.Էջմիածնի վանքի շրջակայքում բարձրացել են նոր կառույցներ՝ վանքի գլխավոր մուտքն ու պարիսպները, տպարանի շենքը, ժամացույցի աշտարակը, Վանատուն-հյուրանոցը և «Ալեք-Մարի Մանուկյան» թանգարանը: Վերջին տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվել են մեծաթիվ բարեգործական ծրագրեր, որոնք ավելի գրավիչ են դարձրել հայոց հոգևոր աթոռանիստը:

Գանձատուն-թանգարանը անվանվել է ի պատիվ ամերիկահայ բարերարներ Ալեք և Մարի Մանուկյանների: Այս գեղեցիկ և արժեքավոր շենքը կառուցվել է նրանց նվիրատվության շնորհիվ: Երկհարկանի կառույցում են գտնվում ոչ միայն հայ եկեղեցու թանգարանային նմուշները, այլ նաեւ Գարեգին Ի-ին կաթողիկոսի գրադարանը:

Գանձատան ամենաարժեքավոր ցուցանմուշներից են ձեռագիր արձանագրությունները և ձեռագրերը՝ իրենց յուրօրինակ մանրանկարներով, և նուրբ ասեղնագործված սկիհի ծածկոցները: Այստեղ է պահվում նաև Սուրբ Աստվածածնի պատկերով նկարների հավաքածուն, որը ժամանակի ընթացքում կերտվել է պատմական Հայաստանի տարբեր շրջաններում:

Մայր տաճարին հարող տարածքում են գտնվում սբ.Հռիփսիմե, սբ.Գայանե, սբ.Շողակաթ եկեղեցիները և Զվարթնոց տաճարը, որոնք հայ եկեղեցաշինության գոհարներից են և շատ տպավորիչ են և հետաքրքիր բոլոր այցելուների համար:

Զվարթնոց տաճար. Երևան-Էջմիածին ավտոմայրուղու ձախ կողմում՝ Էջմիածին քաղաքից 3կմ հեռավորության վրա կա մի կոթող-ուղեցույց, որը ցույց է տալիս դեպի տաճարը տանող ուղին: Այն ստեղծել են տաղանդավոր արվեստագետներ Երվանդ Քոչարն ու Ռաֆայել Իսրայելյանը: Զվարթնոց բառը նշանակում է հրեշտականոց:

Զվարթնոց տաճարը և նրան կից կաթողիկոսական պալատը կառուցվել է 641-661թթ. հայոց Ներսես Գ Շինող կաթողիկոսի կողմից և միաժամանակ կոչվել է Սուրբ Գրիգոր տաճար: Այստեղ է ամփոփված հայոց եկեղեցու առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորիչի մասունքը: Տաճարն ավերվել է 10-րդ դարի վերջերին՝ երկրաշարժից: Այստեղ է Տրդատ թագավորը դիմավորել Գրիգոր Լուսավորիչին, այստեղ է 405 թվականին Վռամ Շապուհ թագավորը դիմավորել հայոց այբուբենը մայրաքաղաք բերող Մեսրոպ Մաշտոցին:

Սարդարապատի հուշահամալիր. Ճարտարապետ Ռ.Իսրայելյանի նախագծած հուշահամալիրը նվիրված է 1918թ. մայիսի 22-28-ին Սարդարապատում թուրք զավթիչների դեմ մղված պատմական ճակատամարտին: Ճիշտ ճակատամարտի տեղում է կառուցվել հուշահամալիրը, բացումը կայացել է հերոսամարտի հիսնամյա տարեդարձի օրը:

Կառուցված լինելով Արարատի դիմաց, Արաքս գետից ոչ հեռու, զբոսայգի-համալիրն ունի գունագեղ և արտահայտիչ ճարտարապետություն: Նրա աջ և ձախ կողմերում կանգնած են կարմիր տուֆից կերտված հսկայական թևավոր ցուլերը, որոնք խորհրդանշում են ժողովրդի արյամբ ձեռք բերված հաղթանակը:

Կարմրանարնջագույն տուֆից կերտված զանգակատունը մարմնավորում է այն պատմական տագնապալի ահազանգը, որը կոչեց ժողովրդին հանուն հայրենիքի պաշտպանության: Այժմ զանգերը ղողանջում են ամեն տարի, հաղթանակի օրը՝ ի պատիվ Սարդարապատի ճակատամարտի հերոսների սխրանքի: Հուշարձանի արևելյան կողմում կառուցված է թանգարանի մոնումենտալ շենքը, որն իր ճարտարապետական կերպարով հիշեցնում է հին Հայաստանի անառիկ բերդերը: 1978 թվականից սկսել է գործել Հայաստանի ազգագրական պետական թանգարանը: Սարդարապատի հուշահամալիրը հայ ժողովրդի պատմության և մշակույթի մի բաց թանգարան է, որն իր գիրկն է հրավիրում աշխարհասփյուռ հայությանը և Հայաստան այցելող յուրաքանչյուր օտարերկրացու:

Մուսա լեռան հերոսամարտը հավերժացնող հուշակոթող-հուշահամալիր. 1946-1947թթ. Մուսա լեռան հայության մի ստվար զանգված վերջնականապես հանգրվանում է Հայաստանում: Էջմիածնի շրջանի Գինևետ ավանը 1972թ. վերանվանվել է Մուսալեռ, իսկ 1976թ. սեպտեմբերի 16-ին ավանի մոտ, բարձր բլրի վրա տեղի է ունեցել հերոսամարտին նվիրված հուշակոթողի բացումը, որը կառուցվել է հայրենիքի ու սփյուռքի մուսալեռցիների նյութական միջոցներով և անմիջական մասնակցությամբ:

Անառիկ ամրոց հիշեցնող այս կոթողի հեղինակները՝ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն ու նկարիչ - քանդակագործ Արա Հարությունյանը, ստեղծել են

մուսալեռցիների հերոսական անվանն արժանի գործ: Ամեն տարի՝ սեպտեմբերի երկրորդ կեսին, երախտապարտ սերունդները հավաքվում են այստեղ՝ ավանդական հարիսայով, զուռնա-դհոլով, մարտական շուրջպարով ու ազգային արժանապատվության զգացումով նշելու հերոսամարտի տարելիցը և հարգելու քաջի մահով ընկած հերոսների հիշատակը:

Ակնալիճ (Այղր լիճ). Երևան-Արմավիր խճուղու ձախ մասում, Ակնալիճ և Տարոնիկ գյուղերի միջև գտնվում է Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Ակնալիճը (Այղր լիճը)՝ պատմական Մեծամորը:

Սա մի գողտրիկ, մոտ 10 մետր խորությամբ, ձագարաձև հատակով, 7հա տարածք զբաղեցնող լճակ է, որը զարդարում է Արարատյան դաշտի այս հատվածը: Ակնալճի շրջակայքում կան նախնադարյան բերդաշեների մնացորդներ և դամբարանադաշտեր, այս հանգամանքը հիմնավորում է, որ այս տարածքում, ինչպես նաև մոտակա բնակատեղում բնակությունը եղել է հնագույն ժամանակներից: Անհրաժեշտ հոգածության և ներդրումների առկայության դեպքում լիճը՝ իր շրջակայքով և հանգստյան տներով կարող է դառնալ զբոսաշրջության կարևորագույն վայր:

531. Մարզի զբոսաշրջության զարգացմանը մեծապես նպաստում է եկեղեցիների կառուցումը: Ծնունդով արմավիրցի, արտերկրում բնակվող բարերարների միջոցներով, վերջին տարիներին մարզի մի շարք համայնքներում կառուցվել են եկեղեցիներ.

1)Շահումյան համայնքի Սբ.Թուխ Մանուկ մատուռ
2)Բերքաշատ համայնքի եկեղեցի
3)Աղավնատուն համայնքի Սբ.Աննա եկեղեցի
4)Ջանֆիդա համայնքի Սբ.Կարապետ եկեղեցի
5)Արմավիր քաղաքի Սբ. Գրիգոր Նարեկացի,
6)ընթացքի մեջ են Դալարիկ համայնքի եկեղեցու կառուցման աշխատանքները:

532. Զբոսաշրջության տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում նաև ավանդաբար փոխանցվող կրոնաեկեղեցական և ժողովրդական տոները, որոնք մարզում կազմակերպվում և անցկացվում են մեծ շուքով և ոգևորությամբ, դրանցից են եկեղեցու հինգ տաղավար տոները՝ Սուրբ ծնունդ, Սուրբ Զատիկ , Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոն կամ Վարդավառ, Սուրբ Աստվածածնի վերափոխման տոն կամ Խաղողօրհնեք, Խաչվերաց տոն, ինչպես նաև մի շարք ժողովրդական տոներ՝ Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Ծաղկազարդ կամ մանուկների օրհնության օր, Բերքի տոն և այլն:

533. Ավանդույթի է վերածվել վերջին տարիներին Սարդարապատի հուշահամալիրում տեղի ունեցող Տոլմայի համահայկական փառատոնը, որի նպատակն է հայ ավանդական կերակրատեսակի ժողովրդավարացումը և այդպիսով հայոց ոչ նյութական արժեքներից մեկը համարվող հայկական խոհանոցի ամրագրումը: Փառատոնի նախաձեռնողն է Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպությունը, իսկ անմիջական աջակիցը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանը: Տեղի ունենալով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում՝ Տոլմայի

փառատոնն իր շուրջն է համախմբում տարբեր երկրներից Հայաստան ժամանած անվանի մարդկանց և մեծ թվով այցելուների՝ հնարավորություն ընձեռելով հայկական ավանդական կերակրատեսակ հանդիսացող տոլման համտեսել ոչ ավանդական միջավայրում: Փառատոնը մրցութային է և մրցույթի շրջանակներում ներկայացվում են հետևյալ անվանակարգերը՝ «լավագույն համ», «լավագույն տեսք», «լավագույն մտահղացում», «լավագույն սկսնակ խոհարար» և «հանդիսատեսի համակրանք»:

534. Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը հետաքրքիր առավելություն է ներկայացնում գյուղական տուրիզմի զարգացման համար: Էկոլոգիապես մաքուր և համային բարձր արժեքներով օժտված գյուղատնտեսական մթերքներն առանձնակի նշանակություն ունեն տուրիզմի տեսանկյունից, որը կարող է դառնալ տուրիստների սպասարկման կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը:

535. Զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է հուշանվերների շուկայի առկայությունը և զարգացումը: Մարզում կան շնորհալի վարպետներ, որոնք այսօրվա դրությամբ կատարում են սակավաթիվ պատվերներ և իրենց արտադրանքը իրացնում են մայրաքաղաքում և հանրապետության սահմաններից դուրս: Պահանջարկի առկայության դեպքում հուշանվերների շուկան մարզում կարող է զարգանալ:

536. Մարզում առկա բնական տեսարժան վայրերը և պատմամշակութային հուշարձանների առկայությունը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու տուրիզմի հետևյալ ձևերը՝

1) էկոտուրիզմ
2) գիտական տուրիզմ
3) բնական տուրիզմ
4) պատմամշակութային
5) գյուղատնտեսական:

537. Մարզում զբոսաշրջության զարգացման խոչընդոտներն են՝

1) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը
2) գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը
3) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը
4) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը:
5) հստակ վիճակագրական տվյալների բազայի բացակայությունը,
6) ֆինանսական միջոցների սղության պատճառով պատմամշակութային հուշարձանների և այլ գրավչությունների ոչ պատշաճ պահպանությունը
7) միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական և որակական վիճակների անբավարար լինելը
8) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի սակավությունը:

538. Մարզում տուրիզմը թերևս թույլ է զարգացած, պատճառը տուրիզմի հիմնական ենթակառուցվածքների բացակայությունն է և մարզի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրությունը: Անհրաժեշտ է իրականացնել մարզի զբոսաշրջության վարկանիշը

բարձրացնելուն ուղղված միջոցառումներ՝ ստեղծել մարզը ներկայացնող եռալեզու բուկլետ, մշակել մարզի տուրիստական պոտենցիալը ներկայացնող տուր-փաթեթներ և դրանք առաջադրել տուրիստական միջազգային կազմակերպություններին:

539. Տուրիզմի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ինչպես համապատասխան տարածքներում հյուրանոցային հարմարությունների և հյուրընկալական տների սակավությունը, կենցաղային ոչ բավարար պայմաններով, այնպես էլ ճանապարհների անբարեկարգ վիճակն ու տրանսպորտի բացակայությունը:

540. Մարզում չկան տուրիզմի հիմնական ենթակառուցվածքներ՝ տուր-օպերատորներ և տուր-գործակալություններ:

8.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

541. Արմավիրի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

1)Արմավիրի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի, ուստի, և մարզը հետաքրքրություն կառաջացնի միջազգային կազմակերպությունների կողմից մարզում ներդրումներ իրականացնելու առումով, որն իր անմիջական դրական ներգործությունը կունենա մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

542. Հաշվի առնելով մարզի զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրները, նախատեսվում է Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Ստեղծել այցելուների կենտրոն, որը այցելուներին կտրամադրի տեղեկություններ Արմավիրի մարզի տուրիստական հնարավորությունների վերաբերյալ, կհամագործակցի Հայաստանի և արտերկրի տուր-օպերատորների հետ
2) Ստեղծել գինու, կոնյակի համտեսի դահլիճ «ՄԱՊ» ՓԲԸ-ում
3) Ստեղծել Արմավիր քաղաքում բրուտագործության կենտրոն
4) Վերականգնել զբոսաշրջային տեսանկյունից մեծ հետաքրքրություն ներկայացնող սահմանամերձ Բագարան համայնքի Շուշանիկ եկեղեցին
5) Կառուցել ռեստորանա-հյուրանոցային համալիրներ, քոթեջներ
6) Առանձնացնել հենակետային տուրիստական կենտրոնները և դրանց շուրջ ստեղծել ենթակառուցվածքներ՝ ավտոկանգառներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ
7) Ընդլայնել ամենամյա կազմակերպվող տոնակատարությունները
8) Կազմակերպել հեծանվավազքի միջոցառումներ

9) Կազմել և հրատարակել քարտեզներ՝ ըստ թեմատիկ երթուղիների

10) Ստեղծել Արմավիրի մարզի տուրիստական ինտերնետային կայք

11) Կազմակերպել մարզի գովազդը արտաքին և ներքին տուրիստական շուկաներում:

12) Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում բարձրացնել Արմավիրի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար:

543. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ծրագրով 2013 թվականին հրատարակվել է Արմավիրի մարզի տուրիստական տեղեկագիրը (անգլերեն լեզվով) և քարտեզը, ըստ որի մարզի երթուղին ունի ութաձև տեսք՝ 8 երթուղիներով: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են նաև սեմինարներ մարզում գործող հյուրատների, սննդի օբյեկտների ներկայացուցիչների, մասնավոր անհատների մասնակցությամբ:

544. ՀՀ Արմավիրի մարզպետը շարունակվել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով, այդ թվում՝ Սլովակիայի Հանրապետության Տռնավայի երկրամասի, Բելառուսիայի Հանրապետության Գոմելի մարզի, Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան և Արևմտյան Ատրպատականի նահանգների, Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի, Սվերդլովսկի, Յարոսլավլի մարզերի հետ ինչպես նոր տնտեսական կապեր հաստատելու և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու, այնպես էլ մարզում տուրիզմը զարգացնելու նպատակով:

545. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի «Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման 2014 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 394-Ա որոշման հավելվածի 2.5 ենթակետի համաձայն՝ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի համագործակցությամբ աշխատանքներ են իրականացվում Հայաստանի զբոսաշրջային նոր կայք (www.armenia.travel) ստեղծելու ուղղությամբ:

546. ՀՀ Արմավիրի մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 829,600.0 հազ.դրամ (տես՝ հավելված 8):

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

9.1. Քաղաքաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն

547. Արմավիրի մարզի քաղաքաշինության ոլորտում որպես մարդկային աղքատություն նվազեցման կարևորագույն գործոն զարգացման գերակա նպատակը հանդիսանում է բնակչության կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը:

548. 2011-2013թթ. Արմավիրի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցներով իրականացվել են մի շարք քաղաքաշինական ծրագրեր, մասնավորապես.

1) ՀՀ կառավարության 03.02.2011թ. N 108-Ն որոշմամբ (առաջին հրատապ ծրագիր) իրականացվել են Արմավիր, Մեծամոր, Վաղարշապատ քաղաքների բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և նախագծահետազոտական աշխատանքներ:

2) ՀՀ կառավարության 29.09.2011թ. N1436-Ն որոշմամբ (2-րդ հրատապ ծրագիր) իրականացվել են 3 քաղաքների բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, ք.Արմավիրի բազմաբնակարան բնակելի շենքերի ծխաօդատար համակարգերի վերանորոգման և նախագծահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև Ոսկեհատ համայնքի Մաշտոցի թաղամասի N 31 բազմաբնակարան շենքի ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով բնակարանների (բնակելի տների) ձեռքբերում, որի արդյունքում լուծվել է 15 ընտանիքների բնակարանային խնդիրը):

3) ՀՀ կառավարության 24.05.2012թ. N711-Ն որոշմամբ (3-րդ հրատապ ծրագիր) իրականացվել են Մեծամոր համայնքի բազմաբնակարան շենքերի տանինքների, վերելակների վերանորոգման, Վաղարշապատ, Փարաքար, Մյասնիկյան համայնքների բազմաբնակարան շենքերի տանինքների վերանորոգման և նախագծահետազոտական աշխատանքներ:

4) ՀՀ կառավարության 12.04.2012թ. N501-Ն որոշմամբ Արմավիր քաղաքի պահածոների գործարանի վարչական շենքը վերակառուցվել է բնակելի շենքի:

ՀՀ կառավարության 07.02.2013թ. թիվ 130-Ն որոշմամբ (4-րդ հրատապ ծրագիր) իրականացվել են մարզպետարանի վարչական շենքի, Վաղարշապատ, Արմավիր և Մեծամոր քաղաքային համայնքների բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման, ինչպես նաև Վաղարշապատ համայնքի Կամոյի թիվ 7 տան բնակիչ Զաքար և Ռուզաննա Պողոսի Միրզոյանների ընտանիքներին բնակարանային ապահովման պետական աջակցության տրամադրման աշխատանքներ:

549. Հիմնախնդիրներ. Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

550. Կրթական, մշակութային և մարզական օբյեկտեների հիմնանորոգումների համար նախատեսված միջոցները ներկայացված են համապատասխան ոլորտների հատվածներում:

551. Մարզի գերակա խնդիրներից մեկը մնում է փախստականների և զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների (զինծառայողների) բնակարանային ապահովության խնդիրը, որի ուղղությամբ Արմավիրի մարզում որևէ ծրագիր չի իրականացվել: Նշված ծրագրերի իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

552. Բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացման նախադրյալների ստեղծման տեսանկյունից հատկապես կարևորվում է տեղական մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի, այն է՝ հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի կազմման անհրաժեշտությունը: Վերջիններիս առկայությունը մեծապես կնպաստի տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացմանը, քանի որ կառավարման ապակենտրոնացման պայմաններում կառուցապատմանն առնչվող գրեթե բոլոր թույլտվական գործառույթները վերապահված են համայնքների ղեկավարներին: Նոր գլխավոր հատակագծեր ունեն Արմավիր, Էջմիածին, Մեծամոր քաղաքային և Փարաքար, Մերձավան գյուղական համայնքները:

553. Հաշվի առնելով սեյսմակայուն շինարարությանը ներկայացվող արդի պահանջները և այն հանգամանքը, որ վերջին տարիներին մարզում բազմաբնակարան բնակելի շենքերի շահագործման ընթացքում գրեթե չեն իրականացվել հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում զգալիորեն աճել է շենքերի ֆիզիկական մաշվածությունը: Կարևորվում է բնակության համար վտանգավոր համարվող շենքերի նկատմամբ համակարգված մոտեցումների ձևավորումը և համապատասխան միջոցառումների իրականացումը:

554. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն, պահանջում է լուրջ պետական միջամտություն և վերահսկողություն, քանի որ նշված շենքերի հետագա տևական շահագործումն առանց ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման կբերի կոնստրուկտիվ տարրերում վնասվածքների և դեֆորմացիաների հետագա զարգացման, նորերի առաջացման, շենքերի սեյսմակայունության կտրուկ նվազման և այդ առումով հետագայում վերակառուցման աշխատանքների իրականացման համար ֆինանսական զգալի միջոցների լրացուցիչ պահանջի, վթարայնությամբ պայմանավորված դրանց քանդման անհրաժեշտության, ինչպես նաև հնարավոր անկանխատեսելի հետևանքների:

Աղյուսակ 9.1. Արմավիրի մարզի բնակավայրերում առկա քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող և հրդեհված բազմաբնակարան շենքեր՝ 2013 թվականի հունիսի 1-ի դրությամբ

N	Համայնքը	Գտնվելու վայրը	Կառուցման տարեթիվը	Հարկայնու-թյունը	Ընդհանուր մակերեսը, քառ.մ	Բնակարանների քանակը
1	**ք.Արմավիր**	**Շահումյան փող. N 2 շենք**	1940թ.	2	600	10
		այդ թվում՝ ըստ սենյակների թվի				
		1-սենյականոց	x	x	x	1
		2-սենյականոց	x	x	x	6
		3-սենյականոց	x	x	x	3
2	**գ.Լենուղի**	**4 փող. N 1 շենք**	1932թ.	2	449	8
		այդ թվում՝ ըստ սենյակների թվի				
		1-սենյականոց	x	x	x	
		2-սենյականոց	x	x	x	6
		3-սենյականոց	x	x	x	2
3		**4 փող. N 2 շենք**	1932թ.	2	433	8
		այդ թվում՝ ըստ սենյակների թվի				

		1-սենյականոց	x	x	x	
		2-սենյականոց	x	x	x	5
		3-սենյականոց	x	x	x	3
4		**4 փող. N 3 շենք**	1932թ.	2	732	13
		այդ թվում՝ ըստ սենյակների թվի				
		1-սենյականոց	x	x	x	3
		2-սենյականոց	x	x	x	7
		3-սենյականոց	x	x	x	3
5	**գ.Ակնալիճ**	**Գառնիկյան թղմ. N 3 շենք**	1970թ.	3		24
		այդ թվում՝ ըստ սենյակների թվի				
		1-սենյականոց	x	x	x	12
		2-սենյականոց	x	x	x	6
		3-սենյականոց	x	x	x	6
6	**գ.Մայիսյան**	**1-ին փ. N 51 շենք**	1932թ.	2	725.7	8

9.2. Քաղաքաշինության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

555. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը վերջին տարիների ընթացքում մշակել և գործողության մեջ է դրել ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած մի շարք ռազմավարական նշանակության ծրագրեր, մասնավորապես՝

1) ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագիրը:

2) ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը:

3) ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի նիստի N9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգը,

3) ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N53 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագիրը:

556. 2015-2017 թվականների ՄԺԾԾ նոր նախաձեռնությունների հայտերում կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգումից բացի ընդգրկվել են նաև.

1) 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, վերականգման ենթակա, ինչպես նաև քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերում բնակվողների անվտանգության և բնակարանային խնդիրների լուծման հարցերը: Արմավիրի մարզի 3 քաղաքային համայնքներում առկա 373 շենքերի ավելի քան 70%-ը, հատկապես դրանց ընդհանուր սեփականություն հանդիսացող մասերը (տանիքներ, աստիճանավանդակներ, վերելակներ և այլն) երբևէ չեն հիմնանորոգվել և հետագա տևական շահագործումն առանց ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման կբերի կոնստրուկտիվ տարրերում վնասվածքների և դեֆորմացիաների հետագա զարգացման, նորերի առաջացման, շենքերի սեյսմակայունության կտրուկ նվազման և այդ առումով հետագայում վերակառուցման աշխատանքների իրականացման համար ֆինանսական զգալի միջոցների լրացուցիչ պահանջի, վթարայնությամբ պայմանավորված դրանց քանդման անհրաժեշտության, ինչպես նաև հնարավոր անկանխատեսելի հետևանքների, մասնավորապես՝ Լենուղի գյուղի 4-րդ աստիճանի վնասվածության 3 շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների բարելավման հարցերը**:**

2) Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման խնդիրները:

3) Բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման - վերականգնման խնդիրները:

4) Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների հիմնանորոգման խնդիրները:

5) Կոմունալ ոլորտի խնդիրները:

6) Նախագծային աշխատանքներից ընդգրկված են մարզի սահմանամերձ համայնքների գլխավոր հատակագծերի, կրթական, մշակութային և մարզական օբյեկտների նախագծման աշխատանքները:

557. ՀՀ Արմավիրի մարզի քաղաքաշինության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 6,293,360.0 հազ.դրամ (տես՝ հավելված 9):

9.3. Քաղաքաշինության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ 2015-2018թթ.	Կարևոր նախադրյալներ
Արդյունք 1. Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում	Բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը Ծրագրի արժեքը, մլն.դրամ	տարեկան 3 70.0 մլն.դրամ	
Արդյունք 2. Համայնքների գլխավոր հատակագծերի կազմում	Հաստատված հատակագծերի քանակը	8-91	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածի 32-րդ մասով համայնքների գլխավոր հատակագծերի մշակման

			վերջնաժամկետ է սահմանվել 2016թ. հունվարի 1-ը:
Արդյունք 2. Շին.օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	Ընդհանուր գումարը Շին. օբյեկտների քանակը	տարեկան 50.0 մլն.դրամ տարեկան 15-20	

10. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

10.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

558. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, այնպես էլ Արմավիրի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են անմխիթար վիճակում գտնվող մարզային և համայնքային նշանակության (հատկապես գյուղական բնակավայրերի) խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղագծերի (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ:

10.2. Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ

559. ԱՀՌԾ-ում աղքատությունը բնորոշվում է որպես կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինություն: Աղքատության սահմանման մեջ նշված պահանջմունքների բոլոր երեք խմբերի բավարարման հնարավորությունների վրա, ի թիվս այլ գործոնների, անմիջականորեն ազդում է նաև մարդկանց ֆիզիկական մեկուսացվածությունը: Ուսումնասիրությունների համաձայն, որքան համայնքները հեռու են մարզկենտրոնից ու մայրաքաղաքից, այնքան այդ համայնքների բնակչությունն ավելի է հակված աղքատության: Սակայն ֆիզիկական մեկուսացվածությունը պայմանավորված է ոչ միայն վերը նշվածով, այլ առավելապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակով: Այս առումով աղքատության և ճանապարհային ցանցի միջև առկա կապն ուղղակի է: Առանց բարվոք ճանապարհային ցանցի առկայության հնարավոր չէ ապահովել հուսալի և բոլորի համար հասանելի տրանսպորտային ծառայություններ: Ճանապարհային ցանցն ազդում է աղքատության վրա որպես տնտեսական աճի, եկամուտների բաշխման և հիմնական սոցիալական ծառայությունների հասանելիության վրա ազդող գործոն:

560. Աղքատության հաղթահարման տեսանկյունից ճանապարհաշինության ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը պետք է ուղղված լինի ճանապարհային ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

561. Համայնքների ֆիզիկական մեկուսացվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ռեսուրսներն ուղղել համայնքային նշանակության ճանապարհների շինարարությանը՝ հաշվի առնելով աղքատության վրա վերջիններիս առավել մեծ ազդեցության աստիճանը:

562. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները. ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 593.9կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 109կմ, հանրապետական նշանակության՝ 69.8կմ և տեղական(մարզային) ենթակայության՝ 398.2կմ:

563. Մարզի տարածքով է անցնում «Հարավ կովկասյան» երկաթուղին 70 կմ երկարությամբ՝ Քարակերտ, Դալարիկ, Արաքս, Արմավիր, Էջմիածին երկաթուղային կայարաններով: Մարզում առկա է նաև տեղական նշանակության 35 կմ երկարությամբ երկաթուղի, որից գործում է Արմավիր-ՀԱԷԿ 12կմ երկարության հատվածը:

564. Մարզում առկա են 23 հանրապետական նշանակության կամուրջներ՝ կառուցված 1970-77թթ. և համայնքային նշանակության 80 կամուրջներ:

565. Արմավիրի մարզի միջպետական նշանակության ճանապահները համեմատաբար բարվոք վիճակում են, բացառությամբ Մ-3 Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր- Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի 10կմ Մարգարա-Ջրարբի (Ջրառատի թ/ֆ) հատվածի:

566. ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի թիվ 265-Ն «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու մասին» որոշմամբ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման Արմավիրի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը 398.20կմ է, որից անմխիթար վիճակում են.

1) Հ-18 Մ5- Վանանդ-Մ9 -11.1կմ
2) Հ-76 Մ5- Մեծամորի թանգարան -1.2կմ
3) Հ-77 Մ5 Ռուս զինվորի հուշարձան Մ3 -4.0կմ
4) Տ-3-1 Արևաշատ-Արբաթ -2.0կմ
5) Տ-3-3 Մ5 Հովտամեջ -3.2կմ
6) Տ-3-7 Հավտամեջ- Դողս- Լեռնամերձ -9.0կմ
7) Տ-3-8 Մ5 –Մայիսյան –Տ-3-47 -11.0կմ
8) Տ-3-9 Լուկաշին -Հ17 -3.2կմ
9) Տ-3-10 Հ15- Հայկավան –Տ3-49 -2.6կմ
10) Տ-3-11 Հ15 –Նոր Արտագերս-Նալբանդյան-Գետաշեն–Շենավան- Նոր Կեսարիա- Մ5 -17.7կմ
11) Տ-3-12 Շենավան-Բերքաշատ–ՀԷԿ -14.0կմ
12) Տ-3-13 Տ-3-51-Բամբակաշատ -1.6կմ
13) Տ-3-14 Մ5- Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր-Տ3-16 -7.1կմ
14) Տ-3-15 Ալաշկերտ - Հ15 -1.0կմ
15) Տ-3-16 Տ-3-50 (Արևիկ)-Տ-3-14 (գ.Արմավիր) -3.4կմ

16) Տ-3-17 Հ15- Ջանֆիդա- Թուրքիայի սահման -8.3կմ
17) Տ-3-18 Արևիկ- Զարթոնք -5.9կմ
18) Տ-3-19 Արևիկ- Տանձուտ -3.4կմ
19) Տ-3-26 Վաղարշապատ-Արտիմետ-Խորոնք-Առատաշեն-Տարոնիկ -12.7կմ
20) Տ-3-27 Մ3-Արարատի մարզի սահման -3.2կմ
21) Տ-3-29 Մ5 - Ոսկեհատ -5.0կմ
22) Տ-3-30 Մ9- Կողբական -2.5կմ
23) Տ-3-35 Տ-3-34 - Ծիածան -0.9կմ
24) Տ-3-39 Մ3 -Գրիբոյեդով-Խորոնք -5.2կմ
25) Տ-3-40 Մ3 - Ապագա -1.60կմ
26) Տ-3-41 Մ3 - Լուսագյուղ - Տ-3-42 -2.7կմ
27) Տ-3-45 Հայթաղ-Ֆերիկ -3.5կմ
28) Տ-3-46 Դողս -Աղավնատուն -2.7կմ
29) Տ-3-47 Հ17-Հացիկ -Հ17- Լուկաշին- Արմավիր -12.3կմ
30) Տ-3-50 Մ5 -Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն -15.0կմ
31) Տ-3-51 Մ5 -Սարդարապատ-Նոր Արմավիր -Տ-3-52 -6.6կմ
32) Տ-3-53 Տ-3-50-Եղեգնուտ-Զարթոնք-Տ-3-34 -9.8կմ
33) Տ-3-54 Տ-3-53 - Արտաշար-Տ-3-53 -3.6կմ
34) Տ-3-56 Մ5 - Արևադաշտ- Տ-3-23 -9.0կմ
35) Տ-3-59 Հ15 - Մրգաշատ (Տ-3-14) -1.8կմ
36) Տ-3-60 Տ-3-47 -Տ-3-9 (Լուկաշինի շրջանց) -2.9կմ
37) Տ-3-61 Մ5 (Նորապատ)-Հ17 -1.7կմ

567. Մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով տասնյակ տարիներ չեն նորոգվել, որի արդյունքում քանդվել են և դարձել տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի:

568. Նորոգման ենթակա ճանապարհների վիճակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ճանապարհների ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառ է հանդիսնում վատ կազմակերպված ջրահեռացումը:

569. Բավական աշխատանք կա կատարելու կամուրջների նորոգման բնագավառում: Նորոգման կարիք ունեն հանրապետական նշանակության Տ-3-34 Մ-5-Գեղակերտ-Արշալույս-Հայթաղ-Ակնալիճ-Մ5 ճանապարհի Ծաղկունքի կամուրջը, Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 23կմ (Հարավսլավացի օդաչուների հուշարձան) կամուրջը: Իսկ ընդհանրապես բոլոր կամուրջների պահպանման համար անհրաժեշտ նախատեսել ֆինանսական միջոցներ:

570. Անհրաժեշտ է շրջանցիկ ճանապարհների և գետանցերի կառուցման համար նախօրոք կուտակել և պահեստավորել շինանյութեր և տեխնիկական միջոցներ:

571. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզային ենթակայության ճանապարհներից ձմեռային պահպանության է տրվել 55.75կմ ճանապարհ, ընթացիկ պահպանության 23.8կմ ճանապարհ՝ 35.6 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ:

572. Աղյուսակ 10.2.1-ում ներկայացվում են 2012-2013թթ. ծրագրերով ՀՀ պետական բյուջեի և համաշխարհային բանկի միջոցներով Արմավիրի մարզի ճանապարհաշինության ոլորտում իրականացված շինարարական աշխատանքները:

Աղյուսակ 10.2.1.

Ֆինանսավորման աղբյուրը	Աշխատանքի անվանումը	Գումարը (մլն. դրամ)
	2012-2013 թվական	
ՀՀ պետական բյուջե	Հ-290 «Մ-5 Լենուղի-Այգեվան-Մ-5» հանրապետական նշանակության 6.2 կմ երկարությամբ ճանապարհ	399,5
	Մ–3 «Մարգարա–Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» միջպետական նշանակության ճանապարհի կմ 6+700-կմ+150 հատված, 4.5կմ երկարությամբ	40,2
	Մ-3 «Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման» կմ 0+000-կմ 6+000 հատված, 6.7 կմ երկարությամբ	485,5
Համաշխարհային բանկ	Հ- 289 «Արմավիր-Նորավան-Լուկաշին–Խանջյան» կմ 0+000-կմ 6+560 հատված, 6.5կմ երկարությամբ	295,1
	«Մ-5- Ամասիա–Նալբանդյան–Ջանֆիդա–Փշատավան» կմ 0+000-կմ 14+480 հատվածը, 14.5կմ երկարությամբ ճանապարհը	245,6
	«Մ- 5 Նոր-Կեսարիա-Շենավան-Գետաշեն» կմ1+900-կմ 7+220 հատված, 5.3կմ երկարությամբ	491,7

573. ՀՀ Արմավիրի մարզում 2015-2018 թվականներին նախատեսվում է իրականացնել մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

1) Մ-5, Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Արմավիր քաղաքից դեպի Սարդարապատի հուշահամալիր տանող 5.6 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքներ 700.0 մլն. դրամ արժեքով 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով.

2)Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 2015-2017 թվականներին ՀՀ Արմավիրի մարզում նախատեսվում է իրականացնել Նորապատ-Մրգաշատ-Արևիկ-Եղեգնուտ-Երասխահուն 18.9կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ և այլն:

574. Տրանսպորտի բնագավառ. Մարզի թվով 95 համայնքներ ապահովված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզկենտրոնի հետ տրասպորտային կապ չունի միայն Բաղրամյանի տարածաշրջանի Արգինա համայնքը, որի միկրոավտոբուսային երթուղու համար բազմիցս հայտարարվել է մրցույթ, սակայն մրցույթին մասնակցության հայտ չի ներկայացվել:

575. Մարզի համայնքներից մարզկենտոն և տարածքային կենտրոններ գործում են 14 ավտոբուսային երթուղիներ և 9 միկրոավտոբուսային երթուղիներ: Մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 4 ավտոբուսային և 10 միկրոավտոբուսային, իսկ դեպի այլ մարզեր՝ 3 ավտոբուսային և 4 միկրոավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ:

576. ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրասպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններում սահմանված կարգին համապատասխան կազմակերպվել և անցկացվել են ներմարզային երթուղիների մրցույթներ:

577. Ծրագրվում է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը, իսկ ճանապարհաշինության բնագավառում՝ ավարտել ամբողջ ճանապարհային ցանցի նորոգումը:

578. ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհաշինության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 7,971,278.8 հազ. դրամ (տես՝ հավելված 10.1):

10.3. Ջրամատակարարում և ջրահեռացում

579. Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և հեռանկարային զարգացման ծրագրի կարևոր թիրախներից մեկն է, այլև մարդկային աղքատությունը պայմանավորող գործոններից է: Կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Բացի այդ, անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում ՀՀ կառավարությունը առանձնացնում է մատակարարվող ջրի որակի բարելավումը, կայուն ջրամատակարարումը, ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովումը:

580. Ջրամատակարարման ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը կայուն, հուսալի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ համակարգերի պահպանման, վերականգնման ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

581. Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտներում գործում են 5 խոշոր կազմակերպություններ («Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» և

«Երևան Ջուր» ՓԲԸ-ներ), որոնք կառավարվում են մասնավոր կառավարման հիմունքներով՝ ֆրանսիական և գերմանական հայտնի օպերատորների կողմից: Արմավիրի մարզում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է՝

1) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի (31 համայնք)
2) «Նոր Ակունք» ՓԲԸ-ի (12 համայնք)
3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի (2 համայնք)
4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

582. ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 888-Ն որոշման համաձայն՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր և տվյալ գույքի հետագա օգտագործումն ու պահպանումը 2016 թվականի հունիսի 1-ից կիրականացվեն պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում՝ մեկ կառավարչի կողմից, իսկ գույքի օգտագործման իրավունքը կփոխանցվվի վարձակալությամբ՝ 15 տարի ժամկետով:

583. «Նոր Ակունք» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների սպասարկման տարածքների բնակավայրերի ջրամատակարարման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 10.3.1-ում:

Աղյուսակ 10.3.1. Մարզի ջրամատակարարման ցուցանիշները 2013 թվականին

N	Կազմակերպության անվանումը/ համայնքը	Արտադրված ջրաքանակ ($մ^3$)	Իրացում ($մ^3$)	Կորուստ ($մ^3$)	Գանձում (հազ.դրամ)	Ջրամատա-կարարման միջին ռեժիմը (ժ/օր)
	«Նոր Ակունք» ՓԲԸ					
1	ք. Արմավիր	3716676	1304658	2412018	255943	24.0
2	Ակնալիճ	237899	67890	170009	10928.4	15.5
3	Բաղրամյան	108363	20607	87756	3597.07	22.2
4	Դալարիկ	139832	39465	100367	6844.39	12.0
5	Լեռնագոգ	185505	147294	38211	26853.69	21.0
6	Խանջյան	102881	44541	58340	7926.83	24.0
7	Մայիսյան	117912	58376	59536	10305.41	22.2
8	ք. Մեծամոր	1085372	311290	774082	66601.28	24.0
9	Մյասնիկյան	177248	87826	89422	14883.66	17.0
10	Մրգաշատ	156580	42370	114210	6179.98	24.0
11	Նորավան	90301	34922	55379	6641.41	24.0
12	Նորապատ	116793	18152	98641	3931.54	12.0
	Ընդամենը	**6 235 362**	**2 177 391**	**4 057 971**	**420636.66**	22.7
	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ					
1	ք. Էջմիածին	7157000	1327870	5829130	205608.5	5-24
2	Աղավնատուն	142000	60750	81250	5900.68	24
3	Ամբերդ	138000	29750	108250	4337.69	24
4	Այգեկ	80000	28390	51610	3513.52	7
5	Այգեշատ	417000	22590	394410	3042.5	24
6	Արևադաշտ	48000	8460	39540	236.12	24

7	Արևաշատ	126000	38140	87860	5125.81	5
8	Արագած	175200	39670	135530	4794.38	24
9	Արգինա	191800	16160	175640	765.0	24
10	Արշալույս	116000	29830	86170	1860.46	24
11	Արտամետ	47700	8450	39250	369.98	5
12	Արտիմետ	125000	25090	99910	2706.0	24
13	Բաղրամյան	136000	47670	88330	5675.03	12
14	Գեղակերտ	151000	29450	121550	2152.5	24
15	Դաշտ	370000	15400	354600	2647.67	24
16	Դողս	135000	21100	113900	3080.25	24
17	Լեռնամերձ	236000	7440	228560	837.28	24
18	Խորոնք	117000	11400	105600	150.5	24
19	Ծաղկալանջ	112000	11680	100320	1203.42	24
20	Ծաղկունք	119300	11160	108140	511.8	24
21	Ծիածան	138000	20270	117730	1397.11	24
22	Հայթաղ	109000	13480	95520	815.63	24
23	Հովտամեջ	144000	20240	123760	626.14	24
24	Մուսալեռ	113000	64670	48330	6965.35	12
25	Մրգաստան	130000	24340	105660	2875.37	24
26	Նորակերտ	119000	42570	76430	4646.27	24
27	Շահումյան	531000	40210	490790	6327.13	24
28	Շենիկ	266000	23280	242720	1157.0	24
29	Ոսկեհատ	161000	58710	102290	7535.95	16
30	Պտղունք	111000	36720	74280	4444.11	24
31	Ֆերիկ	117000	1340	115660	42.12	24
	Ընդամենը	**12 079 000**	**2 136 280**	**9 942 720**	**291351.3**	

Աղբյուրը՝ «Նոր Ակունք» ՓԲԸ ներկայացրած տեղեկատվություն, 2013թ., «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ ներկայացրած տեղեկատվություն, 2013թ.

584. 2011-2014 թվականների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ՀՀ պետական բյուջեի, Գերմանիայի զարգացման վարկերի, Ասիական զարգացման բանկի, ՀՀ կառավարության, «Նոր Ակունք» ՓԲԸ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ, USAID, Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) միջազգային կազմակերպությունների, մասնավոր ներդրողների և մի շարք համայնքների աջակցությամբ իրականացված ծրագրերը ներկայացված են աղյուսակ 10.3.2-ում

Աղյուսակ 10.3.2. (հազ. դրամ)

Միջոցառման համառոտ բովանդակությունը	Ֆինանսավորման աղբյուրը	Գումարը	Ծանոթություն
2011 թվական			
գ.Քարակերտի ջրամատակարարման բարելավում	ՀՀ պետական բյուջե	74000.0	
գ.Տարոնիկի ներքին ջրամատակարարման ցանցի կառուցում	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 03.02.2011թ. N108-Ն որոշում)	23969.5	
գ.Արաքսում (էջմ.) 1 խորքային հորի կառուցում	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 03.02.2011թ. N108-Ն որոշում)	9800.0	

գ.Դալարիկում 1 խորքային հորի կառուցում	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 03.02.2011թ. N108-Ն որոշում)	17040.0	
Արմավիրի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագիր	ՀՀ պետական բյուջե՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ	278415.0	
Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ)	ՀՀ պետական բյուջե՝ Ասիական զարգացման բանկ	44941.5	
Դալարիկ համայնքի խմելաջրի համակարգի վերականգնում	Դոնոր՝ Սի.Օ.Էյ.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամ (COAF)	3920.0	
Ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգում և խորքային հորերի պոմպերի վերանորոգում	Այլ աղբյուր՝ «Նոր Ակունք» ՓԲԸ	18021.0	
Ընդամենը՝ 2011թ.		**470107.0**	
2012 թվական			
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագիր		233,312.0	
Երասխահունի ներքին ջրամատակարարաման ցանցի կառուցում	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 29.09.2011թ. N1436-Ն որոշում՝ 2-րդ հրատապ ծրագիր)	19,359.0	
ք.Արմավիրի զբոսայգում մեկ խորքային հորի կառուցման համաֆինանսավորում		6,000.0	
Դալարիկի 1 խորքային հորի կառուցում	(1706-Ն որոշում)	8,708.0	
Փարաքար համայնքի կեղտաջրերի հեռացման կոլեկտորի և մաքրման կենսաբանական լճակի շինարարություն	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 24.05.2012թ. N711-Ն որոշում՝ 3-րդ հրատապ ծրագիր)	9,021.5	
Երասխահուն համայնքի ներքին ջրամատակարարման ցանցի կառուցում		39,674.0	
Հայթաղ համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում		49,286.6	
Մրգաշատ համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (3085գծ.մ)		2,355.0	
Դալարիկ համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (1490գծ.մ)		1,275.0	
Մրգաշատ համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (1020գծ.մ)	«Նոր Ակունք» ՓԲԸ, USAID և համայնքի հետ համատեղ	1,775.0	
Տարոնիկ համայնքում նոր ջրագծի կառուցում մետաղական խողովակով (120գծ.մ)		1,253.0	
ք.Արմավիրում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենե խողովակով (396գծ.մ)		837.0	
Դալարիկ համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (1050գծ.մ)		1,450.0	
Մեծամոր քաղաքի այգեգործական ընկերության նոր ջրագծերի կառուցում պոլիէթիլենային խողովակով (3065գծ.մ)		2,774.0	
Լեռնագոգ համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (400գծ.մ)		415.0	
Ակնալիճ համայնքում նոր ջրագծի կառուցում պոլիէթիլենային խողովակով (270գծ.մ) -համայնքի հետ համատեղ		91.0	

Մայիսյան համայնքում հին ջրագծի փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակով (600գծ.մ)		500.0	
Ընդամենը՝ 2012թ.		**378,086.1**	
2013 թվական			
Հայթաղ համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում	ՀՀ պետական բյուջե (4-րդ հրատապ ծրագիր՝ ՀՀ կառավարության 07.02.2013թ. N 130-Ն որոշում)	44193.3	
Ալաշկերտ համայնքի խմելու ջրի խորքային հորի վերանորոգում		1937.0	
«ՀՀ Արմավիրի մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագիր -Էջմիածնի տարածաշրջանի 11 համայնքներում («Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կողմից)	ՀՀ պետական բյուջե՝ Ասիական զարգացման բանկ	559866.0	ավարտ՝ 2014թ.
Ակնալիճ համայնքում խմելու ջրի խորքային հորի հորատում	ՀՀ պետական բյուջե (ՀՀ կառավարության 11.04.2013թ. N 383-Ն որոշում)	28840.0	
Մրգաշատ և Դալարիկ համայնքներում խմելու ջրի մատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ (մետաղական համակարգի մասամբ փոխարինում պոլիէթիլ.)	Միջազգային կազմ.՝ USAID «Մաքուր էներգիա և ջուր» ծրագիր (նաև «Նոր ակունք» ՓԲԸ)	20440.0	
ք.Արմավիր, ք.Մեծամոր, Մայիսյան, Խանջյան, Բաղրամյան (Բաղր.) համայնքների խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ	Մասնավոր ներդրող.՝ «Նոր Ակունք» ՓԲԸ	3380.0	
Ընդամենը՝ 2013թ.		**658,656.3**	
2014 թվական (1-ին կիսամյակ)			
Էջմիածին համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	ՀՀ պետական բյուջե՝ Համաշխարհային բանկ, ՀՀ կառավարություն	318000.0	ավարտ՝ 2015թ.
ՀՀ Արմավիրի մարզի թվով 12՝ Ոսկեհատ, Ամբերդ, Այգեշատ, Աղավնատուն, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Մուսալեռ, Շահումյան, Շահումյանի թ/ֆ, Պտղունք, Նորակերտ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում	ՀՀ պետական բյուջե՝ Ասիական զարգացման բանկ, ՀՀ կառավարություն	160000.0	
Ընդամենը՝ 2014թ. 1-ին կիսամյակ		**478000.0**	
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2011-2014թթ.		**1,984,849.4**	

585. Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում ջրային տնտեսության պետական կոմիտեի կազմակերպությունների կողմից իրականացվել են սպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքների համակարգման և կազմակերպման գործընթացներ:

586. Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

587. «Նոր Ակունք» ՓԲԸ-ի հետ համատեղ մշակված «Արմավիրի մարզի խմելու ջրի մատակարարման համակարգի բարելավում» ծրագրի առաջարկությունը 2014 թվականի ընթացքում ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ Ճապոնիայի

կառավարության Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության ծրագրերի (ODA) դրամաշնորհին ներկայացնելու նպատակով:

588. Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, ոլորտում իրականացված ծրագրերը անշուշտ մեղմել են իրավիճակը, սակայն մարզի մի շարք համայնքներում դեռևս շարունակում են մնալ են հետևյալ հիմնախնդիրները.

1) ջրամատակարարման համակարգերի մաշվածություն և քայքայվածություն, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, որը բերում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներհամայնքային ցանցերում)
2) համայնքների կողմից ուշադրության պակաս
3) գանձումների ցածր մակարդակ
4) ջրի որակի խնդիրներ
5) ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի անբավարար վիճակը կամ դրանց բացակայությունը:

589. Կարիքների, արդյունավետության և ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

1) տեխնիկական և տնտեսական տվյալներ
2) հիդրոտեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ (ծավալ, հզորություններ և այլն)
3) ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր)
4) կարիքեր (օրական ծավալներ՝ խմելու և ոռոգման ջրի համար)
5) սակագներ
6) ջրի որակական հատկանիշներ
7) ջրահեռացման ծավալներ:

590. Ջրամատակարարման բարձր մակարդակի ապահովումը կապված է նաև մատակարար-սպառող և ներդնող-շահառու ճիշտ համագործակցության հետ: Փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը:

591. Ջրամատակարարող ընկերությունների կողմից սպասարկվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսագործունեությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է նվազեցնել ջրի կորուստները, որը հիմնականում ջրամատակարարման համակարգի անմխիթար վիճակի, մաշվածության և քայքայվածության հետևանքն է: Ջրի հաշվառման համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

592. Մարզի 3 քաղաքային և 94 գյուղական համայնքներից միայն 3 քաղաքներն (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) ու 48 համայնքներն են խմելու ջուր ստանում

կենտրոնացված ջրամատակակարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակազերծում:

593. Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել շրջակա միջավայրի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելավման միջոցով՝ կիրառելով աէրացման և մաքրման մեխանիկական եղանակներ մարզի բոլոր համայնքներում:

594. Մարզի 76 համայնքներ կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման, ցանցերի հիմնանորոգման և ՕԿՋ-ների (օրվա կանոնավորիչ ջրավազան) կառուցման: Բնակավայրերի խմելու ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման, ջրահեռացման ցանցերի (կոյուղագծերի), կոյուղաջրերի մաքրման ավազների (սեպտիկների) կառուցման համար կպահանջվեն զգալի ֆինանսական ներդրումներ:

595. Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանի կառուցումը, կոյուղու համակարգի հիմնանորոգումը և փոխումը: Այդ առումով հրատապ է խնդիրը Մեծամոր քաղաքում, որն ընդգրկված է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ծրագրում:

596. Անհրաժեշտ է վերանորոգել (վերականգնել) բնակավայրերում տեղադրված հրշեջ հիդրանտները, ինչպես նաև տեղադրել նորերը՝ ըստ նորմատիվ պահանջների:

597. ՀՀ Արմավիրի մարզի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 5,799,250.0հազ. դրամ (տես՝ հավելված 10.2):

10.4. Գազամատակարարում

598. Արմավիրի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 97 համայնքներց 86-ը գազաֆիկացված են: Մնացել է գազաֆիկացնելու թվով 11 համայնք՝ Երվանդաշատ, Բագարան, Շենիկ, Բերքաշատ, Արտամետ, Լեռնամերձ, Արգինա, Արաքս (Էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Կողբավան, ինչպես նաև Արմավիր քաղաքի 108 թաղամասը և Բաղրամյան համայնքի «Ծածկ» թաղամասը, որոնց գազաֆիկացման համար անհրաժեշտ է շուրջ 2461.87 մլն. դրամ գումար:

Աղյուսակ 10.4.1. Արմավիրի մարզի գազաֆիկացման ենթակա համայնքների ցանկը

N	Օբյեկտի անվանումը	Հզորություն (տնտեսությունների քանակ)
1	Երվանդաշատ գյուղի գազաֆիկացում	160
2	Բագարան գյուղի գազաֆիկացում	150
3	Շենիկ գյուղի գազաֆիկացում	180
4	Բաղրամյան գյուղի «Ծածկ» թաղամասի գազաֆիկացում	36
5	Արմավիր քաղաքի 108 թաղամասի գազաֆիկացում	96
6	Բերքաշատ գյուղի գազաֆիկացում	120

7	Արտամետ գյուղի գազաֆիկացում	70
8	Լեռնամերձ գյուղի գազաֆիկացում	80
9	Արգինա գյուղի գազաֆիկացում	150
10	Արաքս (Էջմ.) գյուղի գազաֆիկացում	450
11	Մեծամոր գյուղի գազաֆիկացում	230
12	Հայկաշեն գյուղի գազաֆիկացում	350
13	Կողբավան գյուղի գազաֆիկացում	34

599. Գազամատակարարման բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված համայնքների գազաֆիկացումը: Այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունն ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազաֆիկացումը:

600. Չգազաֆիկացված համայնքների գազաֆիկացումը կնպաստի բազմաթիվ բնակարանների, առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատությունների էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործման և ջեռուցման համար: Բացի այդ, գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը:

601. Արմավիրի մարզում 2011-2014 թվականների ընթացքում գազամատակարարման ոլորտում իրականացված ծրագրերն են.

1)ՀՀ կառավարության 29.09.2011թ. N1436-Ն որոշմամբ (2-րդ հրատապ ծրագիր) Արմավիր քաղաքի 107 և 108 թաղամասերի գազամատակարարման համակարգի ցանցի կառուցման համար հատկացվել է 35.2 մլն.դրամ:

2) ՀՀ կառավարության 24.05.2012թ. N711-Ն որոշմամբ (3-րդ հրատապ ծրագիր) հատկացվել է 163.6 մլն. դրամ՝ Արմավիր համայնքի 107, 108, Ֆերիկ և Արևիկ համայնքների գազաֆիկացման համար:

3) ՀՀ կառավարության 07.02.2013թ. N 130-Ն որոշմամբ (4-րդ հրատապ ծրագիր) Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցներից իրականացվել են Փարաքար, Ջանֆիդա, Բերքաշատ համայնքների և Դողս համայնքի դպրոցի գազաֆիկացման աշխատանքները:

4) ՀՀ կառավարության 10.04.2014թ. N 532-Ն որոշմամբ՝ 5-րդ հրատապ ծրագրով Արմավիրի մարզի 3 դպրոցների լոկալ ջեռուցման համակարգերի կառուցման համար ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից հատկացվել է գումար:

602. ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2011-2013թթ. մարզի Ջանֆիդա, Բերքաշատ, Փարաքար, Ֆերիկ, Արևիկ համայնքների և Արմավիր քաղաքի 107 և 108 թաղամասերի գազամատակարարման համակարգի ցանցի կառուցման ուղղությամբ իրականացված աշխատանքները ներկայացված են աղյուսակ 10.4.2-ում:

Աղյուսակ 10.4.2. 2011-2013թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզի մի շարք համայնքներում իրականացված գազամատակարարման համակարգի ցանցի կառուցման աշխատանքներ

Միջոցառման համառոտ բովանդակությունը	Գումարը (հազ. դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
Արմավիր քաղաքի 107 և 108 թաղամասերի գազամատակարարման համակարգի ցանցի կառուցում	47,441.0	ՀՀ պետական բյուջե (2-րդ հրատապ ծրագիր՝ ՀՀ կառավարության 29.09.2011թ. N1436-Ն որոշում)
Ֆերիկ համայնքի գազաֆիկացում	59,758.7	ՀՀ պետական բյուջե (3-րդ հրատապ ծրագիր՝ ՀՀ կառավարության 24.05.2012թ. N711-Ն որոշում)
Արմավիր համայնքի 107 թաղամասի գազաֆիկացում	39,487.0	
Արևիկ համայնքի գազաֆիկացում	16,936.4	
Ջանֆիդա համայնքի գազաֆիկացում	30254.0	ՀՀ պետական բյուջե (4-րդ հրատապ ծրագիր՝ ՀՀ կառավարության 07.02.2013թ. N 130-Ն որոշում)
Բերքաշատ համայնքի գազաֆիկացում	3360.0	
Փարաքար համայնքի գազաֆիկացում	7850.0	

603. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2008 թվականից որևէ ներդրում չի կատարվում, հետևաբար, ներդրումների մեծ բաժինն ընկնում է համայնքի բյուջեի վրա, ինչը սակայն համայնքն ի վիճակի չէ կատարել իր սուղ միջոցներից: Անհրաժեշտ է պետական աջակցություն:

604. Ըստ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Արմավիրի ԳԳՄ-ի ներկայացրած տվյալների՝ 2013թ. ընթացքում 71 համայնքների բնակիչների միջոցներով կատարվել են շուրջ 551 բնակարանների գազաֆիկացման աշխատանքներ, որից 151-ը՝ բազմաբնակարան շենք, 400-ը՝ առանձնատուն:

605. 2013թ. դրությամբ մարզի փաստացի բաժանորդների թիվը կազմում է 48422, որոնցից 13946-ը բազմաբնակարան շենքերում, իսկ 34476-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների պատկերը ներկայացված է աղյուսակ 10.4.3-ում:

Աղյուսակ 10.4.3.

Տարածաշրջանը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում՝	
		ԲԲՇ	Առանձնատուն
Արմավիր	20909	6314	14595
Վաղարշապատ	24827	7040	17787
Բաղրամյան	2686	592	2094
Ընդամենը	**48422**	**13946**	**34476**

606. Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1) Մարզի գազամատակարարում չունեցող համայնքների գազաֆիկացումը

2) Գյուղական համայնքների բյուջեների սղությունը և մեկ բաժանորդի հաշվով շուրջ 1-1.5 մլն. դրամ գազաֆիկացման արժեքը
3) Բնակարանների գազաֆիկացման բարձր արժեքը:

607. Նպատակները՝

1) Բարձրացնել գազամատակարարման համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը
2) Ապահովել ազգաբնակչությանը էկոլոգիապես մաքուր վառելիքով
3) Բարելավել գազամատակարարման ծառայությունների որակը
4) Վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն:

608. Գերակայություններն են՝ մարզի ամբողջ տարածքում ապահովել անվտանգ գազամատակարարման հասանելիություն, պետական ներդրումներն առաջնահերթ նպատակուղղել այդ ոլորտի առավել հրատապ խնդիրների լուծմանը:

609. 2015-2017թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացվել են ներքոհիշյալ ծրագրային նախաձեռնությունները, որոնք ներկայացված են եղել ինչպես ՀՀ Նախագահի 2008թ հուլիսի 30-ի ՆԿ-128-ն կարգադրությամբ հաստատված «ՀՀ Նախագահի 2008թ. հունվարի 10-ից փետրվարի 17-ը ՀՀ մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների» ժամանակացույցում, այնպես էլ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2011-2014 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1756-Ն որոշան մեջ: Ֆինանսավորումը հաստատվելու դեպքում համայնքները պատրաստակամ են կատարելու 5%-ի չափով ներդրում, և աշխատանքները կիրականացվեն համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Աղյուսակ 10.4.4. Նոր նախաձեռնությունների գծով կանխատեսվող ծախսերը

h/h	Ծրագրի անվանումը	Հզորություն	Ընդհանուր ֆինանսավորման չափը (հազ. դրամ)
1	Երվանդաշատ գյուղի գազաֆիկացում	160 տնտեսություն (828 մարդ)	697345.0
2	Բագարան գյուղի գազաֆիկացում	150 տնտեսություն (732 մարդ)	121375.0
3	Շենիկ գյուղի գազաֆիկացում	180 տնտեսություն (912 մարդ)	280000.0
4	Արմավիր քաղաքի 108 թաղամասի գազաֆիկացում	96 տնտեսություն (480 մարդ)	136650.0
5	Բաղրամյան գյուղի «Ծածկ» թաղամասի գազաֆիկացում	36 տնտեսություն (185 մարդ)	15000.0
6	Արաքս գյուղի գազաֆիկացում	450 տնտեսություն (2026 մարդ)	210000.0
7	Բերքաշատ գյուղի գազաֆիկացում	120 տնտեսություն (650 մարդ)	121500.0
8	Մեծամոր գյուղի գազաֆիկացում	230 տնտեսություն (1125 մարդ)	145000.0
9	Հայկաշեն գյուղի գազաֆիկացում	350 տնտեսություն (1750 մարդ	320000.0

10	Լեռնամերձ գյուղի գազաֆիկացում	80տնտեսություն (425 մարդ)	85000.0
11	Արգինա գյուղի գազաֆիկացում	150 տնտեսություն (810 մարդ)	160000.0
12	Արտամետ գյուղի գազաֆիկացում	70 տնտեսություն (325 մարդ)	130000.0
13	Կողբավան գյուղի գազաֆիկացում	34 տնտեսություն (170 մարդ)	40000.0
	Ընդամենը		**2 461 870.0**

610. ՀՀ Արմավիրի մարզի գազաֆիկացման ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 2,574,870.0 հազ. դրամ (տես՝ հավելված 10.3):

10.5. Էներգետիկա

611. Համակարգի հեռանկարային զարգացման, էներգիայի աճող ներքին պահանջարկի բավարարման, էներգետիկ անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովման խնդրում կարևորվում են էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության ուղղությունները:

612. Ներկայումս հանրապետության էներգահամակարգն ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը և պահպանում է էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ:

613. Անցած տարիների ընթացքում էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացվել են բարելավումներ, որոնք հանգուցային նշանակություն են ունեցել էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր հուսալիության ամրապնդման և տարածաշրջանային համագործակցության խթանման համար:

614. Ըստ հեռանկարային զարգացման ծրագրի՝ ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունները կլինեն՝

1) Սեփական աղբյուրների, հատկապես վերականգնվող էներգառեսուրսների առավելագույն օգտագործումը,
2) Ատոմային էներգետիկայի հետագա զարգացումը, մասնավորապես՝ նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը և ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացումն ու շահագործման ժամկետի երկարացումը,
3) Ֆիզիկապես և բարոյապես մաշված էներգատեղակայանքների փոխարինումը նորագույն տեխնոլոգիաներով հագեցված էներգատեղակայանքներով,
4) Էներգառեսուրսների մատակարարման բազմազանեցումը և տարածաշրջանային ինտեգրումը,
5) Էներգաարդյունավետության խթանումը և խրախուսումը՝ էներգետիկ ռեսուրսներ օգտագործող բոլոր բնագավառներում,
6) Էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի

բարձրացումը:

615. Ատոմային էներգետիկայի զարգացում. Արմավիրի մարզում է գտնվում Հայաստանի միակ ատոմային էլեկտրակայանը՝ 407.5 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Կայանը կառուցվել է 1970-ականներին երկու էներգաբլոկից: 1988թ. երկրաշարժից հետո երկու բլոկներն էլ կանգնեցվեցին: Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկը վերաթողարկվեց 1995 թվականի նոյեմբերին: Առաջին էներգաբլոկը մնում է երկարաժամկետ դադարի ռեժիմում: Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետը լրանում է 2016թ.:

616. ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրին: Ենթադրվում է, որ Հայկական ԱԷԿ-ի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքները կմեկնարկեն 2015թ-ից: Հայկական ԱԷԿ-ի շահագործման լրացուցիչ ժամկետում անվտանգ շահագործումը կապահովի ՀՀ-ում սպառման համար արտադրվող էլեկտրական էներգիայի շուրջ 40%-ը, ինչպես նաև այն կտա լրացուցիչ ժամանակ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար:

617. Սեփական աղբյուրների՝ հատկապես վերականգնող էներգառեսուրսների առավելագույն օգտագործում. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Ներկայումս, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն, Արմավիրի մարզում մոտ 9940 կՎտ ընդհանուր հզորությամբ տարեկան 22.8 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա են արտադրում 4 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 9,940 կՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և 22.8 մլն. կՎտժ տարեկան արտադրությամբ (աղյուսակ 10.8):

Աղյուսակ 10.5.1. 2014 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն Արմավիրի մարզում էլեկտրական էներգիա արտադրող փոքր հիդրոէլեկտրակայանների հիմնական ցուցանիշները՝ ըստ շահագործող ընկերությունների

	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի համարը համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	ՓՀԷԿ-ի անվանում	Հզորությունը	Էլեկտրական էներգիայի փաստացի օգտակար	ՓՀԷԿ-ի տիպը	հաշվարկային ելքը
						կՎտ	մլն.կվտժ		մ3/ վրկ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«Արմավիր Լույս» ՓԲԸ	26	25.06.1999	25.06.2014	Արմավիր	2,040	3.7	հաշվարկային	22.0
2	«Գ.Գ.Վ.» ՍՊԸ	170	06.07.2005	06.07.2020	Վարդան	1,710	5.3	հաշվարկային	5.0
3	«ԹԻ ԷՅ ԷՅՉ» ՍՊԸ	292	09.07.2008	09.07.2023	Թալին	5,140	10.0	ոռոգման համալիր	5.6
4	«ՄԱՍՖԻՇ» ՍՊԸ	403	18.05.2011	18.05.2026	Վարդանանց	1,050	3.8	ոռոգման համալիր	4.0
	Ընդամենը					**9,940**	**22.8**		

618. Մարզում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են ևս 2 փոքր ՀԷԿ-եր՝ 998 կՎտ հզորությամբ: Ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 423.1 մլն. դրամ:

Աղյուսակ 10.5.2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրված, սակայն կառուցման փուլում գտնվող փոքր հիդրոէլեկտրակայանների հիմնական ցուցանիշները՝ ըստ շահագործող ընկերությունների

	Շահագործող ընկերության անվանումը	Շահագործող ընկերության անվանումը		Էլ. էներգ. արտադ. ժամանակա-հատված	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը	Տարեկան արտադրանք	Ներդրումներ ի ծավալը (առանց ԱԱՀ)
		սկիզբ	ավարտ	ավարտ		կՎտ	մլն կվտժ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8	9
1	«Քարե Հովիտ» ՍՊԸ	14.10.2013	14.09.2014	14.09.2029	Շենիկ[1]	595	3.285	264
2	«ՄԻՏՔ» ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՍՊԸ	21.10.2013	21.09.2014	21.09.2029	Բաղրամյան[2]	403	1.86	159.1
	Ընդամենը					**998**	**5.14**	**423.1**

619. Կառուցվող ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կավելանա 5.14 մլն. կՎտժ-ով, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

620. 2015-2018թթ. ընթացքում մարզի էլեկտրամատակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով նախատեսվում է շուրջ 1200.0մլն. դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման/վերակառուցման, վերանորոգման, ենթակայանների նորոգման, հին տրանսֆորմատորները նորերով փոխարինելու աշխատանքներին, ինչպես նաև նոր բաժանորդների ցանցին միանալուն ուղղված աշխատանքներին:

621. «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող և գործող 220/110կՎ ՕԳ-երի վրա կատարվող աշխատանքների համար սեփական միջոցների հաշվին կիրականացվեն 4.4 մլն դրամի աշխատանքներ: Ըստ տարիների ներդրումները կլինեն՝

2015թ. 800.0 հազ. դրամ
2016թ. 1200.0 հազ. դրամ
2017թ. 1200.0 հազ. դրամ
2018թ. 1200.0 հազ. դրամ:

622. ՀՀ Արմավիրի մարզի Էներգետիկայի ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 1,461,750.0 հազ. դրամ (տես՝ հավելված 10.4):

11. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

11.1 Տարածքային կառավարում

11.1.1 Վարչատարածքային բաժանում

623. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը սահմանվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որի 11.1-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները, և որով անցում կատարվեց վարչատարածքային նոր երկաստիճան համակարգին՝ պետական կառավարում և տեղական ինքնակառավարում:

624. Հիմնվելով ՀՀ Սահմանադրության վրա՝ ՀՀ Ազգային ժողովը պետական կառավարման համակարգի ժողովրդավարացմանն ուղղված օրենքների շարքում առաջնահերթ ընդունեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը (1995 թվականի նոյեմբերի 7): Օրենքի համաձայն Հայաստանի հանրապետության տարածքը բաժանվում է 10 մարզերի՝ դրանք են Արագածոտնի մարզ, Արարատի մարզ, Արմավիր մարզ, Գեղարքունիք մարզ, Լոռու մարզ, Կոտայքի մարզ, Շիրակի մարզ, Սյունիքի մարզ, Վայոց Ձորի մարզ և Տավուշի մարզ:

625. Արմավիրի մարզն ընդգրկում է է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի նախկին վարչական շրջանների տարածքները: Արդյունքում, Արմավիրի մարզն ունի 97 համայնք, որից 3-ը՝ քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր), 94-ը՝ գյուղական: Երկու բնակավայրեր է ընդգրկում Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքը: Մարզի համայնքները և նրանց մեջ մտնող բնակավայրերը ներկայացված են աղյուսակ 11.1-ում:

Աղյուսակ 11.1.1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1. Արմավիր (Հոկտեմբերյան)	Արմավիր (Հոկտեմբերյան) քաղաք	**50. Խորոնք**	Խորոնք գյուղ
2. Վաղարշապատ (Էջմիածին)	Վաղարշապատ (Էջմիածին) քաղաք	**51. Ծաղկալանջ**	Ծաղկալանջ գյուղ
3. Մեծամոր	Մեծամոր քաղաք	**52. Ծաղկունք**	Ծաղկունք գյուղ
4. Ակնալիճ	Ակնալիճ գյուղ	**53. Ծիածան**	Ծիածան գյուղ
5. Ակնաշեն	Ակնաշեն գյուղ	**54. Կողբավան**	Կողբավան գյուղ
6. Աղավնատուն	Աղավնատուն գյուղ	**55. Հայթաղ**	Հայթաղ
7. Ամասիա	Ամասիա գյուղ	**56. Հայկաշեն**	Հայկաշեն գյուղ
8. Ամբերդ	Ամբերդ գյուղ	**57. Հայկավան**	Հայկավան գյուղ
9. Այգեկ	Այգեկ գյուղ	**58. Հացիկ**	Հացիկ գյուղ
10. Այգեշատ (Արմավիրի շրջ.)	Այգեշատ գյուղ	**59. Սարդարապատ**	Սարդարապատ գյուղ
11. Այգեշատ (Էջմիածնի շրջ.)	Այգեշատ գյուղ	**60. Հովտամեջ**	Հովտամեջ գյուղ
12. Ապագա	Ապագա գյուղ	**61. Հուշակերտ**	Հուշակերտ գյուղ
13. Առատաշեն	Առատաշեն գյուղ	**62. Այգեվան**	Այգեվան գյուղ
14. Արագած	Արագած գյուղ	**63. Մարգարա**	Մարգարա գյուղ
15. Արազափ	Արազափ գյուղ	**64. Մեծամոր**	Մեծամոր գյուղ

16. Արաքս (Արմավիրի շրջ.)	Արաքս գյուղ	**65. Մերձավան**	Մերձավան գյուղ
17. Արաքս (Էջմիածնի շրջ.)	Արաքս գյուղ	**66. Մյասնիկյան**	Մյասնիկյան գյուղ
18. Արգավանդ	Արգավանդ գյուղ	**67. Մրգաշատ**	Մրգաշատ գյուղ
19. Արգինա	Արգինա գյուղ	**68. Մրգաստան**	Մրգաստան գյուղ
20. Արմավիր	Արմավիր գյուղ	**69. Մուսալեռ**	Մուսալեռ գյուղ
21. Արշալույս	Արշալույս գյուղ	**70. Նալբանդյան**	Նալբանդյան գյուղ
22. Արտամետ	Արտամետ գյուղ	**71. Նոր Արմավիր**	Նոր Արմավիր գյուղ
23. Արտիմետ	Արտիմետ գյուղ	**72. Նոր Արտագերս**	Նոր Արտագերս գյուղ
24. Արտաշար	Արտաշար գյուղ	**73. Նոր Կեսարիա**	Նոր Կեսարիա գյուղ
25. Արևադաշտ	Արևադաշտ գյուղ	**74. Նորակերտ**	Նորակերտ գյուղ
26. Արևաշատ	Արևաշատ գյուղ	**75. Նորապատ**	Նորապատ գյուղ
27. Արևիկ	Արևիկ գյուղ	**76. Նորավան**	Նորավան գյուղ
28. Բագարան	Բագարան գյուղ	**77. Շահումյան**	Շահումյան գյուղ
29. Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.)	Բաղրամյան գյուղ	**78. Շահումյանի թռչնաֆաբրիկա**	Շահումյանի թռչնաֆաբրիկա գյուղ
30. Բաղրամյան (Էջմիածնի շրջ.)	Բաղրամյան գյուղ	**79. Շենավան**	Շենավան գյուղ
31. Բամբակաշատ	Բամբակաշատ գյուղ	**80. Շենիկ**	Շենիկ գյուղ
32. Բերքաշատ	Բերքաշատ գյուղ	**81. Ոսկեհատ**	Ոսկեհատ գյուղ
33. Գայ	Գայ գյուղ	**82. Պտղունք**	Պտղունք գյուղ
34. Գետաշեն	Գետաշեն գյուղ	**83. Ջանֆիդա**	Ջանֆիդա գյուղ
35. Գրիբոյեդով	Գրիբոյեդով գյուղ	**84. Ջրաշեն**	Ջրաշեն գյուղ
36. Դալարիկ	Դալարիկ գյուղ	**85. Ջրառատ**	Ջրառատ գյուղ
37. Դաշտ	Դաշտ գյուղ	**86. Ջրարբի**	Ջրարբի գյուղ
38. Դողս	Դողս գյուղ	**87. Գեղակերտ**	Գեղակերտ գյուղ
39. Եղեգնուտ	Եղեգնուտ գյուղ	**88. Ալաշկերտ**	Ալաշկերտ գյուղ
40. Երասխահուն	Երասխահուն գյուղ	**89. Վանանդ**	Վանանդ գյուղ
41. Երվանդաշատ	Երվանդաշատ գյուղ	**90. Վարդանաշեն**	Վարդանաշեն գյուղ
42. Զարթոնք	Զարթոնք գյուղ	**91. Տալվորիկ**	Տալվորիկ գյուղ
43. Մայիսյան	Մայիսյան գյուղ	**92. Տանձուտ**	Տանձուտ գյուղ
44. Լենուղի	Լենուղի գյուղ	**93. Տարոնիկ**	Տարոնիկ գյուղ
45. Լեռնագոգ	Լեռնագոգ գյուղ	**94. Փարաքար**	• Փարաքար գյուղ
46. Լեռնամերձ	Լեռնամերձ գյուղ		• Թաիրով գյուղ
47. Լուկաշին	Լուկաշին գյուղ	**95. Փշատավան**	Փշատավան գյուղ
48. Լուսագյուղ	Լուսագյուղ գյուղ	**96. Քարակերտ**	Քարակերտ գյուղ
49. Խանջյան	Խանջյան գյուղ	**97. Ֆերիկ**	Ֆերիկ գյուղ

626. ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն, մարզպետները նշանակվում և ազատվում են ՀՀ կառավարության որոշմամբ: Մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

627. ՀՀ մարզերում պետական կառավարման ոլորտի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրով և այլ իրավական ակտերով:

628. Մարզպետը օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում: Տարածքային քաղաքականությունը նշված բնագավառներում մարզպետն իրականացնում են մարզպետարանի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով:

629. Մարզպետը համակարգում է ներքին գործերի և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

11.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

630. Տարածքային կառավարման բնագավառում դեռևս չլուծված խնդիրներից կարևորագույնը մարզպետարանների իրավասությունների ոչ հստակ սահմանումն է: Ներկայումս մարզպետների գործունեությունը հիմնականանում կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով, որի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահված տնտեսական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, սակայն դրանց իրականացումը պարզաբանող դրույթների ձևակերպումը հստակ չէ: Հատկանշական է, որ չնայած վերջին տարիներին իրականացված սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներին, հրամանագիրը էական փոփոխությունների չի ենթարկվել, ինչի հետևանքով դրանում ամրագրված բազմաթիվ դրույթներ և փոխհարաբերություններ վերանայման կարիք ունեն: Ավելին, ներկայումս առանձնապես կարևորվում է «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի անհետաձգելի ընդունումը:

631. Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը 2015-2018թթ. պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում: ՀՀ տարածքային կառավարման համակարգի ներդրումն իր էությամբ իշխանության ապակենտրոնացում է նշանակում, որը ենթադրում է ճյուղային նախարարությունների այնպիսի լիազորությունների փոխանցում մարզպետներին, որոնց իրականացումը տվյալ տարածքում անկասկած ավելի արդյունավետ կկատարվի:

632. Կարևորվում է նաև մարզպետին կից գործող խորհրդակցական մարմնի՝ մարզի խորհրդի դերի ակտիվացումը՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրում 2013 թվականի սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխությունները:

633. Տարածքային կառավարման բնագավառում 2015-2018թթ. գործունեության կարևորագույն ուղղություններն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կարևորվում է ՀՀ կառավարության կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերի ու չափորոշիչների մշակումը և սահմանումը, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:

3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականությունները ու իրավասությունները՝ հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում մշակված ու գործադրված ինստիտուցիոնալ համակարգը

5) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ԶՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:

6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը:

8) Մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի համապարփակ հաշվառման և օգտագործման, մարզի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն չհանդիսացող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների, մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպություններում պետության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորությունների արդյունավերտ իրականացում:

634. Հաշվի առնելով Արմավիրի մարզպետարանում և, ընդհանուր առմամբ, մարզում վերջին շրջանում ընթացող բարեփոխումները, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման, մարզային իշխանությունների գործունեության իրական հաշվետվողականության, թափանցիկության ու հրապարակայնության ապահովման, ինչպես նաև զարգացման պլանավորման բնագավառում հանրային, մասնավոր ու հասարակական սեկտորների գործակցության ուղղությամբ կուտակվել է զգալի արդյունավետ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար:

11.1.3. Մարզպետարանի կառավարում

635. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1793 որոշմամբ (հետագա փոփոխություններով ու լրացումներով): Համաձայն վերջին փոփոխությունների, որը կատարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ին N 105-Ն որոշմամբ, ներկայումս ձևավորվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը: Գծապատկեր 4-ում բերված է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային սխեման:

636. Հասարակական հարաբերությունների անընդհատ փոփոխությունները և պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները պետք է անդրադառնան նաև մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքի վերափոխման վրա: Կառուցվածքային փոփոխությունները պետք է դիտարկել օպտիմալության, ընդհանուր մոտեցումների պահպանման և աշխատանքների ռացիոնալ կազմակերպման տեսանկյունից:

637. Բարձր տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ֆոնի վրա անհրաժեշտ է ունենալ նաև մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:

638. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջներ մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ, ինչի համար միայն

քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման շրջանակներում իրականացվող ուսուցումը բավարար չէ: Այս նպատակին կարելի է հասնել նաև լրացուցիչ ուսուցման շնորհիվ:

639. Մարզի զարգացման ծրագրի իրականացումը դիտարկելու և հսկելու համար մարզպետարանում ձևավորվում է մոնիտորինգի և գնահատման համակարգ: ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի «Մոնիտորինգի և գնահատման համակարգ» բաժնում:

Գծապատկեր 4.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կառուցվածքը



11.1.4. Քաղաքացիական ծառայություն

640. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել, որ այն հիմնականում կայացել է: 2001 թվականից տարածքային կառավարման համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից՝ օրենքի ուժով քաղաքացաիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմին հռչակելով նաև աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական քաղաքացիական ծառայության կայացման ճանապարհին:

641. Քաղաքացիական ծառայության համակարգում ներկայումս կարևոր հիմնախնդիրներից մեկն այն է, որ մարզպետներին իրավունք է վերապահված համակարգել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, սակայն վերջիններս ունեն գերատեսչական պատկանելություն և նրանց ղեկավարները, որպես քաղաքացիական ծառայողներ, ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմնին՝ անհասկանալի դարձնելով մարզպետի հետ փոխհարաբերությունների դրսևորումները:

642. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավվել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, մասնավորապես՝ անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց՝ գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

11.1.5. Էլեկտրոնային կառավարում

643. ՀՀ Արմավիրի մարզպետարանում իրականացվել են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները: Ներկայումս մարզպետարանն ունի էլեկտրոնային կառավարման համակարգ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արմավիրի մարզը համացանցում ներկայացված է պաշտոնական էջով (armavir.gov.am), որի միջոցով լուսաբանվում են ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային արժանահիշատակ դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև հանրությունն իրազեկվում է մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության, ընդունված իրավական ակտերի, մարզխորհրդի նիստերի օրակարգերի և անցկացման ժամկետների, քաղաքացիների ընդունելության օրերի, ժամերի և վայրերի, մարզի քառամյա զարգացման ծրագրի դրույթներով նախատեսված և մարզի հետ առնչվող տեղեկատվական նյութերի, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, համայնքային բյուջետային եկամուտների ու ծախսերի, համայնքների ղեկավարների տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունների, համայնքներում իրականացված վարչական հսկողության ակտերի և համայնքներին վերաբերող այլ նյութերի մասին:

644. Համակարգի ներդրմանը զուգընթաց որոշակիորեն բարձրացել է մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային գիտելիքների մակարդակը և այսօր արդյունքները գոհացուցիչ են: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման, մշակման և փոխանցման անհրաժեշտությունն էլ ավելի է ուժեղանում: Պետական կառավարման ոլորտում ներկայումս տեղեկատվությունը դարձել է հզոր ռեսուրս, որն անհրաժեշտ է ճիշտ կառավարել:

645. Մարզում տեղեկատվության ազատության և հրապարակայնության ապահովման գործընթացին նպաստել են մարզային լրատվամիջոցների հետ համագործակցությունը, որոնց միջոցով լուսաբանվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքը:

646. 2010 թվականի մարտի 1-ից Արմավիրի մարզպետարանն անցել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգին, որի ներդրումը զգալի տեղաշարժ է մտցրել ինչպես փաստաթղթաշրջանառության, այնպես էլ ընդհանուր գործավարության կանոնակարգման մեջ:

647. Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարձրացել է՝

1) փաստաթղթաշրջանառության արագությունը
2) օպերատիվությունը
3) կատարող ստորաբաժանումների պատասխանատվությունը
4) ծառայողների համակարգչային գնահատման օբյեկտիվությունը
5) հանձնարարականների կատարման ժամկետայնությունը
6) թղթերի խնայողությունը
7) պատասխանների և գրությունների ժամանակին առաքումը:

648. Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործի, եթե համակարգին ամբողջությամբ միանան ինչպես մարզի համայնքները, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններն ու ստորաբաժանումները, քանի որ դրանց հասցեագրված գրությունները, որոշումները կամ թղթակցությունները ուղարկվում են փոստով կամ հանձնվում են առձեռն, որի ընթացքում դրանք հաճախ տեղ են հասնում ուշացումներով:

649. 2015-2018 թվականների ընթացքում անհրաժեշտ է.

1) Ապահովել մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառումը:
2) Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառությունն առավելագույն չափով իրականացնել էլեկտրոնային տարբերակով:
3) Ունենալ համապատասխան ծրագրային ապահովում, հատկապես՝ լիցենզավորված հակավիրուսային ծրագրեր, որոնք առավել անվտանգ կդարձնեն տվյալների պահպանումն ու օգտագործումը, կնվազեցնեն դրանց վնասն ու կորուստը:
4) Ստեղծել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:
5) Մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ:
6) Քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում կիրառել «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել հատկապես բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները:
7) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև: Մարզին առնչվող մի շարք գործընթացներ, այդ թվում նաև գնումների գործընթացը կազմակերպել էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

11.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

11.2.1. Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ

650. Մարզային զարգացումը դժվար է պատկերացնել առանց տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքային զարգացման: Մարզի զարգացումը պետք է դիտարկել համայնքների զարգացման տեսանկյունից: Այսինքն, մի դեպքում մարզում առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն պետության աջակցությամբ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կրում են հատվածական բնույթ և կարող են պայմանավորված լինել կառավարության ծրագրերով, մյուս կողմից՝ համայնքային հիմնախնդիրների լուծման հիմնական և արդյունավետ համակարգը պետք է տեսնել համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում:

651. Հարկ է նկատել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարումը դա ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն, համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

652. Հայաստանի Հանրապետությունում ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում ուղղված է տարածքային և տեղական կառավարման մարմիններին լիազորությունների և իրավասությունների փոխանցմանը: Այս գործընթացը զգալիորեն դանդաղում է երկու հիմնական պատճառներով՝

1) փոքր և մասնատված համայնքների առկայություն
2) մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների բացակայություն:

653. Ապակենտրոնացման քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու համար լուրջ անհրաժեշտություն է առաջացել համայնքների խոշորացման միջոցով օպտիմալացնել ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգը:

654. ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»:

655. Դիտարկելով համայնքների խոշորացումը որպես Հայաստանում վարչատարածքային բաժանման օպտիմալացման արդիական գործիք՝ առաջարկվում է խոշորացման երկու սցենար՝

1) սցենար 1. խոշորացում ըստ համայնքների փնջերի
2) սցենար 2. խոշորացում ըստ նախկին շրջանների տարածքների:

656. Խոշորացման առաջին՝ փնջային, սցենարի կիրառման արդյունքում Հայաստանում կլինեն մոտավորապես 235 համայնքներ, իսկ երկրորդ՝ շրջանային, սցենարի կիրառման արդյունքում՝ 46:

657. 2013 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել փնջային խոշորացման նպատակով ընտրված Արմավիրի մարզի համայնքների ցանկը (աղյուսակ 11.2.1):

Աղյուսակ 11.2.1

հ/հ	Նոր ձևավորվող համայնքի կենտրոնը	Նոր ձևավորվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքները
1	Մարգարա	Արազափ
		Մարգարա
2	Երասխահուն	Վարդանաշեն
		Երասխահուն
3	Բամբակաշատ	Բամբակաշատ
		Ջրաշեն
4	Շահումյան	Շահումյան
		Շահումյանի թ/ֆ
5	Վանանդ	Արտամետ
		Տալվորիկ
		Կողբավան
		Վանանդ

658. Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ Արմավիրի մարզում կազմավորվել են 97 համայնքներ, որոնցից 3-ը՝ քաղաքային, իսկ 94-ը՝ գյուղական: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Արմավիրի մարզում համայնքները հիմնականում կազմավորվել են «մեկ բնակավայր-մեկ համայնք» սկզբունքով:

659. ՀՀ Արմավիրի մարզի գյուղական համայնքների քանակը ըստ բնակչության թվի ներկայացված է աղյուսակ 11.2.2-ում.

Աղյուսակ 11.2.2. Արմավիրի մարզի գյուղական համայնքների քանակը ըստ բնակչության թվի

Համայնքներ	**Արմավիրի մարզ**	**Հայաստանի Հանրապետություն**
Մինչև 100 բնակիչ ունեցող	-	27
101-ից մինչև 200 բնակիչ ունեցող	2	79
201-ից մինչև 500 բնակիչ ունեցող	2	181
501-ից մինչև 1000 բնակիչ ունեցող	7	189
1001-ից մինչև 3000 բնակիչ ունեցող	63	309
3001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող	17	57
5001-ից մինչև 10000 բնակիչ ունեցող	3	29
Ընդամենը	**94**	**871**

660. ՀՀ Արմավիրի մարզի համայնքները օրենսդրության շրջանակներում ենթակվել են նաև որոշակի դասակարգման: Այսպես, ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713 որոշմամբ (հետագա փոփոխություններով ու լրացումներով) հաստատված սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկում Արմավիրի մարզից ընդգրկված է 8 համայնք (8 բնակավայր): Այդ համայնքներն են՝ Փշատավան, Բագարան, Երվանդաշատ, Մարգարա, Բերքաշատ, Արազափ, Արաքս (էջմ.) և Ջանֆիդա:

661. Մարզի համայնքների կայացման կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների բարձրացումը: Չնայած համայնքներն իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են, բայց նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

662. Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: 2013 թվականին մարզի կտրվածքով համայնքային բյուջեները հավաքագրվել են 100.1%-ով: Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախադրյալներից է պլանավորվող բյուջեների իրատեսությունն ու բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

663. Մարզային և համայնքային մակարդակներում կարողությունների զարգացման տարբեր մեթոդներ կան: Նախ և առաջ դա ուսուցողական դասընթացներն են, որոնք կազմակերպվում են տեղական և կենտրոնական մակարդակով թե կառավարության, թե դոնորների կողմից: Դրանք հիմնականում ուղղված են կարողությունների զարգացմանը բյուջետավարման, համայնքային և մարզային զարգացման պլանավորման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման բնագավառներում: Կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերը, անշուշտ, պետք է շարունակվեն և ընդլայնվեն:

664. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների լիարժեք իրականացման տեսանկյունից անչափ կարևորվում է կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների ճիշտ տեղաբաշխումը: Դա իր հերթին կարող է նպաստել գործառույթների կատարման և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը: ՏԻՄ-երի լիազորությունների ընդլայնումը և համապատասխան պատասխանատվության սահմանումը կնպաստի նրանց հզորացմանը և զարգացմանը:

665. Տեղական ինքնակառավարման մարմիններին նոր պարտադիր լիազորությունների տրամադրումն անհրաժեշտ է հետևյալ բնագավառներում.

1) կադաստրի, նոտարների կողմից կատարվող գործողությունները կատարվեն համայնքների կողմից տրված տեղեկանքների հիման վրա
2) հասարակական կարգի պահպանում
3) սոցիալական ապահովություն
4) բնակչության հաշվառում և գրանցում:

666. Տեղական ինքնակառավարման մարմինների դերի և հեղինակության բարձրացման առումով կարևոր է համայնքային ոստիկանության ստեղծումը:

667. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու սահմանանիշերի տեղադրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

668. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2015-2018թթ. գերակայություններն են.

1) Շարունակել ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
2) Նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը
3) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

11.2.2. Համայնքային ծառայություն

669. 2002 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենք «Համայնքային ծառայության մասին», համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատվել են օրենքից բխող բոլոր նորմատիվ-իրավական փաստաթղթերը: Համայնքների ղեկավարների կողմից կազմվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի նախագծեր, որոնք վերջնական հաստատմանն են ենթարկվել տարածքային կառավարման նախարարի կողմից: Համայնքների ղեկավարների որոշմամբ հաստատվել են նաև համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը և համապատասխան նշանակումներ են կատարվել այդ պաշտոններում:

670. Համագործակցելով համայնքային ծառայության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ, համակարգված աշխատանքներ են տարվել մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն ապահովելու ուղղությամբ:

671. ՀՀ Արմավիրի մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց դեմոգրաֆիկ պատկերը 2014 թվականի հունիսի 1-ի դրությամբ պատկերված է աղյուսակ 11.2.3.-ում:

Աղյուսակ 11.2.3.

Համայնքային ծառայության պաշտոնների խումբ/ենթախումբ	Համայնքային ծառայողների սեռը		Փաստացի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ընդհանուր թիվը
	իգական	արական	
Գլխավոր պաշտոնների խումբ	**33**	**56**	**89**
1-ին ենթախումբ	0	2	**2**
2-րդ ենթախումբ	31	54	**85**
3-րդ ենթախումբ	2	0	**2**
Առաջատար պաշտոնների խումբ	41	29	**70**
1-ին ենթախումբ	10	10	**20**
2-րդ ենթախումբ	1	0	**1**
3-րդ ենթախումբ	30	19	**49**
Կրտսեր պաշտոնների խումբ	**218**	**202**	**420**
1-ին ենթախումբ	91	93	**184**
2-րդ ենթախումբ	72	78	**150**
3-րդ ենթախումբ	55	31	**86**
Ընդամենը մարզում	**292**	**287**	**579**

672. Համայնքային ծառայության համակարգի սահուն ներդրման ապահովման համար անհրաժեշտ է իրականացնում են հետևյալ միջոցառումները.

1) կազմակերպել համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստումը
2) ապահովել համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին
3) մարզում ստեղծել միասնական տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի այս կամ այն պաշտոնին համապատասխան կադրերի վերաբերյալ՝ թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով
4) խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ
5) միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ
6) համայնքներին ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով:

673. Վերոգրյալ աշխատանքների կատարմանը զուգահեռ, հաշվի առնելով գործնականում առաջացած խնդիրները, կմշակվեն օրենսդրական փոփոխություններին վերաբերվող առաջարկություններ և դրանք սահմանված կարգով կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը:

11.2.3. Տեխնիկական ապահովվածություն

674. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, որը կակտիվացնի նաև ապակենտրոնացման գործընթացը: Սակայն համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար:

675. 2013 թվականին մարզպետարանը ՏԻՄ-երի կարողությունների բարձրացմանն ուղղված աշխատանքներ է տարել ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման և տեղադրման ուղղությամբ: Մարզի բոլոր համայնքներն ունեն ժամանակակից պահանջներին բավարարող համակարգիչներ և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրեր: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 1000-ից ավել բնակիչ ունեցող 83 համայնքից 71-ում, ինչպես նաև 3 քաղաքային համայնքում ներդրված է ՀԿՏՀ (համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ): Այսպիսով, 74 համայնք, այդ թվում՝ 3 քաղաքային համայնք ապահովված է ՀԿՏՀ-ով: Համապատասխան համայնքներից 54-ում իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Քաղաքային համայնքները, ինչպես նաև 3000-ից ավել բնակիչ ունեցող 11 գյուղական համայնքները (որից 4-ը 5000-ից ավել բնակիչ ունեցող) ապահովված են անհրաժեշտ բովանդակությամբ համալրված և գործող համայնքային համացանցային կայքերով: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 97 համայնքներն ապահովված են ինտերնետ կապով և համակարգիչներով:

676. Աշխատանքներ են տարվում համայնքապետարաններում առավել հուսալի ինտերնետային կապի հասանելիությունն ապահովելու, համակարգչային տեխնիկան թարմացնելու, ՀԿՏՀ-ի շահագործման արդյունավետությունը բարձրացնելու և նշված համակարգը մյուս համայնքներում ևս ներդնելու ուղղությամբ: Համայնքներում տեղեկատվական վահանակների միջոցով ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը:

677. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումից օգտվելն է՝ ինտերնետային կայքի միջոցով: Ներկայում գործում է http://www.arlis.am, e-gov.am կայքերը: Համակարգի բաց տեղադրումն ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

11.2.4. Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

678. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված են մի շարք փոփոխություններ օրենքի 53-րդ հոդվածում, մասնավորապես՝

1) Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

2) Համայնքի նորընտիր ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ երկամյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում՝ դրա մեջ կատարում փոփոխություններ և (կամ) լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ:

679. Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

680. Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են՝

1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ,
2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ,
3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ,
4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ,
5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ,
6) ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների ու հողամասերի օտարման քառամյա ծրագրերը՝ տարեկան կտրվածքով:

681. Մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ միասին համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի իրականացման

վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվությունից հետո, մեկ ամսվա ընթացքում, քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների (եթե դրանք ձևավորված են) կողմից:

682. Համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն՝ դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2015-2018թթ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացին:

683. Չնայած ըստ օրենքի պահանջի՝ Հայաստանի բոլոր համայնքներում կազմվում են միջնաժամկետ զարգացման ծրագրեր, սակայն, անհրաժեշտ է նշել, որ շատ համայնքներում այդ ծրագրերի կազմմանը լուրջ ուշադրություն չի դարձվում: Դրանք հիմնականում կրում են ձևական բնույթ, որի պատճառների թվում է նաև դրանց մշակման և կառավարման մեթոդական բացը: 2014 թվականի ընթացքում մշակվել է «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» նախագիծը, որը հաստատվելուց հետո ՀՀ բոլոր համայնքները կունենան միասնական ձևաչափ իրենց քառամյա զարգացման ծրագրերի մշակման համար:

684. Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1 հոդվածի՝ համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցությամբ ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, սակայն հետագայում համայնքների միջոցներով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանան սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

685. «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը ՄԱԿ զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ սերտ համագործակցությամբ «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի շրջանակներում 2012թ. Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում կազմակերպել է համայնքային քննարկում: ՀԿ-ի կողմից այս ձևաչափով Արմավիր քաղաքում անցկացվել են ևս երկու՝ 2015 թվականից հետո Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) հիման վրա խարսխված զարգացման օրակարգի ձևավորման շուրջ հասարակական քննարկումներ:

686. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2015-2018թթ. անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացնել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով:

687. Համայնքների զարգացման ռազմավարությունը. Մարզի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

1) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում
2) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում
3) Մարզի համայնքների համար տեղեկատվական միասնական բանկի ստեղծում
4) Միջհամայնքային միավորումների ստեղծում
5) Մարզի բոլոր գյուղապետարանների աշխատակազմերին համակարգչային սարքավորումներով ապահովում:

688. Աղյուսակ 11.2.4-ում ներկայացված են Արմավիրի մարզի 97 համայնքների քառամյա զարգացման ծրագրերով գնահատված, ֆոնդային բյուջեով իրականացվող ծրագրերի կանխատեսումները 2015-2018 թվականներին՝ ըստ տարածաշրջանների:

Աղյուսակ 11.2.4.

Տարածաշրջան/քաղաք	Պլանավորված ֆինանսավորում				Ընդամենը պլանավորված ֆինանսավորում
	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	
Արմավիրի տարածաշրջան (39 համայնք)	**409 220,0**	**418 780,0**	**352 400,0**	**354 900,0**	**1 535 300,0**
այդ թվում՝					**0,0**
ք.Արմավիր	115 000,0	143 000,0	160 000,0	160 000,0	**578 000,0**
ք.Մեծամոր	7 550,0	7 950,0	7 800,0	8 600,0	**31 900,0**
Էջմիածնի տարածաշրջան (43 համայնք)	**510 520,0**	**421 640,0**	**298 320,0**	**270 580,0**	**1 501 060,0**
այդ թվում՝					**0,0**
ք.Էջմիածին	200 000,0	182 000,0	150 000,0	150 000,0	**682 000,0**
Բաղրամյանի տարածաշրջան (15 համայնք)	**60 950,0**	**42 000,0**	**41 000,0**	**46 500,0**	**190 450,0**
Ընդամենը՝ Արմավիրի մարզ	**980 690,0**	**882 420,0**	**691 720,0**	**671 980,0**	**3 226 810,0**

689. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ֆոնդային բյուջեով իրականացվող ծրագրերի կանխատեսումները 2015-2018 թվականներին ըստ համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմում է 3,226,810.0 հազ. դրամ (տես՝ հավելված 11):

11.3. Քաղաքացիական հասարակություն

690. Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները և պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական բնութագրիչներով:

691. Ըստ արևմտյան որոշ մասնագետների կարծիքի՝ քաղաքացիական հասարակության երեք կարևոր բաղադրիչներն են՝ պետության տնտեսական համակարգը, գաղափարախոսությունը և քաղաքական կառուցվածքը:

692. Արմավիրի մարզում այս երեք տարրերի օպտիմալ համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության կայացման արդյունավետ ճանապարհ:

693. Ժամանակակից արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն ուղիներից մեկը:

694. Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը չեզոք և սպասողական դիրքորոշում ունի մարզում ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ չեզոք դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներին: Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն գործոններից մեկը:

695. Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

696. 2015-2018թթ. ընթացքում տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի,

մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Մարզային և հանրապետական ԶԼՄ-ներով պարբերաբար հեռարձակել հաղորդումներ՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները, իրականացվող ծրագրերն ու ու այլ ընթացիկ աշխատանքները, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ.
2) պարբերաբար և համակարգված ձևով շարունակել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների՝ մարզի համայնքներ, մարզային ենթակայության կազմակերպություններ աշխատանքային այցելությունները, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպումներով, մարզպետի կողմից կազմակերպվող քաղաքացիների ընդունելություններով, տարբեր խնդիրների շուրջ հրավիրվող քննարկումներով, ՏԻՄ-երի կողմից հանրությանը պարբերաբար ներկայացվող հաշվետվություններով, հանրային լսումներով:
3) հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների օգնությամբ շարունակել մարզի զարգացման քառամյա ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվական բնույթի նյութերի պատրաստումն ու տարածումը.
4) ակտիվացնել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների ներգրավվածությունը մարզպետարանում կազմակերպվելիք մարզի խորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրվող տարբեր քննարկումներին, հասարակական լսումներին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին.
5) մարզպետարանի ինտերնետային կայքի միջոցով շարունակել մարզպետի գործունեության հրապարակայնության ապահովման գործընթացը՝ այնտեղ տեղադրելով մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային գործունեության վերաբերյալ նյութերը, մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները, մարզային ենթակայնության կազմակերպությունների վերաբերյալ հայտարարությունները, մարզպետի և ՏԻՄ-երի տարեկան և կիսամյակային հաշվետվությունները, մարզում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվական նյութերը, ՄԶԾ-ի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբերի գործունեության, դրանց տարեկան և կիսամյակային հաշվետվությունների, ՄԶԾ շրջանակներում իրականացվող և իրականացվելիք ծրագրերի, մարզային զարգացման հանձնաժողովի (ՄԶՀ) գործունեության վերաբերյալ նյութերը, ինչպես նաև հրապարակման անհրաժեշտություն ունեցող այլ բնույթի տեղեկատվություն:

697. 2015-2018թթ. ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Ակտիվացնել աշխատանքները մարզի համայնքապետարաններում ինտերնետային կայք էջերի ստեղծման և դրանց կանոնավոր գործունեության ուղղությամբ.
2) Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպել համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ.
3) Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ, և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը.
4) Հասարակական կազմակերպություններին, համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին, մարզի տարածքում գործող ՀԼՄ-ներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին, կազմակերպել դրանց իրազեկման գործընթացը.
5) Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի բնակչությանը իրազեկելու նպատակով դրանք տեղադրել մարզպետարանի կամ համայնքապետարանների ինտերնետային կայք-էջերում, մեկական օրինակ փակցնել համայնքապետարաններում առկա տեղեկատվական տախտակների վրա, փակցնել մարդաշատ և հանրության համար առավել մատչելի վայրերում.
6) Շարունակել պետության կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը վերաբերող որոշումների հրապարակայնության ապահովման գործընթացը.
7) Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել հանրային իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը տրամադրել իրավական և այլ բնույթի տեղեկատվություն կամ խորհրդատվություն.
8) «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

698. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ՝ ջրօգտագործողների ընկերություններ, ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, Արմավիրի մարզի առևտրաարդյունաբերական պալատ, դպրոցական խորհուրդներ և այլն):

12. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

699. ՀՀ Արմավիրի մարզը զբաղեցնում է 1242 քառ.կմ տարածք: Մարզի բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ (ըստ ԱՎԾ տվյալների) կազմում է 267187 մարդ, որից՝ քաղաքային համայնքներում 85300 մարդ, գյուղական համայնքներում 181900 մարդ, որից ըստ սեռի՝ 136531 կին, 130656 տղամարդ, ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան 3621 մարդ, 1-4 տարեկան 15941 մարդ, 5-9 տարեկան 17798 մարդ, 10-14 տարեկան 15980 մարդ, 15-19 տարեկան 19465 մարդ, 20-64 տարեկան 171473 մարդ, 65-ից բարձր 22909 մարդ: Բնակչության խտությունը 1 քառ.կմ-ի վրա կազմում է 215 մարդ: Մարզի բազմաբնակարան շենքերի քանակը կազմում է 2570 միավոր, բնակելի տների քանակը՝ 45048 (քաղաքային համայնքներում՝ 10215, գյուղական համայնքներում՝ 34833):

12.1. Բնական աղետներ

700. Արմավիրի մարզում հնարավոր են հետևյալ վտանգավոր բնական երևույթները՝

1) **Երկրաֆիզիկական վտանգավոր երևույթներ՝** երկրաշարժեր (Գառնիի, Փարաքարի, Սպիտակի էպիկենտրոններ), ջրակայուն և այլ անբարենպաստ գրունտների զանգվածային դեֆորմացիաներ:

Արմավիրի մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ ակտիվությամբ: Հիմնական ուժեղ երկրաշարժի օջախները գտնվում են մարզի տարածքից դուրս 70-80 կմ և ավելի հեռավորությամբ (Գառնիի, Փարաքարի, Սպիտակի օջախներ), որոնք սակայն կարող են տալ 7-8 բալ սեյսմիկ ազդեցություն:

Գառնիի օջախի ակտիվացման դեպքում 8-բալանոց գոտում կհայտնվեն Արմավիրի մարզի Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան (Էջմ.), Մերձավան, Մուսալեռ և Փարաքար համայնքները:

7 բալանոց գոտում կհայտնվեն մարզի 35 համայնքներ:

2) **Օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ՝** ուժեղ քամիներ, ամպրոպ, տեղատարափ անձրև, խոշոր կարկուտ, սառնամանիք, ցրտահարություն, մառախուղ, ուժեղ շոգ, երաշտ, խորշակ:

3) **Հիդրոլոգիական վտանգավոր երևույթներ՝** վերգետնյա ջրերի բարձր հորիզոններ (ջրհեղեղ, վարարում), վերգետնյա ջրերի ցածր հորիզոններ (սակավաջուր):

Մարզի տարածքում է գտնվում Ակնալիճ բնական ջրամբարը, որի մակարդակը տարածքի ռելիեֆից ցածր է և հարակից բնակավայրերին ջրածածկման վտանգ չի սպառնում:

Մարզի տարածքում այլ բնական և արհեստական ջրամբարներ չկան, սակայն Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում մարզի 30 համայնքներ ընկնում են ջրածածկման վտանգի տակ, 24-ը Ապարանի ջրամբարի ջրածածկման գոտում:

4) **Հիդրոերկրաբանական վտանգավոր երևույթներ՝** գրունտային ջրերի բարձր հորիզոններ, գրունտային ջրերի ցածր հորիզոններ:

Սելավային հոսքերի ժամանակ ջրածածկման գոտում են հայտնվում՝

ա. Թալիշի հեղեղատարի ողողման գոտում են գտնվում մարզի Մայիսյան համայնքի գյուղատնտեսական հողատեսքերը և ք. Մեծամորի Այգեգործական թաղամասը:

բ.«Սելավ Մաստարա» հեղեղատարի ջրածածկման տարածքում են գտնվում Լեռնագոգ, Խանջյան, Լուկաշին, Նորապատ, Մրգաշատ համայնքները և Արմավիր քաղաքի 108 թաղամասը:

գ.«Կոշ-Ուջան» հեղեղատարի ջրածածկման տարածքում են գտնվում Աղավնատուն, Արագած, Ծաղկալանջ համայնքների առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

դ.Քասախ գետի ջրածածկման տարածքում են գտնվում Ամբերդ, Դողս, Ծիածան, Ծաղկունք, Հովտամեջ, Մրգաստան, Արտիմետ, Խորոնք, Առատաշեն համայնքների առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

ե.Մեծամոր գետի ջրածածկման տարածքում են գտնվում Ապագա, Լուսագյուղ, Ջրառատ, Մեծամոր, Արաքս (էջմ.) համայնքների առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

զ.Արաքս գետի ջրածածկման տարածքում են գտնվում Երվանդաշատ, Բերքաշատ, Ջանֆիդա, Փշատավան, Արազափ, Մարգարա, Վարդանաշեն և Արաքս (էջմ.) համայնքների առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատեսքերը:

5) **Բնական հրդեհներ՝** հացահատիկի ցանքատարածքների և չոր խոտածածկերի հրդեհներ:

701. Սողանքային օջախներ և քարաթափումների տարածքներ մարզի տարածքում չկան:

12.2. Տեխնածին աղետներ

702. Արմավիրի մարզում տեխնածին արտակարգ իրավիճակների ծագման հիմնական սպառնալիք են համարվում ՀԱԷԿ-ի վթարները, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների վթարները, քիմիական վտանգավոր օբյեկտներում առաջացած վթարները, հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարները, ավտովթարները, կենցաղային հրդեհները:

703. Մարզի տարածքում որպես քիմիական վտանգավոր օբյեկտ գրանցված է Արմավիրի «Բարիք-Պ» ՍՊԸ սառնարանային տնտեսությունը, որում պահպանվում և օգտագործվում է 3 տոննա ամոնիակ: Ամոնիակի առաջնային ամպի տարածման խորությունը կազմում է 0.6կմ, մահացու կոնցենտրացիայով օջախի մակերեսը կազմում է 0.2 քառ.կմ, խոցման կոնցենտրացիայով օջախի մակերեսը՝ 0.3 քառ.կմ: Նշված տարածքում բնակելի շինություններ և այլ կառույցներ կան:

704. Ճառագայթային վտանգավոր օբյեկտ է հանդիսանում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն:

705. ՀԱԷԿ-ին հարակից 10կմ գոտու մակերեսը կազմում է 314 քառ.կմ: Այդ տարածքում ընկած են մարզի 22 համայնք՝ 82544 բնակչությամբ, այդ թվում՝ նախահարձակ

պաշտպանական միջոցառումների գոտի (մինչև 5 կմ գոտի) թվով 5՝ ք.Մեծամոր, Արշալույս, Ակնալիճ, Մայիսյան, Ֆերիկ գյուղական համայնքները՝ 17842 բնակչությամբ, շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտի՝ Արմավիր քաղաքը և 16 գյուղական համայնքներ՝ 64702 բնակչությամբ:

706. Մարզում առկա են 71 հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ, որից՝ 45 ճնշումային գազալցակայաններ և 26 բենզալցակայաններ, որոնք հիմնականում կառուցապատված են բնակելի զանգվածից դուրս կամ դրանցից 70-100 մետր հեռավորության վրա: Հրդեհապայթյունավտանգ օբյեկտների շարքում կարելի է դասել նաև մարզի «Քարակերտ», «Դալարիկ», «Արաքս», «Արմավիր» և «Էջմիածին» երկաթուղային կայարանները, որոնց տարածքում դյուրավառ նյութերի տեղափոխման ընթացքում վթարի հետևանքով կարող են առաջանալ պայթյուններ և կուղեկցվեն հրդեհներով: Մարզի հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ են հանդիսանում նաև Հոկտեմբերյանի կոնյակի գործարանը, Արմավիրի «ՄԱՊ» գինու-կոնյակի գործարանը:

707. Շրջակա միջավայրի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող օբյեկտների և դրանց հարակից տարածքներում դիտարկման և մշտական հսկողության կազմակերպումն իրականացվում է մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական հսկողության համակարգի կազմակերպությունների կողմից:

708. Մարզում տեխնածին աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը:

709. Տեխնածին աղետներից խուսափելու և նվազագույնի հասցնելու համար կարևորվում է մարզային հեռուստաընկերությունների դերը՝ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների անցկացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում:

12.3. Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ

710. Առաջին և ամենակարևոր պայմանը աղետների ռիսկի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին:

711. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա: Բնակչության պաշտպանվածության բարձրացման նպատակով իրականացվում են ուսումնական պարապմունքներ, սեմինարներ, ուսումնական հավաքներ, օբյեկտային վարժանքներ, տարբեր մակարդակի շտաբային ուսումնավարժություններ՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման:

712. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

713. Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները՝ հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում:

714. Շենքերի և շինությունների փլուզումից, հնարավոր հետևանքներից խուսափելու համար իրականացնել դրանց ամրացման աշխատանքներ:

715. Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով իրականացնել վթարային կամուրջների ամրացում և վերականգնում: Ձմեռային սեզոնի համար ավազի և աղի պաշարների կուտակում, համապատասխան տեխնիկայի նախապատրաստում:

716. Կարկուտի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կետերի տեղադրման աշխատանքները

717. Հրդեհների մարման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար բնակավայրերում իրականացնել հիդրանտների տեղադրում և մշտական ջրով ապահովված ջրավազանների կառուցում:

718. Անհրաժեշտ է իրականացնել նաև կոմունալ-էներգետիկ համակարգի վթարային տեղամասերի վերականգնում:

719. Անհրաժեշտ է ՀԱԷԿ-ին հարակից 10կմ շառավղով տարածքում (նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (5կմ) և շտապ պաշտպանական միջոցառումների իրականացման (5-10կմ) գոտիներ) բնակվող բնակչությանն ապահովել կալիում-յոդի հաբերով և անհատական պաշտպանական միջոցներով: ՀԱԷԿ-ի հարակից 10կմ գոտու համայնքների բնակչության կենսապահովման համար անհրաժեշտ է ձեռք բերել՝

1) կայուն յոդի հաբեր 1 օրվա հաշվարկով՝ 10255 գրամ
2) Հ-2 տիպի անհատական պաշտպանության միջոցներ՝ 92734 հատ
3) սնունդ 10 օրվա հաշվարկով՝ շուրջ 575.2 մլն. դրամ արժողությամբ
4) հագուստեղեն ՝ շուրջ 6956.8 մլն. դրամ արժողությամբ
5) առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ շուրջ 1887.2 մլն. դրամ արժողությամբ:

720. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, մարզին սպառնացող համաճարակները, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

721. ՀՀ կառավարության 2012թ. մարտի 7-ի N 281-Ն որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը և ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը: Ռազմավարությունը բխում է ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունից և համահունչ է Հյոգոյի գործողությունների ծրագրի գերակա ուղղություններին: Ըստ ռազմավարության՝ աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ կառավարությունը: Ոլորտը բաղկացած է ֆունկցիոնալ և տարածքային ենթահամակարգերից: Մարզպետարանները և տեղական

ինքնակառավարման մարմինները աղետների ռիսկերի նվազեցման համակարգի հիմնական դերակատարներից են:

722. Այս ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցությամբ՝ աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ազգային պլատֆորմի շրջանակներում 2012թ. հուլիսի 11-16-ն իրականացվել է ԱՌՆ ռազմավարության իրականացմանն ուղղված դասընթաց՝ Արմավիրի մարզային փրկարարական վարչության և Արմավիրի մարզպետարանների ներկայացուցիչների մասնակցությամբ: Դասընթացի նպատակն էր շարունակել աջակցել Հայաստանում ԱՌՆ համակարգի կայուն զարգացմանը՝ գիտելիքի տարածման միջոցով: Որպես ծրագրի արդյունք, ակնկալվում էր, որ յուրաքանչյուր մարզի համար կձևավորվի ԱՌՆ մարզային թիմ, որը հետագայում կհանդիսանա յուրատեսակ հարթակ՝ մարզային մակարդակում ԱՌՆ ռազմավարության իրականացմանն ու ոլորտին առնչվող խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության իրականացման հարցում, ինչպես նաև կմշակվի ԱՌՆ մարզային թիմերի գործողությունների պլանը:

2) ՀՀ Արմավիրի մարզպետի 2013թ. ապրիլի 10-ի N 159 որոշմամբ հաստատվել է աղետների ռիսկի նվազեցման Արմավիրի մարզային թիմի կազմը և աշխատակարգը, որտեղ սահմանված են թիմի հիմնական խնդիրներն ու յուրաքանչյուր անդամի գործառույթները:

3) 2014թ. հունիսի 25-26-ը ԱՌՆ Արմավիրի մարզային թիմի ներկայացուցիչը մասնակցել է Ծաղկաձորում կայացած «Աղետների ռիսկի նվազեցման թիրախների և ցուցանիշների փորձարկում 2015 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի ընդհանուր զարգացման օրակարգում ինտեգրելու համար և ՀԳԾ2-ը» թեմայով առաջին աշխատանքային հանդիպմանը:

723. ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1351-Ն որոշման համաձայն՝ 2013թ. օգոստոսի 1-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման հայտը, որը նախարարության կողմից վերցվել է հաշվառման: Հետագա աշխատանքների՝ մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման համար պահանջվում է 12.0մլն.դրամ և մարզպետարանն ակնկալում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աջակցությունը: Սահմանված կարգով կազմված և հաստատված Արմավիրի մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը կներառվի Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տվյալ տարվա տարեկան աշխատանքային պլանի «Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն» բաժնի «Բնական աղետներ» մասում:

724. Աղետների կանխարգելման, ռիսկի գնահատման և վաղ ազդարարման գործընթացում ռեսուրսների տրամադրման և ծրագրերի իրականացման նպատակով

ներգրավված են մասնավոր սեկտորից մարզի թվով 9 սննդարտադրող կազմակերպություններ՝ «ՄԱՊ» ՓԲԸ, «Է.Պ.Գ.» Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ, «Էջմիածնի հաց» ԲԲԸ, «Էջմիածին կաթ» ՍՊԸ, «Ոսկե հասկ», «Արաքս», «Հավիցա» թռչնաֆաբրիկաները, «Էյ-Էյ-Էֆ-Փի-Սի» ՍՊԸ (Մելոգրանո), «Ալեքս Գրիգ» ՍՊԸ Բաղրամյանի ալրաղացը:

725. ՀՀ Արմավիրի մարզի տարածքում տարերային և տեխնածին աղետների կանխման կամ ռիսկերի նվազեցման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի դեռևս 2007թ. դեկտեմբերի 17-ի N 297 որոշմամբ ստեղծվել են արագ արձագանքման ուժեր: Մարզի ավելի քան 81 համայնքներում առկա են ազդարարման էլեկտրաշչակներ: Աղետների ռիսկերի վերաբերյալ տվյալների և տեղեկատվության փոխանումը հիմնականում իրականացվում է արագ արձագանքման համակարգով և էլեկտրոնային տարբերակով:

726. Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում բարդ ընթացակարգով լիցենզավորված տնտեսական գործունեություն իրականացնող «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊ ընկերությունը, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

727. Աղետների ռիսկերի նվազեցմանը նպաստող և դրանց զարգացմանն ուղղված հարցեր ընդգրկված են հետևյալ պետական ծրագրերում՝ Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի հեղեղատարների հուների մաքրում և ափապատնեշների ամրացում, ջրանցքների վերականգնում, հակակարկտային կայանների կառուցում, թունաքիմիկատների, անասնաբուժական պրեպարատների ներկրում և պայքարի աշխատանքներ, ճանապարհների մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում, վթարային կամուրջների ամրացում և վերականգնում, խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի կառուցում և վերանորոգում, վթարային շենքերի և տանիքների հիմնանորոգում, քանդման ենթակա վթարային շենքի բնակիչների բնակարանային խնդիրների լուծում, ռադիոակտիվ թափոնների վնասազերծում և այլն:

728. Աղետներին դիմակայելու մշակույթը բարձրացնելու նպատակով մարզային ԶԼՄ-ներով եթեր են հեռարձակվել ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության կողմից անցկացվող միջոցառումները՝ հրամանատարաշտաբային, շտաբային, ցուցադրական, հատուկ տակտիկական ուսումնավարժությունները լուսաբանող տեսանյութեր, դրանք են.

1) «Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
2) «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում»
3) «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպում»
4) «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ռազմական դրության անցկացման ժամանակ»

5) «ՀԱԷԿ-ի ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
6) «Ուժեղ երկրաշարժի կազմակերպման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
7) «Բնակչության պատսպարման կազմակերպում»
8) «Բնակչության տարհանման կազմակերպում»:

729. Աղետների նվազեցման գործընթացին նպաստելու նպատակով աշխատանքներ են տարվում տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավելու, ինչպես նաև մարզի բնակչության պատսպարման, անհատական պաշտպանության միջոցներով ապահովման և աղետներին դիմակայելու հարցում տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ:

730. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության տվյալների համաձայն՝ մարզի 72 դպրոցներում ստեղծվել են պատանի հրշեջ-փրկարարների թիմեր:

731. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության կողմից ներկայացվել են առաջարկություններ՝ քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների վերաբերյալ (աղյուսակ 12.3.1):

Աղյուսակ 12.3.1

h/h	Միջոցառման անվանում	Կատարման ժամկետ	Կատարողներ
1	ՀՀ Արմավիրի մարզի համայնքների 2015-2018թթ. բյուջեներում ֆինանսական միջոցների նախատեսում՝ համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով	Մինչև դեկտեմբերի 1-ը	Համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
2	Մարզի տարածքի գետերի և հեղեղատարների հուների համալիր ուսումնասիրությունների իրականացում, կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար առաջարկությունների ներկայացում	Յուրաքանչյուր տարի մինչև նոյեմբերի 15-ը	Համապատասխան մարզային հանձնաժողով, համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
3	Տեղի ունեցած արտակարգ իրավիճակների, դրանց պատճառած վնասի չափի վերաբերյալ և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում	Յուրաքանչյուր ամսվա մինչև 4-ը նախորդ ամսվա համար	Համապատասխան մարզային հանձնաժողով, համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
4	Մարզի համայնքներում և կազմակերպություններում կապի և ազդարարման համակարգի զարգացման միջոցառումների պլանավորում և իրականացում, նորագույն սարքավորումների ներդրում, աղետի վաղ ազդարարման համակարգի զարգացում	Ամենամյա	«ԱրմենՏել» ՓԲԸ, /համաձայնությամբ/ համայնքների ղեկավարներ, /համաձայնությամբ/ մարզային փրկարարական վարչություն
5	Բնակչության պատսպարման պայմանների ապահովման նպատակով մարզում առկա ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների վերանորոգման և վերազինման միջոցառումների պլանավորում և կազմակերպում	Ամենամյա	Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն, կազմակերպությունների և համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/

6	Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակում, ստեղծված իրավիճակներում արագ արձագանքում	Յուրաքանչյուր ամսվա մինչև 4-ը նախորդ ամսվա համար	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, կազմակերպությունների ղեկավարներ /համաձայնությամբ/, մարզային փրկարարական վարչություն
7	Մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնի հնարավորությունների զարգացման կազմակերպում, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու պատրաստականության ապահովում	մինչև 2015թ. երկրորդ կիսամյակ	Մարզպետարան, մարզային փրկարարական վարչություն
8	Մարզում գործող հատուկ, կարևորագույն և ռազմավարական նշանակության օբյեկտներում հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների առաջացման տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգերի ներդրում	2015-2017թթ.	Կազմակերպությունների, օբյեկտների ղեկավարներ /համաձայնությամբ/, մարզային փրկարարական վարչություն
9	Համայնքային կամավորական փրկարարական շարժման ձևավորում, ուսուցում և զարգացում: Կամավորական ջոկատների ներգրավում փրկարարական գործունեության մեջ:	Ամենամյա	Համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/, մարզային փրկարարական վարչություն
10	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների կազմի և հագեցվածության ճշգրտում (ստեղծում) և համալրում, անձնակազմի ուսուցման կազմակերպում	Ամենամյա	ՔՊ մարզային ծառայությունների պետեր, մարզային փրկարարական վարչություն
11	Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի զարգացման ծրագրերում ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրության, այնպես էլ սեյսմիկ անվտանգության նախատեսման նկատմամբ հսկողության սահմանում	Ամենամյա	Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն, կազմակերպությունների և համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
12	Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքերում բնակչության կենսապահովման նպատակով անհրաժեշտ պարենային և նյութական միջոցների պահուստի համակարգի ստեղծում	2015-2016թթ.	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, սննդարդյու-նաբերության և առևտրի կազմակերպություններ /համաձայնությամբ/, մասնավոր հատված
13	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատուների հետ սեմինար-պարապմունքների անցկացում	Յուրաքանչյուր եռամսյակ	Մարզային փրկարարական վարչություն

12.4. Քաղաքացիական պաշտպանություն

732. Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ուղղությամբ մարզում ստեղծված են՝

1) քաղաքացիական պաշտպանության 9 մարզային ծառայություններ
2) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, համայնքային և օբյեկտային քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ
3) Տարահանման մարզային, համայնքային և կազմակերպությունների հանձնաժողովներ, տարահանման և տարահանվածների ընդունման հավաքակետեր:

733. Բնակչության պատսպարման նպատակով մարզում առկա են պաշտպանական կառույցներ՝ 2 ապաստարաններ, որից մեկը նախատեսված է որպես մարզի պահեստային կառավարման կետ, 19 հակաճառագայթային թաքստոցներ, 192 բնակելի շենքերի, 82 կազմակերպությունների և 11954 առանձնատների նկուղային և կիսանկուղային տարածքներ:

734. Որպես մարզի պահեստային կառավարման կետեր նախատեսված են՝ «Արմավիրի Գազմաշ գործարան» ՍՊԸ-ի ապաստարանը և Բաղրամյան համայնքի նախկին գործկոմի շենքի նկուղային հարկը:

735. 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ով հայտով ներկայացվել է մարզային պահեստային կառավարման կետերի և առկա քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների հիմնանորոգման աշխատանքները՝ ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ Արմավիրի մարզը սահմանամերձ է և տեղակայված է ՀԱԷԿ-ին հարակից 5կմ շառավիղով տարածքում (նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտի) և կարևորագույն խնդիր է համարվում պաշտպանական կառույցների մշտական պատրաստականության ապահովումը:

736. Բնակչության ազդարարման նպատակով մարզի 97 համայնքներից 30-ում համայնքներում առկա են 41 ազդարարման C-40 տիպի շչակներ, որոնցից 29-ը եռաֆազ հոսանիքի բացակայության պատճառով չեն գործում, 1-ը անսարք է: 2013թ. որոշ համայնքներում վերականգնվել է եռաֆազ հոսանքը, մնացած համայնքներում նախատեսված է իրականացնել վերականգնողական աշխատանքներ: Ավելացնել ազդարարման համակարգի տեղադրումը և հնարավորինս լուծել չգործող շչակների և ողջ համակարգի վերականգնման խնդիրը: Ջրածածկման գոտու 20 համայնքներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տեղադրվել են նաև վաղ ազդարարման 22 շչակներ, որոնց գործարկումն իրականացվում է Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահության կողմից:

737. Մարզում առկա է և անխափան գործում է ֆիքսված հեռախոսակապը, բջջային հեռախոսակապը, ռադիոկապը՝ մասամբ:

738. Մարզպետարանը համագործակցում է ՀՀ գյուղատնտեսության, քաղաքաշինության, տրանսպորտի, արտակարգ իրավիճակների նախարարությունների և մի շարք այլ գերատեսչությունների հետ: Առաջարկություններ են ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների և քաղաքաշինության նախարարություններ՝ համայնքներում

քաղաքացիական պաշտպանությանը վերաբերող շենքերի և շինությունների, պահեստների ու թաքստոցների, ապաստարանների և այլ կոմունիկացիաների վերանորոգման, պահպանման աջակցության վերաբերյալ:

739. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի նիստի N 12 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման կարգ»-ը: Քաղաքացիական պաշտպանության վիճակի գնահատման նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման պատրաստվածության աստիճանի որոշումը: Քաղաքացիական պաշտպանության վիճակի գնահատումն իրականացվում է կամավորականության սկզբունքով և կարող է իրականացվել ինչպես համալիր, այնպես էլ առանձին ուղղություններով:

740. ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 189,000.0 հազ. դրամ (տես՝ հավելված 12):

13. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

741. Մարզի զարգացման ծրագրի առաջընթացի վերլուծության և համապատասխան բարեփոխումների իրականացման տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար:

742. Ինչպես և ՄԶԾ-ի, այնպես էլ ՄԳ իրականացման առաջին փորձը (2011-2014թթ. ՄԶԾ) մարզային մակարդակում պլանավորված քաղաքականությունների առաջընթացի համակարգված գնահատման և վերլուծությունների առումով ցույց տվեց, որ համակարգը կենսունակ է և հուսալի, ինչը նշանակում է, որ այն թույլ է տալիս չափել իրականացվող միջոցառումների և ծրագրերի արդյունքները, բացահայտել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները և դժվարությունները ու կյանքի կոչել այն հանձնարարականները, որոնք թույլ կտան բարելավել քաղաքականությունների պլանավորման և իրականացման գործընթացները:

743. ՀՀ Արմավիրի մարզպետի 2014թ. հունիսի 3-ի N 108 որոշմամբ ստեղծվել է Արմավիրի ՄԶԾ-ի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը և հաստատվել խմբի անհատական կազմը՝ մարզպետի տեղակալի ղեկավարությամբ: Խմբում ընդգրկվել են ՄԶԾ-ի մշակման 10 ոլորտային աշխատանքային խմբերի (ՈԱԽ-ներ) նախագահները, որոնք մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներն են, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

744. ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով մշակվում է տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ):

745. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

746. ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումներն ամփոփված են տրամաբանական հենքերում: Տրամաբանական հենքը կառավարման հզոր գործիք է, որը պարզաբանում է առանձին ծրագրերի կամ միջոցառումների նախագծման պատճառահետևանքային կապերը և դրանց փոխկապակցվածությունը ծրագրի խնդիրների, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ: Սա արդյունավետ ու ճկուն մեթոդ է ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման, ինչպես նաև հաշվետվողականության հետ կապված խնդիրները լուծելու համար:

747. ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1) քաղաքականության ուսումնասիրում
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում (ՄՄԳ)
4) ազդեցության գնահատում:

748. Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը, բացահայտում է խոչընդոտները և հետազոտում անելիքները:

749. ՄԶԾ-ի ցուցանիշները և ոլորտները վերանայվում, խմբավորվում են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

1) տնտեսական զարգացում
2) կենսամակարդակ
3) ՓՄՁ զարգացում
4) շրջակա միջավայրի պաշտպանություն
5) գյուղատնտեսության զարգացում
6) առողջապահություն
7) սոցիալական պաշտպանություն
8) կրթություն
9) համայնքային զարգացում:

750. Հաստատված ժամանակացույցի համաձայն, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

751. Մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄՋԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.

1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում,
2) ստանալ ՄՋԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄՋԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ:

752. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ, այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանակական տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

753. ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով, ամրապնդվում է նաև կապը մարզային իշխանությունների և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

754. Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄՋԾ-ի ՏԱՊ-ի վերանայման և մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս ամսին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա,
2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում,
3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

755. Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

756. Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս ամսին և ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում:

757. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

1) ՀԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա:
2) ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը:
3) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումնասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով:
4) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ:
5) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները:
6) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները:
7) Հաջորդ տարվա հիմնախնդիրների, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

758. ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքներն ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

759. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի մարզի խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում:

760. Չափազանց կարևոր է ՄԶԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը:

Աղյուսակ 13.1. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը	Իրականացման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրականացնող կողմը
Քաղաքակա-նության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու	1. ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն 2. ՏԱՊ-ի իրականացման ընթացքում	Կիսամյա-կային հաշվետվու-թյուն	Մարզպետարանի ՄԳ խումբ

	նպատակով	ծագած հիմնախնդիրների վերծանում, և դրանց լուծման համար անհրաժեշտ նախագծերի պատրաստում 3. Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում 4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 5. Շահագրգիռ կողմերին իրազեկում		
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում	1. Մարզային մակարդակում ԱՀՌԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների շտեմարանի արդիականացում և թարմացում 2. Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը գնահատելու նպատակով 3. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 4. Շահագրգիռ կողմերին իրազեկում	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվու-թյուն	Մարզպետարանի ՄԳ խումբ
Մասնակցային մոնիտորինգ և գնահատում	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և արձագանք-ների վերլուծություն	1. ՄԶԾ համապատասխան ոլորտների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում 4. Հետազոտական խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ կողմերին իրազեկում	Մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվու-թյուն	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտա-կան հետազոտ-ություն	1. ՄԶԾ համապատասխան ոլորտների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում 4. Հետազոտական խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ կողմերին իրազեկում	Ազդեցության գնահատման հաշվետվու-թյուն	Անկախ փորձագետներ

14. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

761. ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների ու միջոցառումների ցանկն ու նրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականները ըստ ոլորտների ու առաջնահերթությունների բերված են հավելվածներում: Հավելվածներում ընդգրկված են պետական, վարկային ծրագրերով, համայնքային բյուջեի միջոցներով, ինչպես նաև մասնավոր ներդրումներով իրականացվող ծրագրերը: Հաշվի առնելով տնտեսության ներկա՝ ոչ բնական, դժվար կանխատեսվող զարգացումների ծավալումները, հավելվածներում բերված 2015-2018թթ. նախատեսվող աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները վերջնական կհստակեցվեն տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեն հաստատելուց հետո: Յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանները (ՏԱՊ) կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացվող ֆինանսական միջոցները և հայտնի կլինեն միջազգային կազմակերպությունների ու տեղական հիմնադրամների կողմից մարզում կատարվելիք ծրագրերը, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառուների ցանկերը՝ ըստ ոլորտների (տես՝ համապատասխան հավելվածները) և ֆինանսավորման աղբյուրների:

762. Արդյունաբերության, ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի ֆինանսավորման համար նախատեսվում է 18.54 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 14.4%-ը):

763. Սոցիալական ոլորտների ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 33.24 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 25.8%-ը), այդ թվում՝

- **Կրթության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 26.25 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 20.4%-ը)
- **Մշակույթի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 3.93 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.1%-ը)
- **Սպորտի և երիտասարդության հարցերի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 2.4 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 2%-ը)
- **Առողջապահության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 0.47 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.4%-ը):

764. Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 51.57մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 40.1%-ը):

765. Բնապահպանության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 0.14 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.1%-ը):

766. Զբոսաշրջության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 0.83 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.6%-ը):

767. Քաղաքաշինության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 6.29 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 4.9%-ը):

768. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 17.8 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 13.8%-ը), այդ թվում՝

- **Ճանապարհաշինության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 7.97 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 6.2%-ը)
- **Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 5.8 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 4.5%-ը)
- **Գազամատակարարման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 2.57մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 2%-ը)
- **Էներգետիկայի ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 1.46մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 1.1%-ը):

769. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 0.189մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.1%-ը):

770. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ֆոնդային բյուջեով իրականացվող ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 3.25մլրդ.դրամ: Ծրագրերը ըստ ոլորտների ներառվել են համապատասխան հավելվածներում:

771. ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված ոլորտների ամփոփ ֆինանսավորումը ներկայացված է հավելված 14-ում, ընդհանուր գումարը կազմում է շուրջ **128.6** մլրդ.դրամ, որից՝

պետական բյուջե	**- 52.2 մլրդ.դրամ**
այդ թվում՝	
սեփական միջոցներ	- 5.8 մլրդ.դրամ
վարկային միջոցներ	- 46.4 մլրդ.դրամ
համայնքային բյուջե	**- 3.3 մլրդ.դրամ**
մասնավոր ներդրողներ	**- 32.0 մլրդ.դրամ**
այլ աղբյուրներ	**- 41.1 մլրդ.դրամ:**

15. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 4 - **Արդյունաբերություն, ՓՄՁ ոլորտ և մասնավոր հատված**

Հավելված 5.1 - **Կրթության ոլորտ**

Հավելված 5.2 - **Մշակույթի ոլորտ**

Հավելված 5.3 - **Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտ**

Հավելված 5.4 - **Առողջապահության ոլորտ**

Հավելված 6 - **Գյուղատնտեսության ոլորտ**

Հավելված 7 - **Բնապահպանության ոլորտ**

Հավելված 8 - **Զբոսաշրջության ոլորտ**

Հավելված 9 - **Քաղաքաշինության ոլորտ**

Հավելված 10.1 - **Ճանապարհաշինության ոլորտ**

Հավելված 10.2 - **Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտ**

Հավելված 10.3 - **Գազամատակարարման ոլորտ**

Հավելված 10.4 - **Էներգետիկայի ոլորտ**

Հավելված 11 - **Համայնքային բյուջեներով իրականացվող ծրագրեր**

Հավելված 12 - **Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտ**

Հավելված 14 - **Ամփոփ ֆինանսավորում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ